


Nerses.

Նուիրեմ [illegible] [illegible] [illegible] [illegible].
[illegible] [illegible] [illegible] [illegible]
Հայոց՝ որ [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible].

[illegible] [illegible].

[illegible] 2. դեկտ. 1811

[illegible] [illegible]

[illegible] [illegible]

ԳԻՐՔ

ՈՐ ԿՈՉԻ ԸՆԴՀԱՆ ՐԱԿԱՆ.

Արարեալ Սրբազնասուրբ Հայրապետին մե-րոյ՝ Տն Ներսէսի Շնորհալւոյ։

Որ պարունակէ յինքեան զուղղափառ դաւանութիւն՝ և զնմանօրինակ աւանդութիւն կարգաց՝ Հայաստանեայցս Ս͞Ե Եկեղեցւոյ. և զհոգեշահ խրատս, և զփրկաւէտ պատ-ուէրս՝ առ ամենայն կացութիւն Եկեղեցականաց՝ և Աշխարհականաց։

Տպագրեցեալ 'ի Վեհափառ Հայրապետութեան Լուսաւորչեան և Քահանայապետ Սբյ Աթոռոյն Էջմիածնի Տն ՂՈՒԿԱՍՈՒ Երե-ցս երանեալ Սրբազնասուրբ Կաթուղիկոսի ամենայն Հայոց։

Հրամանաւ՝ Սբյ Աթոռոյն Էջմիածնի՝ ծայրագոյն Նուիրակի, Ռուսաց երկրի՝ և յամ Հիւսիսային կողմանս եղեալ ազգիս Հայոց՝ Առաքելաշաւիղ Առաջնորդի՝ Սանահնեցի Երկայնաբազուկ Արղութեանց՝ Իշխանազ-նեայ Տն Յովսեփայ Սրբազնագունեղ Արք եպիսկոպոսի։

Ըստ որոյ արդեամբքն իւր տպեցաւ՝ 'ի յօգուտ մանկանց Եկեղեցւոյ՝ Սիոնէ Ալգին խորոյ։


Յամի Տն 1788. 'ի մայիսի 1: Իսկ 'ի թուին Հայոց՝ ռմլէ.

'Ի կայսերաքաղաքս Մայրաքաղաքս

ՍԱՆԿՏՊԵՏՐԲՈՒՐԳ.

'Ի տպարանի Խալդարենց Խօջամալի որդի՝ 'ի քն հանգուցեալ Պարոն Գրիգորին։

ՀՐԱՄԱՆԱՒ ԿԱՌԱՎԱՐՉԱՑՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ.


BIBLIOTHECA
REGIA
MONACENSIS



Յառաջաբանութիւն առ ընթերցողս։

Ենարդիս բերմունք է բնական բանականաց բարուց՝ մշտաշարժութիւն ներգործող զհոգւոյ ցանկութիւն՝ իբր ՚ի սնունդ իմանալւոյն ունել. ՚ի յոր անսահման յարձակմամբ յառաջադէմն նկրտմամբն՝ յանհնարինս է առ կանել լափան, յոր կողմն եթէ նախագծեալ ձգմամբ միտք ցէ, բայց ՚ի փոփոխելւոյն գենեթակցան՝ յոր գործունեայ տափմամբ՝ անդադար բերկրին էր։

Զանազի ՚ի փոխել սաւարկալին՝ ինքն չառնու յանձն կասել ամենեին, կամ դադարել ՚ի բուռն յառաջախաղաց դիմեցմանէն. այլ ՚ի նոյն ներգործունակ զօրութեն, ելով վերբերէ յայլ իմն ցանկալի, զի մի անգործ ՚ի տափելոյն մնասցէ։

Այն զի ՚ի յագուրդ ունի խնքեան ըստ յաւէժ լուսաւորութե՝ զիմանալեաց իմաստասիրութեան. որով այն քան յառաջաշարժ ձգի ՚ի մակացութիւն, մինչ զի զրոյափառ բոլորագնդեալ երբունին նորա՝ գետք ոչ կարեն արգելուլ ըստ երգոյն. որոց յետնոհանջունն՝ ոչ այլ ինչ է, քանթէ իմանալի մահ իմն, և խաւար՝ տգիտական ընութե։

Այր սակս՝ առ զեստակաման՝ զ՚ի վերայ ստորանոյն ողջակիզաց՝ հրոյն մշտավառութե՝ պատրէր տալ հաստիչն բնութեան. առ որ՝ զբնաւորելոյն ՚ի մեզ՝ զայսր յորդավառ ցանկութեն՝ յամենից յետակարեցմամբ ողջակիզեցեալ՝ ՚ի յաղօթարայց և ՚ի վայելչական՝ մեծական իմն գեղեցիկ բարեձգութե՝ զառեբերին ՚ի մեզ (որ է ողբեալ ըղձականութեան,) յառաջադրեալ պահանջէր ՚ի մէնջ ՚ի յըմեռենցելոցս, ըստ մագնիսական բնական հանդիսիւն առ երկաթ. մինչև՝ ընդ ծիրանաձգեալ մարգարէին գոչել՝ ՚ի հալամ-

նեց՝

նոյ՝ յընդգրկեալ մեզ երեւելոյն՝ բարերարութեան բացորո-շեալ՝ զհոգւոյն ցանկութեան ներգործութեան՝ ՚ի յարանչելի լինել վերբերութեան՝ սիրով առ քարշեցեալք ՚ի յինքն՝ ասե-լով, Նուաղեցաւ սիրտ իմ եւ մարմին իմ, Ած սրտի իմոյ, բաժին իմ Ած յաւիտեան: Զի՝ մասայ առ Ածայինն կցեալ՝ նախնին շարժօղ՝ սէրն է, ըստ Սրբոյն Դիոնէսիոսի.

Եւ այս՝ սկզբնաշարժ սիրոյս՝ հոգեկանի ցանկութեան յայնժամ է տիրապէս վայելումն՝ եւ ուղղակերպ՝ ՚ի քանոնն ուղղութեան՝ ՚ի նախատիպն իւր՝ բոլորովին յԱծ հայումն, յորժամ զխմացումն մտաց՝ յԱծ եղելոց՝ առ ինքն ժողովէ, ընդհանրապէս լուսափայլի յԱծային դիտութիւն տեսութե եւ մտածութեան. եւ ՚ի ձեռն զգայութեանց ընթանելոյ ՚ի յա-րացուցէ եւ ՚ի յօրինակէ վերանալ ՚ի յանկարծ սկզբն, եւ հուպեալ ՚ի յԱծ միաւորի, ըստ Սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյն.

Զկնի որոյ՝ կարգաւորեալ անձանց հրաշալեացն՝ կարման-ձորեցեալ ինքն մանաւանդապէս՝ ՚ի յայն անհասանելի լու-սափայլութեան, քանզի՝ որպէս ասէ՝ ընթանել կերպա-ցեալ՝ բարբառիլ՝ կալոյ վկա եւ ոչ յծողի.

Այլ եւ հրաշալին Պօղոս՝ որ ՚ի յայս սքանչելագոյն տեսե-ման կարգ պարաճանեալ՝ ասէր, թէ՝ զհետ մտեալ եմ թէ հասից, մանաւանդ թէ՝ ըմբռնեցայ իսկ յիմն ՚ի Քէ Յէ.

Եւ այս է կատարեալ ուրախութիւնն մտաց, որոյ հա-ճասար չիք ինչ. ՚ի գիտութեան այս՝ հանգուցեալ այնց՝ որք իմաստաբար տիրելով՝ զգայականն շնչոյն՝ եւ հոգեղէն յարեալ մարմնոյն՝ ՚ի յԱծայնութիւնս հոգւոյն՝ են հայեցողք, կա-տարեալ ըստ սահմանին՝ մարդկային.

Զի մարդ անուն՝ ըստ Սրբոյ Հօր մերոյ Ներսէսի Լամբրոնացւոյ՝ բանաւորին է, եւ բանն է՝ ոչ բարբառ լեզ-ուին, այլ խոկումն մտացն.

Եւ զի՝ խոկումն մտաց՝ որ առ սկզբնաբարին, է յատուկ կերպարանք՝ հոգւոյ իմանալի ցանկութեան, եւ զկատարելա-պարգեւօղ լուսաւորութեան.

Որպէս ՚ի հանգոյն ամենազօրութեան՝ արարչին բնութեան՝ բանաւորական ազգի՝ զնմա աչաց տեսողին՝ ՚ի վեր քան զամենայն զգալի՝ է արփիափայլ՝ ակնածանաւ եւ գեղապա-ծոյծ լուսով՝ ՚ի սկզբնալուսոյն ունելով զինքն նազելի եւ փա

փա

փափկելի ըմպէից բանականութեան՝ տեսողական զօրութեանն լեալ. ւոռ յոր մերձենալով պղպջակս՝ դանդաղ, և զմտաւորական ներգործունակ զօրութիւնն՝ ’ի յառաջնային արարչական վերախաղացուցեալ, և ’ի նմանէ իմանալապէս լուսաւորել (յորում չիք փոփոխումն և կամ շրջելոյ ստուեր) գոհա-ցողականաւ բանիւ մատչի առ սկզբնապատճառ աղբիւրն լու-սոյ՝ յասելն, Նշանակեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց։

Նա՝ ըստ Եսայեան ձայնին՝ որ է որդին միածին, որ լոյս եկն յաշխարհ և լուսաւորեաց զմեզ, եղեալ սիրելին աչաց ’ի սեննակս մեր, նախաշարժօղ զմեզ ըղձիւք ’ի յերգս սիրոյ՝ ըստ երգոյն, և երեսք որդւոյն՝ եղեն հոգեշունչ և օգտակար գիրք սորք՝ պարգևեալք ’ի հոգւոյն սրբոյ՝ բղխեալք ’ի շրթանց հոգեկիր հարց սրբոց, ’ի մշտնջենաւոր յուրա-խութիւն՝ ’ի կեցութիւն և ’ի յանստաղտկապէս բուժումն հոգեկան ըղձականութեանց։

Որք անցեալ զանցեալ զլուսով միջօրէի՝ լուսաւորեն զմիտս, և առ տարփալին ուղղեն. զշահելոյ՝ յարմարնաց ընթա-ցիցն, ըստ մարգարէին՝ նախապատճառական դիմեցմանն թէ՝ Ճրագ են բանք քո՝ ոտից ներքին մարդոյն իմոյ, և լոյս տան շաւղաց խոհական մտաց իմոց։

Զանզի՝ ըստ ասից Սրբոյն Յոհաննու Ոսկեբերանին՝ թէպէտ պարտ էր մեզ՝ ոչ կարօտանալ նշանագրոյն օգնա-կանութեան, այլ՝ այնպէս վարս ընծայեցուցանել, որպէս զի՝ շնորհք հոգւոյն՝ փոխանակ գրոց լինէին մեզ ’ի նպաս-տութիւն. որպէս զգրեալսն մելանաւ՝ նոյնպէս և զմեր սիրտս՝ սուրբ հոգւով գրեալ, որպէս Նոյի և Աբրահամու և որդւոց և Թոռանց նց, ընդ որոց՝ ոչ գրով խօսեցաւ ած, այլ՝ ինքեամբ եգիտ զմտայն նց յըստակութիւն. և առաքե-լոցն՝ ոչ ետ ած գրով; այլ՝ զհոգւոյն պարգևս խոստացաւ, Նա՝ ասէ, յիշեցուսցէ ձեզ զամ։

Այլ՝ ըստ որում ակար եղև իմացութիւն մեր, և ոչ կնաւ ’ի յայնս տատանեալ եղև աստանդանի, որ սակս՝ ոչ զիջեր՝ տուեալ ’ի հոգւոյն սրբոյ ներշնչեալ գիրք սուրբք՝ ’ի ձեռն սրբազանից հարց. զի մի անհնարին՝ միշտաշարժ ներգոր-ծօղ նաւակ մտաց և իմացութեանց մերոց՝ անդէն մնացեալ

ըն

ընկղմեցի. և պատրաստեցան որպէս զլոյս 'ի յոյս, զի մի 'ի խաւարի խարխափմամբ մոլորեցի՝ յառաջընթացութիւնն բնական ցանկութե շարժեցելոյն հոգի.

Օ՜վ որ դնայ խոկմամբ 'ի տանէ և 'ի գիշերի 'ի մտաւորութե ընթերցուածոց լոյսս՝ ոչ գայթակղի՝ շեղելով զընթացս՝ իմանալի ներգործութեան մտաց՝ 'ի յանծանօթս խաղացմանէն, ոչ մտէ 'ի յաւիթս մեղաց՝ խուսափեալ 'ի նմանէ, ոչ ըմբռնի 'ի թակարդս հերձուածոց՝ լարելոց 'ի հերձուածողաց՝ յայտ յանդիման խայտառակեալ նշաւակելով զծածկեալ որոգայթսն, և ոչ խաբի 'ի կեղծապատիր յառաջարկութեանցն՝ ասելով զլուծումն, և դարձուցանելով զխաբէութիւնն 'ի գլուխ՝ խաբէպատիր յառաջարկողաց:

Օ՜վ 'ի հոգւոյն արտաշնչեալ գրովք սրբովք հաստեալ ունի զմիտս, և ուսուցեալ զմիտս՝ ոչ խոտորիլ յաջ և ոչ յահեակ, այլ 'ի յուղիղն և 'ի յայտնին ընթանալ 'ի պողոտայ, ըստ որում՝ որ ինչ յայտնի է՝ լոյս է, և գիտէ թէ՝ եկեալն յաշխարհ լոյս՝ առնել լուսաւոր զամ մարդիկ՝ զամենեսեան հրաւիրեաց առ իւր սքանչելի լոյսն՝ ըստ Արքայազնի Առաքելոյն Պետրոսի:

Այլ՝ իւրաքանչիւրոց՝ բանաւորութե մնձակելոց՝ և զտուփումն հոգւոյն՝ առ ծածկելեան ունելոց՝ է հարկաւոր մտանել 'ի վիճակս սուրբ գրոց, և ծայրիւ զաւազանի յուղմն և առաջնորդութե հոգւոյն սրբոյ՝ առնուլ զհամեղութի քաղցր 'ի քիմս մտաց բանին, զի բացցին աչք նոյ՝ յարաշարժ իմացականութեանն՝ որպէս զյոնաթանու, թէ և 'ի սաւուղապիսի հերձուածողացն՝ մահու սպառնալեօք՝ արգելանիլ 'ի ճաշելոյ պտուղոյ ընկալցին:

Այն զի՝ կամակար մտօք քեցեալքն 'ի սոյն կեցուցիչ բանէնէս՝ անհաղորդ մնալով լուսաւորութե՝ թշուառ ի կուրութե մնձակիալ և 'ի կենաց զրկեալ՝ 'ի վախճանի 'ի յաւիտենական խաւարն՝ աքսորական գնան:

Աստ որոյ հարկ է՝ ընդ տէրունական քննել զգիրս պատուիրանին՝ և զառաքելական՝ առ տիմոթէոս աւանդունել հաստատուն 'ի փրկութիւն հոգւոց, և 'ի սնունդ իմանալի ցանկութե նոց, մտադնելով ընթերցուածոց մխիթարութե և վարդապետութե, և ոչ անփոյթ առնել զխնարհացն՝

'ի

'ի բնութեն հաստչէն՝ բանեղէն հոգւոյն պարգևելոյ. որովք առըստանի կեանքն յաւիտենական։

Իսկ եթէ ասիցէ ոք՝ զի՞նչ իմն պահենի իցեն 'ի տառն՝ 'ի բառն և 'ի բանն՝ սևաթղթը մելանաւ գրեալ 'ի քարտենի, որ մարթ իցէ մեզ՝ հանել անտի զմշտնջենաւոր և զյաւիտենական կեանսն. ծանիցէ հարցասէրն. զի տառքն են՝ նոր իմն շտեմարանք յօժարեալս, որ 'ի մեծի սովուն՝ զցորեան բաշխեն 'ի կեցութիւն մարդկան, են և պարգևեալք մեզ՝ փոխանակ անմոռացութեն հրեշտակաց՝ 'ի տեղի վերացեալ շնորհութեան, են և բանալիք իմացման. և իբր աշխարհանկատ հեռացոյցք, որովք զերկինս՝ երկրայնովք նկատեմք և զբօսնումք, են և համբարանոցք՝ ամ՝ իմաստութեն և գիտութեան նոյ։

Այլ՝ որպէս երբեմն՝ երկիրն անզարդ և անպատրաստ՝ ընկալեալ զհրաման 'ի յարարչէն՝ բղխելոյ զպանջար խոտոյ՝ իսկոյն ըստ հրամանին՝ 'ի քթթել ական՝ երփներփն շքեղութի՝ և զգոյնզգոյն վայելչութի բուսոց և ծաղկանց՝ երևեաց երկրի՝ 'ի զուարճութիւն արարչին, և 'ի յօգտութիւն արարածոյ նախաստեղծին՝ զարդարեցան, երկիրն ինքնին բերեալ զպտուղ՝ ըստ տէրունական բանին, ըստ այսմ օրինակի և 'ի յընձակալ սրբահայրութի յընթեռնուլն մեր զբանս սուրբս՝ 'ի հոգւոյն ներշնչեալ՝ 'ի ժամանակս ժամանակս՝ 'ի ձեռն յանձայլին խորհուրդսն՝ ըստ առ 'ի նմանէ բացայայտութեան չափու՝ թևակոխելոցն առանց սրբոց, անպաճոյճ և անպատրաստ սրտ մեր՝ սկսանի զգջմամբ յառնել 'ի մեղաց՝ և զակօսաբեկ եղեալ, և ստեղծեալ փթթիլ 'ի յառաջայութեամբ անթառամ և բազմագոյն ծաղկանց՝ զվերինսն խոկալով՝ ուր քն նստի. և անտի վերաթևէ 'ի պտղատուութիւն՝ առատութք գեղեցիկ և ճաշակելով քաղցր՝ առաքինական կատարելութեց. որպէս թէ՝ զյառաջադրեալսն ներքին մարդոյն՝ զբնական իմանալի կարողութիւնն՝ ինքեան կերպարաունոյ՝ և գործով արտաքնոյն կատարել, և այնու փոխել յայր յայլ։

Այլ՝ արդարև պատշաճէ ասել թէ՝ գիրք սուրբք՝ են նոր իմն յակօբեան՝ խայտաճամուկ դաճազանք՝ 'ի յոր խայտբար ներգիտամամբ՝ բանաւոր խաշանցս՝ երկնաւոր հովուա-

պե

պետին՝ նոր ծնանիմք պէսակ.ք՝ տեսականաւ և գործնակա-նաւ ճանկաւորեալք։

Այն էր և ծածախահաւ տենչիւ ցանկացեալ իմ՝ զհոգեծորան Գիրքս այս՝ Ընդհանրական կոչեցեալ՝ Նախահօրն մերոյ՝ և Արքայնոյք Հայրապետին՝ Սրբյն Ներսէսի Շնորհալւոյն՝ ստիպմամբ ՚ի լոյս ածել, ՚ի յաշտանակ՝ մօրս մերոյ Սբ Եկեղեցւոյ՝ հարազատ մանկանցն՝ զգալի տեսութեան բարձրացուցանել․ և ՚ի վերայ աղբերն Ճշմարտութեան՝ զխայտախտորեան այս դաշտայն՝ ած դնել․ որպէս զի՝ որք միանգամ՝ հոգւոյն տենչիւ՝ մերձին ՚ի յըմպել ՚ի ջրոյն կենաց՝ բանաւորն երամքն պարզամիտք՝ զկծեալ ՚ի սոյն գոյնագոյն փայտս հոգեշահ՝ յղացեալ յածանմանութիւն անդրանիկ խեղն զխորհուրդս՝ ծնցին զհոգի փրկութեան։

Բանզի՝ սա է ճշմարտապէս ծառ կենաց՝ տնկեալ ՚ի դրախտի եկեղեցւոյ, յորոյ՝ անթառամ ծաղկանցն բուրեալ անուշահոտութիւն զմտացակուս՝ Լուսաւորչածին հօտ կոչունեացս՝ ածոյքն սփոփութեամբ, և ՚ի սմանէ կթեցեալ պտուղքն՝ զխոհն զճաշակօղսն յանմահութիւն վերածել․ առ յոր ըղձակաթ փափագանօք տենչացեալ՝ հարմնացեալս քնական եկեղեցի ասէր՝ պտուղ նո քաղցր է ՚ի կոկորդի իմում։

Ուստի՝ և իմ՝ ամէն սիրատոչորի եղեալ ՚ի մանկութէ՝ և ՚ի ճաշակումն իմանալի ցանկութեան հոգւոյ՝ զանտարտակնալի յաւեցուցիչ՝ զմորդարայնս բանահիւսութիւն երանելւոյս Ջամբեալ՝ ջան եղի զօրացուցմամբ նն՝ զծառս կենաց՝ զանկեալն յիզերս՝ սառնատեսակ կենդանի ջրոց հոգւոյն սրբոյ՝ զդարդաբերն՝ երկոտասան տարբերոյն հանճարոյ հնարատութեան պտղոց՝ տպագրութեամբ և ՚ի մէջ հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ տնկել․ զի՝ Սիրելի ազգդ իմ՝ և լուսաւորչածնունդ որդիքդ՝ մօր մերոյ Սբյ Տիրահաստատ Աթոռոյն Միածնիջի, և հարազատքդ սորին Շնորհալւոյ Արքայնոյք Հայրապետիս Տն Ներսէսի՝ զկենդանաբար պտուղն ճաշակեալ՝ իմացականին ներգործութեամբ՝ անմահանայցէք յաւէտ։

Որդ՝ յայս պիտանի յառաջադրութիւն՝ նախայօժար կամօք ձկտելոյն իմոյ՝ եղեն մանաւանդ այսպէս առիթք չորեքկին, զորոյք զանց առնել՝ ոչ կարացեալ՝ յամ՝ կարողութէ ջանացայ 'ի լոյս ածումն։

Առաջին՝ ըստորում նարդեանս՝ Լուսաւորչածին ժողովուրդքն իմ՝ 'ի հոգւոյն սրբոյ անօրինեցմանէն՝ ինձ վիճակեալք, բնակեալք կան ը իշխանութե՝ այլասեռ քրիստոնէից. յորոց առ. Արքայնեայն՝ միշտ է զուգադիպութէ համառօտ՝ և զբարեկարգութէ կառավարութե՝ հայաստանեայցս Ռուսական Եկեղեցւոյ՝ առ. 'ի տեղեկութիւն հարցումն. այսպէս՝ Մեծապէս հարկաւոր էր ինձ՝ հայաստեա ազգին իմոյ ընծրհել զայն՝ ուղիղ դաւանութ յըստակագինութմն՝ ընդդէմ արհամարհողայն անգիտութ՝ զմերս համառօտ բան՝ հանդիպեցեալ, և իբրև զաշտալակ գաւաթեան՝ որ 'ի թալպիոթ, 'ի պաշտպանութե հաւատոյս Սբյ՝ և 'ի գրանց գժոխոց՝ անպարթահարելի Մօր Մերոյ Կաթուղիկէ Եկեղեցւոյ՝ անբիծ և անարատ բարոյ խորհրդածութեն։

Բանզի՝ արդարև 'ի սմին կախեալք տեսանեն հազար վահանք՝ ըստ երգոյն, ըստորում՝ (որպէս յայտնի է՝ ամենեցունց այպէս ամեն աչք հայողաց,) մի պատգամն գորա՝ հաւասար և զուգակշիռ է և առաւել՝ քան զհազար բանս՝ միձասէր և բանակռիւ արանց ադիտաց՝ Մերոյս ուղղակրօն ճշմարտադաւանութե։

Եւ զի՝ սա է ստուգիւ Ընծայանութիւն սակաւարատ և բազմարժան՝ ըստ ասից Ընծայնոյն Սբ Հոգէթէոսի, և զօրաւոր է և հաստատ՝ քան յամ սուր երկսայրի, մինչև կարողանալ ասել. ինքնին թէ՝ բանք իմ իբրև զհուր՝ և իբրև զմուրճ են, որք խորտակեն զվիմացեալ և զքարացեալ 'ի յանհաւատութիւն զմիտս։

Երկրորդ՝ զի սովաւ՝ որպէս ապացուցական համաքարանութ՝ իւրաքանչիւր՝ 'ի Քն Յն հաւատացեալ անձն ճանաչել կարիցէ ճշմարտութ զՈւղղափառ հաւատն՝ ընդհանուր Հայաստանեայցս Եկեղեցւոյ, թէ 'ի յերկրպագելի Ամենասբ Երրորդութիւնն, թէ՝ 'ի Մարդեղութեն անսկզբանէ յաւիտենից անմայր 'ի յէակցէն և 'ի հաւասա-

րապատիւ Հօրէն ծնեալ, և 'ի լրման ժամանակին՝ անհայր՝ 'ի յԸնծայածին միշտ Կուսէն Մարիամայ՝ հոմանաւորութեամբ Հօր՝ և եկաւորութեամբ Հոգւոյն Սրբոյ՝ մարմին եղեալ Բանին, և թէ՝ 'ի յանքննելի և յանհասանելի Բղխումն Հոգւոյն՝ որ 'ի Հօրէ։

Այն զի՝ սա է ամենագէտ իմաստութեան տումար; որ ունի 'ի յինքն զամ՝ ճշմարտութիւն, և ուսուցանէ ամենենամ ճշմարտասիրաց՝ զանկայութիւնն՝ որ ըստ ինքեան է, ասելով և զպատճառս՝ ըստ Արիստոտէլի, և զպարզ և զյստակագոյն գիտութիւնն՝ զոր և ընդհանրագործութեանցն՝ դիւրապանցէ քան զամ՝ գիտութիւնս, և գերէ զամ՝ միաս հայարտայեալ՝ 'ի վերայ գիտութեանն քո․ զի հաւատոց մեր՝ ըստ Հրաշալւոյն Պօղոսի, մի իցեն իմաստութեամբ մարդկան, այլ՝ զօրութեամբն այ․ Աստ՝ կայցէ առ սա վերաբերեալ ասացեալն իմաստնոյն թէ՝ նշոյլ է մշտնջենաւոր լուսոյն, հայելի անարատ՝ այ ազդեցութեան, և պատկեր՝ առատութեան նորա։

Զի և անխարդախ կաթին փափագող մանկունքն հայաստանեայց Մօր Սբ Եկեղեցւոյ՝ 'ի սորին անստուեր լուսոյս լուսազարդեն՝ որպէս 'ի կենդանի հայելւոյն՝ զաղբեւրն իմաստութեան՝ զբանն այ՝ ներշնչեցեալ ստանալով՝ և զքաղցրութեան ճաշակն առնելով՝ առ սոյն ուղղալիր իմաստութիւնս պարարտութեան՝ բարբառին թէ՝ մեղր կաթեցուցանեն շրթունք քո, մեղր և կաթն 'ի ներքոյ լեզուի քո։

Նորոգ՝ զի 'ի սա՝ իւրաքանչիւր ոք՝ ըստ հասակին և ըստորճանին՝ թէ եկեղեցական և թէ աշխարհական, եթէ այր և թէ կին՝ ընթեռնուլ մի ևն 'ի քո յա և չէք խոտր, դիտելով որպէս 'ի քանոն ուղղութեան վարուց՝ և ամ 'ի նպատակ կատարելութեան՝ մարդկեղէն կենցաղավարութեան՝ 'ի ծագրիտ կանոնաց ասուի՝ զգործ անձին իւրոյ կշռեալ ճանաչիցէ զպարտաւորութիւն իւր կացութեան պաշտօնին՝ դատեալ 'ի խղճէ մտաց իւրոց՝ վկայութեամբն այ, և այսու խուսափեալ 'ի չարէն՝ անձանարկցէ 'ի բարւոյն ժամանել կատարեալ յաստիճան, և 'ի նոյն հաստատապէս կացեալ՝ աշխարհի յայտնելով՝ լուսոյ իւրոյ գործով՝ Աւետարանական կամանեին թէ՝ իւրաքանչիւր ոք յոր կոչումն կոչեցաւ՝ 'ի նմին

ըն

ընծայութեն կայցէ, սկսանի ընդ Ներսանազդեաց Մարդա-քէին Պաւէլի գոհաբանական բարբառովն՝ այն սոյն Քրիս-տոփորան՝ երջանկացուցիչ խրատատուարդեւ Սրբազնասուրբ Հայրապետս Կլէմէս ասել, աջ քո ընկալաւ զիս, և խրատ քո կանգնեաց զիս ի սպառ, և խրատ քո ուսուսցէ զիս։

Զորորդ՝ մանաւանդապէս յայն սակս՝ նախայօժար կամօք աշխատասիրեցի ՚ի սպասաւորութիւն լոյս ածութն սորին Աքան-չելի Մատենիս, զի կայուցից զսա՝ կոթող՝ մշտնջենաւոր յիշատակի՝ ամենասխալ և ամենափառան՝ տարակուսելոցն հոգւով՝ մոլորելոցն ՚ի ճշմարտութե ճանապարհէ՝ կաղացե-լոցն ՚ի յերկուս հետս, որք՝ ըստ Հրաշալւոյն Պօղոսի՝ պճնեալ ունածս և զգայթակղութիւնս առնեն՝ արտաքոյ Առաքելա-կան Վարդապետութեն՝ ոչ ծառայելով Տն մերոյ Քի, այլ իւրեանց որովայնին, և քաղցրաբանութիւ և օրհնութիւ պատ-րեն զսիրտս անմեղաց։

Եւ զի՝ արժան և վէմ մեծ՝ եղիցի սա՝ ըստ կանգնեց-ման Յեսուայ որդւոյ Նաւեայ՝ ՚ի ներքոյ բեւեկնոյն՝ ՚ի վկայ-ութիւն աւուրց յետնոց՝ ՚ի մէջ Ուղղափառ Լուսաւորչա-դաւանից՝ և ՚ի մէջ կամակորացն ճշմարտութեան՝ Թիւրա-շաւիղ որդւոցն մոլորութե հեռացելոցն յազգէս մերմէ, և մոլորեցուցչացն պարզամտաց. որք ըստ ասից Սբյն Ներ-սիսի Լամբրոնացւոյն՝ կատարելապէս անօթ և գործի եղեն կամաց սատանայի՝ զմիութիւն հայաստանեայցս՝ անարատ Սուրբ Եկեղեցւոյ՝ հերձեալ և պառակտեալ ՚ի միմեանց բաժանե-ցին՝ ՚ի մարմնական նահապետաց անուանն խոտորեցուցանել և անուանել և ոչ ՚ի Քնէ. և այնու նախատեցին զՔն Թէ՝ զոր դու միացուցեր՝ մեք դարձեալ քակտեցաք, և զոր դու օ-րհնես՝ Տէր՝ մեք զայն լուծաք, և որով դու ասացեր՝ զքոյին ճանաչել՝ մեք զայն խափանեցաք, և որսացաք զՁերմեռանդ Լուսաւորչածին հաւատացեալսն՝ ՚ի զանազան մեղաց Թա-կարդս՝ ՚ի նախատինս յաւիտենից։

Վասն որոյ հարկ եղև ինձ տեսչիս հոգւոյ՝ հանդիսա-ցուցանել ՚ի մէջ՝ զՇնորհալիս սոյն Սբ Հայրապետ՝ արդա-րաբան բանիւքն իւրովք, որպէս՝ Ճշմարիտ Դաւանութին սորին՝ լցքն ՚ի ձեռս՝ Ամենայն Սբ Եկեղեցւոյս Քրիստոնէականի՝

ըստ մծախեան զաւազանին՝ օձ կլանօղ՝ հերձուածողաց խա-
բէութեանցն՝ 'ի մէնջ հեռացելոյ, և անդնդասոյզ ընկլուզա-
նօղ՝ եգիպտածին ամածիցն՝ ուսուցողացն զճշմարտահաւանաց
աղաւնամտաց՝ 'ի հաղբս մոլորութեան, իսկ մեզ՝ հաւատոյ
հաստատութիւն 'ի Քն Յն նկրտելոցս՝ զօրութիւն այ, և
անսխալ առաջնորդօղ 'ի ճշմարտութիւնն՝ 'ի յերուսաղէմ
վերին՝ 'ի մայրն մեր սիօն՝ ուր քն եմուտ, 'ի ներքին կողմն
վարագուրին։

Բանզի և բազումք 'ի նոյն հերձապետացն՝ 'ի բազում
ուրեք՝ 'ի վկայութիւն առեալ զքանոնն Սբյ Հայրապետին՝
ջատագով լինին 'ի գրոհածս իւրեանց՝ Ողջամիտ Վարդապե-
տութեան՝ Ներսէսի Շնոր Լ.Տ. և երևելին հաւատ ընծայել՝ 'ի
սմանէ դրեալ ուղղափառութեանն՝ և ճշմարտութեան կարգաց
և աւանդութեանց՝ Լուսաւորչադաւան Եկեղեցւոյս Հայաս-
տանեայց, բայց՝ ամենևին սուտ, և բանից սորին ոչ աշա-
կերտին, ըստ Մարգարէին՝ շրթամբք միայն պատուեալ՝ և
սրտիւք հեռացեալ 'ի յանարատ դաւանութենէ՝ և 'ի յուղիղ
կարգաց սորին։

Այսպէս հայր կոչեն իւրեանց՝ զՆերսէսի Հայրապետն,
որպէս մեծատունն՝ զհայրն հաւատոյ զաբրահամ, սակայն՝
ընդաւէին տարակացեալք 'ի խոստովանութենէ հաւատոյ՝ պտանին
անհաւանամնմանք 'ի ճանաչումն ճշմարտութեան։

Արդ՝ սպառ և պատշաճ վարկայ՝ զայն Լուսաւորիչ՝
ուղղափառութիւն պայծառացեալս Մատեան՝ տպագրութիւն՝
առ քոմ Ոսքանազեան տոհմիդ Լուսաւորչածին՝ և առ հա-
րազատ որդիսդ՝ սոյն Ընդհանրական Հայրապետիս՝ հաւատա-
նել. որզի՝ 'ի սմին ներկրթեալ բանեղէն մնաշդ ձեր զօ-
րութեան, և լուսաւորեալ աչք հաւատոյն ձերոյ՝ ըստ Մովսէ-
սեանն աչաց, 'ի սոյն 'ի նախաւ լեանէս՝ կարօղանայցէք տես-
նել զաւետեացն խմանալին երկիր, այժմ յուսով՝ և 'ի հան-
դերձեալն իսկապէս տեսանելեաւ՝ 'ի վերին դաւառին։

Այլ սակս՝ և Երգունին Դաւիթ առ սոյն հրաւիրէ
զամենեսեան յանելն՝ ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տր,
և իմ՝ համոզեալ Մարգարէիս՝ 'ի ճաշակումն ըստ առ Եղե-
կիել՝ 'ի Տնէ սպարգևեալ Մատենին հրաւիրեմ զհամայն
Ուղղադաւան որդիսդ՝ Սբյ Լուսաւորչի՝ Միածնաէջն

Մայր

Մօր մերոյ. զի 'ի յուսոյն ձեր՝ քաղցրանայ 'ի բերանս ձեր իբրև զքաղցրութիւն մեղու, և լուսաւորեալ սրտիւ՝ բանիւն աչք ձեր՝ ը̄ Աղէօսպանցն աչաց. և այնու սկսանիք ըն-տրել առնել 'ի մէջ բարւոյն և յոռւոյն, և յինքնին խոտել զգրուածս Թիւնաշունչ պատրանաց հնատեղցն այնոցիկ:

Օ՜ ի՜ եթէ Ուղղափառութիւն այն է՝ որ զանեղծ հաւատն՝ զանմոլար կրօնն՝ և զանբասիր առաքելութիւնն ունիցի Եկեղեցին Մր̄, աստ՞ զնոյնն՝ 'ի Սրբազանից Նախկին Լուսաւորչացն մերոց 'ի Թադէոսէ և 'ի Բարթուղիմէոսէ քարոզեցեալ, 'ի Բազմաչարչար Սրբոյն Գրիգորէ՝ մեր Լուսաւորչէ՝ ամրապատ հաստատեալ, մինչ ց Սրբազնասուրբ Հայրապետս Ներսէս Շնորհալի՝ անփոփոխ հասեալ, և մինչ ցկատարած յաւիտենից՝ 'ի Հայաստան Եկեղեցւոջս՝ շնորհիւ Տն̄ անվրէպ պահելոց՝ մանրաքննին բացայայտութբ̄ ձառէ սոյն Գրանկլս:

Ուրեմն՝ բաց աչօք տեսէք՝ Որդիք Բրաստեան Մօր, թէ՝ նոյն խարդաւեալքն 'ի մր̄ մայրական դգուանաց՝ լցե՞ն արդեօք 'ի սոյն Ուղիղ Հաւատս ծաղկեալ, և 'ի սմանէ կարգաւորեցեալ 'ի բարեպաշտութն̄ կրօնս՝ պտղաբերեալ. և եթէ զասանիցէք ը̄ այսմ, ապա և դուք ծանիցէք զ լինիլ ճշմարիտ՝ զծնեալս նոցուն. զի և Տրն̄՝ 'ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա:

Իսկ՝ եթէ 'ի բանից նորեանց հեռի են սրտիւք, գիտացէք և դուք, զի մոլորեալք են ինքեանք՝ և զձեզ մոլորեցուցանել ջանան՝ յանուն սրբոց Հայրապետաց՝ զբանս քննական մարգարէութեան կցկցելով. զորոց զանկասկ Ա̄Ծ՝ բերանով Երեմեայ թէ՝ ես ոչ առաքեցի զնոսա՝ և ոչ պատուիրեցի նոցա, և ոչ խօսեցայ ընդ նոսա, զի տեսիլս սուտս և ըղձութիւնս՝ և հմայս՝ և զխաբս սրտից իւրեանց՝ մարգարէանան նոքա ձեզ:

Այլ վասն՝ սպառի իւրաքանչիւր որք հաւատացեալ հոգի փորձել՝ 'ի սմանէ քարոզեալ 'ի Ճշմարիտ Հաւատս, 'ի յՈւղիղ Կրօնս, և 'ի յԱմբիծ Կարգս. որպէս զի՝ 'ի Ճշմարտութեանս այսմիկ պինդ կացեալ՝ կարողանայցէ կարկել զչարաթիւն լեզուս հերետիկոսաց՝ և աղարտագայն զմերս Բարեփառ Խոստովանութիւն, և իբրև զերիւրս հաղարս

պետս

պետս՝ պէսպէս Շնորհայն Ն.Ձ՝ ըստ Սրբազան Առաքե-լոյն Պետրոսի, կէսրուք Դաւանութիւնն՝ 'ի միմեանս մատակարարել; և զանզգամ՝ մարդոյ զանգիտութիւնն պապանձեցուցանել, և պատրաստ լինել 'ի պատասխանիս՝ այլազգ: քրիստոնէից հարցմանցն՝ զմերոյս Հաւատոյ՝ և զԵկեղեցական ուղղութեանց:

Այնպէս՝ և Սրբազնասուրբ Առաքելոյն՝ և Նախկին Լուսաւորչին մեր Յուդայ Թադէոսի՝ սմին իրի աղերսեմք՝ մեզ՝ 'ի փրկաւէտ դիրս նոր՝ յառնկապէս թէ՝ Սիրելիք՝ զամենայն փոյթ յանձին կալեալ դնել ձեզ՝ վասն մերոյ հա-սարակաց փրկութեան. հարկ յանձին կալցի դնել ձեզ և աղաչել, զի ճգնիցէք 'ի վերայ Հաւատոյն՝ որ միանգամ աւանդեցաւ Սրբոց:

Արդ՝ ազգք Յաբեթեան՝ որդիք Թորգոմեան և Լուսաւորչին զաւակունք Արարատեան Սոր՝ եղիցուք այսու հետև արթունք և զուարթունք 'ի պահել սակաւ զանձինս մեր՝ ըստ նախընթաց Ուղղափառութեանն մերոյ՝ որ 'ի Սրբոցն մերոց Լուսաւորչաց Ամենընտրելոցն Հաւատոյ 'ի յԱստուածատուրէն ՔԷ, սրբութիւն հաւատոց 'ի Հոգին Սուրբ, պահեալ զանձինս Սիրով Ն.Ձ. և աներկբայապէս ակնկալցուք ողորմութեան Տեառն մերոյ ՅԻ ՔԻ 'ի կեանս սրն յաւիտենականս:

Եւ զի առ ձեռն ունիցիք և զպատասխանիս առ այլա-սեռ ազինս, վասն որոյ պատշաճ վարկայ ընդ սմա շարակցել և զերիս Թուղթս 'ի սոյն Սրբազնասուրբ Հայ-րապետէս՝ վասն Դաւանութեան մերոյ՝ և զերգեցիկ կար-գաւորութեանց Եկեղեցւոյս՝ գրեալս առ Կայսր Մանուէլ, և զայլս միանաւոր գրութիւնս սորա 'ի ժամանակս ժամանակս՝ ըստ պատահման հարկին՝ առ ոմանս անձինս՝ սակս զանազան բանից: Զի բոլոր բանքն են Ոսկի Խնձոր՝ ընդ սարդիոն յեռեալ:

Եւ զնոսա բաժանեցաք 'ի յերիս հատորս, յառաջ-նումն՝ առ ամենայն հասակ՝ և առ ամենայն կացութիւն զՀոգեշահ Խրատաբանութիւնսն, յերկրորդումն՝ զՈւղ-ղափառ Դաւանութիւնսն՝ և զՀոգեւորաց Արարողու-

թիւն

Թղթոյն՝ Ալեքսանդրու Հայաստանեայց, և յերրորդումն՝ զՄարկապանձեա Գրութիւնսն՝ առ զանազան անձինս՝ մի ջեռոյ միոյ. շարակարգեալ. ընդ նոսին և իւրաքանչիւրոցն՝ յառաջ յառաջել Գրքոյ Յանձն. իսկ զմանրամասնականս՝ համառօտ բանիւ. զՅանձն Լեզուականն՝ եդաք 'ի յաւելուած Գրքոյս:

Իսկ զԹուղթսն՝ Սրբ. Մանուէլ Թարգմանչին Յունաց՝ և նոցին Պատրիարգացն՝ ոչ ընծեռն համարեցաք 'ի մի շարադասել ընդ սմա. ըստ բոլորին, որովհետև՝ ոչ գոյր հնարաւորութիւն ինչ Լուգիոս մերոյ 'ի նոսա, և ոչ բոլորս վին անհետ առնել. ուստի՝ արժան դատեցաք՝ դերկումեայն 'ի նոյն Գրեանցն՝ աստ շարակցել 'ի յօդուած հանրին. որպէսզի՝ կարող լինիցիք սոքօք խմաստասիրել և գինացեալն, և այնու մերասելանալ՝ ողջնոյ մաքրս 'ի միաւորութիւն սիրաքորքոք տենչանաց սրտից նոցա՝ 'ի Միաւորութիւն՝ ընդ Սրբեղեան Եկեղեցւոյս Կաթուղիկէի:

Քանզի՝ մերս ջանն էր՝ 'ի լոյս ածել՝ Հարազատ Սըրբագրութեամբ՝ զմերս Հաւատոյ Ուղղափառութեան Գատագով՝ Սրբոց Հայրապետացն՝ զՍրբազանն Լուսաւորչին, առ 'ի ոչ Թողուլ՝ կալ մնալ 'ի յանկիւնս գրքատանց՝ և ծածկեալք ընդ գրուանաւ:

Զի բաւական են Սուրբ Գրոց՝ շարամանութեամբ բառից՝ որպէս կեղևովք գոյն պատեալք, և զգեղեցկունն է քաղցրութեան 'ի ներքս Թագուցեալք, մի լիցին և 'ի մեզն՝ ըստ ամենայնի մոռացութեամբ 'ի փոշիս զաղեցեալք. այլ սակս՝ ոչ ծանր ինչ աշխատանս՝ մեզ համարեցաք, և ոչ զծախս խնայեցաք 'ի լոյս ածումն սորա, զի գոնէ կարասցուք՝ ընդ աւետաւոր 'ի Տէր պարծանաց արժանաւոր գործոց՝ Առ իբրև Լուսաւորչածինք՝ ունել և [illegible] պանծանաց: Զի սա է Ծառ Կենաց, և Մանանայ Երկնաւանդոյ:

Այսու օրով՝ և 'ի վախճանի Մատենիս՝ դասեցաք և զ[illegible] արժանեայն զՆերսոյն Գրաւատականն՝ 'ի վերայ Լանս Մ. Ս. Զօրեքամեանեայ Միացաւ Տեառն՝ Երկրաւոր Քերոբէից; և Լ. Թագաւորաց [illegible] (որոյ՝ Մեղրածորան Բանքն են

մեզ Հայկազանեացս՝ Զարթուցիչ և Կանխիչ Շնորհ-
ու հանդերձեալ Փառաց, և առ յաւիտենական Երջա-
նկութիւն՝ առաջնորդ հրաւիրակ,) ՚ի Մերում Երանելի
հանճարահամակցէն իւրմէ Յանգործացուցմ՝ համբերելի ոսկւոյ
ոգեալ։ Զի և ՚ի սոյն Աշխարհաբար Փոփոխութեանս որ-
քեալ ձեր՝ կարասջիք զշահ առնուլ Երանելի Ընծային
Սրբութեան Վարուցն՝ Աշխարհաճանաչութեան ՚ի խոստովանու-
թիւնս, և Ընծայանելի մնոյ՝ ՚ի Ճշմարտութիւնս Խա-
խաշանէից մեզ՝ Սրբակնոտութը Հայրապետութ։
Բանզի՝ Ընծայինան հայելոյ Բարեբանութիւնն՝ Սր-
ծանեծոյ և Ընծայնոյցն է անդ։
Եւ ՚ի յօգուտին ձեր ՚ի սմանէ՝ արասջիք յիշման արժանի՝



[illegible]
Տեր [illegible]
[illegible]
[illegible] Սր[illegible]
[illegible]
[illegible] Հայրապետին [illegible]
Մեծին, [illegible]
[illegible]



Ներսէս՝ Փրկչէն ՚պատկեր գծեալ, վարժօղ բարեաց ուսման եղ   եալ.
անձինն յետ իւր՝ ընդյառ Թող   եալ, որ աստ գրով կայ շարագր   եալ։

Թուղթ ընդհանրական՝ Ներսէսի Կաթուղիկոսի Հայոց. Առ
համօրէն հայաստանեայց ազգին,
Որոյ տեսչութեան հաւատացաւ նմա ՚ի Տեառնէ.

ՆԵՐՍԷՍ ԾԱՌԱՅ
ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ Ի ՍՊԱՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ

նորին՝ Կաթուղիկոս Հայոց. Ընդհանուր հաւատացելոց
հայկականացդ սեռից (որք՝ յարեւելս ՚ի սեպհական աշ-
խարհէդ հայաստանեայց բնակեալք. եւ որք՝ յարեւմտեան
կողմանսդ սահեալք նշխեհութբ. եւ որք՝ ՚ի մէջերկրեայս
՚ի մէջ այլոլեզուաց ազգաց տարաբնակեալք. եւ որք յիւրաքանչ
իւր յերկիրս աշխարհաց՝ ըստ մերոց մեղաց ցրուեալք ՚ի
քաղաքս, եւ ՚ի գեղօրայս, ՚ի գիւղս, եւ յագարակս. որոց ազ-
գօրէն անուանեցուցեալ՝ Քահանայապետաց եւ Քահանայից.
վանականաց եւ քաղաքացւոց, իշխանաց եւ իշխեցելոց, զին-
ուորաց. դասուց՝ հրամանատարաց եւ հետեւակաց, դաշնաւորե-
լոց եւ գործակալաց. առնուտերաց եւ երկրագործաց. վա-
ճառականաց եւ արհեստաւորաց. եւ որոց՝ միանգամայն ՚ի
զանազան ճանապարհս ընթացեալ կենցաղոյս. ՚ի ընդհանուր

ա

կամաց և յօժարութե. արանց և կանանց, մանկանց և երի-
տասարդաց, կատարելոց և ծերոց, որք ըստ օրինաց աշ-
խարհի քաղաքավարեալք, և որք գերաշխարհիկք են վա-
րուք) Ողջոյն սիրոյ և խաղաղութե՛ հասցէ յԱ՟ծընկալ և
փրկական Սբյ նշանէս, և՚ի հրեղէն լեզուաց հոգւոյն ըն-
դունողաց Առաքելական նշխարացս, և՚ի սուրբ լուսաւոր-
չին մերոյ յաջէս և յաթոռոյս։

Որոյ առաջի պաղատիմք յաղաչանս՝ որ առ Ած, յաղագս
ոգւոց ձերոց փրկութե, բանալ զականջս մտաց ձերոց՝
յունկնդրութե՛ Ածայնոց բանից պատգէի, զոր հանդերձեալ
եմք 'ի պատուէրանացն Այ՝ դնել առաջի ձեր։ Որպէս զի՝
առաջնորդեալ մեզ 'ի շաւիղս արդարութեան՝ արժանի
եղիցի իւրաքանչիւրոք 'ի ձէնջ՝ միոյ օթևանաց տան հօրն
երկնաւորի՝ լինել ժառանգաւոր։

Հայցեմ և ես յամենեցունց՝ աղօթս առնել և
վասն մեր։ Բարւոք տալ Այ զհամար անտեսութեանն՝ որ
վասն ձեր, յորժամ կոչեալ պահանջեսցէ 'ի մէնջ։

Գիտութիւն լիցի ամենեցուն ձեզ. զի հայրն մեր հո-
գևոր, և եղբայրն ըստ մարմնոյ, սրբազան Կաթուղիկոսն
Գրիգորիոս՝ Աթոռակալն և արեանառուն՝ մեծի լուսա-
ւորչին հայաստանեայց, և համանմանն նմին՝ մաքրութե
անձին և խոնարհութե. Այն՝ որ բարւոք հովուեաց երկայն
ժամանակաւ զհօտ բանաւոր՝ զոր ետ ցնա Քս. ըստ
Պետրոսի՝ թէ արածեա զոչխարս իմ։ Որոյ հասեալ 'ի կա-
տարումն հասակի՝ ըստ Նահապետայն կարգի, նախ քան
զվախճանն՝ ազդումն եղեալ նմա 'ի հոգւոյն, կոչեաց զե-
պիսկոպոսունս՝ և զվարդապետս, և զհարս սբյ լերինն, և
զորս 'ի յայլ կողմանց։ Եւ թէպէտ՝ մեք 'ի բազում ան-
գամ կոչմանէ նորին յայսոսիկ՝ հրաժարէաք յառաջին
ժամանակն, անարժան զանձն վարկանելով։ Սակայն՝ յայժ-
մուս՝ ակամայ բռնադատելով զմեզ՝ ինքն և ժողովք Եպիս-
կոպոսացն, ձեռնադրեաց զմերս անարժանութիւն՝ յաթոռ
Կաթուղիկոսութեան ազգիս հայկայ, և տանն Թորգոմայ։

Եւ իբրև կատարեաց զգործ հրամանին՝ որ ազդեցաւ
նմա 'ի վերուստ, յետ երից ամսոյ՝ փոխեցաւ իբր կոչմամբ
առ Քս, դասաւորելով ընդ հարսն՝ հայրապետան, ՟է Թա-
քեալսն

քեալսն՝ երկոտասանիցն լուսոյ. ընդ հալածեալսն վասն ար-
դարութեան՝ համբերօղն 'ի հալածանս, և 'ի զանազան փոր-
ձութիւնս 'ի հակառակացն ճշմարտութեան. ընդ փառաւոր-
եալսն՝ պատուեալն յոյժ և 'ի մարդկանէ 'ի կեանս. Որոյ
և մահ՝ պատուական եղև առաջի Տն, ըստ գերադունից
սրբոց. զորոց ասէ մարգարէն. Ինքն՝ նաւաւ հաւատոյ՝ ընդ
ծով աշխարհիս՝ հողմով հոգւոյն՝ ուղղակի նաւապետեալ
ճշմարտութիւն և առաքինութիւն, էհաս անփոյթ՝ յանդորրութ
և առանց ալեաց նաւահանգիստն. և զմեզ եթող 'ի տա-
ժանելի և յաղձաւոր կեանս, 'ի մէջ օձից և կարճաց, և զա-
նազան խածանօղ գազանաց, երևելեաց և աներևութից.
և ոչ այս միայն, այլև՝ ծանրութեան բեռանց 'ի ներքոյ՝ հո-
գևորաց և մարմնաւորաց. Յորոց կրից թեթևացեալ Ինքն
թռեաւ յիմանալեացն կայանս. մերումս տկար և անզօր
անձին յանձնարարեալ՝ բառնալ թեկանց զծանրութիւն
հօտուց՝ ամենայն Եկեղեցեաց.

Եւ Ես իմ յոյսովիկ եղեալ զարհուրիմ սարսեալ, զահ
և զերկիւղ դատաստանին այ զմտաւ ածելով, որ վասն հով-
ուաց և Առաջնորդաց՝ 'ի հին և 'ի նոր կտակարանս ասա-
ցեալ. Մինչ զի՝ ոչ տալ քուն աչաց կամ նինջ արտևանաց,
յերկիւղէ այսոցիկ՝ չարչարեալ ոգւոյ իմոյ.

Քանզի՝ 'ի բազումս և 'ի զանազանս բաժանին, ան-
ուանս և յերս, մի գործ տեսչութեան ոգւոց, որ կոչի Կա
թողիկոսութի, և Հայրապետութիւն. Եպիսկոպոսութի,
և Քահանայութիւն. և մի քան զմի առաւելեալ և նուա-
զեալ. Քանզի՝ որ մեծն է 'ի սոսա՝ ծանրագոյնն բեռանց է
'ի ներքոյ. որպէս պարունակօղ զամենայնն. Սակայն՝ ըստ
գործոյն՝ անուանադրութիւնքն՝ միև նոյն են իւրաքանչիւրոյն,
Քահանայութեան և Քահանայապետութեան.

Քանզի՝ վերակոչին ծնօղ, դայեակ, վարդապետ, բժիշկ,
դէտ, հովիւ, առաջնորդ, միջնորդ, դատաւոր, և այլ և՝
բոլորովադոյն անուանս, որով խորհուրդք Տէրպաշտութեան
կատարին, և օրէնք Եկեղեցւոյ Քի՝ ամբողջ մնայ.

Եւ արդ՝ զիա՞րդ օտար եղեալ 'ի մօրէ՝ կարիցէ լինել
[illegible] ծնօղ. կմ դայեակ իբր Պօղոսի. զի ասէ որդեակք իմ, զորս
երկնեմ վերստին՝ մինչև նկարեսցի քս 'ի ձեզ. և դարձեալ

որպէս

կամաց և յօժարութե. արանց և կանանց, մանկանց և երի-տասարդաց, կատարելոց և ծերոց, որք ըստ օրինաց աշ-խարհի քաղաքավարեալք, և որք գերաշխարհիկք են վա-րուք) Ողջոյն սիրոյ և խաղաղութե՝ հասցէ յԱ՟ծընկալ և փրկական Աթ՟յ Նշանէս, և՝ ի հրեղէն լեզուաց հոգւոյն ըն-դունողաց Առաքելական նշխարացս, և՝ ի սուրբ լուսաւոր-չին մերոյ յաջէս և յաթոռոյս։

Որոյ առաջի պաղատելովք յաղաչանս՝ որ առ Ած, յաղագս ողջոյն ձերոյ փրկութե՝, բանիւ զակնածս մտաց ձերոց՝ յանձնարարութե Ածայնոյ բանից այսոցիկ, զոր հանդերձեալ եմք՝ ի պատուէրանացն Այ՝ դնել առաջի ձեր։ Որպէս զի առաջնորդեալ մեօք՝ ի շաւիղս արդարութեան՝ արժանի եղիջիք իւրաքանչիւրք՝ ի ձէնջ՝ միոյ օթևանաց տան հօրն երկնաւորի՝ լինել ժառանգաւոր։

Հայցեմ և ես յամենեցունց՝ աղօթս առնել և վասն մեր։ Նարուաք տալ Այ զհամար տնտեսութեանն՝ որ վասն ձեր. յորժամ կոչեալ պահանջիցէ ՝ի մէնջ։

Գոհութիւն լիցի ամենեցուն ձեզ. զի հայրն մեր հո-գևոր, և եղբայրն ըստ մարմնոյ, սրբազան Կաթուղիկոսն Գրիգորիոս՝ Աթոռակալն և սրբանուաստն՝ մեծի լուսա-ւորչին հայաստանեայց, և համանմանն նմին՝ մաքրութե՝ ջանիւն և խոնարհութե. Այն՝ որ բարեաւք հովուեաց երկայն ժամանակաւ զհօտդ բանաւոր՝ զոր ետ ցնա Քս. ըստ Պետրոսի՝ թէ արածեա զոչխարս իմ։ Որոյ հասեալ ՝ի կա-տարումն հասակի՝ ըստ Նահապետայն կարգի, նախ քան զվախճանն՝ ազդումն եդեալ նմա ՝ի հոգւոյն, կոչեաց զե-պիսկոպոսունս՝ և զվարդապետս, և զհարս ս՟յ լերինն, և զորս ՝ի յայլ կողմանց։ Եւ թէպէտ մեք ՝ի բազում ան-գամ կոչմանէ նորին յայտուսիկ՝ հրաժարէաք յառաջին ժամանակն, անարժան զանձն վարկանելով։ Սակայն՝ յայժ-մոյս՝ ակամայ բռնադատեալ զմեզ՝ ինքն և ժողովք Եպիս-կոպոսացն, ձեռնադրեաց զմեր անարժանութիւն՝ յաթոռ Կաթուղիկոսութեան ազգիս հայկայ, և տանն Թորգոմայ։

Եւ ինքն կատարեաց զգործ հրամանին՝ որ ազդեցաւ նմա ՝ի վերուստ, յետ երից աւուրց՝ փոխեցաւ ինքն կոչմամբ առ Քս, դասաւորելով ընդ հարսն՝ հայրապետան, ԺԲ Առա-

քեալսն

ջեալսն՝ երկոտասանիցն լըռւմն. ընդ հալածեալսն վասն արդարութեն՝ համբերօղն 'ի հալածանս, և 'ի զանազան փորձութիւս 'ի հակառակացն ճշմարտութեան. ընդ փառաւորեալսն՝ պատուեալն յայս և 'ի մարդկանէ 'ի կեանս. Որոյ և մահ՝ պատուական եղև առաջի Տն, ըստ գերադունից սրբոցն. զորոց ասէ մարգարէն: Ինքն՝ նաւաւ հաւատոյ՝ ընդ ծով աշխարհիս՝ հօգմով հոգւոյն՝ ուղղակի նաւապետեալ ճշմարտութը և առաքինութը, էհաս անփաս՝ յանքոյթ և առանց ալեաց նաւահանգիստն. և զմեզ եթող 'ի տաժանելի և յաղձաւոր կեանս, 'ի մէջ օձից և կարճաց, և զանազան խածանօղ գազանաց, երևելեաց և աներևութից. և ոչ այս միայն, այլև՝ ծանրութե բեռանց 'ի ներքոյ՝ հոգևորաց և մարմնաւորաց: Որոց կրից թեթևացեալ ինքն թռեաւ յիմանալեացն կայանս. մերումս տկար և անզօր անձին յանձնարարեալ՝ բառնալ թիկանց զծանրութիւն հօգւոց՝ ամենայն Եկեղեցեաց:

Եւ իմ յայսոսիկ եղեալ զարհուրիմ սարսեալ, զահ և զերկիւղ դատաստանին այս զմտաւ ածելով, որ վասն հովուաց և Առաջնորդաց՝ 'ի հին և 'ի նոր կտակարանս ասացեալ: Մինչ զի՝ ոչ տալ քուն աչաց կամ նինջ արտևանաց, յերկիւղէ այսոցիկ՝ չարչարեալ ոգւոյ իմոյ:

Քանզի՝ 'ի բազումս և 'ի զանազանս բաժանին, անուանս և յերս, մի գործ տեսչութեան ոգւոց, որ կոչի Կաթուղիկոսութի, և Հայրապետութիւն. Եպիսկոպոսութի, և Քահանայութիւն. և մի քան զմի առաւելեալ և նուազեալ: Քանզի՝ որ մեծն է 'ի սոսա՝ ծանրագունի բեռանց է 'ի ներքոյ. որպէս սպարունակօղ զամենայնն: Այսպէս՝ ըստ գործոյն՝ անուանադրութիւքն՝ միևնոյն են իւրաքանչիւրոյն, Քահանայութեն և Քահանայապետութեն.

Քանզի՝ վերատեսչին ծնօղ, դայեակ, վարդապետ, բժիշկ, դէտ, հովիւ, առաջնորդ, միջնորդ, դատաւոր, և այլ և՛ս յոլովադոյն անուանս, որով խորհուրդ Եպիսկոպոսութե կատարի, և օրէնք Եկեղեցւոյ Քի՝ ամբողջ մնայ:

Եւ արդ՝ զիա՞րդ ատար եղելոց 'ի մերէ՝ կարիցէ լինել ոք ծնօղ. կամ դայեակ քո Պօղոսի. զի ասէ որդեակք իմ, զորս երկնեմ վերստին՝ մինչև նկարեսցի քս 'ի ձեզ: և դարձեալ

որպէս

ող փայեալ մի՝ որ սնուցանիցէ զմանկունս, այնպէս զԹայոյք ՚ի ձեզ ։ Օչ ծնեալքն՝ ընդ սիրեն զծնօղսն ․ և սնեալքն՝ զդայեակսն ։ Իսկ՝ առ որս փոխանակ սիրոյ՝ ատելութիւն և օտարութիւն, զի՞նչ յոյս գոյ ծնանելոյ զայնպիսին մե-րրատին՝ Ընթերցն բանիւն յապաշխարութիւն ․ կամ սնու-ցանելոյ հայրօրէն, ուսմամբ և երկիւղիւ Տն զնոսա ․

Այդ հնար՝ լինել վարդապետ՝ ուսուցիչ, և քարոզ-ելանել ընդ հրամանին նոյ՝ ՚ի վերայ բարձու լերին Սիոնի, որէ Եկեղեցի Սուրբ ․ և բարձրացուցանել զբարբառ Աւետա-րանին, և ոչ երկնչել ․ կամ՝ ըստ Պօղոսի որ առ Տիմոթէ ոս՝ քարոզել զբանն ՚ի ժամու և ՚ի տարաժամու ․ յանդի-մանել՝ սաստել, և մխիթարել ․ ուր՝ աշակերտեալքն ցըր-ուեալք են, և ոչ ժողովեալք ՚ի վարժարանի ․ և ոչ սիրօղք վարժից ճշմարիտ իմաստութեան ․ այլ՝ ատելութեան և նանրութե ․ և առ չարութիւն կատարեալք ․ և ՚ի բարեաց տղայացեալք ։

Օ՜ խա՞րդ բժշկական գործոյն՝ կարեմք լինել նմանօղ, առ հիւանդացեալ ոգիսն ՚ի խայթմանէ կամակոր վիշապին, ՚ի բնաւորականաց՝ կամ յանընկալունացն յախտից բժշկել-ջանալով ․ ուր՝ ախտացեալքն՝ ոչ միայն ոչ են ՚ի խնդիր առողջարար արուեստի՝ հոգևոր բժշկաց ․ այլև՝ դժկամակ լինին յորդուածս դեղոցն օգտակարութե, եթէ ոք մատու-ցանէ նոցա յանդիմանութիւն, կամ խրատ՝ ըստ ասացմց առցանցն նմանութե ․ որոց դառն մաղձիւք ապականեալ կեն ․ Եւ ոչ միայն, այլև՝ ընդդիմամարտեն և ոչ նոյին, թէ բժի՛շկ՝ նախ զանձն քո բժշկեա՛ յայդպիսի ցաւոց ․ և ապա՝ առ իս մատիր յանդիմանօղ քո բանիւ ։

Կամ զիա՞րդ այն քան հեռացելոյ ՚ի մէնջ տեղեաւ և սիրով՝ հնարէ՞ լինել դէտ, ըստ հրամանին նոյ՝ որ առ Եզե-կիէլ ․ թէ՝ որդի՛ մարդոյ դէտ կացուցի զքեզ տանդ Իսրայ էլի, զի թէ ոչ ազդեալ առդ արասցես նոցա զգաւրանս կալութիւն և զապստամբ թշնամւոյն, և նոքա ապանցին կամ կորիցեն, զարիւն նոցա ՚ի ձեռաց քոց խնդրեցից ։ Այդ միայն ունիմք մխիթարութիւն յայսմիկ, զհետ բանին՝ զոր ասէ նա առ այն մարգարէ ․ զի թէ զձայն բարբառոյ քոյ լուիցեն, և մնասցեն եղեալ կործեն, դու զանձն քո ապրեցուցեր՝ ասէ, և արեան նոցունց, անպարտ

լինին

լինելն պատրաստականք։

Զիա՞րդ հնարէ մեզ, և զհովուութեան որդին լինել, ՚ի վայրս դալարոյ Յիսուսեան օրինացն հանգուցանել, և կեն դանարար ջրով Հոգւոյն խնամութեան սնուցանել, զգայթեալս հալածել, և զվիրաւորեալն բժշկել, ՚ի բարեաւ լինելով հով ուէին և հօտից, յոյժ հեռաւորութեամբ ՚ի միմեանց։

Զիա՞րդ կարելի է մեզ լինել առաջնորդ այնպիսեաց, որք ոչ կամին հետոց առաջնորդին յօժարին ընդ արքու նականն ընթանալ ճանապարհ՝ որ տանի յերկինս ։ այլ ընդ լայն և ընդ արձակ պողոտայն, որ տանի հատուցանէ յատակս դժոխոց։

Ո՞րպ կարասցուք լինել միջնորդ ՚ի մէջ Այ և մարդկան, այնպիսեաց՝ որք ոչ կամիցին պահել զպատուիրանս ուխտին՝ զոր եդին ընդ Այ, միաբանութեան հրաժարել ՚ի սատանայէ, և յամ գործոց նորա, և ՚ի պաշտամանց նորա ։ այլ ուխտա զանց եղեալ ուխտին՝ զոր եդին Հոգւոյն սրբոյ յաւուրն մկրտութեան, զկնի չարեացն ընթանան յօժարական կամօք՝ բա նիւք, և գործովք։

Զիա՞րդ կարիցեմք և զՔահանայապետական դատա ւորութիւն՝ ՚ի գործ արկանել, առ այս այնպիսիս որք ոչ միայն զաստուածային Յիսուսին օրհնութիւնս՝ ոչ խնդրեն պահել հնազանդելով։ այլ ՚ի դատաւորաց Եկեղեցոյ՝ նորին դա տաւորք անսիրանեն, և խիզախեն գերանդուիր ոչոք եղեալ դատէն միշտ չարաչար բամբասանօք, և անդրունեն բերա նովք զչիք յանդգնոց վարուց նոց։

Եթէ որդ՝ վասն զի այսպիսի այսպէս, զորհուրդն և զդա ղամ՝ յերկիւղէ դատաստանացն Այ։ մի՛ դուցէ այն գործ ածութեան յանձն եղեալ կին ջոյ, փոխանակ փառաց անարգութեան լինիցի պատճառ, և փոխանակ անթառամ պսակացն ըստ խոստմանն տեառն եղելոց։ Եւ փոխանակ լսելոյ Թէ՝ ծառայ բարի և հաւատարիմ, որ և ծառայքն՝ որ յարդեցին զառնել տաղանդսն, և շահաբերք եղեն տանն, զահագին լսել և զսարսափելին հրամանն ընդ ոչ շահեցելոյ ծառային, Թէ՝ ծառայ չար և վատ, պարտ էր քեզ զարծաթ քաղցր իմոյ արկանել ՚ի սեղանաւորս, որք են ոգիք մարդկան, և ես եկեալ տոկոսեօք պահանջէի զիմն։

այս

այսինքն՝ ընդ բանին զոր 'ի քէն լսէին, և զգործոյն կատա-
րումն 'ի լսողացն։ Այլ զի՝ դու ոչ ետուր քոց ծառայակ-
ցացն զկերակուրն հոգւոց, յորժամ ժամանակ էր լսելոյ.
զնա յաղօթից՝ առնել, առէք 'ի դմանէ զարծաթ շնորհաց է-
մոց, և տուք այնմ՝ որ կատարելապէս աճեցոյց զբան իմ,
ըստ կատարեալ թուոյ՝ տասն քանքարացն. և զծառայդ՝
անպիտան եղեալ 'ի գործ պաշտաման իմոյ՝ յորում եդի,
հանէք 'ի խաւարին արտաքին։

Այլ թէ զի՞նչ աւարից զի ապրեցի անձն իմ՝ յաշխա-
նայեսր տրտմութեանց առնել, տարակուսելի է ինձ։ Քանզի՝
չմերձել առ ամենեսեան՝ ընդ համ կողմունս աշխարհի, և քա-
րոզել զբանն այդ՝ ըստ նմանութեան Առաքելոցն սրբոց՝
անկարելի է, յաղագս ժամանակիս չարութեան, և բազմա-
խառնութեան։ Այլ քաղաք Աստուածորական, և բազմաժողով՝
ոչ գոյ աստի մերում, որպէս զի՝ անդ անդր նստեալ
յԱթոռ Հայրապետութեան և վարդապետութեան, ու-
սուցանէաք ժողովրդեան մերոյ՝ զնմին սրբոյ ուսուցանէին, ըստ
Առաջին Հայրապետացն և Վարդապետացն։ Այլ եթէ եր-
բեմն զայծեամն յարսուրդաց, և 'ի շահից փախուցեալք 'ի քա-
ղաքացւոց յայս բնակեալ. յորում ոչ և մարմնական հար-
կաւոր պիտոյիցս շատացեալք 'ի գիւղից, կամ յագարակաց,
յարեց ունիմք և ոչ մի։ Նաև ոչ անդաստան հողոյ. զի
փառատեսք և աշխատութիւն զպէտս մեր լնուաք, և ոչ օգ-
նութեան ումեք՝ այդ արժան էր՝ 'ի Աստուածորաց և յիշխանաց
'ի Քրիստոնէից յաւանդելոց։ Այլ միայն 'ի տունէ այդ. ըստ մարգարէին
խոստմունս, զի ասէ՝ ընկեա 'ի Տէր զհոգս քո, և նա կերակրէ
զքեզ. Այլ դարձեալ ո՞ յուսացաւ 'ի Տէր և յամօթեցաւ։

Այլ զի՝ այսօրինակ այսպէս, և սակաւաւորք դատաստա-
նին այդ անմերձելիք, 'ի վերայ պղերդացն հովուաց և հեզա-
ցելոց, որք ոչ պարծեն զբանաւոր հօտս Քրիստոսի յանձնեղէն նոյ
վարդապետութեամբ, և ոչ արբուցանեն զջուրն կենդանի՝
խնամութեան այդ։

Այլ զի՝ իմս տարաամութեան՝ անկանայց վիճակ հո-
գևոր առաջնութեան, յորում ոչ է արժանութիւն
ոգւոյ, և ոչ զօրութիւն մարմնոյ, և ոչ պատահումն բարւոյ
ժամանակի, ըստ վերադրելոցդ։ Այս որոյ՝ անգիտանամ

եթէ

եթէ զի՞նչ գործեցին։ Թողուլ լքանել զհօտն՝ հալածա-
կանացն ՚ի խնամոց հովուաց, և գգուանօք ՚ի գայլոցն ստա-
նելով յափշտակեալս, և մնացեալս ածել՝ անհաւատութեան է
նշանակ, մանաւանդ՝ զի տողք փրկեն մեզ, և ոչ՝ ապաքէն
Քահանայք՝ թէ ․․․ ազատութեան որ գործէ՝ զհանդերձեալսն
ընկէց զանն, բայց՝ սակաւ, բնաւ յերկնաւորն հրամանէն։
Իսկ՝ զխտութիւն՝ բազմաց և սատանայագործն։ Թէպէտ և
յայտնի ․․․ ․․․ յանաստուածութիւն բարուցն և չարի.
թէ և կամաւ որ աղխառնաց։ Իսկ՝ վասնթան ՚ի խորհուրդ և
հաւատացեալ զատ ասպնջական գործոյ հայրենաւորութեան, և
մերձ անձն ընդդէմ զկալուն բանից մեր ՚ի բերանս հօրուց
առաքելոցն ՚ի Քս, ասէ անհնարինքն է, ․․․
․․․ ․․․ և ․․․, ․․․ ․․․ զայս ասել։
Ասացին՝ զի մի ամենեքեան ․․․ եղիցուք ․․․ հա-
ճոյականք ․․․՝ մեզ ՚ի փրկութեան մեր, ․․․
զատուցաք մեզ, և որպէս մեզ Աստուածութեամբ և փրկագործութեամբ,
յաջողեցուցանել մեզ զօրով պատուիրանացն մեր, ՚ի հնձ և
՚ի նոր կտակարանս։ Սկսանելով յայսմիկ մեծի Առաքելոյն
Պօղոսի, որ ոչ միայն շրջելով ՚ի սար աշխարհ քարոզէր
զաւետարանն, այլ և ինքն իսկ ասէր, յորժամ մինչև ՚ի լերկ
կեայ, այլև ՚ի կապանս դոյով թղթովք հաստատէր զաշա-
կերտսն. այլ և յայս ասէ գրելով, պարտիմք զձեզ՝ եւ որ
կապեալս եմ ՚ի Տր, արժանի զնալ կոչմանն՝ յոր կոչեցարուք։

Ընդ նմին և մեք՝ ․․․ ՚ի կամնմէր բանիւ և ՚ի
կարգանաց, յայսմ ատեանին քաղաքաւոր ․․․,
զոյլ ձեռին մերոյ խօսիմք՝ որք բերանով ընդ ամենեսին,
որ ունիցին ականջս լսելոյ։ Ո՛չ զմեր ինչ բան, այլ զհաւա-
քեալսն և զմարգարէիցն, և մարգարէտայն եկեղեցւոյ,
երկրորդելով զբանից նոյ զօրութիւն՝ ՚ի լսելիս ձեր։ Զոր
եթէ լուեալ՝ յօժարութիւն ՚ի միտ առնուցուք, որք բարի
երկիր, և պարարտ՝ զսերմանեալսն յինքեան, և գործով
պտղաբերեսջիք մեզ, անձանց ձերոց փրկութիւն, և մեզ մար-
ձուց լինիցիք պատճառ։ Ապա թէ որ ո՛չ լուիցէ մտադրու-
թեամբ, այլ արհամարհիցէ որք ապստամբ յայս, և կամ թէ
լուեալ և ոչ պտղաբերեսցէ գործով զարդարութիւն, այլ
անզգամ հոգւով և ապառաժ սրտիւ կայ անշարժութեամբ ՚ի

մեղս

մեղս անդրանիկ. մինչև 'ի վախճան յաշխարհ ամենայն ևմք յարենէ
նէր, առաւելի զԲՆ միաւորութեան նոր. և հրեշտակաց նր. և ձեզ
լսողացդ ամենեցուն. Հանդէպ մեր խորհեցաք. կամ արդեւլաց
'ի պատմութեան նմա գրեան Ն. Յ.

Նմա թ՝ որ 'ի մասունս մարմնոյ՝ քան զնա պատուա կանխադրեն և առաւելին՝ գլուխն է, յաղագս անդէւոյն բարձրութեան, և զգայարանացն 'ի նմա եղելոց. և այսպ՝ այլքն յանդամոցն մե քաս մինչև, ոտքն՝ և պանդամն հաղուայն՝ մեծ և առաւելին իբրև զգլուխ է հաւատոյն ճշմարտութեան, և մե նմին յարմարեալք՝ որ անձն ընդ գլխոյ՝ գործք արդարութ՝ մեծամեծք և փոքունք, բաւ պատուոյ կարծեացն քի նոյ. Սան պտուղի՝ և մեզ՝ նախ և առաւելին՝ գլխոյն տամ բարութեան՝ զհաւատոյն բուան հարկանելով զկցուք առաւելի լսողացդ. Ոչ նոցա ինչ գրելով, այլ 'ի վերայ հիման Առաքելոց և մարգարէից, և հարցն սրբոց շինելով հաստատ բանին. Զի մի յանուանէ ազգ խորաց՝ լսելով բանն՝ որ ոչ բան տաղ զաւխա Եկեղեցւոյ դաւանութեան, այլ արտաքոյ Եկեղեցւոյ դրոց բարբառին՝ 'ի կործանումն լսողաց. մոլորեցի որ 'ի ճշմարտութենէ Ն.Ա. զի գիտիցէք թէ յոյժ արդեօք հաւատացիք 'ի միութիւն անուր, ըստ Պօղոսի՝ զի ասէ, գիտեմ յո հաւատացեալս եմ. Եւ կամ թէ՝ որպէս արժան է ուսանել՝ ուղղափառ քրիստոնէից զդաւանութիւն հաւատոյն, որում՝ և սկսանիմք՝ պարզ և յայտնի բանիւ ցուցանել զհաւատոյ ճշմարտութեան դաւանութիւն.

Պարտ և արժան է մեզ երկրպագուաց, և յանուն նորա Եկեղեցւոյ միաբանելոց, խոստովանել համառօտ՝ զերրորդ անձնաւորութիւնն՝ Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ. մի բնութեան. մի Աստուածութեան. և մի իշխանութեան. համապատիւ և զուգակշիռ. Ոչ յումեքէ եղեալ, և ոչ յերկոյ սկսեալ, և ոչ 'ի խոնարհութենէ 'ի բարձրութիւն ամբարձեալ, կամ 'ի տկարութենէ 'ի զօրութիւն փոփոխեալ. այլ միշտ քան զամ յաւիտենական էր, և յաւէտ մնալ է, և յանվախճան յաւիտեանս՝ եղիցի. Մնեղ և անմահ էութիւն, աներևոյթ 'ի բնութենէ, և երևելի վասն արարածոց. անտես ամենայն, և անտես յամենայնէ.

Հայր՝ անսկզբն և անծին. Որդի՝ ծնեալ 'ի բնութենէ

Հօր

Հօր, այլ՝ անժամանակ։ Ո՛չ ըստ մարդկան ծննդեան ախտաւոր և հոսանուտ, զոր և զմտաւ ածելն է հայհոյութիւն, թողլթէ՝ բարբառել բանիւ։ Այլ որպէս լոյս ՚ի լուսոյ, և հուր ՚ի հրոյ, զի ոչ են օտարք ՚ի բաժանելն, այլ մի ճառագայթ, և մի ջերմութիւն հրոյն, և լուսոյ. ծնեալն, և յորմէ ծնաւն, և մի է բնութիւն երկաքանչիւրոցն, թէպէտ և բաժանին ՚ի միմեանց անձամբ։ Այնպէս՝ և լոյս որդի՝ ՚ի լոյս Հօրէ, և հուր Աստուածն որդւոյ, ՚ի հրոյ Աստուածն Հօր յառաջ եկեալ ծննդեամբ, ոչ են այլևայլ, այլ մի և նոյն բնութեամբ։

Իսկ օրինակ՝ անօրինակ ծննդեանն որդւոյ, ոչ այլ ինչ է, բայց՝ որ ՚ի մեզ՝ մտացս ծնունդ գլխան, թէպէտ՝ և ոչ ամենայնիւ համեմատի ճշմարտութեան՝ օրինակս։ Վասն որոյ՝ և բան ասի՝ յաղագս անապական գոլոյ ծննդեանն։ Իսկ որդի, զի ՚ի Հօր բնութենէ է ոչ օտար ՚ի նմանէ, կամ արարած, ըստ հայհոյութեան արիոսի։ Իսկ հնար իմանալոյ զանիմանալին, ոչ այլ ինչ է, բայց՝ հաւատալ ասացելոցն ՚ի գիրս սուրբս, և ոչ ընդ քննութիւն արկանել զանքննելին, որք անհաս մտաց՝ ասացին զԱստուածային ծնունդն, և անճառ բանիւ։

Այնպէս՝ և Հոգին սուրբ բղխումն ասի առ ՚ի Հօրէ, և փառակից որդւոյ։ Աստուած կատարեալ որպէս Հայր և որդի։

Մի կամք՝ երից անձնաւորութեան, և մի զօրութիւն, և մի արարչութիւն։

Հայր կամեցաւ ստեղծանել զերևելի և զաներևոյթ արարածս, և որդի՝ գոյացոյց յանգոյից. Իսկ հոգին Սուրբ՝ զարդարեաց իմաստութեամբ։

Ի նոյն ինքն բանն Աստուած, որ արար զմարդն ՚ի պատկեր իւր, և երևեցաւ նմա յետ անցաւորութեան, և տմ արդարոցն առաջնոց՝ Ադամ, և Աբրահամու, և Իսահակայ, և յակոբայ, և Յօբայ, Մովսէսի և Ահարոնի, և Յեսուայ, և այլոց մարգարէիցն, և խօսեցաւ ընդ նոսա ՚ի ժամանակս վերջինս՝ Մեծաւեօք հրեշտակապետին Գաբրիէլի՝ էջ յորովայն Կուսին Մարիամու, և առեալ ՚ի բնութենէ նորա մարմին և հոգի, և միտս. և խառնեցաւ նոր և անճառելի միաւորութիւն ընդ Աստուածութեան իւրում, և զարգացեալ յորովայնին՝ ինն ամսեայ ժամանակաւ որպէս մանուկ, ծնաւ Աստուած և մարդ կատարեալ.

անշփոթ էութիւն, և անբաժանելի միաւորութիւն, մի Քս, և մի անձնաւորութիւն նր, յերկուց բնութեանց միացելոց։

Կաթնասուն եղև որպէս զմարդ, և 'ի հրեշտակաց փառաւորեցաւ որպէս զած։

Շրջեցաւ յաշխարհի՝ կատարիչն ամի զամս Լ, մինչև 'ի կատարումն հասակի մարդկութեան, մկրտեցաւ 'ի ծառայէն որպէս զմարդ, և վկայեցաւ 'ի Հօրէ և 'ի Հոգւոյն՝ որդի բարձրելոյն։

Փորձեցաւ 'ի սատանայէ որպէս զմարդ, և յաղթեաց փորձողին՝ որպէս զած։

Քաղցեաւ և ծարաւեցաւ, և ննջեաց, և արտասուեաց, և վաստակեցաւ որպէս մարդ՝ մնեալ ընդ օրինօք մարմնոյ, և կատարեաց զսքանչելիս՝ և նշանս, և եցոյց զօրութիւնս Ածային՝ որպէս զած կատարեալ։

Ապա կամաւորաբար 'ի չարչարանս, և չարչարեցաւ անչարչարելին՝ չարչարելի բնութեամբ 'ի վերայ Խաչին. Մեռաւ անապականելին մահու՝ մահկանացու մարմնովն, վասն կենդանացուցանելոյ զմեռեալ մերոյ բնութիւնս. էջ 'ի գերեզման, և սրբար անճառումն կրկին դժոխոց մարդկային հոգւոյն՝ միացելովն ընդ ածութեան, հոգւոյն՝ որ 'ի դժոխս, շնորհելով ազատութիւն. Իսկ Ածային մարմնոյն յարութեամբ՝ տալով յոյս յարութեան մահկանացու բնութեան յանապականութիւն մահու. յարեաւ 'ի մեռելոց իշխանաբար՝ յաւուր երրորդի, և երևեցաւ աշակերտաց իւրոց երկոտասանիցն, և եօթանասնիցն, և հինգ հարիւրոցն, և այլոց բազմաց. Որք եղեն նր վկայք և քարոզք՝ ընդ տիեզերս. և յաւուրս քառասունս երևեալ նց, և խօսէր ընդ նոսա։

Ապա 'ի լրումն քառասնեկի աւուրցն՝ վերացաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր՝ 'ի բարձունս, մերով բնութեամբ, յորմէ անբաժանելի էր Ածութիւն, և գալոց է նովին մարմնովն՝ փառօք Ածութեան իւրոյ և Հօր, յարուցանել զմեռեալս, և դատել զաշխարհս արդարութեամբ. բարեգործացն զբարեացն տալով ժառանգութիւն, և զանվախճան Թագաւորութիւնն. իսկ գործողացն չարեաց՝ զամօթն յաւիտենից, և զտանջանս՝ ըստ իւրաքանչիւր գործոցն։

Այս արդ՝ այս դաւանութիւն ճշմարիտ հաւատոյ հիմն

է

է Սիւնեաց սահմանին՝ որ 'ի մեզ։ Իսկ՝ գործք բարեաց՝ շինուածն է 'ի վերայ այնր հիման, որպէս և նորին դաւանու-թիւնն Պետրոսի՝ եդ որպէս զվէմ, հիմն իմանալի Եկեղե-ցւոյ իւրում. և զինքն որպէս զշինող. և զընտրելոց իւրոց բարեգործութիւնս՝ որ յամ ազգաց, իբրև զնիւթ շինուա-ծոյ՝ փոխանակ քարի և փայտի, և այլոց պիտոյից։

Դարձեալ՝ է նա որպէս զճարտարապետ, և մեք իբրև զմշակս հրամանակատարս։ Ասացուած առաց աշակերտացն, թէ՝ առանց իմ՝ ոչ ինչ կարէք առնել։ Գրէ և Պօղոս թէ՝ ես զիմաստութիւնն ոյ՝ հիմն եդի՝ որ է Քն, և որ 'ի նա հաւատան ճշմարտութե, բայց՝ այլ է որ շինէ, այսինքն որ են, և որ գալոցեն յաշխարհ։ Եւ շինեն՝ գործովք, զոր կամի իւրաքանչիւր ոք, եթէ բարի, և եթէ չար։

Եթէ ոք շինէ 'ի վերայ հիմանս այսորիկ՝ ոսկի, որ է արդարութիւն և ճշմարտութիւն. Արծաթ՝ որ է մաքրութի մտաց, և սրբութիւն սրտի. Ականս պատուականս, որ են մասունք բազմապատիկ առաքինութեանց, Սէր՝ խոնարհութի, ողորմածութի, Անոխակալութիւն, Պահք, Աղօթք, Ժուժկալութիւն։ Այսոքիկ՝ և որ նման սոցա՝ են պատուական ակունքն, շինեալք յարդարոց անձանց՝ 'ի վր հիման հաւատոյն։

Իսկ մեղաւորացն անձինք՝ ոչ 'ի պատուական և 'ի հաստատուն նիւթոցս յայսցանէ (ասէ) շինեն զշինուածս իւրեանց, 'ի վերայ հաւատոյն հիման. այլ՝ յանարգացն և 'ի դիւրավառելեաց. այսինքն, փայտ, Խոտ, եղէգն։ Փայտն՝ զթանձրագունից մեղաց՝ ունելով զտեսակ, զսպանութե, զպոռնկութե, զգողութե, զյափշտակութե, և որ նման սոցա։ Խոտն՝ զխորհրդոյն չարութե ժողովեալս 'ի սրտի։ Եղէգն՝ զբանից զարշութիւնս նշանակէ, զորս բղխեն 'ի բերանոց մարդիկ, զլեզուսն գործարան տուեալ Սատանայի, թշնամանե-լով և անարգելով զընկերս, զանազան և այլ պէս հայհոյու-թեամբ։ Որ ըստ գեղջկացն բարբառոյ՝ յիշոցք անուանին, և ըստ գրոց սովորութե՝ անէծք և թշնամանք, և որ այսպի-սի են անուանք։ Զորոց և դաւիթ ասէ, թէ՝ անիծիւք և դառնութեամբ լի են բերանք նոցա։ Նա և՝ ստութիւնն և չարախօսութիւնն, և մատնութիւնն, և այլք, որ յայս յարին բանք անիրաւութե, յեղեգան են օրինակի։

Իբր զայսոսիկ՝ զերկուց հակառակ շինուածոց նիւթս, որ 'ի պատուհականաց և յանարգաց՝ հուրն՝ տայ, ընտրեսցէ։ Վասն զի՝ հրով յայտնելոց է դատաւորն։ Եթէ գործն՝ զոր շինեաց 'ի վերայ հաւատոյն հիմանն, ոսկի է և արծաթ, և ականս պատուականս, որք ոչ ապականին, այլև՝ սրբին 'ի հրոյն, գործօղն կեցցէ, և վարձս առցէ։ Իսկ՝ եթէ խոտ է, և եղէգն և փայտ, որ դիւրաւ ապականին 'ի հրոյ անտի, որ գործեացն զայն՝ տուժեսցէ։ Մի զի՝ զորօրինակ ապարանք՝ հիմամբն միայն՝ չեն բաւական լինել 'ի բնակութիւն մարդկան, այլ՝ պէտս ունին որմոց, և ձեղուանց, և այլոց շինուածոյն։ Նոյնպէս՝ և հաւատովն միայն՝ առանց գործոց ոչ ոք կարէ զանձն իւր՝ շինել տաճար Այ։

Իբր որպէս զլուխ՝ առանց անձին յարմարութեն, ոչ կարէ կրել կենդանութիւն, և ոչ անձն առանց գլխոյ. Նոյնպէս՝ և հաւատ՝ առանց գործոց, և գործք՝ առանց հաւատոյ, մեռեալ են երկոքին ըստ Առաքելոյ։

Վասն որոյ՝ աղաչեմ զամենեսեան, զի ընդ հաւատոցդ ճշմարտութեն՝ զոր ընկալայք 'ի ծննդենէ աւազանին, և ունիք հաստատութը, յարմարեցէք և զգործս արդարութեն։ զի մի միով աչօք միայն լուսաւորիցէք զանձինս, այլ և՝ երկոքումբք պայծառանայցէք։ Իբր մի վստահանայք 'ի սնոտի յոյսն՝ անմտաց, որք ասեն, թէ՝ բաւական է հաւատոյն միայն ճշմարտութիւն քրիստոնէին՝ փրկել 'ի տանջանաց, և արժանաւորել արքայութեն. Զի՝ զորօրինակ մեռեալ անդամ՝ չեն ինչ պիտանացու 'ի գործ մարմնոյն։ Նոյնպէս՝ և մեռեալ հաւատ՝ ոչ տայ զօրութիւն հոգւոյն, այլ՝ մանաւանդ առաւելագոյն տանջանաց՝ պարտական կացուցանէ զունօղն իւր։ Որպէս այն՝ որ զմի տաղանդն պահեաց, և ոչ շահեցաւ նման ընկերացն։ Զի՝ տաղանդն՝ հաւատանէ, և շահ տաղանդոյն՝ գործքն։

Եթէ՝ վասն էր ասի՝ հաւատ մեռեալ առանց գործոց, յայտնի արասցուք որոց ոչ գիտեն։

Հաւատոյն անունն՝ մի է, բայց՝ կրկին ունի զօրութի։ Առաջին՝ դաւանութեն հաւատոյն, որ է խոստովանութիւն 'ի Սբ Երրորդութիւնն, զոր ընկալան իւրաքանչիւրոք յաւազանէն։ Երկրորդ՝ հաւատ այն է, որ զքանս՝ զոր հոգին

նք

նու խօսեալ է՝ բերանով մարգարէին, և Մակաբայեցւոցն, և Եզեկ-իելեայ Աստուածաբանօք, զորս 'ի գիրս սրբս գրեցին՝ չհամարի առասպելս և սուտս. այլ՝ հաւատալ թէ՝ ճշմարիտ են և անսխալ, այնպէս՝ որպէս թէ այսօր իւրովք տեսանէ զամ՝ զեղեալսն, և զլինելոցն, և զոր էնն: Եղեալսն այն է՝ զոր պատմեն, թէ՝ ամ երկինք և աներևոյթ բնութիւնք՝ ոչ էին, և յայ հրամանէն ստեղծեալ եղեն. և որ ինչ յետ լինելոյն արարածոց սքանչելիք, և զօրութիւնք եղեալք յայ՝ պատմին 'ի գիրս 'ի հնումն, և 'ի նորումս: Եւ լինելոցն այն է՝ զոր ասեն, բարեգործացն՝ բարի հատուցումն լինել յայ, և չարագործացն՝ տանջանք և հուր յաւիտենական: Եւ որ էնն այն է, զոր քարոզեն յամ՝ բանս լուսեանց, թէ՝ ած մերձաւոր է առ ամեն և ոչ հեռաւոր. և զոր խորհին մարդիկ 'ի միտս իւրեանց՝ բարի, կամ չար, գիտնայ զամ, և զոր խօսին բանս լեզուաւ՝ լսէ անսխալ, և զոր գործեն մարմնով 'ի ծածուկ, տեսանէ յայտնապէս, զի՝ չիք արարած աներևոյթ առ 'ի նմանէ:

Արդ՝ որ պատուէին 'ի բոլոր սրտէ հաւատալ, նա է՝ որ ունի հաւատ կենդանի: Որ և՝ ոչ երբէք յանդգնի, կամ խորհել չարութիւն 'ի սրտի, կամ խօսել անիրաւութիւն բերանով, կամ գործել զմեղս անձամբ իւրով: Զի թէ՝ 'ի միոյ ուրուք մերձ լինելոյ, արգելուն մարդիկ յանարժանս գործելոյ. յորժամ հաւատայ ոք զած լինել անդ, չկարէ ժպրհի, կամ խօսել ինչ, կամ գործել կամակոր մտօք զչարութիւն: Իսկ՝ որ բանիւ միայն ունի զնա 'ի յամ խոստովանութիւնն, այլ ոչ գործով, այնպիսոյն հաւատն ասի մեռեալ:

Եւ արդ՝ վասնզի ընդ բազմատեսակ անտեսական դործոյն անուանս՝ որ հաւատացաւ մեզ 'ի Տէ՝ 'ի ձեռն սրբոյ Աթոռոյս աստուածորոն, է և բժշկական անուն և գործ. Սա այս՝ որ բժիշկ ճանաչելով զհիւանդացելոյն՝ ախտաւոր ցաւոյն զդարմանս՝ հրամայէ 'ի մնասակարացն 'ի բաց կալ, և զառողջարարն ընդունել դեղ և կերակուր. այսպէս՝ և մեք զընդհանրական Եկեղեցւոյ Քի հոգևոր բժշկութեն ունելով զփոյթ, տեսանեմք մնաց այսօր, թէ և՝ ոչ զանմտանեանս, այլ՝ զյոլովագոյն մասն աշխարհի, զի յա-

ղա

ղազմ մեռելոտի գործոյ՝ մեռեալ ունելն և զհանճարն. Եւ կամիմք որպէս զբժիշկս ուսուցանել ձեզ անձին՝ զմահաբեր ախտից իւրեանց զպատճառսն, և զկենդանարար հոգւոյ զդեղսն. Զոր թէ առեալ ըմպիցէք սաստից զժկամակ լինե-լոյ և 'ի բաց մաքրիցէք ողւոց ձերոց զդառնութիւն մաղձիցն ապականութեան՝ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ, արժանի լինիք ողորմութեանն Տն, և առ 'ի նմանէ խոստացելոց բար-եացն. Իսկ՝ որոց ոչ թուեսցին ախորժելի ասացեալքս 'ի մէնջ, կամ՝ յաղագս ծուլութեան, և մեղսասիրութեան, կամ՝ վասն արհամարհելոյ զմեզ. առ այնպիսիսն զմարգարէականն ա-սասցուք, թէ՝ որ անօրինելոյն է անօրինեսցի, և որ արդա-րանալոյն է արդարասցի. Մեք զոր հրամայեալն է մեզ ա-րարաք, ապաւինելով որպէս դէտ՝ 'ի բարձր դիտանոցէ՝ զպատուէրանս Տյ՝ 'ի լսելիս ձեր. Այսուհետև՝ առնելն, և ոչ առնելն 'ի կամս ազատութեան՝ իւրաքանչիւր անձին է,

Բայց մի՛ ոք կարծիցէ զմէնջ թէ՝ իբրև առողջս համա-րելով զմեզ յախտից մեղաց, ձեզ միայն զբժշկականս զայս մատուցանեմք դեղ, որպէս հիւանդացելոց. այլ ծանիցէ ամ ոք, զի մեք առաւել քան զամենեսեան ունիմք պէտս հոգւոց բժշկութեան. Բայց՝ որպէս յիմար հիւանդն է զխարն առողջութեան դեղ՝ զոր մատուցանէ նմա՝ ախտացեալ ամե-բժիշկ՝ 'ի բաց մերժել, տեսանելով զցաւս մարմնոյ նորա. Նոյնպէս՝ իմաստնոց է՝ ոչ զբնութիւն բժշկին ունել փոյթ, թէ առողջ է և կամ՝ հիւանդ, այլ զդեղսն քննել զօգտա-կարութիւն, եթէ առողջարար իցէ, թէ վնասակար.

Արդ՝ և դուք մի՛ վասն մեր անարժանութեան, և 'ի հո-գևորսն պակասութեան՝ զօգտակար դեղս հոգւոց՝ զոր մատու-ցանեմք ձեզ՝ արհամարհիցէք, և ոչ ընդունիցիք յանձինս. Զոր աղաչեմ՝ ընկալարուք սիրով և յօժարութեամբ. Մի՛ վասն մեր ինչ փառաց և պատուոյ, զոր ոչ պահանջեմք յու-մեքէ, թէև էաք արժանաւոր. այլ վասն սիրոյն Քի, որ կոչեաց զմեզ յիւր արքայութիւնն և 'ի փառս. Զի թէպէտ և մեք անարժան եմք, այլ բանս՝ վասն զի՝ Այ է, արժա-նաւոր է ընդունելութեան. Եւ ընդունելութիւնն՝ ոչ այլ ինչ եղիցի, այլ կատարումն գործոց.

Վասն որոյ՝ աղօթեսցուք 'ի վերայ միմեանց, մեք յա-

ղա

ղաղս ձեր՝ որպէս գլուխ միոյն անձին, մտադիւրութեամբ ընդունել զսերմն Աստուծոյն բանին՝ 'ի սիրտս, և պտղաբերել Աստուծոյ, մի 'ի յերից պտղաբերութեանց՝ բարի և պարարտ երկրին։ Եւ դուք՝ վասն մեր, ըստ որում անձն՝ վասն գլխոյ, առաջնորդեալ 'ի հոգևոր հեշտանդութեանց, և զօրանալ 'ի տկարութեան զգայութեանս։ Որ զի՝ թէ գերան իցէ 'ի մեզ՝ մերումն տեսարանի կուրացուցիչ, նախ 'ի բաց մաքրել զայն, զի և զայլոց շիւղս տեսանել և սրբել կարող լինիցիմք։ Նանաւ և զկցեալ ունկն՝ ածայնոց ձայնին հնչման՝ ճանապարհ առնելով, և զհոտոտելիս՝ անմահութեան թափեցելոյ իւղոյ անոճամբն անուշայուցանել. և զճաշակելիս՝ կենացն հացի քաղցնուլ, և ծարաւել, և յագել անյագուրդ, արդարուն և իմաստութ. և զլեզուս՝ որ 'ի փառս Աստուծոյ, և 'ի շինուն լաղաց բանից, լինել սպասաւոր, այլ լինելով նեխեցելոց, և լոյս խածարելոց, ըստ հրամանին Տն, նախ՝ անձին, և ապա այլոց։ Սոյնպէս և զերկուսին դնեմք առաջի լողդայդ՝ զանազան կերպարանոք. պայծառացելոց ուղով՝ զլուսաւորել բանից ճառագայթ, և մթացելոց, կամ նեխելոց՝ զաղին օրինակի յանդիմանողական մրմնջուսն, որով և սկսանիմք այժմ առ որս արժանի է, նախակարգել զբանս։



Աղօ. Արծնաւորս խաղաղականացս, որ 'ի Վանօրայս.

Ե Եւ արդ՝ առաջին՝ ընդ գերաշխարհիկսդ վարուք, և քաղաքավարութե՝ խօսեսցուք առ կրօնաւորսդ՝ որք 'ի վանօրայս, և 'ի մենաստանս բնակիք։ Որք սիւնք էք աշխարհի, և պարիսպ ընդդէմ թշնամւոյն՝ աղօթիւք ձեր և բարի վարուք. հրեշտակք 'ի մարմնի, և աստեղք լուսաւորք յերկրի, յորոց՝ 'ի բարի և 'ի լուսաւոր վարուց՝ փառաւորի միշտ Հայր ձեր՝ որ յերկինս է։ Որք թէպէտ՝ և խրատեալ էք յԱծաշունչ գրոց՝ միշտ 'ի լսելիս ձեր հնչելով, և չունիք ինչ պէտս կարեաց՝ մերոյ դուզնաքեայ բանից։ Սակայն որպէս ծառայք՝ որք զհասարակականն կերակուր՝ հրաման առնուն 'ի տեարանց բաշխել՝ ոչ միայն քաղցելոց, այլև՝ յագեցելոյն շնորհեն. Նոյնպէս և մեք՝ զի ընդհանուր ծառայակցաց մերոց՝ հրամայեցաք 'ի Տէ, տալ զբաժին կերակուր, հասարակաբար՝ պարտիմք մատակարարել՝ փառ թամաց պիտութե, և աղքատաց 'ի պիտութէ. զօրաւորաց առաքինութե, և տկարագունիցն յառաքինութէ։

Վասն որոյ՝ աղաչեմ զամենեսեան՝ մի՛ նուազութե իւրոյ ողորմութե, և սրբութե, աղօտացուցանէք զլոյս հաւատոյ՝ լապտերաց ձերոց, այլ՝ անշիջանելի պահեցէք զճառագայթս Սրբութեն՝ միշտավառ առաքինութե յանձինս ձեր։

Մի՛ վասն սիրոյն նիւթականիս՝ 'ի հրոյ սիրոյն Քի՛ զոր արկ յերկիր, և կամի զբորբոքեալն վառվառեալ, ցրտացուցանէք զոգիս։

Մի՛ տայք տեղի օտար հրոյ ցանկութե՝ 'ի սիրտս ձեր, և այնու խնկարկել Սբ զաղօթս և զխորհուրդ Սծայնոյ Պատարագին, որպէս որդիքն Ահարոնի՝ Նադաբ և Աբիուդ. այլ՝ նախ մաքրեսջիք իւրաքանչիւրոք՝ խոստովանութե՝ յանմաքուր խորհրդոց և գործոց, և Պատարագ կենդանի՝ զինքն մատուսջէ կենդանութեն Սբ առաքինութե, և ապա՝ 'ի մաքուրն մերձեսջի, և սրբութե սրբոցն սպասաւորեսջէ. զի մի՛ ըստ նմանութե նոցա՝ տանջողական հրոյն այրեսցի ներքին մարդն, աստ խղճիւ միայն, և անդ բոցովն անշիջանելեաւ։

Մի՛ լիցի ումեք 'ի ձէնջ՝ յարձան աղի մածնուլ, որպ կինն Ղովտայ՝ յաղագս յետս դառնալոյ աշխարհական իրս, 'ի հեշտութիւնս ախտից, կամ 'ի ցանկութիւնս հեշտութեանց։

Քանզի՝ զորօրինակ նա յետ պատուհասին՝ ոչ եղև համեմիչ կերակրոյ՝ իբրև աղ, քանզի՝ քար էր. և ոչ 'ի շինուած ինչ պիտանացու՝ եղաւ որպէս քար, վասն զի՝ աղ էր։ Ըստ այսմ նմանութեան և դուք՝ որ ելանէք յաշխարհէ, որպէս Ղովտ 'ի Սոդոմայ, և բարձրանայք 'ի կարգ կրօնաւորութեան՝ որ է հրեշտակական, որպէս նքա ճանապարհորդելք ընդ հրեշտակսն 'ի լերինն, և դառնայ անդրէն 'ի սէր աշխարհիս, և 'ի յաղտս Թառալի մեղաց, որպէս և կինն այն, զի դառնայր դիմօք 'ի Սոդոմ, ոչ ևս է պիտանացու այնպիսին՝ իբրև զկրօնաւոր, և ոչ աշխարհի օրինաց, որպէս զաշխարհական, այլ է անարգ և անպիտան, կոխան եղեալ 'ի մարդկանէ, որպէս զաղ անհամեալ։ Բայց ձեր՝ որ անփոփոխ էք յաճայինսդ, ամ ինչ ըստ Առաքելոյն խոր[illegible]ու՝ բարեձևութեամբ, և ըստ կարգի եղիցի։ Որ և՝ դարձեալ ասէ իմաստութեամբ գնասջիք առ արտաքինսն, գնոյ առեալ զժամանակս. և Թէ՝ զվարս ձեր՝ առաջի հեթանոսաց՝ պարկեշտ ունիցիք։

Եւ արդ՝ մի՛ ոք 'ի ձէնջ զվատթարս խօսելով լեզուաւ, կամ իրս ինչ անվայելուչ՝ գործելով անձամբ՝ առաջի արտաքնոցն՝ պատճառ լինիցի բանալոյ զանդուսն բերանն նոց 'ի հայհոյութիւն որ հաւատոյս, և կարգիս, որովք՝ կրկին դատապարտանս տալոց են այնպիսիքն՝ առաջի այ, առաջինն՝ է մեղանացն՝ զոր խօսին, կամ գործեն. Երկրորդ, և մեծ՝ է գայթակղութեան լինելոյն պատճառ։

Մի՛ ոք զընկերակից կրօնաւորաց՝ Թողլով զկենակցութն առանձինն բնակիցէ, ոչ յաղագս ճգնողական վարուց՝ որպէս միայնակեացք, այլ՝ վասն ագահութեան ախտի, զի զանձին իւրոյ աշխատութիւնն ոչ հասարակաց Եկեղեցւոյն, այլ իւր միայնոյ ամբարեսցէ, յորմէ՝ փոխոք բազում՝ հոգւոց, և 'ի միաբանութենէն՝ օգտութիւնք յոլովագոյնք, որ Ծախօս վարդապետացն՝ ցուցանեն բանք։ Զի առ բազումս՝ քան զերկիւղն Այ առաւել զօրէ՝ ընկերակցացն ամօԹոյ երկիւղ, յետս դարձուցանել զյօժարութիւն մտացն՝ 'ի չար

ցանկութեանց մարմնոյն կատարմանէ։ Այլ և ոչ բազմապատիկք են չարեացն յոյլք՝ 'ի միասին եղելոցն բնակութեան, զորս՝ առաւելորդ վարկանիմք գիտողացդ երկրորդել։

Այն ասեմք դարձեալ՝ յաշխարհասէր և 'ի մեղկ կրօնաւորաց, զի ոչ միայն արտաքս՝ ըստ հնոյն լինել՝ դառնան յեգիպտական գործս խաւարինս, այլև՝ անձամբ իսկ՝ ընդ աշխարհականս բնակին 'ի գիւղս, և 'ի քաղաքս, և 'ի բանից բերանոյ գարշութիւնս, և 'ի գործս վատթարութե, և յորս վայնամոլութիւնս անպատկառս, և յարբեցութիւնս անառակս, և յամ անկարգութեանց բերմունս՝ առաւելուն քան զնս։

Պարտ և արժան էր, զի թէ պատահէր կրօնաւորաց՝ ըստ հարկաւոր ինչ պատճառի բնակել յաշխարհի, իբրև զգուշաւոր լինել ածային և ուղիղ վարուքն 'ի մէջ նց, 'ի փառս Պատճառս՝ անուանն Ս.Յ, և ոչ 'ի հայհոյութեն։ Զայնպիսիսն մանաւանդ յորդորեմք 'ինոյն, քանթէ արգելումք, զի օրինակաւ բարեացն՝ բազումք լինին բարիք, ոչ և 'ի նախանձու՝ չարեացն վարուք՝ չարքյոլովագոյնք։

Արդ՝ հրամանաւն Ս.Յ և մեր, այս եղիցի կանոնական օրէնք 'ի վերայ այնպիսեացն, փոխել այսուհետև զբնակութիւն իւրեանց 'ի վանս, և զվարս իւրեանց՝ ըստ ձևոյն, և ըստ կարգին՝ յապաշխարութիւն, և 'ի սրբկենցաղութե մինչև 'ի վախճան։ Իսկ՝ եթէ ոք 'ինոցանէ ոչ լուիցէ Աստուածային օրինացս՝ զոր գրեցաք, և ոչ ելցէ յաշխարհէ, այլ կացցէ յամառեալ մինչև 'ի մահ իւր՝ 'ինոյն, անպարտ եմք մեք 'ի խղճէ կորստեան նր, իւրքն եղիցի արեան իւրոյ պարտական՝ առաջի այ։

Այլ՝ Վահանայից պատուէր տամք, զի թէ մինչ աշխարհի իցէ այնպիսին, և վախճան մարմնոյ՝ ընդ հոգւոյն մեռելութե հասանէ նմա, ոչ հաղորդութե և ոչ օրինաւոր թաղման՝ արժանի առնել զնա, մանաւանդ վայնասիկ՝ որ միշտ յանզղջութե լինիցին մինչ 'ի մահ։ Իսկ՝ եթէ ոք յայնպիսեացն՝ մերձ եղեալ 'ի մահ՝ զղջասցի, և հայցէ արտասուօք զհաղորդութիւն, և զթաղումն, և խոստովանութե նորա գիտօղք վկայեսցեն, եթէ հաստատեալ էր 'ի միտս՝ ելանել յաշխարհէ, եթէ ողջաս մնասցէ՝ ոչ էր կանխեալ, այնպիսոյն՝ վասն ողորմութեն այ՝ տացի թօշակն վերջին, և օրհ-

նա

Նուէր թագուհւոյն, ոչ որպէս Քահանայի, կամ կրօնաւորի, այլ իբրեւ զմիոյ աշխարհականաց ։

Նայց՝ մինչ անընտրողաբար՝ զամ որ յաշխարհի մեռանիցին կրօնաւորք՝ հաւասար համարեսցի, զի են բազումք՝ որ հիւրութք եկեալք յաշխարհ՝ պատահէ նց վախճան. եւ այլք՝ որ ծեր եւ տկար գոլով մարմնով, եւ վասն ոչ գտանելոյ խնամս 'ի վանօրայս՝ բնակին յՏի, ուղիղ՝ եւ ոչ բամբասելի վարուք, այսուքիկ եւ սոյնպիսիքս՝ պատուով թաղեսցին, յորժամ հասանէ վախճան, որպէս զծառայս Այ ։

Դարձեալ՝ զգուշացուցանեմք զճշմարտագունեցդ երամն՝ յաղագս նոր եղելոյ սովորութեանդ՝ 'ի վանօրայս 'ի մերում ժամանակի, այգեգործ՝ իւրաքանչիւրոց լինելով 'ի կրօնաւորաց, որպէս 'ի գիւղս, որ անվայելուչ է կրօնաւորական կարգի, եւ արտաքոյ՝ ուխտին սրբոց հարցն պատուէրանաց. Զի նք եւ զորս յաշխարհի ունէին ժառանգութիւնս եւ ստացուածս՝ թողին, եւ թողուլ օրինադրեցին, եւ զԽաչ առաքինութեան բարձին, եւ զկնի Քի գնացին, ուր եւ ինքն հրամայէր մեծատանն, թէ՝ երթ վաճառեա, զոր ինչ ունիս, եւ տուր աղքատաց, եւ դու առ զԽաչ քո, եւ եկ զկնի իմ, եւ ունիցիս գանձս բազումս յերկինս։ Եւ դարձեալ թէ՝ որ կամիցի զկնի իմ գալ, եւ ոչ ուրասցի զամ՝ զոր ունիցի յաշխարհի, եւ առցէ զԽաչ իւր հանապազ, ոչ կարէ իմ աշակերտ լինել։ Եւ այլ եւս՝ որ այսպիսիք են Աւետարանական պատուէրանք, աշակերտելոց անձանց՝ որ էք դուք։ Յորոց բազումք են 'ի ժամանակիս կրօնաւորաց՝ որ յաշխարհի առանց ժառանգութե էին, եւ հարկատուք իշխանաց, եւ աղքատք 'ի գոյից, եւ կարօտք հարկաւորացն, եւ յորժամ զձեւ կրօնաւորութե ընկալան, տէրք եղեն 'ի վանօրայս բազում ժառանգութե, եւ փարթամացան ստացուածովք. եւ ոչ միայն հարկաւոր պիտոյիցն եղեն անկարօտ, այլ՝ աւելորդօքն լցան, եւ յաշխարհի հողովք եւ երկօք տաժանեալք, եւ աստ անհոգութբ եւ հեշտութբ ստուարացեալք։ Եւ զիա՞րդ կարիցէ այնպիսին՝ յաշակերտութեան լինել կարգի, եւ ասել ընդ պետրոսի, Տէր ահա մեք թողաք զամենայնն, եւ եկաք զկնի քո, Արդ զի՞նչ լինիցի մեզ։ Յայտ է զի ոչ եթող ինչ վասն Քի, այլ մանաւանդ զոր ոչ ունէր յաշ

յաշխարհի, ստացաւ հակառակ ԲՆ։

Եւ արդ՝ քանզի Աստուածային պատուիրանքն՝ ըստ զօրութ ընդունողացն՝ եղան յիւրաքանչիւր ժամանակի, տկարագունիցն թեթեւագոյնք՝ զի տանել կարիցեն, եւ զօրաւորացն ծանունք, զի յօժարութեամբ բառնան։ Ըստ այսմ օրինակի՝ եւ մեք, վասնզի՝ տեսանեմք զբազումս ցանկացեալս յանձնային սիրոյն, եւ ոչ մի քան զմի նախանձու բարեաց շարժեալք, ՚ի բարձրագոյն առաքինութիւնս ձեռնարկելով, որպէս Սրբաջին հարքն. այլ՝ մերոյս նախանձ՝ ՚ի հակառակն վերաբերեալ նոցա, այսինքն թէ՝ ոչ քան զընկերս յընդարձակագոյն տեղւոջ, եւ ՚ի պարարտ երկրի տնկիցէ այգի, եւ թէ՝ զխորդանուցանիցէ իմաստութեամբ՝ զնորագոյն տունկսն. Ես փոխանակ՝ զարուեստս առաքինութեան ուսանելոյ ՚ի միմեանց՝ յայղեգործութե հնարս վարժին, անհմուտքն ՚ի հմտագունիցն, Արժան է ասեն այսքան եւ այսպիսի օրինակաւ վատակեալ եղանակս, եւ բրել ձեռամբ՝ փայտատօք, եւ բահիւք, եւ զհակառակ տնկոցն զարմատս, եւ զքոյսս՝ արմատաքի, խլել։ Զոր պարտ էր նախ՝ զբարեաց հակառակ զքոյսն՝ որ ՚ի վարս մեր, եւ ՚ի բարս, ՚ի բաց հանել ՚ի մէնջ, եւ ապա սրտաքնոյն ունել փոյթ։ Այլ՝ հատանելոյն օրինակ՝ զանազանեալ է իւրաքանչիւր տնկոյն սեռից, առ իմաստունսն յայտնի է, զի զոմանս հուպ յարմատսն, եւ զայլսն ՚ի բացեայ հատանեն. յոմանս սակաւ զուռսն, եւ կէսս յոլովագոյնս թողուն, եւ այս ամ՝ որպէս զի յաճախագոյնս պտղաբերեսցեն, եւ յոլով զգինւոյն չափոյ աճեցուսցեն զթիւս։ Թողից ասել զպատուաստելոյն հնարս, մի քան զմի առաւելեալ ՚ի հանճար. եւ զգործելոյն եղանակն ջերմութե, զի ոչ զտիւ՝ ոմանք բաժակսն համարին՝ ժամանակ գործելոյ, այլ՝ զգիշերին եւս խառնեն ընդ տուընջեանն։ Զոր արժան էր յայգի պատուէրանացն Այ՝ զայնքան ունել փոյթ, եւ յօժարութի գործոյ, յորում հրաւիրեցաք ՚ի քարոզչացն, եւ մտաք ՚ի գործ՝ հաւատովք եւ կրօնիւք, ընդ դահեկանին վարձու, որ է պատկերն Թագաւորական՝ տուեալ մեզ յԱյ, յերեկոյանալ կենցաղոյս ժամանակի, նման լինելով նմա՝ ըստ խոստացելոյն։

Դարձեալ՝ յորժամ պատահին միմեանց՝ տեարք այգեաց, կրօնաւորք յայլ եւ յայլ տեղեաց. յետ ողջունին՝ ոչ

զողջութեան հոգւոց հարցանեն, և զհիւանդութեանց ախտից, և ոչ զպատուիրակամաց դիւաց, և զխաղաղութեանց, և ոչ թէ՝ զիա՞րդ ստասցուք շնորհս արտասուաց՝ 'ի ժամ աղօթելոյն, այլ՝ թէ յայսմ ամի՝ ո՞վ եղբայր՝ զիա՞րդ է պտղաբերութիւն քոյին տնկոցն, առաւե՞լ է թէ նուազ։ Եւ նա թաղծեալ սրտիւ՝ պատասխանէ, զի՞նչ ասացից (ասէ) զաղէտսն՝ որ պատահեցան, զի ոմանք 'ի ձձեաց վնասեցան, և յոմանց ծաղիկքն թօթափեցան, և այլքն արևակէզ եղեալ ողկուզաց՝ չորացան, և կէսք՝ նեխութեամբ ապականեցան, և թէ զի՞նչ արարից՝ անգիտանամ զելս վտանգիս եղելոյ։ Եւ ընկերն թելադիր եղեալ նմին՝ խրատ տայ, զոմանս պատուաստել 'ի տնկոյն՝ որք պտղաբերոյք լինին, և զայլսն՝ զանազան փորձեալ հնարիւք բժշկել 'ի պատահելոց կրիցն։

Եւ քանզի՝ 'ի նիւթականացս ցանկութիւն՝ զբազումս 'ի կրօնաւորաց ժամանակիս՝ տեսանեմք ըմբռնեալս, որք զթեթևամտաւն յայնպիսի ծանրութեան հոգւոց՝ դժուարինս վարկանին, և գնալ զհետ խրատուն Քի, որ հրամայէ, ոչ հոգւովք պաշարել զանձն, յաղագս հարկաւորացն կերակրոց և զգեստուց; թողլթէ վասն աճելորդացն։ Այսորիկ՝ և մեք ոչ դնեմք օրէնս՝ այսպիսի կրօնաւորաց, ամենևին 'ի բաց կալ 'ի տնկագործութենէ, և յամ[illegible] գոյից ստանալոյ, որպէս վայելէ աշակերտաց Քի, զի մի 'ի լսելն դարձուսցեն զդէմսն յարևմուտս, և խոժոռեալ լուր՝ խրատական մեր բանի՝ 'ի բաց գնասցեն, ուր և մեծատուն այն։ Այլ՝ զերկրորդն գտեալ, փոխ յայսմանիկ հանձոյս խմանամք կամիցին ԱԾ, և զայն դիցուք ձեզ օրէնս։ Եւ դուք թէ և՝ ընդ առաջինն դժուարանայք, զամենայն տալ այ, և մերկանալ աշխարհի կամաւ, նախքան զմերկ գնիլն 'ի գերեզմանի ակամայ, զերկրորդ օրինադրութիւնս ընկալարուք՝ անփոփոխելի կամօք։ Զոր՝ թէ յօժարական սրտիւ առնիցէք, հաճատամք ողորմութեան այ; զի որպէս զառաջինն ընկալցի, և 'ի ձեռն երկրորդիս կատարման, յառաջինն առաջնորդեսցէ ձեզ մերձենալ յօժարութեամբ, և ոչ բռնութեամբ. և այս է զոր ասելոցս եմք։

Յամէ՝ զոր ստանայք, եթէ տունկս և եթէ այլ ինչ, զախտ ագահութեան՝ 'ի բաց մերժեցէք 'ի նոցանէ, ուր զքոյս մտասակար՝ 'ի բարի սերմանց, և զաշխատութիւն ձեր՝ որ 'ի

'ի նմա, մի՛ վասն յոլովելոյ յինչսն՝ առնիցէք. այլ՝ վասն կամացն Այ, և յերկինս գանձելոյ զերկրաւորս, և 'ի մարմնոյդ աշխատութենէ՝ հոգւոյդ ամբարել գանձ։

Եւ զոր ասեմքս՝ այսպէս եղիցի, որով լինիցին ստացուածք ձեր՝ 'ի հաճոյս նմա։

'Ի պտղոյն ժամանակի՝ զպտղաբերոյն ձերոց՝ մասն տուք նմա՝ 'ի ձեռս աղքատաց և կարօտելոց, և մի՛ դատարկ և ունայն զխնդրօղսն պտղոյն՝ դարձուցանիցէք, զի մի և զձեզ՝ նա 'ի յաւուր տրնկեալ դրախտէն՝ ունայն դարձուսցէ։

Եւ եթէ տայցէք, մի՛ խոժոռ դիմօք և զայրացեալ սրտիւ, և դժկամակ բանիւք, իբրև զզոհն կայենի՝ որ ոչ է հաճոյ Այ, այլ և՝ պատճառ զայրացման. այլ զուարթառատ կամօք, որպէս սիրէ և խնդրէ նա։

Եւ 'ի գինւոյն ժամանակի՝ 'ի գինւոյ անտի՝ մատուցանիցէք զպտուղսն նմա։ Եւ յորժամ առաւելուցու քան զպէտս ձեր, և հարկ լինի վաճառել, 'ի գնոյ անտի արծաթոյ՝ առաւել պտղաբերիցէք Քի, տալով տառապելոց և զերելոց, և մի՛ ամբարիցէք յերկրի, և յուսայք յետ մահու՝ այլոց ձեռամբ՝ զձերն տալ նմա, վասն զի. Զի փոքր է յոյսն այն, չասեմք թէ ամենևին ընդունայն, և երկրորդ բարի, և ոչ՝ առաջին, 'ի յայլոց ձեռն յուսալ՝ առատաձեռն լինել յինչս իւր, և զիւրն կորկամացուցանել, մինչ իշխանն է դոյցն և Տէր։ Եւ երկբայելի է՝ այր այնպիսի գտանել, որ երկիւղիւն նմա՝ մատակարարիցէ զինչսն, ըստ հրամանի գնացելոյն։ Զի բազմաց աներկիւղից՝ պատճառ կորստեան լինի հոգւոյ, ստացուածք մեռելոյն. յորժամ ժառանգն է՝ անառակ և անկարգ գնացիւք վատնելով զամենայնն, որ միատու պատճառ՝ փոխանակ փրկութեան՝ լինիցին ինչքն այն՝ ստացողին իւրում։

Դարձեալ՝ զի թէև՝ երկիւղած ոք հանդիպեսցի, և զնա՛ դոյս մեռելոյն՝ ըստ կամացն Այ տնօրինէ, վասն հոգւոյ նր՝ թողութեան մեղաց, նուազ է 'ի բարեաց, և ոչ կատարեալ բարի։ Եւ զի այս ճշմարիտ է՝ 'ի բանից իմաստնոյն ուսանիմք։ Այն զի ասէ, թէ՝ որ ողորմի աղքատին, փոխ տայ նմա։ Եւ գիտէ զայս՝ նա՛ ոք, զի զվճար փոխոյն՝ ոչ օտարի ուրուք, այլ՝ փոխատուին տայ փոխառուն։

Վասն

Վասն որոյ՝ աղաչեմ, մի՛ յայլոց վստահանայք, այլ՝ դուք տուք զփոխն՝ ձեռամբ ձերով՝ ՚ի ձեռս իմ։ Զի թէ զձեզ ձանձրացուցէ փոխատուս՝ խնդրող փոխոյն իմ, յաւուր պայմանի՝ հատուցման լուրոյ՝ զոր եդ, ՚ի ձեռս ձեր տացէ զվճար փոխոյն։

Իսկ՝ եթէ ձերոյ գոյին՝ այլ ոք լինիցի տուող փոխոյ՝ նոյն ընկալցի և զփոխարէնսն յիմ. և ձեզ՝ միայն լինի թերևս հատուցի ողորմութեն, միջնորդութե՛ն՝ տուողին զձերն։

Այլև՝ տէրունական հրամանն՝ զոր ՚ի հրապարակախօս ատենի անդ՝ ասելոց է առ աջակողմեանսն, զնոյն նշանակէ։ Քանզի՝ ոչ ասէ թէ՝ քաղցեայ, և այլք վասն ձեր՝ ետուն ինձ ուտել, կամ՝ մերկ էի, և այլք վն ձեր՝ զգեցուցին զիս. այլ թէ՝ դուք ետուք ինձ ուտել, և դուք զգեցուցէք զիս։

Ճշմարտ՝ թէպէտ և սաստկին կամք Այ, և հրամանք նոյն է, զի ոչ բնաւ ստանայցէ կրօնաւորն ստացուածս՝ ոչ վերագոյն ասացաք, զի մի՛ յոլովագս նիւթականս հոգալոյ՝ յանծայլին առաքինութեանց՝ աննիւթական հոգւոյն խափանեսցի. և բազում հոգոց և ծանրութեանց՝ զանձն ՚ի ներքոյ արկանիցէ. այլ՝ ունել ՚ի միաբանական կենացն՝ կերակուր և հանդերձ՝ ըստ հրամանին Առաքելոյ, և այնու շատանալ։ Բայց՝ վասն զի այս ոչ ամենեցունն է, այլ՝ որք վասն սիրոյն Այ՝ ատեցին զաշխարհ, և ելին յաշխարհէ, և ոչ յաղագս այլ ինչ պատճառի։

Վն որոյ՝ և մեք այնոցիկ կրօնաւորաց՝ (որք երկակենցաղ կենդանեաց նմանեալք են, զի են ցամաքայինք՝ վասն ձեռոյն, և են ծովայինք՝ յաղագս ՚ի ծովու աշխարհիս զբաղմանց) զաշխարհայնոյն դիցուք օրէնս, և ոչ զվերաշխարհիցն։ Զի մեծ է աղքատանալն՝ վասն Քի, քան ստանալ ինչս, և տալ աղքատաց՝ յաղագս հրամանին Քի, որքան մեծ է Քս, քան զայն՝ որ ողորմի աղքատին՝ ՚ի դէմս Քի։

Քանզի՝ կամաւոր աղքատն՝ որ յաղագս Այ՝ նմանող Քին է, (որ վասն մեր՝ աղքատացաւ, ասացաւ ՚ի գիրս.) իսկ՝ ողորմածն աղքատին՝ բարեկամ՝ Քի կոչի, այլ՝ ոչ նոյն ինքն Քս։

Ճշմարտ՝ զի բոլորովին լինել քո՛ մերկանալովն՝ կամաւորութեամբ զամ ինչ՝ վասն Քի, դժուարին է ամենեցուն, ոչ

ասեմ

ասեմ թէ անհնարին, զի որք կամին՝ կարող են, զոր յայտ առնէ՝ բազմայն կատարումն՝ յամ ժամանակի։ Դուք այսուհետեւ՝ որ առացեալ էք ինչս, ղեարեկամայն ՔՆ ընկալարուք զաստիճան, ողորմելոյն աղքատաց, որպէս եւ ինքն իսկ՝ հրամայեաց տէրն, թէ՝ տուք ողորմութիւն, եւ ամ ինչ ձեր սուրբ է. այսինքն թէ՝ յորժամ 'ի ձերոց առացեալ-դոյից՝ տայցէք մասն ողորմութեն աղքատաց՝ յօժարական եւ առատաձիր կամօք, միացեալքն ամ՝ սրբին եւ անմլաս լինին ձեզ։ Եւ ո՛չ դատիք երբեւ զագահս՝ յաղագս սատանալոյն, այլ՝ ողորմութե արժանաւորք յայ՝ որպէս զողորմածս, ըստ ասելոյն Տն մերոյ, երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն։

Նաեւ՝ զայս եւս ասեմք, թէ՝ օրէնք՝ որ եդան կրօնաւորաց՝ անինչս եւ անստացուածս լինել, թէպէտ եւ յաղագս անզբաղ լինելոյ է յաշխարհական իրաց, եւ միայն հոգեւորացն պարապել, այլ՝ կատարեալ պատճառն՝ յաղագս կարօտ լինելոյ կրօնաւորին, ո՛չ միայն յաւելորդացն կերակրոց, եւ ըմպելեաց, եւ զգեստուց, այլեւ 'ի հարկաւորացն եւս։ Որ զի կարող լինիցի պատերազմի ցանկութեն՝ որք զինուորին Քսի մաքուր կուսութեն, յաղթօղ լինել։ Զի՛ որք անխտիր տան զանձինս՝ ուխտապահութե եւ սրբութե, թէ եւ՝ դոքա ղոռնկութեան՝ զրգռիչս ո՛չ ունէին սխտից, բաւական է բոյս ցանկութեն՝ զառաւելութիւննիւթոյ՝ ուղխայնամոլութեն տալ, ձգել ընտա 'ի կատարումն մեղաց։

Վասն որոյ՝ աղաչեմ, զի թէպէտ՝ եւ յոլովս ունիցէք զնիւթ կերակրոց, եւ ըմպելեաց՝ առ ձեռն եւ առանձին, այլ՝ յոգիս ձեր խնայելով՝ մի՛ ագահութեամբ եւ որկորստութեամբ՝ յայնոսիկ վարիցիք. այլ՝ պարկեշտութեամբ եւ օրինաւոր՝ ըստ կարգի կրօնաւորաց։ Եւ զոր 'ի ձէնջ պակասեցուցանէք՝ վասն պատուիրանին Ա.Յ, 'ի սէր՝ կարօտեալ, եւ չքաւոր եղբարց, եւ ծերագունից եւ տկարաց՝ զայնոսիկ 'ի կեր արկանիցէք. յորոց՝ կրկին ամբարիցէք 'ի յոգիս ձեր՝ զբարին. զպարկեշտութիւնն անձանց ձերոց, եւ զսիրով ողորմութեն՝ կարօտելոց։

Մինչ գտցի 'ի միջի ձերում, որ զձեւ կրօնաւորութե զգեցեալ է, եւ յառաւելութիւն գինւոյ՝ տուեալ զանձն

իւր, և զբամբասանս արբեցողաց՝ ընկալցի 'ի կարգն Սուրբ։ Զի միոյն անկարգութիւն՝ ամ՟ կարգակերպքն՝ անդոսնեսցին յաշխարհականաց և յայլազգեաց։ Եւ թէ և՝ այլով ամե՟ հնար էր անբամբասելի լինել այնպիսոյն, արբեցութիւն առ տաքս եւեթ յարքայութենէն՝ ըստ բանին Առաքելոյ. քանզի՝ ասէ՝ մի՛ խաբիք, ոչ սպանօղք, ոչ շնացողք, ոչ արուագէտք, ոչ արբեցողք, (և զայլն որ ի կարգի թուէ.) ոչ ժառանգեսցեն զարքայութիւնն Այ, և այլն։

Զի որք օրինակ լինել բարեաց՝ պարտական են՝ ամ՟ տեսողաց, և նք զայն ինչ գործեն՝ զոր արգելուն գիրք սբք՝ 'ի յաշխարհականաց, զի՞նչ յոյս աշխարհականին կայցէ, և կամ ո՞վ համարձակեսցէ առ նոսա՝ յաղագս վատթար ինչ գործոց, յանդիմանութե ինչ խօսել բան։ Որք և ընդդի֊ մաբանեն՝ զկարգաւորաց ոմանց՝ զանազան անկարգութիւ։ Ոչ զամենեցուն ասեմք, զի բազումք 'ի մէնջ, և ոչ հացիւ և ջրով յագին՝ վասն սիրոյն այ, թող թէ՝ աճելորդ կերակրովք, և գինեաւ։

Եւ՝ յաղագս անխրատից և ծուլից, զորս և դուք՝ որ կատարեալքդ էք, խրատեցէք զնոսա՝ որ ստահակին ընդդ֊ ցեն, զի ուղղեսցին։ Իսկ՝ որք յամառեալք՝ 'ի նոյն բերին համապազ 'ի լոյծ և 'ի մեղկ կեանս, յետ բազում անգամ խրատելոյն և ոչ անսալոյն, 'ի բաց հատէք զանբժշկելի ան֊ դամն 'ի մարմնոյ Եկեղեցւոյ, զի մի՛ փոքր մի խմորն՝ զամ՟ զանգուածն ապականիցէ, չարն՝ չարեաց լինելով օրինակ։

Իսկ՝ եթէ ոք եղբարցն ջատագով է այնպիսումն, վասն մարմնաւոր ընտանութե, կամ վասն սիրելութե, որպէս զի՝ ախտացեալ անդամն՝ 'ի կարգ առողջիցն պահեսցէ; լրբաբար գործելով զանպատշաճն, և մերձակայիցն պատ֊ ճառ լինելով հիւանդութե՝ զիւրն հոգւոյ ախտ՝ 'ի նոսա փոխանելով, որդ զբոր կորստեան հոգւոյ նորին, և այլոցն՝ որ նովաւ. օգնականն նորա՝ տացէ պատասխանի առաջի քն, եթէ առաջնորդն իցէ, և թէ՝ այլոք յընկերակցացն։ Զի թէ տէրն զաջ ակնն հրամայէ խլել, և զձեռն աջոյ և զոտն հատանել, զի՞նչ լինիցին՝ որք զգայթակղեցուցիչն՝ առ֊ գայթակղեալսն պնդեալ պահեն, 'ի մասն երկաքանչիւրոցն ոգւոյ, հիւանդացն՝ աներկիւղ գործելով զվատթարն, և

 առ֊

տուողջիցն՝ գայթակղելովն, և բամբասելովն։

Իսկ՝ եթէ ՚յետ ՚ի բաց դնելոյն, զղջացեալ դարձցի ՚ի յուղղութիւն՝ այնպիսին՝ շնորհօքն այ, և ողջասցի ապաշխարութբ, ճշմարտութբ, և ոչ կեղծաւորութբ, ընկալցի վերստին յառողջ անդամոցն Քի՝ միաւորութիւնն։

Դարձեալ՝ և զայս պատուիրեմք, զի թէ հնար իցէ փախչել ձեզ՝ ՚ի փոփոխական բարուց, վասն ՚ի վանս շրջելով․ զի վասն դոյն պատճառի՝ թողուլ զառաջնորդն իւր, և զկենակից եղբարսն՝ անհաստատութն բարուց՝ է նշանակ։ Աստանզի՝ բաց ՚ի հոգւոյ վնասէ՝ որ հրամայեալ է ՚ի դիրս՝ թողուլ և գնալ, յաղագս մարմնաւոր ինչ պատճառի՝ ոչ թողացուցանեն զփոփոխումն ՚ի տեղւոջէն։ Եւ յայսմ պատճառէ՝ յազգի մերոյ կրօնաւորաց՝ զլացումն տեսանեմք անհրահանգս, և անխրատս, և անհնազանդս աւաղադունից․ և դրեթէ զբովանդակն՝ բաց ՚ի սակաւուց։ Զի յորժամ յանպատշաճն կամ ՚ի գործս, կամ ՚ի խօսս՝ որ անվայելուչ է կրօնաւորաց, տեսանիցեն զոք՝ եղեալ, առաջնորդն, կամ վարդապետն, կամ ոք ՚ի ծերագունիցն, և յանդիմանօղ բանիւ սաստիցէ, վաղվաղակի դիշերադնաց եղեալ, իբրև ծառայ փախուցեալ ՚ի Տէ՝ փախչի զայրացեալ սրտիւ, յոժայլն խրատուէ անտի։

Եւ զի՝ առաջնորդն երկնչի մի գուցէ ՚ի գնալ եղբարց յաղագս այսպիսի պատճառի, գործոյ՝ յեկեղեցւոյն պակասութիւն լինիցի, ներող լինի՝ ամ սաստիկ եղբօր, կալ մնալ անբժշկելի ՚ի բարս, և ՚ի գործս ստահակութն․ և այսու աղագաւ՝ անխրատս և անհրահանգս մնան այնպիսիքն՝ մինչ ՚ի վախճան։

Նաև՝ եւս ծանրագոյն յիմարութն բանք՝ զորս պատասխանեն նք խրատտուացն իւրեանց՝ մի լինել շատաշրջօղս, ասեն՝ Քս՝ ազատ արար զմեզ, և ինքնիշխանս, զիարդ զազատութիւնս մեր՝ դնիցուք ՚ի ծառայութիւն մարդկան։ Եւ երանի թէ՝ զազատութիւնն՝ զոր ետ ած բնութեա, բարւոք ՚ի կիր արկանէին, այսինքն ՚ի յախտից լինել ազատս։

Աստ թէ որ ծառայութիւն, և միասակար՝ մեղաց ծառայութիւնն է, որպէս ասաց Քս, թէ՝ որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց։ Իսկ՝ այ ծառայութիւնն, և վասն Ա․Ծ Եկե_

ղեցւոյն, և վասն եկեղեցւոյն՝ առաջնորդքն, արդարութիւն է, և ոչ մեղք. զոր և՝ Առաքեալ օրինադրէ, թէ՝ ծառայեցէք միմեանց՝ երկիւղիւն Քրի. և ինքն Քս հրամայէ, զի որ կամիցի մեծ լինել՝ եղիցի ամենեցուն ծառայ. գրէ և Մեծն Բարսեղ՝ 'ի կրօնաւորաց սահմանն թէ՝ ամ ժուժկալութի, և Առաքինութիւն այնմ՝ որ զհնազանդութիւն առաջնորդին ոչ ունիցի՝ անօգուտք են, և յոչ ինչ պէտս համարել։

Մինչ յեղբարց՝ տրտնջօղ լինիցի զառաջնորդէ իւրմէ՝ յինչ և իցէ պատճառս տրտնջման. թէ և արդար գտանիցէ 'ի տրտնջելն, զի մի զվարձսն՝ որ յայս, կորուսանիցէ, և ընդ այգւոյն մշակացն առաջնոյ՝ դատեսցի, վասն տրտնջելոյն զտեառնէն անիրաւաբար։ Զի թէ մարմնաւոր ծառայից հրամայէ Առաքեալ՝ հնազանդ լինել ըստ մարմնոյ տերանց՝ ոչ առ ականէ ծառայելով, այլ՝ միամտութբ, սրտիւ՝ որպէս Ած, զի 'ի Տէ՝ առէ, ընդունիցիք զվարձսն. քանի՞ ևս պահանջէ Ած՝ 'ի հոգևորացդ, առաւել քան զնոցայն՝ ցուցանել հնազանդութիւն, և համբերութիւն, և միամտութի Եկեղեցւոյ հոգևոր Առաջնորդաց։ Զի ոչ միայն ընդ պահոցն և աղօթից, և որ նման սոցին՝ մասանց առաքինութեց՝ տայ Ած զվարձս վաստակոց՝ գործողաց 'ի յայլ պատուիրանի նորա. այլ՝ առաւել ընդ հաւատարիմ լինելն Եկեղեցւոյ, 'ի գործս, և յաշխատութիւնս, և յամ իրս։

Իսկ՝ զգողսն և զկծծսն, և զհատուսն քան զարտաքինսն՝ 'ի սոյն յանցանս դատելս, առաւելապէս դատէ Ած, ոպ զգիտօղ կամաց Տն՝ ծառայ, քան զայն՝ որ ոչն գիտէ։ Զի զորօրինակ զՍբ կերակուրս, և զըմպելիս՝ պիղծ կցստաւք անկեալք 'ի նոսա, և հեղձեալք ապականեն. սոյնպէս՝ և յարդար վաստակս՝ յորժամ ձեռն գողոց՝ մերձենան 'ի կծծութիւն՝ ինքեանց բարեգործութիւնն հեղձնուն 'ի հոգևս իւրեանց, ոպ զմկունս. և զմնացեալ ստացուածսն պղծեն անիրաւութբն.

Յորմէ զգուշանալ աղաչեմ, և Սբ պահել զձեռս՝ 'ի վաստակոց, և յանիծաբեր անձինն՝ ախտից։ Քանզի՝ անէծք ցաւագինք՝ վասն այլ մեղաց՝ ոչ ևս շարժին 'ի մէջ Եկեղեցւոյ, քան յաղագս գողութե։

Եւ մինչ փոքր համարեսցի զամ 'ի կարգս մեղաց,

քան

ջանիցի՝ 'ի քարեղէն տախտակացն՝ 'ի գրեալ օրէնսն մա-տենին Ս. Գ. երրորդն է սա կարգեալ, յետ սպանութեան և շնութեան։ Եւ մինչ կարծիցէ թէ՝ մեծագոյն իրաց յափշտակութիւնն է 'ի գողութեան համարի, և փոքրն ոչ։ Ծանիցէ այնպիսին, զի թէպէտ՝ և 'ի տուգանսն զանազանութիւն է, քանզի՝ չորեքպատիկ հատուցանել՝ յօրէնսն հրամայեցաւ՝ զգողութեան մշտրուածն, և տասն դահեկանի չափոյն՝ չորեքպատիկն, կամ հարիւրին, կամ հազարին՝ առաւել է քան զմիոյն, կամ զերկուցն, սակայն՝ անունն մի և նոյն է մեծին և փոքուն, բազմին և սակաւուն։ Ոչ ինչ թէ՝ որ զմեծագոյն իրս, կամ զբազումս գողանայ, նա միայն կոչի գող, և որ զփոքունն և զսակաւս, յայլ ինչ անուն վերածայնի, այլ՝ համանուանաբար՝ 'ի վերայ ամ՟ գողոց է գողութեան անուն, և պատիժ, որ զբազումն գողանայ, և որ զսակաւսն։

Եւ սահմանն՝ որ ընդ գողութեան անուամբ, և բամբասանօք՝ արկանէ զմարդ, այսչափ է, թէ ոք՝ որ զձեռս իւր ձգէ յանձնուլ զինչ և իցէ իրս, և աչօքն այսր և անդր հայեսցի, զի մի՛ տեսցէ՝ կամ Տէր գոյին, և ըմբռնեսցէ զնա, եթէ ամաչօք, և հայհոյեսցէ, գողէ այնպիսին, և գողութիւն է զոր առնուն։

Եւ մինչ ինքն իւրեան իրաւունս առնիցէ, կամ աշխատութեան իւրոյ վարձ առեալ զգողացեալն, և կամ՝ այլ ինչ առս պատճառս յօժարեալ, անպարտ համարի լինել զինքն՝ 'ի դատաստանէն Ս. Գ. 'ի նախնի եղեալ օրինակէն՝ զգաստասցի այնպիսին։ Անանիայ և Սափիրայ՝ միթէ անձին աշխատութիւն ոչ էր գողացեալն՝ յայլոց յիւրայ՝ ոչ և քոյդ, ոչ՝ այլ 'ի սեպհական իւրեանց գեղջն գնոյ, և 'ի հայրենի ժառանգութենէ՝ որ վաճառեալ արծաթոյ, և սակաւ ինչ թաքեալ՝ յաղագս առանձնական իւրեանց պիտոյից, և զբազումն՝ առ ոտս եդեալ Պետրոսի, սա՝ զի՞արդ մահու եղեն պարտականք, 'ի միմին հաւատոյ՝ արդար իրաւանցն պատուհասեալք, ոչ վասն Արծաթոյն ինչ կարեաց՝ զորմէ ոչ ինչ փոյթ էր Պետրոսի, այլ՝ վասն ստութեան, որպէս և ասէ, ոչ ստեցեր դու մարդոյ, այլ՝ Այ՟։

Իսկ՝ առ մերովքս տեսանեմք՝ ոչ միայն գողութիւն, այլև՝ ստութիւն՝ վասն գողութեան, ոչ լոկ բանիւ, այլև՝ մե-

ծա

ծանրն երդմամբ ուրացութիւն, որոյ մեղաց՝ չիք թողութիւն։ Զի և ոչ զղջումն և խոստովանութիւն՝ առ այն՝ յորմէ գողացաւն, զի թողութեան իշխանութիւն՝ գողոյն, յաղագս գողացելոյ իրին, որ տէրն է գողացեալ գոյին՝ ունի, և ոչ օտար ոք խոստովանահայր։ Նման որոյ՝ զի ոչ խոստովանի նմա, և ոչ հատուցանէ՝ զոր գողացաւն ՚ի նմանէ՝ և զրկեաց, ոչ առեալ չորեքկին՝ ըստ մաքսաւորին զաքէի, այլև՝ ոչ զոր էառն, ոչ ընդունի թողութիւն յաւիտեան։

Են դարձեալ՝ ոմանք ՚ի պակասամիտ կրօնաւորաց, որք թէպէտ՝ և ոչ զարտաքին իրս, այլ՝ զանձին իւրեանց զօրութիւն, և զյաջողութիւն՝ գողանան յեկեղեցւոյն, ՚ի յիւրեանց առանձնական գործս՝ արի և արթուն լինելով, և ՚ի հասարակացն՝ հեղգ և պղերգ, ոչ անպատիժս ՚ի դատաստանէ այ՝ մնան այնպիսիքն, ընդ թերահաւատութեն առաւել՝ քան ընդ պղերգութեն։ Զի ոչ հաւատան զաշխատութեն վարձ՝ ՚ի Տէ ընդունել, այլ՝ զմարդկայինն միայն համարին հատուցումն, որոց՝ յորժամ ըստ կամաց՝ զպէտսն տայ առաջնորդն, արիանան ՚ի վաստակսն։ Իսկ՝ յորժամ փոքր մի նուազանալ հանդիպի, ընդ հեղգութեան գործոյն, և զտխրութիւն յաւելուն։

Նոյնպէս՝ որ գործոց գրեցան պատուէրանք յանձառունչ դրոց՝ և շրթանց և ձեռացս՝ դնել դրունս պահպանս, և դռնապանս, ով զի զօգտակարն ՚ի բանից, և զբարին թողացուսցեն ելանել. Իսկ՝ զչարս և զխստակարս, և զանօգուտս՝ ՚ի սրտին՝ ով ՚ի բանսն արգելցեն, ոչ թոյլ տալով մտացն՝ ծնանել զչար մանկունս, այլ՝ մանաւանդ հեղձուցանել յիւրեանց զաւրմննեալ յղութիւնն՝ ՚ի Սայէ։

Նաև արդ՝ մինչ դատեսցէ զընկեր իւր, զի մի և ինքն դատեսցի յարդարադատն Այ, ով և ասաց Տէրն, մի դատէք և ոչ դատիցիք։

Մինչ ՚ի բամբասանս յօժարեսցի, թէև՝ ուղիղ իցէ, թող թէ՝ զբանհետ վաւերալ։ Զի զի՞նչ օգտեցուցանեն զեղեկալոյն բամբասելովն զնա՝ առ այլս, զքեզ միասեցեր ՚ի բամբասելն, և նմա ոչ ինչ օգտեցաւ։ Եթէ կամիս օգտեցուցանել զնա, և զքեզ, տէրունականաւն վարեսջիր խրատով։ Յանդիմանեա զնա սիրով՝ որպէս զհիւանդացեալ անդամ՝

սալ

սպեղանեօք, նախ առանձնաբար, եթէ ոչ անսայցէ՝ առաջի երկուց, և երից վկայից։ Եթէ և 'ի նոցանէ ոչ պատկառես ցի՝ դառնալ յուղղութիւն, ասասջիր յեկեղեցւոջն, և թէ՝ յեկեղեցւոյն 'ի հրապարակախայտառակ լինելոյն՝ ոչ զղջասցի, յայնժամ համարեսցի քեզ, և բամբասեսցի իբրև ոյես՝ իբրև զհեթանոսս, և զմաքսաւորս։

Եւ արդ՝ մինչ սովորեցուսցէ 'ի կրօնաւորաց՝ զեզգաւուր, կամ չարախօսել 'ի վերայ՝ ումեքէ, կամ անիծանել վայրապար, կամ հակառակել ընդդէմ բանից՝ հակառակողաց՝ յանօգուտ կռուիւ, և 'ի խառնակել միաբանութեան, կամ 'ի միջին՝ թշնամանաց և անարգանաց բանս՝ բարբառել, որ զաշխարհականս, որ ոչ վայելէ մեզ։ Զի թէ ընդ դատարկ բանից՝ համարս պահանջէ քս, որպէս և հրամայեաց. զի՞նչ լինիցին՝ որք զարշելի և վատթար բանիւք՝ վարին անխտրաբար։ Մանաւանդ՝ որք 'ի խեղկատակութիւն սովորեցուցեն զեզգաւս, և 'ի ծիծաղական բանս, նման լինելով խաղալկացն, և հեգկատակաց, և որք 'ի ծիծաղելն պղպղեն զդէմս, և կարկաջեն անմտաբար։

Վասն որոյ՝ աղաչեմ, զի բանք ձեր՝ ոչ լիցին, անհամ և անաղ՝ որպէս զռամկաց անմտաց, այլ որպէս աղէ համեմեալ՝ ըստ խրատուն առաքելոյ, 'ի շահ և 'ի շնորհս՝ տալ լսողաց, և ոչ 'ի դայթակղութիւն, և զպարտութիւն՝ լինել լսելեաց. Այլև՝ նոյն լինիցին շահաւէտ և օգտակար բանքն՝ մի՛ յաճախութբ, և առանց դիպող ժամու՝ եղիցին խօսեցեալ. յայնմամնէ՝ որ խօսիլն գիտիցէ իմաստութբ, զի մի՛ ձանձրացեալ նողկալիցեն լսողքն, և դարձեալ դիցեն ատեցողք՝ բարի բանից, այլ սակաւք եղիցին, և այն հեզութեամբ և հանդարտութբ։

Եւ զխոնարհելով զբանս՝ որ առ մաքրագունիցն երամք, ասեմք զայս, եթէ խորհուրդք, և բանք և գործք ձեր, և ամ՝ շարժումն հոգւոյ և մարմնոյ, այնպէս եղիցին պարկեշտք և Աստուածավայելուչք, որպէս զի՝ անուամբն Այ, և ձերոյ կրօնաւորութեան՝ մի՛ հայհոյութեն և պարսաւանաց, այլ փառաւորութե. և փառաւորելոյ՝ լինիցին պատճառք, 'ի տեսողաց և 'ի լսողաց։ Զի մի՛ լիցի ումեք 'ի ձէնջ՝ ըստ հնոյն բարոյիցն, լսել յոյ՝ մարգարէիւն թէ՝ անուն իմ վասն ձեր հայհոյի

'ի

՚ի մէջ հեթանոսաց, այլ մանաւանդ՝ տէրունական բանին՝ որ առ աշակերտսն, արժանաւոր առնիցէք զանձինս՝ պայծառ առաքինութք, թէ՝ այնպէս լուսաւորեսցի լոյս ձեր՝ առաջի մարդկան, որպէս զի՝ տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայրն ձեր՝ որ յերկինս է։

Այս լինի սակաւուք՝ առ աշակերտեալ եղբարսդ՝ ասացեալ ՚ի մէնջ ՚ի փառս Ա.Ծ, աճարանեցին։

Առ Առաջնորդս՝ Սրբոյ ուխտիս Մխիթարեանց։

Փոքր ինչ՝ և առաջնորդացդ ՚ի յերկնից ձայնաւոր- Է
հորդելոյն, ասացուք ծառայակցաբար՝ զհոգևորական և զԱ°ծային բանին կերակուր, որք զուշաց ունիք գործ, և սպասաւորութիւն մարմնոյ Եկեղեցւոյ։

Զի պտղաբերական աչք առաջնորդին անձին՝ կամ շարժումն՝ ՚ի լաւագոյնսն, կամ ՚ի վատթարագոյնսն, ըստ այնմ նմանութեան, և առաջնորդք՝ առաջնորդելոցն։ Այսպէս աչացն՝ եթէ մաքուրք լինիցին ՚ի յաղտից ինչ ՚ի ներքս անկելոյ, սրատեսութիւն՝ անմոլար առաջնորդէ անձին յուղիղ ճանապարհն։ Իսկ՝ եթէ շաղախեալք մթին՝ զերկնային լուսոյ՝ որ ՚ի գլխոյ անտի յաչսն իջանեն, ինքն անտեսութեամբ՝ սխալէ, և ընդ ինքեան՝ ՚ի խորխորատ մահու՝ զբոլոր անձն իւր՝ արկանէ։

Ըստ այսմ օրինակի, և առաջնորդք Եկեղեցւոյ, որ ոք երկոքումբք աչօք լուսաւորեալ իցէ, այսինքն գիտութեամբ Ա°ծաշունչ գրոց, և առաքինասէր գործովք՝ ամբծութեամբ, և սրբութեամբ, և ամ արդարութեամբ, զոր պատուիրանքն Այ՝ ուսուցանեն, այնպիսին՝ որպէս անձին իւրոյ, սոյնպէս և համօրէն եղբայրութեանն՝ բարւոք առաջնորդէ յԱծայինսն։ Իսկ՝ որ զմի յաչացն բաց ունիցի, և միւսոյն կափուցեալ իցէ՝ այսինքն, որ կամ գիտութեան առանց գործոց առաքինութեան, և կամ առաքինութեան առանց գիտութեան ունիցի, թերի է ՚ի բարեաց, և ոչ կատարեալ։ Քանզի միականեաց նմանի այնպիսին։

Զի

Զի թէպէտ՝ և որ զիմաստութիւնն ունիցի՝ գիտէ զշաւիղս՝ արդարութեան ճանապարհին, ուղիղ ուսուցանել բանիւ, այլ՝ ինքեան ոչ գնալովն ընդ նոյն՝ գործով, ոչ կարէ հաւանեցուցանել զայլս գնալ: Նոյնպէս և այն՝ որ սրբութ̃ վարուք իցէ միայն՝ առանց գիտութեան գրոց, թէպէտ և անձամբ իւրով՝ գնայ ընդ ճանապարհ օրինացն այ, բայց զի՝ այլոց՝ ոչ արժանէ, ոչ գիտէ խնամատութեամբ առաջնորդել. վասն այնորիկ՝ բազում անկարգութիւնս մտանէ յեկեղեցի:

Իսկ այնոքիկ՝ որ զերկոսեան տեսարանս աչաց՝ խաւարեալս ունիցին 'ի լուսոյ, այսինքն զի են ողէսք՝ Մնային գիտութեանց, և են պղերգք՝ յամ գործս արդարութեան, մանաւանդ թէ՝ և հակառակօքն լցեալք, և յանդգնին տալ զանձինս առաջնորդութիւն Եկեղեցւոյ (որ և զբազումս տեսանեմք յայսպիսեաց՝ 'ի մերումս թշուառացեալ ժամանակի, ձեռնամուխ եղեալ յայսոսիկ) լինին այնպիսիքն՝ ըստ տէրունական առակին, կոյր՝ կուրի յորժամ առաջնորդէ՝ ասէ, երկոքեան 'ի խորխորատ անկանիցին. որք ոչ յայ, այլ 'ի անձնէ.շարժեալք՝ դիմեն յառաջնորդութիւնն յայն; 'ի կորուստ ինքեանց, և առաջնորդելոցն:

Վասն այնորիկ՝ և մեք զածայինս բանի՝ խրատու սերմ՝ յայնց առաջնորդաց ոգիս՝ սերմանեսցուք, որք օրինօքն այ՝ վարել՝ յօժարին զառաջնորդութիւնս իւրեանց, որք Աւ սկսանին, և առ Ած կատարեսցին:

Նոյն և ասեմք, մի՛ անփոյթ առնիցէք զաշակերտելոց եղբարցն՝ 'ի հոգւոյ ինչ վտանգս անկեալ ուրուք, կամ 'ի մարմնոյ, քանզի՝ համարս տալոց էք ընդ իւրաքանչիւրոց: Մի՛ զնիւթականին գործոյ միայն՝ պահանջել զկատարումն անթերի, և զհոգևոր գործոյ՝ զառ 'ի նոցանէ կատարելոյ՝ անփոյթ առնել, այլ 'ի վատթարաց զգուշանալ, և լաւագունիցն պատկառ կալ՝ միշտ խրատ տալով. զոր մանաւանդ պահանջէ ձեն, և կարգն՝ զոր ընկալան: Վասն զի՝ այսմ կարգիք մեռեալ լինել աշխարհի, և աշխարհական իրաց, և կենդանի՝ Քի, և նորին պատուիրանաց՝ ըստ խրատոյն Պօղոսի. զի զայգի օրինացն կոչեցան գործել, և ոչ զարտաքնացըն մշակութեան գործ: Եւ որ զայն միայն գործէ առա, և 'ի հոգևորացն՝ ոչ ընաւ, կամ զնիւթականսն՝ 'ի բոլոր սրտէ,

և

և զանձնիւթն ՚ի հարկէ, և առ այս մարդկան, ոչ եղև լսելի ներքին ականջօք՝ տրուռնական հրամանին, թէ գործեցէք՝ մի զկարատական կերակուրն, այլ՝ զայն, որ մնայ ՚ի կեանսն յաւիտենից։

Գործել արժանէ և զայս, քանզի՝ դատապրկութիւն չարէ, ուր և Պօղոս խրատէ ասելով, մանաւանդ զի՝ և օրէնս դնէ, եթէ՝ որ գործիցէ ոչ՝ և կերիցէ մի, զոր և ինքն կատարէր յասելն՝ զձայս և զցերեկ գործէաք, առ ՚ի չծանրանալոյ ումեք, և ձեռս այս՝ պաշտեցին զիս, և որ ընդ ինն էին։ Նայց՝ յաղագս մարմնականին գործոյն՝ զհոգևորսն անտես առնել՝ իբրև զանէ լոյծ իրս, յայժ վասնթարագոյն է աշակերտելոց բանին։ Քանզի՝ պարտ է՝ ուր երկուց է մարմնոյն՝ հոգւոյն, առաւելին զհոգւոյն հոգալ կերակրոց, որ են աղօթք, և ամ բարեգործութիւնք, և այլ զմարմնոյն, և զմարմնականաց։ Զի և առ մարդիկ՝ նախ մին կերակրի՝ սպասաւորեալ ՚ի ծառայիցն, և այլս ծառայ քին՝ ՚ի նշխարէ տերանցն։ Եւ՝ ՚ի միոյ՝ քանզի՝ մարմինն ծառայական է, և հոգին տիրական, և կամք մտացն՝ դատաւորակիս արժանէ է դատաւորականին՝ ՚ի կարգ իշխանել զերկրպագանակ Յառաջագոյն զհոգին կերակրել՝ հոգևորական կերակրովք, ՚ի ձեռն մարմնոյն սպասաւորութեան, և ապա՝ զմարմնականացն հոգալ, հոգւոյն խնամատութեամբ, և տնօրէնութեամբ։

Որդ՝ պաշտօնեակ, և որ նման սոյն՝ բարեկարգութեանս, պահեսջիք զմիաբանութիւն եղբայրութեան ձերոյ։

Դարձեալ՝ մի կողմնակալ բարեաց՝ զոմանս սիրել՝ ջերմ առնելով, և զոմանս անտես առնել, ոմանց առաւելութեամբ բերել ՚ի պէտսն, և այլոց՝ և ոչ հարկաւորացն բաւականանալ. այլ՝ ամենայն՝ հաւասարակ երկիցէ՝ ըստ պէտս բարոյ կանոնադրութեան, և պատուէ՝ որոց վայելէ։

Իսկ՝ կերակրոցն բաշխումն՝ ըստ չափոյ աշխատութեան՝ առ իւրաքանչիւրսն լիցի, առաւելութեամբ և նուազութեամբ։ Զծերացելսն և զկատարեալսն, որք զմանկութեն ժամանակն, և զզօրութիւնս անձանց՝ ՚ի յաշխատութիւն Եկեղեցւոյն ծախեցին, մի բարձի թողք առնիցէք, ուր ոչ ժամանակին պիտանացուք, զի մի բարկասցի տէր։ Քանզի՝ թէ տարաց վտանգելոյ, նախ թշնամեաց՝ կենաց առնել հրամայէ Քս, և ողորմել, և պատուհաս ապառնոյ՝ որք ոչն առնեն, քանի՛ եւս եղբարցն, և

անդամոց Եկեղեցւոյն։ Աստ որոյ՝ զծերս պատուէրցէք, և ծերատացէք՝ ըստ հրամանին Առաքելոյ, և զոսկարայեալն խնամարկեցէք տեսչութբ, և պիտոյից նոցա պատրաստութբ, ըստ չափոյ զօրութե ձերոյ։ Գիտեմք՝ զի այսպիսեաց բարեկարգութեց խափանելոյ՝ աղքատութիւն ժամանակիս է պատճառ, բայց՝ ոչ զուաճելն, այլ՝ զյօժարութի կամացն, և զկարն պահանջէ ած։

Մի՛ զնուիրեալն յեկեղեցիս՝ կամ կենդանեաց մխաբանութե, կամ մեռելոց յիշատակի, անձին միայնոյ՝ սեփհականեսցէ առաջնորդն, այլ՝ 'ի պէտս Եկեղեցւոյն ծախեսցէ։ Զնոյն և հատուսցէ եկեղեցեաւն՝ զհոգևոր պարտսն, զի մի՛ յարդար դատաստանին աճուրն՝ պահանջեսցէ իւրաքանչիւրոք զառեալն, և զի՛ ոչ ունիցի յայնժամ հատուցանել, զլուրն առեալ բարեգործութե փոխարէն տայցեն։

Եւ եթէ առաջնորդն առաջին՝ զոր առ՝ յաճուրս իւր՝ 'ի ծախս Եկեղեցւոյն՝ վատնեաց հաստատուն վկայիւք, և ոչ ժամանեաց՝ յաղագս օրհասին մահու կանխելոյ, հատուցանել զպարտսն, երկրորդն՝ որ ընկալ նորա ժառանգէ զառաջնորդութիւն եղբայրութեն, պարտականէ վճարելոյ․ և եթէ անտես առնէ, ունի տոկոսեօք վճարել առաջի քն։ Իսկ՝ եթէ ոչ վկայեն նմա՝ 'ի պէտս Եկեղեցւոյն առնել զառեալն, ինքն՝ որ էառն, հատուսցէ 'ի հանդերձելումն։

Մինչ ինքնակամ՝ ախտիւ շարժեալ՝ կաշառանօք աճառաց՝ յափշտակեսցէ զառաջնորդութիւն վանաց, առանց ժամանակին առաջնորդի՝ քննութե և հրամանի․ Զանզի՝ երկուք են պատճառ իրաւացի՝ փոխելոյ զվանաց առաջնորդըս, կամ վասն զանարժանս գործելոյ՝ արտաքոյ օրինացն Ս. Գ, և այն՝ ճշմարիտ վկայիւք, կամ Եկեղեցւոյն՝ ոչ շինութե, այլ՝ աւերման լինելոյ պատճառ․ Եւ առանց այսոցիկ եթէ յանդգնի ոք՝ հակառակ յառնել, մեղանչէ յօրէնս այ։

Եւ զոր ինչ միանգամ կանոնեալք են, և եդեալ 'ի բանս սրբոց հարցն, յաղագս առաջնորդաց՝ առ 'ի խրատ և յուղղութիւն՝ 'ի բանս՝ 'ի գործս, և յամ բարեձևութիւ կարգաւորութեց՝ զամ բարեացն զոխպսն, և զօրինակսն, փութասջիք յանձինս ձեր՝ նկարագրել։ Եւ եթէ զամենայն՝ ոչ էք բաւական կատարել, յաղագս ձմեռն դոլով 'ի բար-

եաց

եաց՝ ժամանակիս, գոնեա՛ զյոլովն՝ գործով կատարեցէք, և առ պակասեալն՝ զյօժարութիւն կամաց ունիցիք, և զջեռմն և տրամութիւն՝ վասն պակասութեան: Զի յորժամ յայտնի հաստատիցէք զմիտս, հակառակ բարւոյ չարն՝ ոչ կարէ տեղի գտանել յոգիս ձեր:

Վասն որոյ՝ և մեք աղաչեսցուք զՏէր, զի առաջնորդեսցէ և առաջնորդելոցդ՝ յաջողեսցէ 'ի յերկնայինն հետևել ճանապարհ՝ մեօք հանդերձ, զի ամենեքեան արժանասցուք խոստացելոց բարեացն, որ 'ի Քն Յն 'ի Տր մեր:

Առ Առաջնորդս Եկեղեցւոյ՝ որ են յաշխարհի, որ կոչին Եպիսկոպոսունս:



Եկեսցուք և առ դասս եպիսկոպոսաց սրբոց, որ էք Տեսուչք կարգեալք յայս՝ հոգւոց հաւատացելոց, որ են յաշխարհի:

Որ թէպէտ՝ և ըստ կարգի երկրորդ եղայք՝ յաղագս բարեկարգութեան՝ նախ առ վանականսն: Սակայն՝ ըստ աստիճանի՝ առաջին էք:

Զորս աղաչեմ՝ նախքան զամ՝ 'ի միտս ձեր դալ, և ճանաչել իմաստութ՝ զաստիճանիդ՝ զոր ունիք զծանրութի, և զգործ, եթէ՝ ուստի՞ սկսաւ, և վասն է՞ր եղաւ, և զի՞նչ հրամայեցաւ առնել, յայնցանէ՝ յորոց հաստատեցին զայս: Զի յորժամ զայսոսիկ գիտիցէ ոք՝ ոչ պարտն իցէ գիտել մի 'ի յերից սասսի՝ շահիցի, կամ ճանաչելովն զծանրութի նորա և զդժուարակրութիւն, և ոչ յօժարութե զիմել իբր 'ի դիւրին իրս, և 'ի հեշտալիս, գիտելով զիւր տկարութին, այլ 'ի բաց հրաժարել, թէև բռնադատիցի յիւրոց մտացն ախտից, կամ 'ի մերձակայից, ոչ և առաջին սուրբքն արարին, և ուսուցին: Կամ թէ յանձն առցէ զլինելն, վասն թույ ըստ հաճոյից Այ՝ կատարել զտնտեսութիւն գործոյն: կամ թէ ոչ արասցէ զարժանն, ճանաչէ զպակասութիւն բարւոյն եղեալ յինքեան, և զվնասն, և խղճիւ

մտաց

մասց իւրոյ՝ ղատէ զանձն, յանցաւոր զինքն համարելով։

Արդ՝ Թէ ուստի՞ սկսաւ՝ ասասցուք։

Սկիզբն Եպիսկոպոսութեան՝ եղև յայնմանէ, որ երդմամբ էառ զԻշխանութիւնն 'ի Հօրէ, ըստ կարգին մելքիսեդեկի. ոչ ըստ Ազգութեան, այլ ըստ մարդկութեան, ոչ յանքանից մատուցանելով Պատարագ՝ ըստ ահարոնեան Իշխանութեան, այլ զանձն իւր մատոյց՝ կամաւոր Պատարագ 'ի վերայ Խաչին՝ Հօր, վասն ընդ մեզ հաշտութեան։ Եւ զնոյն Իշխանութիւն՝ զոր ինքն 'ի Հօրէ ընկալաւ, յաղագս Խաչին մահու, 'ի վերայ այնոցիկ՝ զորս գնեաց արեամբ իւրով, շնորհեաց աշակերտաց իւրոց, 'ի ժամանակի համբառնալոյն յերկինս, ըստ աւետարանին ղուկասու Թէ՝ եդ ձեռս 'ի վերայ նոցա, և օրհնեաց զնս, և ասա ինքն՝ ասէ, վերանայր յերկինս։ Զնոյն օրինակ պահանջելով և 'ի նոցանէ, Թէ՝ որպէս ես ոչ հեշտութեամբ, այլ չարչարանօք և մահուամբ ընկալայ զԻշխանութիւն՝ 'ի վերայ ազգի մարդկան, և դուք նմանապէս՝ մահուչափ նահատակեցարուք 'ի վերայ ոչխարաց հօտի իմոյ, զոր ստացայ արեամբ իմով։ Որք և արարին ըստ հրամանին, մեռանելով 'ի վերայ ժողովրդեանն, որ հաւատացաւ նոցա 'ի Տէ։

Եւ յորժամ հանդերձեալ էին Առաքեալքն ԲԺ և լինել յաշխարհէ, ընտրէին 'ի հաւատացելոց անտի՝ արս երկիւղածս և իմաստունս, և կացուցանէին փոխանակ իւրեանց՝ գլուխ ժողովրդեանն, 'ի քաղաքս և 'ի գաւառս, զորս և Եպիսկոպոսս անուանեցին, որ Թարգմանի տեսուչ։

Արդ՝ այս՝ Թէ ուստի՞ սկսաւ, ասացաք։

Պարտ է գիտել և զայն, Թէ՝ յաղագս որո՞յ պատճառի եղաւ 'ի Քէ, և յԱռաքելոց նորա՝ այս գործ Եպսկութեան, յայտ է Թէ՝ վասն լինելոյ գլուխ, և հրամանատար Քահանայից և ժողովրդոց, և որպէս զդէտ՝ աննիրհ աչօք մտացն նայել 'ի վերայ ամենեցուն, զԹիւրեալսն ուղղել, և զուղիղսն՝ հաստատուն պահել յուղղութեան։

Եւ Թէ զի՞նչ հրամայեալ Եպիսկոպոսին լինել, և կամ զի՞նչ առնել. զայս՝ Պօղոս յայտ առնէ առ Տիմոթէոս գրելովն, Թէ՝ պա՛րտ է Եպիսկոպոսին՝ անարատ լինել, ոպ ԱՅ տնտեսի, հեզ, ցած, պարկեշտ, հիւրասէր, բարեսէր,

այր

արդար, սուրբ, ժուժկալ. մի արծաթասէր. մի կռուօղ. մի հպար-
կանօղ, այլ հանդարտ և այլն և ա.:

Նախանձ ամենայնի՝ յամ աղօթօղ՝ որ ըստ Հոգւոյ և ճշմարտութեան իցեն, մաքուր լինել հրամայէ.

Իսկ որպէս Ս. Յովհաննէսի՝ զայս յայտ առնէ, զի թէ մարդիկ՝ նուիրական դպրաց խոհեմից տնտեսս՝ զանարատան՝ առնէ, ընտրեալ լինել, այսինքն՝ որ ոչ գողասցի աճապարանս, և ոչ հեղգասցէ 'ի խնամ տանելոյ՝ գոյիցն, և 'ի պահպանութէ. Զամենայն և արժանէ անարատութիւն, և արթնութի, և զգուշութիւն ունել՝ տանն Ս. Յովհաննեսաց, որ է Եկեղեցի սուրբ: ոչ զեխութեամբ անձն զեկեղեցւոյ, այլ զհոգիս մարդկան՝ որք չլինեն տանջար յայ կենդանութ, զորս պարտ է՝ որչափ զօրութիւն իցէ՝ տնտեսսին, անխափանելի պահել գշինուածս՝ Եկեղեցւոյ տաճարացն, և ոչ տալ գողանալ սատանայի՝ խորով պղերգութեան՝ 'ի հոգիս որ գանձուց անտի, ոչ զլուր, և ոչ յորոց զտնտեսութենն ունի գործ, տացէ նոցին՝ որ ըստ օրէ, և զզանկին կերակուր 'ի ժամու, ըստ եկեղեցական հրամանին:

Հեզ, ցած, պարկեշտ: Հեզութբ յոյժ առնէ՝ նմանող լինել Մովսէսի և Դաւթի, որք 'ի հնումն էին հովիւք ժողովրդեանն իւրեանց, Թէ՝ նոյնպէս պարտ է և նորոց հովուացս, հեզութբ և հանդարտութբ հովուել զժողովուրդս, որ և հօտք հոգւոյ, և ոչ ձխութբ և պատկառութբ՝ ըստ աշխարհի իշխանաց: Իսկ ամենայն թէ՝ ցած, զխոնարհութիւնն ուսուցանէ, զի անդէպ է Եպիսկոպոսին՝ հպարտութբ, և գոռոզութբ լինել, առ հնազանդեալ ժողովրդեան, որպէս զգործակալս բռնաւորաց, այլ հեզութբ և խոնարհութբ բերել առ ամենեսեան: Որք և Քս՛ յայտնի զինքն տայ օրինակ, ուսարուք յինէն ասէ, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ: Եւ դարձեալ ցուցանելով՝ զոր 'ի խոնարհութէն օգուտն, և զյաւէ հպարտութէն վնասն՝ ասէ, ամ՛ որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի: Եւ Պօղոս զգուշացուցանելով զՏիմօթէոս՝ զի մի զանկատարն հոգևոր և մարմնաւոր հասակաւ, վերակացեսցէ յատուկ Եպիսկոպոսութե, ասէ՝ մի նորատունկ, զի մի հպար-

տացեալ 'ի դատաստանս անկցին սատանայի: Քանզի սատանայ ընդդէմ արարչին ոչ հպարտացեալ, և վասն այնորիկ՝ անկաւ յերկնից, և պարտական յաւիտենական դատաստանաց, և մշտնջենաւոր տանջանաց: Վասն որոյ՝ հրամայէ թէ՝ ցած, զի մի նորին աւարին ըմբռնեալք՝ նորայն դատաստանի և պատժոյ՝ կցորդք եղիցին:

Պարկեշտ, պարկեշտն անուն՝ մի է, բայց առ ամ շարժումն հոգւոյ և մարմնոյ՝ պատշաճեալ բերէ պարկեշտութիւնն, 'ի բանս՝ մի շատախօս լինել, 'ի կերակուրս և յըմպելիս և 'ի զգեստս՝ մի աշխարհօրէն բերել, այլ ըստ նոցա նմանութեն՝ որոց խաչեալ է աշխարհ: Նաև՝ յընթացս ճանապարհի՝ ոչ երևելի և կազմեալ երիվարօք, և կամ կեսիշօք ամբարձեալ եղիցին 'ի բարձրն կոյս, այլ վասն զսկարացեալ մարմինն միայն՝ բառնալոյ, ըստ պատահելոյ կրօղին: Եւ ոչ սրընթաց ձիովք շահատակել, և շամբք և բաղէիւք որսականօք՝ բերել առ երէվայրիս և թռչունս, որպէս լսեմք զոմանց՝ թէ իցեն: Որ այնքան պատշաճի այսմ ձևոյն՝ ունողաց այս գործ, որպէս թէ՝ զգտակ կարմիր դիցէ 'ի գլուխ իւր՝ կրօնաւորն՝ փոխանակ քուսիթայի, և զգեստ բեհեզեայ՝ ընդ ասուեոյ և այծեայ: Եւ կերակուրքն և ըմպելիքն՝ ոչ յաձախութեբ, և անկարգութեբ, այլ՝ պարկեշտութեբ, և չափաւորութեբ եղիցին, ըստ Ածաշունչ գրոց խրատու: Եւ բանք բերանոյն՝ մի անմտաբար խեղկատակութեբ, կամ աշխարհօրէն՝ զառակաւս, կամ զանկածութիւնս՝ 'ի լեզուն յեղյեղուլ անարգել զոք, այլ բղխեսցէ սրտիւ զբան բարի՝ ըստ մարգարէին, 'ի յօգուտ և 'ի շնորհս լինել լսողաց՝ ըստ Առաքելոյ, և մի 'ի վնաս և 'ի տաղտկութիւն, և 'ի պատճառս աղարտելոյ՝ զառաքելականն աստիճան:

Հիւրասէր՝ ըստ Աբրահամու, և Ղովտայ, և այլոց նահապետացն, որք այնչափ գտան հիւրասիրութեն հաճոյք Այ, մինչ զի՝ և զԱծ՝ հանդերձ հրեշտակօք ընկալան, և պատուասիրեցին: Եւ ոչ ասէ հիւրընկալ, այլ հիւրասէր. քանզի՝ հիւրընկալութիւն է՝ երբեք, զի 'ի հարկաւոր ինչ պատճառէ լինիցի, կամ 'ի բռնութէ, կամ 'ի պատուոյ երևաց, կամ գովութիւն, և փառս որսալոյ 'ի պատճա-

սիրելոյն։ Իսկ՝ սիրոյ ընդունելութիւնն՝ յայսցանէ յա-մենեցունց ասացեալ է, որով և խնդութիւն ընդունի զեկեալ հիւրսն, և ոչ տրտմութիւն, և զուարթ ցուցանէ զերեսա-րանս, և ոչ խոժոռ, և թախծեալ դէմս, և ոչ գժգմնե-լով ինչ բարբառի բանս, այլ՝ ուրախարարս և բաղձանա-կանս, որ յոյժ լաւագոյն է հիւրոյն, քան զկերակուրսն։

Վասն այսր պատճառի՝ հրամայէ Եպիսկոպոսաց, և Քահանայից, նաև՝ ամ՟ քրիստոնէից ոչ միայն հիւրընկալ այլև՝ հիւրասէրս լինել։

Բարեսէր, և ո՞ր են բարիքն՝ զորս հրամայէ սիրել, ոչ զխարծեցեալ բարիսն՝ որ են ախտաւոր բարիք մարմ-նականք, կամ հոգեկանք, և նիւթք աշխարհի, այլ՝ նախ և առաջին զճշմարիտ բարին սիրել զԱծ, որ է սկիզբն և աղբիւր բարութե։ Երկրորդ՝ զպատուէրսն նորա՝ որ է բղխումն յաղբերէն բարեաց՝ յԱյ, ըստ դաւթայ, թէ սի-րեցի զպատուէրսն քո՝ քան զամ ոսկի, և զտպազիոն։ Երրորդ՝ զորս ՚ի մարդկանէ լինին բարիք։ Իսկ՝ զհակա-ռակ բարւոյն՝ զչարն, այսինքն, ա՟նց, և զորս ՚ի նմանէ ստրմանեալ զմեղս՝ ատել և ՚ի բաց դառնալ, ըստ նորուն դաւթայ, թէ՝ զմեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի։ Նաև՝ զչարասէրսն և զանդարձան ատել, և ՚ի բաց դառնալ, որոց յետ բազում անգամ խրատելոյն, և ոչ դառնալոյն՝ հրաժարել հրամայէ տէրն, և համարել որպէս զհեթանոսս, և զմաքսաւորս։

Արդար՝ արդարութեն անուն մի է, բայց՝ զամ պա-րունակէ յինքեան՝ զմասունս բարեաց՝ որ անուանին չորս։ Որք և արդարոց առաջինք՝ որք վկայեցան յԱյ՝ Յոբ, և Զաքա-րիայ, և Յովսէփ, և այլք բազումք։ Նա նոցին օրինակին պարտ է լինել ամէն՝ Եպիսկոպոսին՝ արդար, և ճշմարիտ առաջի Այ, և մարդկան, և արդարոց ատեան, և անխարդախու-թե՟ ՚ի բանս և ՚ի գործս։

Սուրբ, Առաջին Սբ. այն է՝ որ մաքուրն է յամ ախ-տից, որ պատերազմին ընդ ոգւոյն, որ ոչ խայտառակս ընդու-նիցի ՚ի սկզբանն, և ոչ դեղոց կորստականաց։ Երկրորդ՝ Սուրբ է, որ թէպէտ և հարկանիցի ինչ նետիւք մեղաց (ոչ աւելի մինչ ՚ի կատարումն) ոչ լինի ՚ի ներքոյ անկեալ՝ թշնա-

Թշնա

թշնամոյն, միշտ խոցոտելոյ ղօղէն՝ հեշտութեանցն ախտից՝ տեղի տուեալ, և երկրորդ բնութիւն՝ զնոյն սովորութիւն առնելով, այլ՝ մանաւանդ զանցեալ խոցուածսն բժշկեսցէ դեղովք ապաշխարութեան, և յառաջիկայիցն՝ զինուք աղօթից, և պահոց, և պահպանութեամբ զգայարանացն՝ զգուշանալ, ոչ միայն խոցոտիլ սովորական նետիւքն. այլ՝ այն քան առաւել զնոսա, մինչ զի՝ յիշատակ նոցին՝ ոչ հեշտութիւն, այլ՝ տրտմութիւն բերել մտացն։

Արդ՝ որ յայսմ մասին է՝ առաջնոյն, կամ երկրորդիս, նա է նը. և այսմ Առաքելականի աստիճանի արժանաւոր։ Իսկ՝ որ ախտիցն՝ յօժարութեամբ տուեալ տեղի, և ոչ պատերազմի ընդ նոսա, այլև՝ խնամով թաքուցանէ յինքեան զխմորն չարութեան, և միշտ խոցեալ ոգւով՝ ոչ առեալ զխոցմանն պատճառս, այլև սիրէ ևս, և ոչ բժշկել փութայ զխոցուածսն, այլև՝ օր ըստ օրէ նորոգել զվէրսն, ոչ է և ոչ ասի սուրբ՝ այնպիսին, և ոչ ընտրութեան այ՝ կոչի սպասաւորել ածայնոցն, այլ՝ խորով ախտիւն շարժեալ, ըստ ներելոյն այ՝ ձգի յայնոսիկ՝ ՚ի կորուստ անձին, և բազմաց։

Ժուժկալ, ժուժկալութիւնն՝ երբև նիւթ, և տեղի իմն է՝ ամ առաքինութեց։ Զի որ կրէ յինքեան՝ զառի չարեաց ժուժկալութիւն, կրէ և զբովանդակ մասունս բարեաց, և որ ոչ ունի զսա, անհաստատ է յամ բարութիւնս, Զի թէպէտ՝ և յօժարի ՚ի բարիս, և սկսանի, այլ՝ ոչ կատարէ. որպէս այն՝ որ կամեցաւ առանց խորհելոյ՝ աշտարակ շինել։

Եւ ժուժկալութեան սահման՝ այս ինչ է։ Յամէ՝ յորոց՝ օրէնք այ հրաժարեցուցանեն զմեզ, պարտ է ժուժկալ լինել. առաջին խորհրդոցն վատթարաց՝ ոչ տալ տեղի առմիտսն, այլ՝ ընդդէմ կալ ժուժկալութեն, և հալածել ՚ի սրտէն, զի մի և կատարումն հետևեսցի։ Զնոյն ժուժկալութիւն՝ պարտ է և աչացն դնել պահապան, ոչ բռնադատել հեշտութեն՝ ՚ի յարատ հայեցուածս, կամ ՚ի չարակնութիւնս, այլ՝ անարատապէս հայել յարարածս այ։ Եւ ականջացն՝ ոչ յօժարութեամբ ունկնդիր լինել՝ վնասակարաց բանից, այլ՝ օգտակարացն։ Եւ լեզուոյ՝ ոչ խօսել զայն ինչ բանս՝ որով արտաքինքն վարին, որ է անվայելուչ սրբոյ

սատակմանէն, այլ՝ ղղխանէն և զզուելէն։ Եւ սրտի՝ ոչ բարկանալ տարապարտուց, այլ՝ հեզ լինել։ Եւ ձեռաց՝ ոչ անիրաւի՝ զոք հարկանել, այլ՝ վաստակել զգործս, և յաղօթս ամբառնալ։ Եւ բերանոյ՝ ոչ մերձենալ տարաժամ ’ի կերակուրս, այլ՝ պահօք դաստիարակիլ։ Եւ ոտից՝ ոչ ընթանալ ’ի չարիս՝ գայթակղութե ուրուք, այլ՝ ’ի ճանապարհս արդարութե։ Եւ ոչ միոյ անդամոյ թող տալ ժուժկալութե, որ ունի զնա չարժել ’ի վատթարագոյնսն։ Որդի՝ այսպէս. և որ սոյնն նման՝ է ժուժկալութենն գործ։

Մի արծաթասէր, արծաթսիրութիւնն՝ զոր մայր ասէ Պօղոս՝ ամ չարեաց, թէպէտ՝ և ամ ումեք, և յամ գործս՝ յորում են մարդիկ՝ վնասակար է, առ թագաւորս, և դատաւորս. և առ իշխանս, և զօրականս. և առ ամ որ որ յաշխարհի են. բայց՝ առաւել առ հոգևոր առաջնորդուն։ Զանզի՝ առ յաշխարհի իշխանութիւնս՝ ըստ մարմնոյ առնէ վնաս ումեք, կամ անիրաւ դատելով, կամ զրկելով, կամ յափշտակելով, կամ զրպարտելով, կամ գողանալով, կամ սպանանելով, կամ որ յայսպիսեաց իցեն։ Իսկ՝ առ հոգևորս՝ այս զհոգիս վնասէ։ Զանզի՝ յայսմ ախտէ է՝ զանարժանս յառաջ կոչել՝ յաստիճանն սպասաւորութիւն, ’ի կարգս կոչողացն, և կոչեցելոցն, և զարժանաւորս՝ յետս կացուցանել, զպիղծս՝ իբրև զսբս, և սբս՝ իբրև զպիղծս վարկանելով։ Եւ բիւրք են՝ առ ’ի նմանէ խառնակնդորեն կարգք՝ յեկեղեցւոջ, որք խոտելիք են այ, զորոց դաւէթ ասէ հոգւովն, թէ խոտեսցին այնոքիկ՝ որ ընտրեալ են արծաթով։ Վասն այսորիկ հրամայէ Առաքեալ՝ վասն Եպիսկոպոսաց, թէ՝ մի արծաթասէր, մի կռուօղ, մի հարկանօղ, քանզի՝ թէ Քի ես աշակերտ, մանաւանդ թէ՝ փոխանակ, զհետեւութե նորին՝ ընկալ զօրինակ, որպէս հրամայէ աշակերտելոցն, թէ՝ ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ, զոր մէ և եսայի ասէ, թէ՝ ոչ աղաղակեսցէ և ոչ վիճեսցի։ Եւ ինքն իսկ Տէրն՝ երանի տայ հեզոց, և խաղաղարարաց։

Եւ զի՝ ոչ ամէն ներող պարտ է լինել, և հեզ՝ առաջնորդին, այլ՝ առ յանցաւորս՝ զաստն ’ի կիրարկանել, ըստ և այնմ՝ օրինակ, զի առեալ խարազան և էհան արտաքս՝ զվաճառականս ’ի տաճարէն, և այն զի չաճանիցս, և ոչ ’ի կարծր նիւթոց։

Խրատէ զառաջնորդս՝ ոչ զզաստութիւն միայն 'ի կեր-արկանել առ յանցաւորս, այլ՝ քաղցրութիւն և ներողութիւն ունել 'ի սաստելն, վասն որոյ՝ յաւելու ասել, թէ՝ այլ հանդարտ։ Եւ զհանդարտութեան չափ՝ տէրունականն ուսուցանէ խրատ, որ ոչ միայն զինքն, այլ՝ զգիմակն հանդարտ ասէ ։ Զի՝ յետ միոյ գիտնոց ապտակին՝ զերկրորդն մատուցանել հրամայէ՝ առաջի անիրաւին ։ Որով՝ թէ և՝ քան զպաղմնս խոստացոյն լցէ, քան զոչխարս՝ հանդարտագոյն լինիցի։ Եւ ինքն քո՝ ոչ աղաղակէր, և ոչ վիճաբանէր, այլ՝ որպէս զոչխար 'ի սպանդ վարիւր՝ ըստ Եսայեայ, զնոյն նմանութիւն՝ պարտ է և առաջնորդաց եկեղեցւոյ՝ բերել յինքեանս, բայց՝ ոչ առ ամ̃ ոք, և ոչ յամ̃ ժամանակի։ Քանզի՝ յիւրոց անձին արհամարհութիւն՝ որ յանիրաւեաց, բարւոք է հանդարտութիւն, և վարձուց արժանաւոր. իսկ՝ յորժամ՝ զա̃ծային պատուէրանս տեսանէ արհամարհեալ յանզգամաց, առ այնպիսին՝ ոչ զհանդարտութիւն, այլ՝ զբարկութիւն 'ի կիրարկանել արժան է, ըստ բարւոյ նախանձուն Եղիայի վառելով։ Որպէս և Տէրն՝ յորժամ՝ աինքն՝ զնախատանսն ձգէին բանս՝ դիւահար կոչելով, ներելով տայր զպատասխանին, ասելով թէ՝ յիս դև՝ ոչ գոյ։ Իսկ՝ յորժամ առ Հայր և Հոգին, ցասնոյր և վրէժխնդիր լինէր, այսինքն՝ յորժամ՝ նք̃ որք զգործսն սատանայի գործէին, Հայր կոչէին զա̃ծ, ասէր՝ դուք 'ի Հօրէ սատանայէ էք, և յորժամ՝ զգործս Հոգւոյն՝ բէեղզեբուղայ իշխանին դեւաց տային, ասէր թէ՝ ամ̃ որ ասէ բան զորդւոյ մարդոյ՝ թողցի նմա, բայց՝ որ զՀոգւոյն սբ̃ հայհոյէ, մի թողցի նմա։ Այսոքիկ և այնպիսիքս են բարւոք, և ըստ կամացն այ̃, երբեմն հանդարտութե, և երբեմն անհանդարտութեան՝ օրինակք. զոր Առաքեալն հրամայէ ունել Եպիսկոպոսին։

Յաւելու և զայս, վերակացու (ասէ) լինել բանին վարդապետութեն, այսինքն ուսանել, և գիտել և սպասաւորել՝ Ա̃ծային օրինացն քարոզութե, և առաջին՝ զայն ստանալ գործ, և ապա՝ զնիւթականացն հոգաբարձութիւն. որպէս Առաքեալքն արարին, և ուսուցին։ Քանզի՝ ասէին ոչ է պարտ մեզ՝ թողուլ զբանն Ա̃յ, և պաշտել զսեղանս. թէպէտ՝ և սեղանն այն՝ աղքատաց էր սպասաւորութիւն, և

ոչ

ոչ անձանց, բայց՝ զի զմարմինս կերակրել զաղքատաց՝ փոքր համարէին 'ի բարիս, քան զհոգիս աղքատացեալս 'ի բարեաց՝ հոգևորական կերակրոյն, որ է բան վարդապետութե. նորին ազգաւ՝ նիւթականին կերակրոց, զստեփաննոսեանքն եդին սպասաւորել ժողովրդոյն. Իսկ՝ ինքեանք զբանն Աստուծոյ քարոզէին:

Եւ այս է՝ զոր հրամայէ Եպիսկոպոսաց՝ վերակացու լինել բանին վարդապետութե, և զողջամիտս մխիթարել, այսինքն՝ որք ոչ ունիցին հիւանդութիւն հաւատոյ: Որք զԱթոռն ունիցին առաքելական, պատիւն և զգործն ստանալ զԱռաքելոցն, որպէս եղեն հետևօղք նոցին՝ որ հարքն առաջինք:

Եւ թէ՝ որք Եպիսկոպոսութեն ունիցին զաստիճան, և ոչ լինեն վարժեալք՝ վարդապետական բանիւ, պարտ է յայնցանէ՝ որք կրթեցան յայս շնորհ Աստուածային՝ մերձ առ ինքեանս ունել. զի տայցեն ծառայակցացն՝ յիւրաքանչիւր ժամու՝ զբանին Աստուծոյ զկերակուրս:

Եւ զհակառակորդսն անէ՝ կշտամբել. երկու գործ զնէ՝ բանին վարդապետութե վերակացու լինելոյն՝ առաջնորդաց: Առաջին՝ զծառայակիցսն կերակրելոյն՝ ըստ աւետարանական հրամանին: Երկրորդ՝ զԹշնամիսն Ճշմարտութե՝ որք հակառակին հաւատոյն բանի, և օրինաց Աստուծոյ, և աւանդութեանց Եկեղեցւոյ՝ ընդդիմանել Աստուածային գիտութեան, զի մի զպարզամիտս 'ի ժողովրդոյն՝ պատիր բանիւքն ձգեսցեն՝ 'ի կորստեան իւրեանց խորխորատ: Ըստ ընտանի գաղտնայն՝ կրկին գործոյ, որք զվայրենի գազանն հալածեն, և զհօտն հովուէին՝ պահեն արթնութեամբ, որպէս կարգեցան:

Արդ՝ որք զառաջինն ընկալան 'ի Քրիստոսէ՝ զգործ Եպիսկոպոսութե՝ դասք Առաքելոցն, այսպէս արարին ինքեանք, և ուսուցին հետևողաց իւրեանց, նոյնն օրինակաւ վարել: Իսկ՝ յայժմուս Թշուառութե ժամանակի՝ այնքան հեռացաք 'ի բարւոյ՝ նոյին նմանութէ, մինչ զի՝ ոչ այլ ինչ գործոյ պատճառ՝ գիտել զԵպիսկոպոսութիւնն՝ (որք յօժարին ստանալ զնա,) բայց միայն՝ զանազան հնարիւք՝ ինչս ժողովել 'ի հնազանդելոցն, և փառս որսալ 'ի փառաւորհաց. զոր անարգանս պարտ է ասել, և ոչ փառս: Քանզի՝

Ճշմա

ճշմարիտ փառք՝ այն են, որ ՚ի ձեռն բարեաց գործոց՝ անուանն այ՝ լինիցի ոք փառաւորութե պատճառ, ըստ տն հրամանին, թէ տեսցեն զգործս ձեր՝ բարիս, և փառաւորեսցեն զհայր ձեր՝ որ յերկինս է։ Իսկ՝ ունայն առ ՚ի մարդկանէ փառքն՝ ոչ միայն հակառակ են փառացն այ, ըստ ասելոյն ՚ի տնէ զոմանց, թէ՝ սիրեցին զփառս մարդկան՝ առաւել քան զփառս այ, այլև՝ ՚ի գովչացն առ երեսս դսրովեալք լինին իբրև զախտաւորս, յորժամ տեսանեն՝ ցանկութեամբ զհետ ընթացեալ գովութե, և փառացն՝ որ ՚ի նոցանէ։

Թողից ասել զև զժնդակագոյնն՝ այսր ժամանակի Եպիսկոպոսաց գործ, զի՝ և բազում անարգանաց, և տուժից տանին յայլազգեաց, ոչ յաղագս Քրիստոսին օրինացն, ոչ առաջին սէրն, զի այն՝ երանութե էր արժանաւոր, այլ՝ վն սնոտի փառացն յուսոյ, և զգերփեալսն ՚ի հնազանդելոյն պէսպէս հնարիւք և բռնաւորութբ՝ զոր յեկեղեցւոյ պաշտաւութիւն, և աղքատաց պէտս՝ հրամայեցաւ լինել, զայնոսիկ ժողովեն՝ որպէս զմաքսաւորս, և բռնակալաց աշխարհի՝ նուիրեն։ Եւ ոչ թէ՝ ՚ի նոցանէ բռնադատելով՝ զայն առնեն, Քանզի՝ ՚ի սոյն իսկ՝ յազգէս մերմէ՝ սկսաւ այս գործ չարութե, և ծանուցաւ այլազգեաց՝ յաներկիւղից ումանց, և ՚ի փառամոլից՝ որք մի ՚ի միոյ վերայ յառնելով՝ տակաւին աճեցուցանել զկապալս ՚ի վերայ Եկեղեցւոյն Քի, որպէս զտուրս բաժից, կամ զներկոյցս. որոց մեղաց՝ չիք թողութիւն, ոչ՝ առ ՚ի յոյժ մեղուցելոցն։ Որ ոչ միայն Քահանայապետութե չեն արժանի (որ զայս դաժան գործս սկիզբն արարին՝ մուծանել յեկեղեցի, և կամ այնոքիկ՝ որք ՚ի հայրապետացն ընկեցեալք յԱթոռոյ՝ վասն հովուոր պատճառի, այլազգեաց բռնաւորութբ, և յաւելաւածովք կապալոյն՝ դարձեալ փութան յափշտակել զեպիսկոպոսութիւնս.) այլև՝ ոչ քրիստոնէութեն հաւատոյ, և կարգի, և ոչ օրինաւոր՝ քահանայական թաղման, և Սրբոյ Պատարագին յիշատակի։

Օ՜ն ինչ ասել և զմօրէն՝ այսոյիկ չարեաց, զյայտնապէս հակառակոյն ճշմարտութե, և Սրբոյ Աթոռոյ Լուսաւորչին, որք ինքնաշարժ ախտիւք և բռնակալաց աշխարհի՝ հրամանօք, զանձինս իւրեանց՝ յայս աստիճան՝ հովուոր բարձ֊

րութե ձգեն, և ո՛չ ընտրութիւ Ա.Ծ, և ածայնոց արանց՝ հա մօրէն ազգիս՝ որպէս օրէնն պահանջէ, որով՝ բիւր նեխութե, և ապականութե անդամոց ՔՆի լինին պատճառ: Զի թէ՝ գլուխն ահարօնի՝ իջանեն շնորհ.ք հոգւոյն սրբոյ՝ որ է հայ րապետութին, և 'ի գլխոյն՝ 'ի մօրուսն՝ յեպիսկոպոսութին, և 'ի մօրուացն՝ 'ի գրապանակսն, որ է Քահանայութիւնն, և 'ի դրապանացն՝ 'ի զգեստն, որք են ժողովրդեանն դասք:

Իսկ արդ՝ զո՞ր արդեօք իւղ շնորհացն ունիցին, որք յահարօնեանն գլխոյ՝ օտարացեալք են, և ընդ դաթանայ և Աբիրօնի՝ (որք հակառակ կային՝ մեծին մովսի և Ահարօնի) յօդեալք լինին գործովք: Կամ եթէ՝ զոր կամակորութեն մերկացան՝ բաժանեալք և որոշեալք 'ի շնորհաց, զի՞արդ կա րիցեն՝ զյինքեանց կորուսեալն՝ այլոց ընծեռել:

Որք՝ յաղագս այն՝ և այսր իրի յանդգնութե, 'ի ժամանակս Տն մերոյ՝ և եղբօր՝ Գրիգորիոսի Կաթուղիկոսի Սրբոյ, 'ի Սուրբ լեառնն՝ մեծաւ Սինհոդոսիւ՝ Սուրբ և առաքինեաց արանց՝ ազգիս Հայոց՝ ժողովեալ աւելի՝ քան զերկու հազար, և զհինգհարիւր անձանց Եպիսկոպոսաց՝ վարդապետաց, և հարց վանականաց, և միանձանց ոչ յերինն, Նզովեալ հերքեցին յեկեղեցւոյ ՔՆի, և սրով բանին Ա.Ծ հատեալ 'ի բայց ընկեցին՝ որպէս ընեխեալ և զփտեալ անդամ՝ յառողջ մարմնոյ Եկեղեցւոյ, անէծս ցաւագինս՝ կուտեալ 'ի գլուխ նոցա: Որոց՝ ո՛չ եկեալ 'ի միտս, և ո՛չ զգացեալ զմահացու ցաւս հոգւոց՝ առնլով զդեղ կենաց՝ 'ի դեղատուէ իմաստնոյ, և բժշկել զզղջմամբ և ապաշխարութե՝ 'ի մահահամբոյր պատուհասէն: Այլ՝ համգոյն իժի և քարբի՝ լցեալ զլեղիս՝ Ծայլին բանին, դեռ ևս յամառեալ բորբոքին 'ի նոյն չարութե, արբեալք և յիմարեալք փառամոլ ախտիւ՝ իբրև զգազանս կատաղիս, ո՛չ դադարեն մուծանել զխառնութիւն՝ յառագաստ խաղաղութե՝ երկնաւոր հարսնարանի՝ փեսայացեալ բանին. զոր՝ արեամբն գնեալ ազատեաց՝ 'ի չար մշակութեց բանսարկուին: Որոց արիւն՝ 'ի գլուխ իւրեանց եղիցի, և վրէժ՝ չարութե գործոց նոցին՝ յանձինս իւրեանց լիցի:

Այլ դուք՝ որք Ճշմարտութեն էք ջատագովք, և 'ի նոյն բարեաց հետևողք, աղաչեմք՝ պատրաստ լերուք ամե-

նայնիմ՝ ՚ի գործ հովուոր հովուութեան, (զոր ընկալայք ՚ի Ճշմարիտ հովուապետէն) ըստ զգայարանօք՝ ըստ վերոգրեալ սահմանից, և ըստ կանոնական խրատու՝ որք Առաքելոցն, և նոցին հետևողաց։ Որպէս զի համօրհնութիւն և պարգևս կացջիք, առաջի աւանդողին ձեր՝ զտաղանդ պատուիրանին, տալով զհամար շահեցն՝ նմա՝ կրկնապատիկ յաւելուածով։ Յորմէ լսիցէք զբարբառն երանաւէտ, եթէ՝ ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև ՚ի սակաւուդ հաւատարիմ ես, ՚ի վերայ բազմաց կացուցից զքեզ, մուտ յուրախութիւն Տն քո։ Որում, և մեզ լիցի՝ աղօթիւք ձեր՝ հանդիպիլ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր։

Առ դասս Քահանայից։

Է Բարձրացուցաք այսուհետև՝ զկարգ բանիս՝ առ դասս Քահանայից, որք աստիճանաւ՝ երկրորդ էք եպիսկոպոսաց, և կարգեալ էք Քահանայական գործառնութեան՝ նուիրել զմիմ որդին՝ Այ, ծնանելով զամենեսեան՝ սուրբ աւազանաւն մկրտութեան՝ յորդեգրութիւն հօրն երկնաւորի, և ՚ի ժառանգակցութիւն Քի Յի, և մեղսաքաւիչ մարմնոյ և արեանն Տն բաշխմամբ, կերակրել զհոգիս նց՝ յանմահութիւն։

Եւ արդ՝ ապաշխել զամենեսեան՝ սիրով Քի, բառնալ զաչս մնաց, և զարթնուլ ՚ի մահահրաւէր թմբրութենէ կենցաղոյս, և ճանաչել զզօրութիւն՝ երկնային գործոյդ՝ յորս հրաւիրեալ կոչեցայք, որև՝ հրեշտակական՝ գերազանցէին զօրութեանցն է գերիվերոյ, այս աստիճան. որք անարատութեամբ և սրբութեամբ պաշտեն զնա։

Եւ որովհետև՝ արժանի եղէք յերկնայինն գործ՝ մատուցանել զանձինս, մի և մի իմիք՝ պատճառս տայք արատոյ՝ անկանել ՚ի պաշտօն ձեր, ըստ Առաքելոյն խրատու։ Այլ արիաբար և յօժարամիտ սրտիւ՝ առանց ծուլութեան՝ զկանոնեալ սահմանս աղօթից՝ սուրբ հարցն, անթերի կատարեցէք, ըստ իւրաքանչիւր ժամու։ Եւ մաքուր հոգւով, և

որք

որ սրտիւ, և անպարտ հոգւով, և մեծաւ յուսով, և պարգ-
մտօք, և կատարեալ սիրով, ահիւ և դողութիւ սպասաւորե-
ցէք՝ Ընծայլին խորհրդոյն, և մի՛ իբրև ջուր՝ ընդ խաղալիկ
անցանիցէք անմտաբար, ընդ խորհրդական բանս աղօթիցն՝
զոր մատուցանէք. Եթէ՝ սաղմոսերգութիւնք են, և եթէ՝
ընթերցուածք սուրբ գրոց, եթէ՝ պաշտօներգութիւն, և
եթէ՝ Քահանայական աղօթք՝ սրբոյ Պատարագին, և այ-
լոց՝ կարգադրեալ կանոնացն. այլ յոյժ մտածորաբար. և
թէ՝ եղ հնար արտասուօք, և մեծաւ երկիւղիւ, որպէս թէ՝
դուք նորոգապէս բղխէք զնոսա 'ի սրտէ և 'ի մտաց ձերոց.
Զի ամենքեան՝ խնդրուածք են առ Տէր, զանազան և պէս
պէս պարգևաց, և բարութեց՝ մեզ առ 'ի նմանէ. Իսկ ինքն
պարգևատուն բարեաց՝ Տէր, յորժամ տեսանէ զջերմեռան-
դըն հայցուածս՝ խնդրողին, առաւել առատապէս շնորհէ
զխնդրելին, քանզի՝ եթէ՝ որ խնդրէ առնու, և որ գտնէ.
Գիտասջիք, զի յառաջագոյն՝ 'ի ժամանակս Մակաբե-
լոյն՝ մինչդեռ նոր ծաղկեաց պարունն հաւատոյ, ամենքեան
էին լի հոգւով սրբով, և շնորհօք հոգւոյն՝ յինքեանց մտաց
խօսէին զբանս աղօթից, եւ ժամուն պլլոյից՝ զՊատարագին
խորհրդածութեն, և զայլ կատարողապէսութեց.
Իսկ՝ 'ի ժամանակս յետինս՝ քանզի հանդերձեալ էր
ձեռան մեղացն՝ սառնամանեօք խառութե ցրտացուցանել
զջերմեռանդութիւն՝ առ Տէր սիրոյն՝ ամենեցունց, և բթացուցա-
նել 'ի շնորհաց՝ Սուրբ Հոգւոյն, տեսեալ հոգւոյ ակամբ՝
Սուրբ և հոգեկիր վարդապետք Եկեղեցւոյ, և այնք աղա-
գաւ՝ գրով աւանդեցին մեզ, զկնի եկողացս. Զի նոքօք՝
անվրէպ և անսայթաք առաջնորդեալք՝ կատարեսցուք զամ
կարգաւորութիւն Եկեղեցւոյ, վասն որոյ՝ զայն մտածորաբար
պարտ է մատուցանել, և մեծաւ հաւատով և յուսով:
Յանկարծակի և ցայս, զի կոչումն անուանն քահանայու-
թեան ձերոյ՝ ոչ է՛ 'ի մարդկանէ, և ոչ 'ի ձեռն մարդոյ, այլ՝
յայտնապէս՝ որ կոչեցեալ Քահանայ՝ ըստ կարգին Մելքիսե-
դեկի, որև՝ ինքն է՛ Ճշմարիտ Քահանայ, և Քահանայապետ,
և Պատարագ Տէր հօր, և նա եւս ձեզ զկոչումն անուանն իւ-
րոյ, և յանձնեաց ընդ անուանն, և զգործն իւր՝ հովուել
զժողովուրդ իւր, և ուսուցանել միշտ՝ զգործս բարիս, և

տալ

տալ զանձն՝ օրինակ բարեաց ամենեցուն, ընթերցում և Պօղոս գրէր առ Տիմոթէոս եթէ՝ մի՛ անփոյթ առնէր զշնորհացդ՝ որ տուեալ քեզ, ՚ի ձեռնադրութենէ երիցութեան. Եւ դարձեալ եթէ՝ Քահանայք կրկին պատուոյ՝ արժանի եղիցին, որք աշխատեցին բանիւ, և վարդապետութբ:

Վասն որոյ՝ աղաչեմք, զի ըստ անուանդ կոչման, և զգործն կատարիցէք: Եւ որպէս հայր և ծնօղք ժողովրդեան ձերոյ, յամ ժամ՝ տուք նոցա զհոգևոր կերակուր, միշտ ուսուցանելով յեկեղեցւոջ՝ ՚ի հրապարակս, և տանս, զամոք՝ ըստ իւրաքանչիւր հասակի զգուշացուցանելով, և յորդորելով յամենայնն:

Եւ եթէ կամիք՝ ամ բարեաց տեսանող, և առաքինութեան կատարեալք լինել, սակայն՝ զեկեղեցւոյ պայծառութիւն, և զՍրբոյ Պատարագին՝ պատուական և մաքուր զգեստուց՝ մի՛ անփոյթ առնէք, որպէս լսեմք զոմանց, եթէ՝ հասարակաց զգեստուք, և աղտեղեալ սրբոց ելանեն ՚ի բեմն Այ, և զՍարսափելի խորհուրդն՝ անխորհրդական զգեստուք կատարեն, և զայն՝ ՚ի պարկեշտութիւն անձանց համարին, հանելով զժողովուրդն՝ արտաքոյ Եկեղեցւոյն, և զդուռն ընդդէմ ձգելով, և ոչ միայն, այլև՝ անմաքուր ՚ի բամբասանս բերելն՝ ոմանց եկեղեցեաց, և ՚ի մերս՝ բարեզարդկարգաւորութիւն:

Եւ արդ՝ միոյ փառաւոր և անխորհուրդ համարեցի զՔահանայական զգեստ: Զի որպէս ՚ի հնումն՝ առ Մովսէսիւ նկարեցաւ խորհուրդ՝ սրբոյ Պատարագին՝ նախ օրինակօք, և ՚ի նորումն՝ կատարեցաւ ՚ի Քս: Այնպէս և Քահանայք հնոյն՝ նորոյ Քահանայութեան էին տիպք, և նորաձայնն Ահարոնի՝ նորոց Քահանայից՝ զգեստուցն յօրինուածք: Զոր և Սուրբ Լուսաւորչն՝ գործակցութեամբ Հոգւոյն Այ՝ կատարելապէս յարդարեցին զկանոն Եկեղեցւոյ, և ամ տեղիս ձեռնադրեալ կարգէին Քահանայս, և Սարկաւագունս, և պատուիրեցին նոցին և արտաքին մաքրութեամբ պատուել՝ փրկական խորհրդոյն, որև՝ է ընդ աշխարհս՝ մեծապարդ պայծառութեամբ զարդարեալ լինէին Եկեղեցիք՝ ընդհանուր ազգաց քրիստոնէից, պայծառազգեստ վայելչութեամբ, պատուաւորել սրբութեանցն: Նա՝ և առաւել

և հայաստանեայց ազգի՝ Եկեղեցիք, 'ի Սուրբ Լուսաւոր-
չէն մերմէ սկսեալ՝ մինչև յաւերումն աշխարհին 'ի հիմանց։

Բայց՝ այսոցիկ բարեաց աւանդութեանց՝ հակառակելոյ, առաջնոցն հարց սրբոց, ո՛չ այլ ինչ է պատճառ՝ քան թէ տգիտութիւն, և ինքնօրէն՝ անձնահաճ կամապաշտութիւն, որք ո՛չ տեսին զառաջին պայծառութիւնս՝ մինչ ողորմութ Տն լի էր երկիր, այլ՝ 'ի հալածանաց ծնեալ ժամանակի՝ ընդ խորթնատեսակ նայեցան տգեղութիւն, որովք կային են ոմ՝ ուրեք ազգ մեր՝ յաղքատութե, ոչ ընդ երկաթոյ 'ի ներքոյ լծոյ ծառայութե՝ իւրաքանչիւր ազգաց, ուր և էցեն։ Այլ և հարկաւոր պիտոյից կարօտ են ըստ մարմնոյ, թող թէ՝ պայծառութեան Եկեղեցւոյ 'ի խնդիր, և ըստ հոգւոյ՝ ամենևին անշարժք 'ի բարիս, զի ցամաքեցաւ սէրն՝ ըստ տէրունական բանին։ Ոչ ոք յառաջին հալածանացն ժամանակին՝ նոր հաւատացեալքն 'ի Քն, յորս այնքան զօրանայր սէրն Այ՝ մինչ զի 'ի հալածանսն՝ առաւել մեծամեծս, և վայելուչս՝ տեսանեմք շինեալ 'ի նոցանէ Եկեղեցիս, քան՝ մինչ խաղաղութիւն եղև Եկեղեցւոյ։

Եւ արդ՝ ո՞ 'ի գիտնոց՝ զխաւարին զայս տեսանելով անկարգութիւն՝ որ յաղքատութէ և յաւերմանէ, և զբարկութիւն՝ որ յոյ աւանդութիւս, և օրէնս կարծելով, և նորին աղաղակ յանդգնին հակառակել՝ ածաւանդ հրամանացն։

Այլ մեր 'ի բաց թողեալ զանխնամ հակառակորդացն զվիճմունս, հնազանդ եղելոց՝ օրինաց Այ, 'ի մէ ատացելոյս՝ և զայս աւանդեսցուք պատուիրան՝ որ վասն այսր իրի խնդրոյ։

Մէ ունել Քահանայից՝ յոյ և 'ի մէնջ հրաման՝ առանց սուրբ ծածկութի պատարագամատուցին զգենլոյ՝ մատուցանել զՍուրբ Պատարագն, կամ՝ Աւետարան կարդալ, կամ՝ Խաչ առնուլ 'ի ձեռս, կամ՝ այլ ինչ 'ի սրբութիւնսն մերձենալ, և այսոքիկ՝ զորս գրեցաք սակաւուք, և որ նման սոյին՝ արտաքին մարդոյս զգուշութիւն, որոց հանդերձեալ են սպասաւորել Ածայնոցն։

Ասասցուք և յաղագս ներքին մարդոյն, որ և օրինակ է արտաքնոյն զարդ՝ սորին հոգևոր պայծառութեն զարդու։

Մեռք 'ի ձէնջ՝ անարժանութք՝ Ածային խորհրդոյն

սպասաւորեսցէ, կամ՝ զոք 'ի ժողովրդենէն՝ անքննաբար հաղորդեցուսցէ, զի մի ընդ յուդայի, և ընդ խաչահանուացն՝ դատապարտեսցի:

Արդ ծածկելով յոգի իւր՝ զգործս մեղաց՝ առանց ճշմարիտ խոստովանութեան, և այնպէս մատիցէ 'ի Տէրունական խորհրդոյն սպասաւորութիւն, զի մի զբարկութիւնն Ա.Յ շարժեսցէ 'ի վերայ ինքեան, և աշխարհին, և 'ի բաց ընկեսցի յԱ.Ծային հարսանեացն. քանզի զխաւարատեսակ մեղացն զգեցեալ պատմուճան՝ եմուտ յեկեղեցի Ա.Յ, որ է օրինակ վերին հարսնարանին, որև՝ լուեալ է զահագին բարբառն, ընկեր զիա՞րդ մտեր այսր՝ զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց. և Թէ հանէք զդա արտաքս, այս է՝ յարքայութենէն, և կորեցէք զդա՝ ընդ մէջ, այսինքն զհաւատն և զշնորհս սուրբ աւազանին, և զքահանայութեանն՝ 'ի բաց մերկացուցէք, և մասն դորա՝ ոչ ընդ հաւատացեալս, այլ ընդ անհաւատսն լիցի: Քանզի ոչ հաւատայ, եթէ՝ մարմնոյ և արեան Ա.Յ սպասաւորէ, այլ հաց լոկ՝ և գինի համարեցաւ, և վասն այնորիկ՝ անարժանութեամբ ժպրհեցաւ մերձենալ, և առանց խոստովանութեան:

Ն՛մարդ աղաչեմք, մի որպէս մարմնական ինչ գործ վարկանելով՝ զերկնային խորհրդոյն կատարումն, այլ ահիւ և դողութեամբ սպասաւորեսջիք Ա.Ծայնոցն, զի Թէ՝ սերովբէն Սուրբ՝ յօրինակն՝ ունելեաւ կարօտանայր, մերձենալով 'ի կայծակունսն՝ որ 'ի վերայ սեղանոյն, մեք հողեղինքս և մեղաւորքս՝ քանի՞ մաքրութիւն և զգուշութիւն պիտոյ է, յաղագս առ ճշմարտութիւն այնր օրինակին՝ մերձենալոյ:

Նաև որոյ՝ զմիտս և զգայարանս՝ պարտապան էք պարզել՝ յամ խասակալ իրաց, սպասաւորքդ՝ Սրբոյ խորհրդոյ՝ յամ ժամանակի, առաւել յայնմ ժամու՝ յորում յԱ.Ծ մերձենալ հանդերձեալ իցէք:

Զի՛ Թէ մօսէսի ասացաւ այդ՝ ոչ կոխել մեռեալ մորթովք՝ զտեղին՝ ուր երևեցաւ հուր Ա.Ծութեան, որչափ ևս մեզ արժան է լուծանել՝ նախ զմեռելութիւն մեղաց 'ի մէնջ, և ապա՝ յԱ.Ծայինն մերձենալ խորհրդոցն: Զի՛ ոչ միայն խօսել ընդ Ա.Յ բան մօսէսի կայ՝ մեր առաջի, և կամ տեսանել զփառսն Ա.Յ, այլև՝ ձեռօք շօշափել զանշօշափելին, և

և շրթամբք համբուրել զսէրն, և բերանով ճաշակել զկե-
րակրելին մեր, և 'ի սիրտս ընդունել, և հոգւով միանալ ընդ նմին, և լինել Նմա շնորհօք՝ ընդ Նմա միաւորելովք։ Այս որոց՝ զանտեսանելին և զլսելին, և զներգոյ, և զնոյն անդամ ճաշակեցէք՝ 'ի բարիս շարժել. և 'ի չարիս անշարժ մնալ, և ողջախոհութիւն, և սրբութիւն՝ յաշխարհական ցանկութեց, և զբօսանաց՝ զմիտսն ամփոփելով, և ապա յերկնային խորհրդոյն սպասաւորութիւն մերձենայցէք։ Զի մի 'ի դատապարտ անձանց՝ ուտիցէք և ըմպիցէք զմարմին և զարիւն Տն ըստ Առաքելոյ, այլ 'ի քաւութիւն մեղաց, և 'ի մաքրութիւն հոգւոց, ձեզ և ժողովրդեանս ձերում։

Եւ մի լիցի՝ որպէս լուաք զոմանց աներկիւղ Քահանայից՝ որ 'ի քաղաքս բնակին, եթէ՝ յառաւօտէ մինչև ցժամ Պատարագին՝ 'ի վաճառափողոցս քաղաքին շրջին՝ 'ի տուրևառութիւնս վաճառաց, յորս՝ բազում նեղք հարկանին յոգիսն՝ ընդ մուտս զգայարանացն, 'ի տեսանել և 'ի լսել. 'ի խօսել և 'ի գործել զանպատշաճսն. և անտի դարձեալ՝ մտանել յանդգնին յեկեղեցիս, և յայլոց Քահանայից կազմեալ նշխարաւ, առանց սաղմոսաց և աղօթից՝ մատուցանեն զպատարագն։ Որոց պատուէր եմք՝ յայսմհետէ 'ի բաց կալ՝ յայդպիսի աներկիւղ և չար սովորութեց, և նախ սրբել զմիտսն, գիշերոյն և տուընջեանն աղօթիւք, ըստ մերայոյն գրեցաք, և ապա մտանել յեկեղեցի Սուրբ, և յանդիման լինել նոյ՝ սրբոյ Պատարագին։

Ոմանք 'ի Քահանայից՝ առանց գիտելոյ զխոստովանութիւն մարդոյ՝ զհաւատոյն և զգործոյն, կամ իւր կնքեալն, կամ այլում քահանայի, տայցէ նմա զհաղորդութիւն մարմնոյ և արեանն Քի՝ 'ի յառողջութեան, կամ 'ի հիւանդութեան, և կամ գիտելով զանարժանութիւն ուրուք՝ տայ յաղագս մարդահաճութեան՝ զմեծային խորհուրդն, ծածկելով այնու զկարծիս չարութեան՝ որ զնմանէ։ Զի այնպիսին է, որ տայ զսրբութիւն շանց, և առաջի արկանէ զմարգարիտն՝ խոզաց։

Ոմանք 'ի Քահանայից՝ պատարագողաց, ոխակալութիւն ունելով 'ի սրտին՝ ընդ ումեք, մատիցէ յԱստուածային խորհրդոյն կատարումն, և անընդունելի առնիցէ զՊատարագն՝ առաջի Այ, այլ նախ հաշտեսցի ընդ եղբօրն՝ ըստ հրամանին Քի,
և

և ապա՝ եկեալ մատուսցէ զՊատարագն։

Նոյն սահման, և՚ի վերայ հոգևորդականացն եղիցի, բայց՝ այս օրէնք՝ առ համապատիճ եղբարսն է՝ Քահանայից՝ առ Քահանայս, և աշխարհականաց՝ առ աշխարհականս։ Իսկ՝ եթէ Քահանայն ընդ բանիւ արարեալ գոք ՚ի ժողովը դականացն, վասն՝ պատճիրանազանց լինելոյ յօրէնս ոտ, և նա հպարտացեալ՝ ոչ գայ յուղղութիւն, և ոչ խնդրէ թողութիւն ՚ի Քահանայէ անտի, Քահանայն՝ առանց խղճի մտաց՝ մատուսցէ զՍուրբ Պատարագն, և ընդ դատապարտութե՛ է այն՝ որ ոչ ուղղեցաւ, և ոչ խնդրեաց զթողութիւն։ Քանզի և Քն՝ ոչ վայրապար հրամայէ առնել թողութիւն՝ տրտմեցուցանողին, այլ՝ եթէ անկեալ առաջի խոստանայ ապաշխարել, յայնժամ՝ (ասէ) շնորհեսցի առ ՚ի քէն թողութիւն յանցանացն՝ զոր առ քեզն յանցեաւ։ Իսկ՝ եթէ մեղուցեալն առաջի անկեալ՝ Քահանայլն, և խոստանայ գալ յուղղութիւն, և Քահանայն՝ յաղագս մարմնական ինչ պատճառի՝ ոխակալ լինելով՝ ոչ առնիցէ թողութիւն, չէ՛ պարտ՝ նախքան զհաշտելն՝ մատուցանել Պատարագ։

Նաև՝ առ Քահանայս՝ բազում պատճառս յօդէ սատանայ, խռովելոյ ընդ միմեանս, և վիճաբանելոյ, և ոխակալութե, և ՚ի նախանձու ախտս տանջելով զոգիսն՝ զեմ ժամանակս, որև առ ոգէտս, և վայրենաբարոյս՝ առաւել զօրանայ։ Է՝ որ վասն յափշտակելոյ ՚ի ժողովրդենէ միմեանց՝ ագահութեան ախտիւ, և է՝ որ յաղագս հարստահարելոյ զընկերն՝ փառասիրութե ադաղեալ, և յայլ ևս յոլովագոյն՝ տեղութե պատճառաց, լուծանի ՚ի նոցանէ՝ սիրոյն պատուիրան, և քն աշակերտութենն նշան, առ որս ասաց թէ՝ յայսմ ծանիցէ աշխարհ զձեզ, թէ՝ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս։ Որոց և մեք՝ զառաքելականն աւանդեմք պատուիրան, եթէ՝ արեգակն՝ ՚ի վերայ բարկութե ձերոյ՝ մի՛ մտցէ, և մի՛ տայք տեղի սատանայի, այսինքն՝ զի թէ զխաղաղութիւնն՝ զոր ետ քն աշակերտացն, և նոքօք մեզ, փութայ հանել ՚ի ձէնջ խռովարարն, և զխռովութիւնն իւր՝ փոխանակ խաղաղութենն՝ սերմանել ՚ի միջի ձերում, մի՛ տայք նմա տեղի՝ երկար ժամանակաւ բնակել ՚ի յոգիս

ձեր, զի մի՛ դատաձարդ Ա.Ծ որ 'ի ձեզ, չարեն առնիցէք ընակութիւն, ատելութիւն և ոխակալութիւն: Այլ ընդ շարժել բարկութեան եռանդ բոցոյն՝ որ 'ի փչմանէ անտի նորա բորբոքի, շիջուցէք զնա՝ խաղաղարար ջրով հոգւոյն, նախ քան զմտանել արեգականն, որպէսզի՝ խաղաղասէր լինելով՝ որդիք այ լինիջիք, ըստ երանութեան խոստման, զճշմարիտ որդւոյն այ զգործ՝ արդեամբք 'ի ձեզ կատարելով, այն՝ որ արար խաղաղութիւն յերկինս և յերկրի, արեամբ խաչին իւրոյ:

Իսկ՝ եթէ ոք 'ի Քահանայից խռովելոց ընդ ընկերի՝ սիրէ զատելութիւն՝ քան զսէր, և զխռովութի՝ քան զխաղաղութիւն, և ոչ լուծանէ զտրտմութեն պատճառն, և հաշտեսցի ընդ եղբօր իւրում՝ 'ի խոնարհել միոյն, և 'ի խնդրել զհաշտութիւն, մի՛ իշխեսցէ քահանայագործութեն առնել, որչափ զդեւն տրտմութեն և բարկութեն յինքն ընակեցուցանէ, զի զի՞նչ հաղորդութիւն է լուսոյ՝ ընդ խաւարի՝ ասէ Առաքեալն, կամ քի ընդ բելիարայ: Քանզի՝ գրեալ է եթէ՝ որպէս՝ որ զսէրն ունի՝ զած յինքն ընակեցուցանէ, զի ած սէր է: Նոյնպէս՝ և որ՝ զատելութիւնն ունիցի՝ զսատանայ յանձն իւր դարմանէ, զի կերակուր է նորա՝ ատելութիւնն. որպէս և այլ գործք չարեաց: Վասն որոյ՝ ամ ոք 'ի ձէնջ՝ որքան՝ ատելութեն ախտիւ տայ տեղի սատանայի՝ ընդարձակագոյն յինքեան, քի մարմնոյ և արեանն՝ ոչ է արժանի ընակութեն. և եթէ՝ ոխակալութեն և նենգութեն հոգւով՝ յանդգնի առնուլ զնա, նման լինի յուդայի մատնչի, որ յետ պատառոյն՝ ապա եմուտ 'ի նա սատանայ:

Ուստի՝ աղաչեմ զամենեսեան զձեզ՝ դժուարաշարժս լինել 'ի վրէժխնդրութիւնս, և 'ի կռիւս, և դիւրաշարժս 'ի հաշտութիւն, և 'ի խաղաղութի: Ուստի մի՛ոք՝ որ զօրաւորն է՝ մարմնական յառաջադիմութիւնս՝ ջանայ զրկել զընկերն և անիրաւել, զի մի՛ զայն՝ որ առնէ իրաւունս զրկելոց՝ զած, դատաւոր՝ և դատախազ իւր կացուսցանէ, և զոր 'ի յանցաւոր կեանս զրկեաց, 'ի յաւիտենին՝ վաշխիւ հատուցանէ:

Այլ՝ առաջադրիցեք 'ի ձէնջ, և հաստատուսջիք յիմաստութիւն, շահեցարուք զկրտսերագոյնս, և զպակասա-

միտսն

մտօք, ներքոյ լինելով առ նոսին և երկայնամիտ, որով և զվարձս ընկալջիք յԱյ՝ 'ի շահելն զեղբարս։

Իսկ՝ կրտսերագունիցդ՝ պատուէր տամք զխոնարհութն և զհնազանդութիւն ցուցանել աւագագունիցն, և խնամանոյ Քահանայիցն։ Որ յայսպիսի բարեկարգութիւն լինելով ձեր՝ անուանն Այ փառաւորութն լինիք պատճառք՝ առ արտաքինսն, և ժողովրդեան ձերոյ՝ բարեաց նախանձու։ Իսկ՝ եթէ 'ի վիճմունս, և 'ի հակառակութիւնս և 'ի հայհոյութիւնս միմեանց՝ տեսանեն զձեզ, յորս են բազումք՝ մնացեալք, եթէ ամենեքեան՝ բաց 'ի սակաւուց, անուանն Այ՝ լեալ ձեր հայհոյիչ 'ի տեսողացն արտաքնոց ; և ժողովուրդ ձեր՝ առաւել խոտորին 'ի պատուիրանացն Այ ; և զպատիժ դատապարտութեն՝ դուք կրէք զթիւրելոցն ձերոց պատճառաւ՝ յուղիղ ճանապարհէ, ծածկելին օրինացն։

Ոչոք, 'ի ձէնջ սիրեսցէ զկուրութիւն տգիտութե՝ քահանայական դասմանց՝ յաղագս ծուլութե, կամ՝ աշխարհական զբաղմանց, այլ՝ եթէ՝ ոչ ամենեցուն՝ համշնորհօք կատարեալ լինել հնար է, զոր և ծածկելին օրէնքն պահանջեն 'ի Քահանայից, սակայն՝ 'ի հարկաւորսն պարտին՝ անթերի լինել. այսինքն զեկեղեցական գիրս՝ ուղիղ ընթեռնուլ, և զմտօք ուսմունս հայեաւորացն՝ պաշտել յեկեղեցիս. և այլս՝ գալ 'ի ձեռնադրութի Քահանայութե։

Բայց՝ լսեմք զոմանց՝ սուտ Քահանայից, զի ոչ միայն յայլ ուսմանէ են տգէտք՝ յաղագս հեղգութե, մանաւանդ եթէ՝ վասն անհաւատութեան, այլև՝ զսաղմոսն դաւթի՝ ոչ գիտեն բովանդակ, առանց որոյ՝ ընթանն զհարիւր և զյիսուն փոխսն՝ խօսել բերանով ընդ Այ, ոչ մատչի Պտրգ՝ ըն աւանդունն կանոնի Հարցն մերոց։ Ոմանք՝ և ոչ բանս աղօթից՝ որք Պտրգին գիտեն 'ի բերան, և սուտ պատարագաւէն՝ խաբել կարծեն զանխաբելին Այ, և զմարդիկ, և զհոգիս ննջեցելոցն, առ ոչս մարդկան կեղծաւորելով. որոց դատաստանն՝ առաւելէ քան զամ մեղաց՝ առաջի Այ. որք և՝ ոչ իսկ են արժանի՝ այլև ս մատուցանելոյ Պտրգ. Եթէ՝ յետ յանդիմանելոյ առնուցուն 'ի բերան։ Այլ եթէ՝ կամիցին զոգիս իւրեանց փրկել 'ի դատապարտութէ՝ մեծաւ աշխատութե, թէ արդեօք քաւեսցին յառ ած մեղանացն։

Մէ

Մի՛ոք 'ի Քահանայից' վայրապար' և առանց մեծի զգուշութեան' կատարեսցէ զՍուրբ մկրտութիւնն, իբր զաշխարհական գործ ինչ համարելով, և մի ընդ ածային բանիցն' բանս ծիծաղականս, և կատակերգութիւնս խառնեսցէ, որպէս լսեմք զոմանց ագխոյց, և աներկիւղից, զի առնեն, զի մի ինքեանց դատապարտութեան լինիցի այն' պատճառ, և երախայից անմեղաց' թերակատար զշնորհս Հոգւոյն Սրբոյ' ընդունելոյ: Այլ' որպէս զՍուրբ Պատրգն' այնպէս երկիւղիւ կատարեսջիք զպաշտամունսն, և զընթերցմունս Ածաշունչ բանիցն, և զամ կարգաւորութիւնսն' Սուրբ մկրտութեան խորհրդոյ, և եթէ այսպէս առնիցէք' հաւատացէք, զի որպէս էջ Հոգին Սուրբ' 'ի վերայ փառակցին իւրոյ 'ի յորդանան, նոյնպէս և 'ի վերայ ամ ուղղափառ հաւատով' մկրտելոց իջցէ, զոր և յորդեգրութեան Ած Հայր վերակոչէ շնորհօք, որպէս զմնութի որդին, և լինիք դուք արքանեակք, և սպասաւորք Հոգւոյն Սրբոյ' յածարարութեն շնորհ, մանաւանդ թէ' իբրև զմանկաբարձս որդւոյն այ, ձեռօք ձեր կատարելով և բառնալով 'ի մօրէ նորին' յաւազանին ծոցոյ:

Մի՛ոք 'ի Քահանայից' յետ հաց ուտելոյ' իշխեսցէ առնել մկրտութիւն' առողջ մանկանց, բայց թէ' յերկիւղէ մահու: Այլ' նախ կատարեսցէ զմկրտութեան գործ, և ապա մատուսցէ զՊատարագն Սուրբ' յորմէ և զմկրտեալն հաղորդեցուսցէ:

Եւ մի՛ յանհաւատից արանց, կամ կանանց, որք ոչ են երկրպագուք Քի, առցէ ոք կնքահայր մանկանց մկրտելոց, զի զոր ինքեանք ոչ ունին' այլում զիարդ կարեն տալ զխոստովանութիւն, որ 'ի սուրբ Երրորդութիւնն. յորժամ պահանջէ Քահանայն' 'ի դէմս մկրտելոյն' զդաւանութեն հաւատոյն:

Նման որոյ' մի տայք տգէտ աշխարհականացն' յաղագս մարմնական ընչասիրութեան' զայս առնել. և եթէ յանդգնին' դուք մի յանձն առնուք զմկրտելն, զի մի թերի առնիցէք զայն' որ մկրտին' 'ի կատարմանէ, և մի ծիծաղելիս' զմեծ խորհուրդն Ածային կացուցանէք առաջի անհաւատից. որ թէ հնար էր' և ոչ միում 'ի նոցանէ արժան էր լինել մերձ

աւազանին սուրբ՝ 'ի մկրտութեան ժամու, զի մի վասն հակառակացն ճշմարտութեան՝ հոգւոյն Սրբ հեռասցի 'ի մկրտելոցն։

Եւ մի ոք 'ի ձեռն՝ ըստ հարկի պահանջեսցէ գինս արծաթոյ՝ անգին շնորհին՝ վասն մկրտութեան, կամ՝ մահուհաղորդ տալոյ, այլ՝ որ ունին և տան ձրիւ՝ որպէս զնուէր Եկեղեցւոյ՝ առէք, և որ աղքատ լինին՝ մի բռնադատէք։

Ասեմք և յաղագս՝ զծնունդս այլազգեացն մկրտելոյ, որ սովորութբ բերի 'ի հին ժամանակաց, և է ընդդէմ հրամանին Քի, որպէս ասաց՝ ոչ տալ զսրբութիւն՝ շանց, զոր արժան էր խափանել, և ոչ թողացուցանել, զի զի՞նչ օգուտ է այլով բերանով խոստովանել զՔս, և զգենուլ զնա մկրտութբն՝ մինչ անբանն է և անգէտ, և յորժամ զարգանայ հասակաւ՝ մերկանալ դարձեալ ուրացութբն, և լինել հայհոյիչ՝ ծածուկ խորհրդոյ տնօրէնութեան նորա, ըստ գենին իւրեանց, փոխանակ փառաբանիչ լինելոյ։ Որով՝ առաւել դատաստանաւ դատելոց են, յաղագս եղծանելոյ յինքեանս՝ զարքական պատկերն, զոր վերստին նկարագրեաց 'ի նա՝ աւազանն որ՝ քան զամենայն ոչ դրօշմեալն. այլ զի՝ դոյ 'ի նմա և մասն բարոյ, այսինքն՝ զի 'ի մկրտելոց անտի՝ բազմաց 'ի տղայական հասակին՝ հասանէ վախճան մահու, և այնոքիկ՝ ոչ ընդ կորուսեալսն, այլ՝ ը փրկեալսն արժանաւորին փրկութեան, և զի՝ զամկաւան զայնոսիկ յափշտակելով 'ի սատանայէ՝ խառնեմք 'ի դունդս Քի, վասն այնորիկ՝ ոչ իրաւունս համարեցաք զամենևին խափանելն։

Բայց՝ զայս միայն՝ վասն սորին իրի՝ պատուէր տամք Քահանայից, մի վասն ագահութեան ախտի՝ յորդորել զնոսին, և կամ՝ յօժարութբ ընդունել, այլ՝ դժուարաւ և 'ի հարկէ բերել յայնպիսի իրս։ Զի եթէ հաստատուն մնալոց էին 'ի հաւատս՝ բարի էր յորդորումն, և յօժարութի ձեր, բայց զի՝ ապրեալք ըստ մարմնոյ՝ անդրէն ընդ ջուրս են անցանելոց, և 'ի լուսակիցն յօդեաց՝ 'ի սևութի այծից՝ փոփոխելոց, ըստ սրբոյ լուսաւորչին մերոյ տեսլեան, նորին տաղագաւ՝ անօգուտ է ջանն՝ որ վասն նոցին, զի շահն սակաւ է, և վնասն յոլով։

Մի ոք 'ի ձեռն՝ գաղտ պսակ դիցէ ումեք, այլ՝ եթէ ծնօղս ունիցի, և միաբանք իցէ, և ոչ բաժանեալ. գիտութբ

և կամաւ նոցին՝ եղիցի։ Իսկ՝ եթէ ոչ լիցէ ընդ ծնողօք՝ հասարակաց սեռութեն՝ յայտնի դիցէ զպսակն, զի վկայեսցի յամենեցունց, թէ՝ ուղիղ է, և ոչ ընդդէմ օրինացն այ. որով և երգոյն ձայնք և նուագարանացն՝ զնոյն նշանակեն, իբրև թէ՝ վկայս պսակելոյն՝ զամենեցունց լսելիս և զտեսանելիս կացուցանելով։ Իսկ՝ գաղտնին՝ անվկայ է և անհաստատ, և ոչ ընդ օրինօք, յորմէ՝ պատուէր տամք՝ ՚ի բաց հրաժարել, և ոչ յանդգնել՝ յայնպիսի իրս՝ վն ագահութեն։

Մի՛ և կնաթողաց արանց, կամ՝ այրաթողաց կանանց՝ առանց կանոնական հրամանին՝ դիցէ ոք պսակ, զի մի՛ լուծջիք դուք ՚ի քահանայական կարգէ՝ ըստ կանոնաց, և եդեալ պսակն քակտեսցի, և եթէ բռնանան, և ոչ բաժանին՝ ընդ պոռնիկս համարեալ լիցին։

Մի՛ և այնոցիկ՝ որք առևանգս առնեն, դնիցէ պսակս, զի հակառակ օրինացն այ է, և բիւր չարեաց պատճառք՝ ՚ի սատանայէ շարժեալք ՚ի մոլեկան ախտոն. և բազումք՝ այն իսկ են՝ որ յետ սուտ պսակին՝ յորժամ յագեն դիւական տուփմամբն՝ մեծաւ ատելութե̃ բաժանին ՚ի միմեանց, և պսակադիրքն այսպիսեացս՝ կցորդ չարեաց նոցին՝ լինիցին։

Մի՛ և տղայոց անմեղաց՝ յաղագս ագահութե հայրենի ժառանգութե, կամ վասն այլ ինչ պատճառի՝ պսակ դիցէ՝ ոք ՚ի Քահանայից, զի բազումք վնասք լինին յայնցանէ, և պատճառս բաժանման յետոյ՝ ՚ի միմեանց։ Այլ՝ ժամանակ պսակի է՝ ՚ի զարգանալ արութե հասակին, ՚ի հնգետասան ամաց լրումն առնն, և յերկոտասանին՝ կամ և առաւել՝ կնոջն, որպէս զի կարող լինիցին՝ ըստ բանաւորաց՝ հաճութե̃ զուգել ը̃ միմեանս, առ ՚ի հաստատուն լինելոյ զուգութեն, և մի՛ ըստ անբանից՝ առանց կամաց և յօժարութե՝ անհաստատս գոլով, և առ ժամայն պատահումն։ Եւ այրն՝ աւագագոյն պարտ է՝ լինել՝ ըստ ժամանակի, քան զկինն, որպէս և զԱդամ նախ ստեղծեալ յայ, և ապա զԵւա։

Մի՛ ոք ՚ի Քահանայից՝ ՚ի բռնութե̃ բռնաւորաց՝ առանց կամաց առնն և կնոջն՝ պսակ դիցէ, որք լսեմք ՚ի կողմանս հայաստանեայց լինել, որ ընդ իշխանութե̃ այլազգեաց են։ Զի պսակն այն՝ անհաստատ է և լուծանելի, և պսակադիրքն՝ ոչ առանց պատժոց, թէև՝ ակամայ է գործն, և կաշառ-

տուքն բանաւորաց՝ վասն Ջատագովլ լինելոյ նոցին՝ յանիրաւ գործն յայն, առաւել դատապարտութե և անիծից են արժանի, զի զօրէնս Այ՝ և զդատաստանս Եկեղեցւոյ՝ լուծանել փութան՝ բռնութը աւագաց։ Վ՜ որոյ՝ առանց խղճոյ է լուծումն՝ այնպիսւոյ պսակին։ Քանզի չէ ըստ հրամանին Այ, այլ՝ 'ի մարդկային բռնութէ։

Մերք 'ի համազգեաց՝ որոց արեան մերձաւորութիւն իցէ, պսակ օրհնութե Պիցէ, այլ՝ մինչև 'ի յերկուց կողմանց՝ զչորրորդ ազգն զլխաւորութին՝ կատարեալ ունիցին։

Եւ թէ զի՞նչ պատճառաւ՝ զչորեակ թիւն կանոնադրեցին հարքն սուրբք՝ սահման ամուսնութե՝ ծանուսցուք, զի գիտիցէք։

Քանզի՝ բնութի մարմնոյ՝ 'ի չորից տարերաց գոլով, յիրաւի և մարմնական ազգակցութիւնն՝ մինչև 'ի չորրորդ թիւն ժամանէ, որք այսպէս, 'ի միոյ հօրէ՝ երկուց եղբարց բաժանեալ, հաւասար ունին յինքեանս՝ զհօրն զդայութին։ Իսկ առ 'ի նոցանէ ծնունդքն՝ զկէս արեան եղբայրութենն։ Եւ Երրորդ ծնունդն՝ որ եղբարցն որդւոց, զկիսոյն կէս արեանն միայն։ Իսկ Չորրորդ ծնունդն՝ որ 'ի սոցանէ, զչորեակ մասն արեանն մնացելոյ։ Եւ այս է սահման և կէտ արեան մերձաւորութե։

Եւ քանզի ամ՝ փոյթ Այ՝ և Ածայնոյն՝ յաղագս սիրելոյ է զմիմեանս՝ մարդկան։ Վասն այնորիկ՝ իրաւունս համբեյան, որք հոգւովն օրինադրեցին՝ զօտարացեալսն 'ի միմեանց՝ միանալ սիրով՝ ամուսնութենն կապակցութեամբ։ Իսկ զմերձաւորսն արեամբ՝ բաւական վարկան, համազգութեն միայն ունել զհաղորդութի սիրոյ՝ առ իրեարս։

Եւ այս է Առաջին պատճառ՝ ո՛չ տալոյ թոյլ՝ համազգեացն ամուսնութեան, են և այլք յոլովք, զորս խնայանոց թողաք քննել։

Եւ արդ՝ որ այսպիսի ընտրութը՝ ըստ օրինացն Այ լինիցի պսակն, որպէս և գրեցաք, մի յայլում ժամու դիցէ զայն քահանայն, բայց՝ յառաւօտէ աւուրն՝ մինչև ցժամ ճաշոյն. և կերեալ և արբեալ զոք՝ մի թողուցուք յեկեղեցին, և մի յանառակ կանանց, կամ արանց, որ յայլում ժամու չեն արժանի Եկեղեցւոյ, զի մի պղծեսցի նոքօք՝ տա-

ճա

ճարն ոչ, և աղաւաղասցի՝ պսակն օրհնութեն ։

Ե՛ւ 'ի ժամ կատարելոյ զՍուրբ պսակն՝ երգք դուսանացն լռեալ դադարեսցեն, մինչև ելցեն յեկեղեցւոյն, զի մի՛ դիւական երգքն խառնեսցին՝ ընդ Ածային երգոյն։

Ե՛ւ 'ի բուն բարեկենդանի օրէ սկսեալ՝ մինչև ցկատարումն պահոց շաբաթուն՝ որ յետ պէնտէկոստէինն է, մի՛ ոք 'ի քահանայից՝ տգիտութե՛ պսակ դիցէ ումեք , և ո՛չ ամ Կիւրակէս տարոյն՝ որպէս հաստատեցին կանոնաւ՛ սուրբ հարքն առաջինք: Քանզի՝ պահոց քառասնորդացն աւուրք՝ սգոյ և տրտմութեն է, և խորհուրդ չարչարանաց ՏՆ , և ո՛չ զուարճութեն և ուրախութեն հարսանեաց: Իսկ յինունքն և կիւրակէքն՝ ունին զօրինակ՝ երկնաւոր փեսային Քի հարսանեաց, և հարսին Եկեղեցւոյ, որ լինելոց է 'ի հանդերձեալ աշխարհին , յորժամ խառնեալ միանան՝ ազգ արդարոց մարդկան , ընդ ինն դասս հրեշտակաց , զոր և անուն իսկ աւուրցդ՝ յայտ առնէ յինունք վերակոչելով, որով և զհաւատացեալս ամ՝ մանկունս առագաստի հարսանեաց՝ անուանեաց տէրն, որոց հրամայէ՝ ո՛չ պահել, որչափ զփեսայն՝ ընդ ինքեանս ունիցին . որ են աւուրք յարութեն նո, մինչև 'ի վերանալ նորա յերկինս : Վասն այսր պատճառի՝ ո՛չ պատշաճ համարեցան հարքն Սուրբք՝ 'ի հոգևոր հարսանեացն օրինակի աւուրսն՝ յորում ասացաւ 'ի ՏԷ՝ ո՛չ արանց կանայս առնել, և ո՛չ կանայք արանց լինել, զմարմնականս զայս կատարել հարսանիս, որ է ախտաւոր և ծննդականն:

Ե՛ւ որոց 'ի հարսանիսն երթիցեն Քահանայք՝ զայս խրատ պատուիրանի՝ աւանդեմք :

Մի՛ յապաղել անդր՝ ընդ զինարբու աշխարհականաց մանկունս՝ յորում յոլովս մեղանչեն անպատրաստքն, որք զեղզերլին 'ի նմա 'ի տեսանելն՝ 'ի լսելն, և 'ի խօսել զանուղղայս. այլ յորժամ զբաւ լինիցի կերակրոյն, և մինչ յերիս միայն՝ արբումն բաժակի՝ յառնել վաղվաղակի՝ 'ի սեղանոյ անտի, զի մի ընդ զինեմոլսն յարբեցութեն ըմբռնեալ՝ այպն լինիցի արտաքնոց տեսողաց, ո՛չ միայն ինքն, այլև՝ ամ քահանայք՝ միով : Ե՛ւ ծանրագոյն ապաշխարութեամբ՝ թէ արդեօք քաւեսցէ զարբեցութեանն զմեղս , վերստին արժանի լինել Քահանայագործութեն :

Մեղք 'ի Քահանայից՝ զսատանայական յանցանս յինքեան ցուցցէ, այն՝ որ հակառակ եկաց Այ, և կործանեցաւ. և ընդդիմակաց լինիցի Եպիսկոպոսին իւրոյ՝ 'ի բանս կամ 'ի գործս, որպէս Կորխ և Դադան՝ Մովսէսի և Ահարօնի, զի մի՛ զնոցին կործանումն՝ ընկալցի յինքն, մանաւանդ այնոքիկ՝ որք յանդգնին՝ կապելս յարուցանել 'ի վերայ Եկեղեցւոյ, կամ աճեցուցանել զյառաջագունից եղեալսն, և այսու պատճառաւ՝ արտաքսեն զԵպիսկոպոսունս յաթոռոյ՝ բռնութե̃ այլազգեաց, և ինքեանք լինին հրամանատարք ժողովրդոց, և կապալառուք փոխանակ նոցա ։ Որք անձամբ՝ զանձինս 'ի ներքոյ առնեն՝ աններելի դատաստանացն Ա.Ծ. և անիծից դատապարտութե ։ Այնպիսիքն՝ ոչ են արժանի 'ի կեանս իւրեանց՝ Քահանայագործութիւնս առնելոյ, և ոչ 'ի մահուն՝ հաղորդի, կամ Քահանայական թաղմանն։

Պարծեալ՝ մեղք 'ի Քահանայից, կամ 'ի ժողովրդոց՝ զեկեղեցւոյ դատաստան՝ առ մարմնական իշխանս դատեսցէ, կամ առ այլազգիս, կամ առ քրիստոնեայս, զի մի դատապարտեսցի յԱռաքելական՝ և 'ի կանոնական հրամանացն։ Որպէս և գրէ Պօղոս՝ առ կորնթացիսն, թէ՝ իշխէ ոք 'ի ձէնջ, եթէ իրք ինչ իցեն՝ ընդ ընկերի իւրում, դատել առաջի անիրաւաց, և ո՛չ առաջի սրբոց։ Եւ հարքն սուրբք՝ 'ի կանոնս իւրեանց՝ լուծանել հրամայեն 'ի Քահանայութէ՝ որ զայս առնէ։

Պարծիլ՝ մեղք 'ի Քահանայից՝ հողաբարձու քաղաքի, կամ գեղջ լինիցի, կամ գաւառապետ՝ աշխարհական իշխանաց, կամ դրօշ հարկաց, և սակից, կամ այլ ինչ գործակալութիւնն աշխարհի լինելով ։ Քանզի՝ անկարելի է՛ ըստ տէրունական հրամանին՝ երկուց հակառակ տէրանց՝ ծառայել և հաճոյանալ տանն Այ՝ որ է Եկեղեցի Այ կենդանւոյ, և տան աշխարհականաց։ Այսն որոյ՝ ընտրեսցէ այնպիսին՝ 'ի միոյն 'ի բաց կալ, կամ յաշխարհական հողաբարձութենէ, կամ 'ի Քահանայական գործոյն։ Իսկ՝ եթէ ընդ աշխարհական գործոյն՝ յանդգնի և զՔահանայական պատիւն ունել, և զտեսչութիւն ժողովրդոց, բռնութե̃ է այն, և ոչ հրամանաւն Այ և մեր, որ և դատելոց է այնպիսին՝ ընդ կրկին յանդգնութեն ։

Լսելք զոմանց Քահանայից՝ ձեռնարկուս լինել և զէնս առնուլ ըստ զինուորաց, և 'ի խոստովանութիւնս խաղաց ձեռնարկութեան՝ ըստ նմանն արշաւելոյ թշնամեաց՝ 'ի յարձակմանց, և 'ի հնազանդութիւնս, և յամ՛ իրս սպառնալիս, որ նոցայն պարծոյ է յաղթել, և ոչ 'ի կերպարանս սպասաւորաց. զի զէն զինուորութեան մերոյ՝ ոչ է մարմնաւոր, որպէս հրամայէ Առաքեալ, այլ՝ հոգևոր և նոյնին, որովք պատերազմիլ՝ ոչ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ՝ ընդ իշխանութեանս և ընդ պետութիւնս, և ընդ այսոյս չարութեան որ 'ի ներքոյ երկնից.

Վասն որոյ՝ արգելեալք 'ի բնոյ լինել յազգամհետև՝ 'ի յանկարծ առաջնութեան ասէ, բայց թէ՝ 'ի ձեռնադրութենէ՝ և թէ յառաջոյս, և թէ երիվարաւ՝ առնուլ զզէնս, յաղագս երկիւղի ինչ հարկեալ հարկաւորաց, և այն՝ պարկեշտութեամբ, և ոչ ըստ զինուորութեան կարգի՝ կապարճիւք, և կամ կողմնակալ ունելով. Այլ ոչ և ոչ արձակեալ առնուլ զէնս կողմանս քաջ, կամ արշաւանս առնել՝ երկնաւորք՝ ըստ մանկական բարոյից, 'ի բանակս պատմաւորաց ամենայնց. Ոչ՝ զզէն խրատէ Պօղոս՝ զզէնն լուսոյ զգենուլ, այսինքն զասպարն հաւատոյ և զզրահ արդարութեան, և նոքօք կռուել ընդ բնութ մերոյ՝ թշնամեաց, ըստ որում՝ զպատերազմն զայս զէն՝ ընդ անձանց յանձին, և պատերազմել սոցա ընդ հանապազ մեր բոց մարմնոյն, կամ խոցոտել զանձամբ կենդանեաց հոգւոց, և կամ սրգաւորել երկնաւորաց յօրանալ, բայց թէ 'ի տկարու թէ. Քահանայ յայտնուի և 'ի սովորականացն՝ արգելուն զնոսա Մխիթարն սպասաւորութեան.

Քահանայն՝ եթէ զոք 'ի ժողովրդականէն խարկէ՝ վասն պատուիրանազանցութեան լինելոյ՝ ընդ բանիւք առնիցէ, և նորա յամառեալ մնայ 'ի յանցանսն, և ոչ զղջասցի, այլ որ 'ի Քահանայից ումեք՝ մի իշխեսցէ ընդունել զնա յեկեղեցի իւր, որպէս սովոր են ոմանք 'ի մէջէս Քահանայից՝ յանդգնաբար ձգել զսխալականն, և որ զայն առնէ, նա ևս նմին 'ի կշտամբանս անկանի՝ ամպարիշտ լինել, և զանձն իւր՝ կցորդ պատուհասի յանցանաց նորա՝ առնիցէ.

Եւ այլ վասն պատճառի կրկին երկրայ՝ այս. զի ենթք հասարակ ունիցի 'ի միջի ձեռնամ, զի զգուշասցի 'ի մէջ Քահանայից, և ամ՛ Քահանայից ք նորին՝ նմանապէս 'ի բանս սրբոցն

յԷնք

յինքեանց, մինչև զղջացեալ յանցաւորն դարձցի 'ի յանուղղս գնացից իւրոց, և առաջի անկեալ խնդրեսցէ զթողուլ, և ուխտ դիցէ այ՝ ապաշխարել, և այլ ոչ ևս՝ 'ի նոյն սովորութիւն չարեաց՝ անկանել:

Եւ յորժամ յիւրոյ քահանայէն՝ այսպիսի օրինակաւ ընկալցի զթողութիւն, յայնժամ և այլ Քահանայք ընկալցին զնա՝ սիրով Ա. Ժ.

Այս օրէնք ուղղութե՝ և 'ի մէջ Եպիսկոպոսաց հաստատեսցի. որպէս զի՝ զառ 'ի միոյ Եպիսկոպոսէն բանադրեալն՝ 'ի Քահանայից՝ կմ յաշխարհականաց, այլ ոք յԵպիսկոպոսաց՝ ոչ ունի իշխանութիւն լուծանելոյ, բաց 'ի բանադրողէ անտի:

Աւանդեմք և զայս պատուիրան՝ ամենեցուն Քահանայիցդ՝ որ ընդ աշխարհի, զի որում՝ 'ի մանկական հասակին հասանէ վախճան ամուսնոյն, եթէ կամեսցի՝ զօդին իւր ապրեցուցանել 'ի մեղաց և 'ի բամբասանաց, և Սուրբ խորհրդոյն՝ արժանաւորապէս սպասաւորել, հրաժարեալ յաշխարհէ՝ ըստ կանոնական հրամանին՝ 'ի կարգ կրօնաւորութե մտցէ: Զի 'ի մէջ աշխարհի՝ սովորական ընտելութբ լինելով 'ի տեսութիւնս, և 'ի խօսակցութիս՝ ընդ կանայս, մանաւանդ՝ խոստովանութե նոցին լինել ընդունօղ՝ ըստ օրինի Քահանայութե՝ անհնար է սրբութբ ծառայել Ա. Ժ. ապա թէ՝ ընդ անձուկ ճանապարհն գնալ դժուարանայ, զլայնն և զարձակն սիրելով, լաւ արժան է նմա՝ 'ի սրբոյ Պատարագին սպասաւորութէ, թէև՝ յայտնի վատութիս՝ ոչ բամբասի: Քանզի՝ ոչ կարէ երիտասարդական հասակին՝ մաքրապէս սպասաւորել սրբութեցն: Մանաւանդ՝ որ ոչ երկիւղածութբ և պարկեշտութբ, և պահօք և աղօթիւք զգուշանայ անձին իւրում. այլ՝ աներկիւղութբ վարի 'ի կերակուրս և յըմպելիս, և յամ տեսակս՝ ընդարձակ վարուց:

Իսկ՝ որոյ մերձ 'ի ծերութիւն՝ հասանէ վախճան ամուսնոյն, և վստահ լինի յանձն իւր՝ սրբութբ և անարատ վարուք, և առանց բամբասանաց՝ սպասաւորել այ, որպէս զի՝ զգովութիւնս ընկալցի 'ի տեսողաց, և մի բամբասանս. այնպիսին կացցէ յեկեղեցւոջ իւրում՝ որքան և ախորժէ:

Եւ արդ՝ Քահանայիցդ առ 'ի խրատ՝ զոր դրեցաք աս

կամօք՝ ոչ իշխանաբար հրաման տալով, այլ՝ ծառայակցա
պէս աղաչելով, բաւական լիցի առ 'ի մէնջ։ Իսկ՝ զպակա
սայն 'ի մերոյս՝ ունիք հմտանալ կատարելապէս՝ 'ի հարցն
առաջնոց՝ կանոնական դրոց, որովք օրինադրեցին զման-
կունս Եկեղեցւոյ՝ 'ի փառս Ա.Յ·

Առ իշխանս՝ որ ըստ աշխարհի

Փոխեսցուք զմնացեալն պատուէրանացն խրատ և առ Վ
ձեզ՝ որ ըստ աշխարհի՝ ունիք զքաղաքավարութիւն
Իշխանք և առաջինք՝ առ իշխանսդ, որք 'ի նոսմանէ
ժամանակիս՝ տիրէք 'ի տեղիս տեղիս բազմաց, և կամ սա
կանուց զօրաց, և գաւառաց։

Զորս աղաչեմ, մի անհնազանդ լինիք օրինացն Այ։
Այլ՝ որպէս կամիք զի ծառայք ձեր՝ զկամս հրամանի ձերոյ՝
հնազանդութեամբ և անթերի կատարեսցեն, (Որք թէև՝ զմի
ինչ 'ի հրամայելացն՝ անկատար թողուն, պատուհաս կրեն
'ի ձէնջ.) Նոյնպէս և դուք՝ վասն զի՝ բնութեամբ ծառայք էք
Այ, ծառայեցէք ՏՆ երկիւղիւ, և հնազանդութեամբ։ զի մի՛ պա
տուհասեսցիք իբրև զապստամբեալս 'ի ՏԷ, այլ՝ ոպ զմտերիմ
ծառայս, պարգևս ընդունիցիք յերկնաւոր թագաւորէն։

Եւ արդ՝ առաջին զայս պատուէրս աւանդեմք ձեզ, մի
անիրաւաբար վարիք առ հնազանդեալսդ՝ ծանր և դժուա-
րակիր հարկապահութեամբ, զոր ոչ կարեն բառնալ, այլ՝ օրինօք
դատեսջիք, և ըստ չափոյ զօրութեան՝ զիւրաքանչիւր ոք։ Զմտաւ
ածէք, զի և ձեր՝ Տէր գոյ յերկինս, և ակնառութիւն ոչ է
առաջի նորա, որպէս և առաքեալն ասէ։

Մի՛ զոք զրկէք՝ 'ի մարդկանէ, և մի՛ նեղէք զաղքատս
և զտնանկս, զի մի՛ բողոքեսցեն առաջի Այ՝ վասն ձեր, և Տր
լսէ նոցա, ըստ իմաստնոյն Սողոմոնի. զի ասէ թէ՝ մի՛ տար
պատճառս աղքատին՝ անիծանել զքեզ, զի մի՛ արարիչ նո՛
լուիցէ նմա, և հատուսցէ քեզ չարիս։

Մի՛ չար և անիրաւ գործակալս և գաւառապետս՝ կա-

ցու

ցուցանէք 'ի վերայ աշխարհի ձերոյ, զի մի՛ անիրաւութենէ նոցա՝ զօր գործեն, դուք դատիք յայ՝ հանդերձ նոքօք, այլ՝ զարդարամիտս և զարդարադատս ընտրեցէք, ունել 'ի վե՛ մարդկան՝ զգործակալութիւն, զի մի՛ զարքունական՝ սահմանեալ իրաւունսն վաստակաւորացն՝ թողցեն, վասն սակաւ կաշառոյն զբազումս, և կամ՝ ինքեանք գողասցեն. և մի՛ առաւել քան զհրամայեալսն՝ նեղեսցեն զնոսա և առցեն: Զի անիրաւութիւն են երկու կողմանքն՝ առաջի այ, այլ՝ այնպէս իրաւադատ լինիցին, զի տայցեն զկայսերն՝ կայսեր, և զայն՝ այ:

Մի՛ զոք անիրաւութեամբ դատիք, այլ՝ ուղիղ դատաստան արարէք, զի և ձերն դատաստան՝ քաղցրութեամբ լինիցի յայ, և մի՛ խստութեամբ: Մի՛ վասն կաշառաց, կամ՝ վասն սիրելութեն՝ միոյ կողմանն, կամ՝ վասն ատելութեն և ոխակալութեն, կա՛մ վասն պատուոյ երեսաց, 'ի միոյն աչառելով՝ զանիրաւն արդարացուցանէք 'ի դատաստանի, և զարդարոյն թիւրէք զիրաւունս, զի մի՛ անիծից՝ օրինացն այ՝ որ յաղագս այսոցիկ, պարտականս՝ զանձինս առնիցէք:

Մի՛ անտես առնէք զայրւոյն և զաղքատին զիրաւունսն, յորժամ աղաղակեն առաջի ձեր՝ վասն զրկողաց իւրեանց, այլ՝ դատ արարէք որբոյն, և տուք իրաւունս՝ այրւոյն, որպէս ասէ ած մարգարէիւն, և ունկնդիր լերուք աղաղակի նոցա, և փրկեցէք զնոսա՝ 'ի նեղչաց իւրեանց, և զյափշտակեալ ինչս նց՝ դարձուցէք յանիրաւացն, յայնժամ և ած՝ լսօղ լինի աղաչանաց ձերոց, և կատարէ զխնդրուածս՝ սրտից ձերոց:

Մի՛ որպէս զանբան կենդանիս՝ որ բնութեամբ ծառայք են մարդկան, ծառայեցուցանէք զմարդիկ, որ ընդ իշխանութեամբ ձերով լինին՝ 'ի գործ խիստ և աններելի, որպէս և փարաւոն՝ զորդիսն իսլլի, և զայն՝ առանց կերակուր տալոյ նոցին, այլ՝ ներելով և քաղցրութեամբ, և սակաւօրեայ ժամանակաւ, և առատագոյն կերակրովք լցուցանել զնոսա՝ յաշխատութիւն անդր, և չափով՝ և մի՛ յանչափս, որպէս զի կարող լինիցին՝ վաստակօք իւրեանց՝ զաղքատանաց կեանս զտանց և զորդւոց իւրեանց՝ լցուցանել, և զարքունական հարկսն հատուցանել:

Մի՛ զվարձս վաստակաւորաց ձերոց՝ հատանէք իշխա-

նաքար, որպէս զայնոսիկ՝ զորոց ամբաստանեն առաքեալքն և մարգարէքն թէ՝ զլեալն 'ի ձէնջ՝ աղաղակէ, և բողոք հնձողացն՝ էհաս յականջս Տն զօրութեց։

Բաւական լիցի ձեզ՝ զի փառատկօք նոցա՝ մեծանայք, և առաւել քան զչափն՝ փափկանայք, և այն՝ զի ոչ թէ՝ այլ բնութիւն է նոցա, և այլ՝ ձեր. այլ՝ 'ի միոյ կաւոյ, և 'ի խառնուածոյ։ Զանզի՝ նմանապէս է՝ տէրանց և ծառայից, փարթամաց և աղքատաց, սկիզբն գալոյ յաշխարհ, և կատարած՝ ելիցն յաշխարհէ։ Վասն զի՝ զուգահաւասար ամենեքեան՝ ծննդեամբ մտանեն յերկիր, և մահուամբ ելանեն 'ի սմանէ։ Իսկ՝ մեծութիւն և փոքրկութիւն, բարձրութիւն և խոնարհութիւն, բարեբախտութիւն և պանդխտութի, 'ի մէջ ծննդեանն և մահուանն՝ պատահին մարդկան, որ են երբեմն երազք՝ զարթուցելոց, որպէս 'ի փորձոյ անտի՝ յայտ նի է՝ ամենեցուն, իմաստնոց և տխմարաց, զի՝ ոչ ինչ 'ի սոցա նէ՝ ունի զհաստատութիւն։

Վասն որոյ՝ մի՛ վասն անցաւորիս կենաց՝ կորուսանէք զյաւիտենական զկեանսն, զի թէպէտ և Քս՛ դժուարաւ՛ տաց մեծատանց՝ յարքայութիւնն երկնից՝ մտանել, ըստ օրինակի ուղտոյ՝ ընդ ծակ ասղան, այլ՝ եթէ զմեծութիւն ձեր՝ ըստ կամացն այ՝ 'ի գործ արկանէք, դժուարինն՝ ձեզ դիւրին լինիցի։

Օ՛ն և Աբրահամ՝ մեծատուն էր, և ոչ միայն՝ արքայ ութե մտանելոյ արժանացաւ, այլև՝ գոգ նորա՝ արքայութե այ եղև, և անուանեցաւ հանգիստ՝ նմ արդարոց։ Այնմ՝ և յոբ, և նմ մեծատուն արդարքն՝ ըստ ասելոյն 'ի Տէ, թէ՝ տեսանիցէք զԱբրահամ, և զիսահակ, և զյակոբ, և զնմ՝ արդարսն՝ յարքայութե այ։ Այսպէս և դուք՝ եթէ ըստ նոյին օրինակի գնայք 'ի ճանապարհս արդարութե. Օ՛ն ոչ զոք զրկէին, և ոչ զոք նեղէին, ոչ զուրուք զինչս յափշտակէին, և ոչ ումեք առնէին ինչ անիրաւութի, և կմ նենգութի, այլև՝ յիւրեանց արդար վաստակոցն՝ զքաղցեալս կերակրէին, զմերկս զգեցուցանէին, զհիւրս ընդունէին, զկարօտութե կարօտելոցն՝ լցուցանէին, նեղելոց՝ բաւական լինէին, և ակա րայ՝ զօրացուցիչ, զաղքատն և զտնանկն՝ ոչ միայն ինքեանք՝ ոչ նեղէին, այլև՝ փրկէին 'ի նեղչաց իւրեանց։

Եւ որպէս ոչ եղեւ նոցա՝ մարմնաւոր փարթամութիւնն՝ արգել և խափան՝ ժառանգելոյ զարքայութիւնն երկնից. նոյնպէս՝ և ոչ ձեզ լինիցի պատճառ չարեաց՝ մեծութիւնդ, եթէ կամիցիք՝ արդարութեամբ վարել զդա, որպէս և նք. այլ մանաւանդ՝ բարւոյ առիթ լինի՝ ըստ իմաստնոյն, զի ասէ թէ՝ փրկանք առն՝ մեծութիւն իւր։

Իսկ այն՝ որ փոխանակ զիւրն տալոյ կարօտելոց՝ զնոցայն յափշտակէ, և կողոպտէ զնոսա, և փոխանակ հիւրընկալ լինելոյ՝ և հանգուցիչ աշխատելոց ՚ի ճանապարհի՝ դաւակից լինի գողոց, և դարանակալ ՚ի ճանապարհի, այնոցիկ՝ որք անմեղութեամբ գնան ըստ ուղիղ ճանապարհս իւրեանց, և զտուն իւր՝ յանիրաւ ստացուածոց անտի լնու, և մեծանալ կարծէ։

Թողից ասել զանխղճին յանցանս, որք ոչ միայն զինչս յափշտակեն, այլ՝ զարիւնն անմեղաց հեղուն, զի մի՛ դատախազ լինիցին՝ յափշտակողաց ընչից իւրեանց, և զայն՝ ոչ ածեն զմտաւ, եթէ՝ այլ դատաւոր կայ՝ գիտող յամենայնի, յորմէ ոչ կարեն թաքուցանել զգաղտնիս՝ չարեաց իւրեանց։

Յաղագս այսպիսեաց մեծատանց՝ յիրաւի հրամայէ Քս, դժուարաւ մտանել յարքայութիւն երկնից, որոց ոչ արքայութիւն է օթեւան, այլ՝ հուր գեհենին. և տանջական՝ որդն անքուն, և տարտարոսն յաւիտենական։

Եւ այս յիրաւի՝ զի թէ որք՝ իւրեանց յարդար ընչիցն՝ ոչ կերակրեն զքաղցեալս, և ոչ զգեցուցանեն զմերկս, և ոչ ժողովեն զօտարս, լսելոց են ՚ի Քէ՝ յաւուրն դատաստանին, եթէ՝ երթայք յինէն անիծեալք՝ ՚ի հուրն յաւիտենից։ Ապա՝ որք աղքատին՝ առաւել քաղցի լինին պատճառ, և տառապելոյն՝ մերկութեան, և օտարին՝ կորստեան ընչիցն և անձինն, և փոխանակ՝ զբանտարկեալսն տեսանելոյ, և մխիթարելոյ բանիւ և արդեամբք, արձակելոց անմեղաց՝ բանտից և կապանաց՝ լինին առիթ։ Ո՞ւր արդեօք իմանի՝ այսպիսեացն տեղի, և չափ տանջանաց, եթէ ոչ՞ ընդ սատանայի և հրեշտակաց նորա, զորոց և զկամսն կատարեցին։

Վասն որոյ՝ աղաչեմ ՚ի բաց լինել ամենեցուն ձեզ՝ ՚ի կորստական գործոցս յայսցանէ։ Եւ մի՛ ոք պատճառեսցէ զպատճառս մեղաց՝ ասելով՝ զի եթէ ոչ զրկեմք, և ոչ յափշ-

տա

տանկեմք, զիշխանութիւն մեր՝ ոչ կարեմք հաստատուն ունել։ Եւ առ այս՝ առաջին զայս ասեմք, զի թէ անկարելի էր՝ որոց զիշխանութիւնս ունին՝ հաճոյ լինել Ն. Տ., ապա զիարդ բազումք 'ի Թագաւորաց և յիշխանաց՝ գովելիք եղեն Ն. Տ. և մարդկան, որք և՝ յիշատակին 'ի գիրս սրբս։

Դարձեալ՝ թէ և անհնարելի էր՝ ըստ ասելոյ ձեր առանց զրկանաց՝ զիշխանութիւն վարել, ապա՝ որ իմաստունն է՝ փախչել արժան էր՝ յանցաւոր իշխանութենէն, և ոչ վասն այնորիկ՝ անանց տանջանաց՝ ընդ սատանայի տանջիլ։ Բայց՝ ոչ է անհնարին՝ առանց անիրաւութեան վարել զիշխանութիւն, այլ՝ դիւրին և հեշտալի է, որք սիրեն և կամին. և մեք վկայեմք առաջի քո, և երաշխաւոր լինիմք ամենեցուն։

Օրինեթէ ոք՝ զտուն իւր՝ մաքրեսցէ 'ի զրկանաց, և զիրաւամբք ստացուածս միայն՝ ժողովեսցէ անդ, թէ և սակաւ՝ թուեսցէ իցէ, առաւել շահեկան լինիցի՝ և պատճահարութեան, քան զբազումս՝ անիրաւաբար ստացեալս։ Եւ զայս՝ իմաստունն Սողոմոն՝ յայտ արարեալ ասէ. Թէ՝ անէծք Տն 'ի տունս ամբարշտաց, յարկք արդարոց՝ օրհնին։ Վասնզի՝ սակաւ ինչ անիրաւն՝ զբազում իրաւամբք ստացեալսն՝ նման հրոյ՝ կիզէ և ապականէ, զի անէծիւք և դանութբ է՝ ժողովուածն անիրաւին՝ 'ի զրկելոց մնալի, և ընդ աղքատացն՝ անիծից, և Ն. Տ. անէծքն մտանեն 'ի տունս զրկողաց։ Իսկ՝ տուն արդարոյն, զի սուրբ է 'ի զրկանաց, և կերակրիչ է քաղցելոց, ընդ օրհնութիւնս աղքատացն՝ և Տն օրհնութիւնն մտեալ՝ 'ի ծածուկ և անյայտ՝ զսակաւն բազմացուցանէ, որպէս զսարեփթացի այրւոյն, և զՍոմնացւոյն, և զորս տէրն կերակրեաց յանապատին։

Եւ մինչ յանմտաց և 'ի մարմնաւորաց՝ զբազում ինչս տեսանելով՝ զրկողաց և ամբարշտաց, և զսակաւս՝ որոց իրաւամբք ստանան, այպանիցէ զբանիւք մերովք. այլ լուիցէ այնպիսին՝ Մարգարէին դաւթի՝ զի ասէ, լաւ է սակաւ ինչ արդարոյ, քան զբազում մեծութի մեղաւորաց. Նոյնպէս՝ և որդւոյ նորին՝ Սողոմոնի, արդարոյն ասէ՝ տմ աշխարհ՝ լի է ընչիւք, իսկ՝ ամբարշտին, և ոչ դանկ մի. Եւ դարձեալ՝ լաւ է ասէ՝ բանջարոց կերակրել հանդարտութբ, քան՝ մեծամեծ զենլեօք՝ անիրաւութբ։ Եւ յիրաւի է այս,

զի՝

զի՝ որք իրաւացի և յարդար ընչից իւրեանց՝ կերակրին, ոչ ինչ կրեն պատիժ՝ յայն։ Իսկ այնք՝ որ ՚ի զրկանաց, կամ՝ ՚ի գողութենէ, և ՚ի յափշտակութենէ լնուն զսեղանս իւրեանց, զամենայնն՝ զոր առատապէս վայելեն յայլոց իրաց, տոկոսեօք ունին հատուցանել ՚ի դատաստանին ահաւոր։

Մի և զայլահս հաճոյս լուծանէք ՚ի ձուկն և ՚ի գինի իշխանաբար, զի մի ընդ անժուժկալսն դատիցիք։

Դարձեալ՝ և զայս ասեմք, զի ստութիւն և խաբէութիւն՝ զոր ՚ի Տեառն հրամայեալ թէ՝ ՚ի չարէն սատանայէ է, թէպէտ և ամ՛ մարդոյ վնասակար է, բայց՝ առաւել մեծամեծաց և իշխանաց, զի փոքրն՝ վասն զի անզօր է, ջանայ ստութեամբ զբան իւր՝ հաստատել, և հաւատալի առնել։ Իսկ մեծն՝ ՚ի ձեռս իւր է առնելն՝ զոր կամիցի՝ իշխանաբար, յորժամ զհրաժարումն իւր արհամարհիցէ։

Դարձեալ՝ ռամիկ մարդոյ՝ եթէ ստութիւն ինչ խօսի, և թէ՝ այլ ինչ վատթար իրս գործէ, ոչ լինի այնքան յայտնի, և ոչ հրապարականախատ լինիցի։ Իսկ զմեծին, և զփոքր մի սխալանքն՝ ՚ի հայհոյութիւն և ՚ի թշնամանս բարձրացուցանեն մերձաւորք, և հեռաւորք, այլև՝ ոսոխքն չարի՝ օրինակ չարութեան առնուն զայն ՚ի մեծամեծաց եղեալ պատուհրան աղանդութիւնս ինչ։

Վասն որոյ՝ աղաչեմ, մի՛ եղիցի առ ձեզ՝ բան խաբէութեան և ստութեան, մի՛ առ ձեր հնազանդեալսն, և մի՛ առ արտաքինսն։ Այլ՝ որոց խոստանայք բանիւ զբարիս՝ զնոյն և գործով կատարեցէք, զի այն է հաճոյ՝ առաջի այ և մարդկան, և գովութեան պատճառ՝ ձեզ՝ յամ՛ բերանոյ։

Նաև՝ զզինուորաց ձերոց՝ և զամենեցունց՝ որք ծառայեն ձեզ, զպահմանեալ հռոգսն՝ մի՛ պակասեցուցանէք, զի զրկանք մեծ է այն, և անիրաւութիւն։ Քանզի՝ որպէս նք պարտական են՝ վասն պարգևացն որ ՚ի ձէնջ, զարիւնս իւրեանց հեղուլ՝ վասն ձեր. նոյնպէս՝ և դուք պարտիք՝ զխոստացեալ թոշակսն նոցին՝ հատուցանել անթերի։

Եւ մի՛ ինչ բռնութբ՝ առաւել քան զչափն՝ գնայք առ նոսա, զի մի՛ յերկիւղէ կողոպտելոյ, և բանս և պատուհաս կրելոյ ՚ի ձէնջ՝ անիրաւաբար՝ զաղտնի փախչին, և ուրացօղք լինին երդմանցն՝ որ առ ձեզ, և երկու կողմանցդ

լե

քննեցին մեղք, նոցա և ձեզ։ Իսկ եթէ համանգք խորհրդակցութե մերոյ՝ և խրատու, զայս առհման պէք առնելցուն՝ որք ծառայենն ձեզ, զի որչափ կամք լինին մարդոյ՝ կալ 'ի ծառայութե ձերում, հաւատարմութբ ծառայեսցեն ձեզ, և առանց նենգութե, և որ ոք յօժարի ելանել 'ի ծառայութէ ձերմէ, յայտնի հրաման խնդրեսցէ 'ի ձէնջ՝ առանց երկիւղի. և դուք մի ստտիւ և բռնութբ լինիք արգելօղ. բայց եթէ՝ սիրով, և իւրով կամաւ, զայն՝ որ ոչ կամիք դուք՝ գնալ 'ի ձէնջ, և այլոցն՝ քաղցրութբ տուք հրաման. և եթէ ինչ պարտ իցէք, հատուցէք նոցա։ Եւ յորժամ յայսպիսի իրաւունս տեսանեն 'ի ձէնջ լեալ, կամ ոչ գնան բնաւ, և կամ եթէ գնան՝ փութով դարձեալ առ ձեզ դառնան, և ազատէք զնոսա և զձեզ՝ 'ի խղճէ երդմնազանցութենն, և լինի այն՝ մեծ վարձուց պատճառ՝ ձեզ յայս։

Պարտաւոր՝ մի եղիցի ձեզ՝ յօժարութբ դիմել յերդմունս յանուանն այ, և յաճախութենն սուրբս, և 'ի խաչ, առանց մեծագոյն հարկի։ Քանզի Քն հրամայէ յաճախականին՝ ամ երդնումն լինել, թէ՝ ամենևին մի երդնուցուք՝ ոչ միայն յարարիչն, այլև՝ ոչ յարարածս, ոչ յերկինս և ոչ 'ի յերկիր, և ոչ 'ի գլուխ քո։ Այլ՝ այնպէս ցուցէք ամենեցուն զձեզ ճշմարտախօս լինել, մինչ զի՝ լոկ բանից ձերոյ՝ որպէս երդման՝ հաւատասցեն մարդիկք։ Իսկ եթէ ծանրագոյն ինչ հարկ լինիցի երդնուլ, մի ոք մեղիցէ զանթողլի յանցանսն՝ ուրանալով զերդմունսն, և երդմնազանց լինելով, զի առաւել չար է ուրացութիւնն՝ քան յերդմունսն է, քան զայն՝ որ յերկիւղէ մահու՝ առաջի անհաւատից՝ ուրանան։ Քանզի այն՝ 'ի բռնութենէ է և երկիւղէ տանջանաց, և մահու, և այս՝ կամաւորութբ, և վասն սակաւ ինչ՝ կորստական շահի, և է զանազանութիւն սոցա՝ որպէս կամաւ մեղքն, և ակամայ։

Եւ ոչ միայն առ հաւատակից քրիստոնեայս՝ պարտ է առանց ստութե պահել զերդմունսն, այլև՝ առ այլազգիս, և մանաւանդ առ նոսա առաւել, զի մի անուանն այ, և հաւատոյս քրիստոնէութե՝ պատճառ լինիք հայհոյելոյ 'ի նոցանէ։ Զի եթէ կռապաշտ թագաւորին նաբուգոդոնոսորայ՝ երդմնազանց լինելով հրէիցն, մատնեաց Այ զքա-

դա

զաչքն և զազգս՝ 'ի ձեռս նորա : Վանի՞ ես 'ի նորումս պա-տուհասէ զայնոսիկ՝ որք տեսին և ուրացան զերդմունսն՝ տր առ նոսա.

Այժմ իսկ զայն առաջի դիցէ, եթէ՝ վասն զի նքա տեսին երդմանցն՝ որ առ մեզ, պարտ է՝ զի և մեք առ նոսա՝ զնոյնս արասցուք, այլ չէ մեր երդումն և նոցայն համասար, զի մեր՝ առ ճշմարտութիւնն է, և նոցայն՝ ոչ նոյնպէս. Վ՟ն որոյ՝ և մեք որպէս զծառայս գիտօղ կամաց Տն իւրոյ, և ոչ արարօղ՝ բազում ըմպեսցուք գանս, և նքա որպ զտգէտս՝ սակաւս.

Պարձեալ՝ աղաչեմք, մի առ 'ի բարկութիւն շարժե լով, և ոչ ուղղադատ իրաւամբք, կամ՝ խրատ ինչ առնէք մարդոյ, կամ մահու վճիռ տայցէք. Վասնզի՝ նոր օրէնքս՝ ոչ հրամայեն զայսոսիկ, և հին օրէնքն՝ թէպէտ և հրա-մայէ, բայց՝ ոչ վայրապար, այլ ըստ յանցանացն արժա-նաւորութեան՝ զիւրաքանչիւրոյն դատել 'ի խրատ և 'ի մահ.

Վասն որոյ և դուք՝ որ յիշխանութեան կայք, թէպէտ զնոր օրէնքս՝ անկարելի առնէք պահել, զհին օրինացն հրա-մանս՝ որ վասն այսպիսի իրաց է, կատարեսջիք. Իսկ՝ եթէ առանց օրինաց դատէք զմարդիկ՝ անիրաւաբար 'ի սպա-նումն և 'ի խրատ, դիտասջիք համապատասն, զի խնդրելոց է 'ի ձէնջ Տ՟Ն՝ յաւուրն դատաստանի՝ զարիւն սպանելոցն, և զհատանել անդամս խրատելոցն.

Նաև՝ զայս ևս պատուիրան աւանդեմք ձեզ, մի լի-նիք վրէժառուք և քինախնդիրք, որով զիշխանսն իմն՝ նախատէ մարգարէն Եսայիաս, այլ ըստ հրամանին Քի՟ ներող և երկայնամիտ լերուք առ ամենեսեան, որ մեղու-ցեալ իցեն ձեզ, զի և դուք ընկալջիք առ 'ի նմանէ զթողու-թիւն՝ և զքաղցրութիւն, ըստ ասելոյն թէ՝ մի դա-տէք, և ոչ դատիցիք, մի պատժէք և ոչ պատժիցիք, զի որով չափով չափէք, չափեսցի ձեզ.



Աշ

օսիւք ըստ կարգի և առ դասս զինուորացդ, որ է ընդ ձեռամբ էք իշխանութեանց, և պետութեանց։

Նախ և առաջին՝ զԱռաքելականն առ ձեզ բարբառ ախք բան։ Որ պատուիրէ ձեզ՝ հնազանդ լինել տէրանց ձերոց՝ յամէ։ Մի՛ առ ականէ ծառայել՝ որպէս մարդահաճոյք, այլ միամտութեամբ՝ սրտիւ որպէս Քրիստոսի։ Զի և այսմ ասէ՝ Տէր է հատուցանող, այսինքն թէ՝ որ հաւատարմութեամբ ծառայէ այնմ՝ ընդ որոյ իշխանութեամբ անկեալ է, թէև՝ 'ի նմանէ պակասութիւն ինչ լինիցի ինքեան, մի ասէ տրտմեսցի, զի Տէր է որ հատուցանէ նմա՝ փոխարէնս բարեաց՝ ըստ ուղիղ վաստակոց իւրոց։

Իսկ՝ որ նենգաւոր գտանիցի բանիւ, կամ գործով, կամ անձին տն իւրոյ, կամ տեղւոյ ամրականի նր, կամ ընչից նորին, այն է այն նենգութիւն, և ոչ մարդոյ. և յայս ընդունելոց է զվրէժ հատուցմանն՝ չարեաց իւրոց. որև 'ի հաւատոյն որոշեալ է այնպիսին, և չար՝ քան զանհաւատսն է։ Քանզի՝ նք թէպէտ՝ և 'ի ճշմարիտ հաւատոյ և յօրէնաց Ած մոլորեալք են, բայց՝ զհնազանդութիւն տէրանց իւրեանց, և զմտերմութիւն՝ հաստատուն պահեն յանձինս։

Եւ զի՞նչ ասեմք առ քրիստոնեայ իշխանս՝ ունել միամտութիւն և սէր, յայտնի և ծածուկ. այլ թէ և 'ի քրիստոնէից՝ որ ընդ այլազգեաց է իշխանութեամբ, և 'ի նորին պարգևաց կերակրի, և զգենու, զնոյն հաւատարմութեան պարտ է ցուցանել նմա, և առանց նենգութեան ծառայութիւն։ Զի և յորժամ գրէր զայսոսիկ՝ Առաքեալն Պօղոս, թէ՝ ծառայք՝ հնազանդ լերուք տէրանց ձերոց, ոչ եթէ քրիստոնեայք էին տեարք ծառայիցն, այլ կռապաշտք։ Բայց այսու՝ յայտնի կամեցաւ ցուցանել հեթանոսաց՝ զճշմարիտ օրէնսն քրիստոնէից, եթէ՝ ատելի է օրինաց մերոց՝ նենգութիւն տէրանց, և սիրելի է հաւատարմութիւնն, զի մի՛ բանս հայհոյութեան՝ յօրէնս՝ և 'ի հաւատս մեր՝ խօսեսցին, յորժամ 'ի քրիստոնէից՝ զոք տեսցեն՝ նենգաւորս գըտեալ առ նոսա։

Ո՛չ եթէ կարգեցիք 'ի ձեռաց ձերոց՝ 'ի գործ մերա-կացութեան, կամ առաքեցէք 'ի տնօրէնութիւն ինչ բանի, արդարութեամբ և իրաւամբք՝ առ հնազանդեալսն վարեցարուք։ Մի՛ զոք նեղելով անողորմաբար՝ արտաքոյ իրաւանց, և մի՛ զոք զրպարտելով՝ անկարեկից բնութեամբ, ցուցանելով զձեզ՝ առ նոսա՝ որինօք դահճաց, և մի՛ առաւել քան զհրամայեալսն ձեզ՝ առնիցէք, ըստ սրբոյ մկրտչին խրատու, այլ՝ Թոշակօքն ձեր՝ բաւականասջիք, և ողորմութեամբ և սիրով գնայցէք առ ամենեսեան, զի և դուք ողորմութիւն գտանիցէք յԱյ։

Ո՛չ մի՛ յաղագս զինուորութեանդ՝ արհամարհեալ զպատուիրանս Այ՝ լինիցիք անհնազանդք՝ Առաջնորդաց, որք խրատեն զձեզ՝ պահել զպատուիրանս Այ, կամ՝ զոր պահս՝ անօրէնաբար լուծանէք, կամ զյափշտակութիւն ընչից աղքատաց, և զանպարտ արեանց հեղմունս՝ ոչ մեղս համարիք, զի բաց 'ի հասարակաց՝ 'ի պատերազմական սպանմանցն՝ որք հրամանաւ Թագաւորացն լինին, այլոցն՝ որ 'ի ձէնջ լինին, ամենեցուն զհամարս պահանջելոց է 'ի ձէնջ Ած, ծանր և անաչառ դատաստանաւ։

Նոյնպէս՝ և զորս... քան զսահմանեալ հռոգսն ձեր՝ անիրաւաբար և բռնութեամբ՝ յաղքատաց յափշտակէք, կամ 'ի տէրանց ձերոց ընչից՝ գողանայք, ունիք տալ զվճարն՝ առանց պակասութեան՝ յաւուրն դատաստանին։

Նաև՝ քան զայլ հասարակաց ժողովրդականսդ՝ ձեզ առաւել պարտ է երկնչել յԱյ, և զպատուիրանս նորա պահել. զի յամենայն ժամ՝ ընդդէմ սրոյ Թշնամեաց, ունիք պատերազմիլ։

Վասն որոյ՝ առաւել քան զմարմնական զինուք՝ հոգևոր զինուք վառեցարուք, այսինքն ածպաշտութեամբ և արդարութեամբ, և սրբութեամբ, պահօք և աղօթիւք, և ողորմութեամբ, որպէս զի՝ Ած լիցի ախոյեան 'ի պատերազմունս, և զԹշնամիս վանեսցէ առաջի ձեր։




Պատուէր տամք և քաղաքացւոցդ, և որք 'ի վաճառս Է
փողոցս նստիք՝ գնել և վաճառել. և առ արուեստաւորսդ, զի ուղղութեամբ առնիցիք զկեանս ձեր, և անպարսաւ քաղաքավարութեամբ:

Եւ մի՛ ոք խաբէութեամբ և նենգաւորութեամբ վաճառեսցէ զպատրաստածս իւր՝ անմեղ գնողաց: Մանաւանդ՝ ստախօսութեամբ և սուտ երդմամբ՝ զռամիկս, և զանգէտս խաբելով, զի 'ի դատաստանին աւուր՝ ընդ գողս և ընդ յափշտակողս՝ դատելոց է այնպիսին: Եւ առնու Ած զպարտագործութեան իւր, և տայ զրկելոյն 'ի նմանէ:

Եւ մի՛ եղիցի առ ձեզ՝ կշիռ մեծ և փոքր, և չափ կրկին, զի պիղծ են երկոքեանն՝ առաջի Տն, որպէս ասաց Սողոմոն, այլ՝ արդարութեամբ և ողորմութեամբ վաճառեսջիք զգործս ձեռաց ձերոց, և զնիւթ վաճառոյ ձերոյ, զի մի՛ անէծք զրկելոցն՝ այրեսցէ զգոյս ձեր, այլ՝ օրհնութիւնն Տն մնասցէ 'ի տունս ձեր: Եւ մի՛ արհամարհէք զչքաւորսն՝ կամ զանգէտս, յաղագս պարզամտութեան իւրեանց, քանզի՝ առաւել սիրէ Ած՝ զարդարամիտ կեանս նոցա, քան զարուեստաւորս և զխաբեբայս 'ի մարդկանէ:

Մի՛ տայք զարծաթ ձեր՝ 'ի վարձու՝ ըստ մարգարէին, այնոցիկ՝ որք նեղեն 'ի բռնութենէ իշխողաց, և ուտէք զաղքատութեն վաստակս նոցա՝ 'ի շահս վաշխից. այլ՝ որպէս եղբարք՝ կարեկիցք և օգնականք լերուք միմեանց:

Եւ զոր տայք նոցա փոխ՝ զայն միայն պահանջեսջիք 'ի նոցանէ, և շահիցէք զվարձս յայդ՝ բազմապատիկ՝ յանանց կեանսն, որպէս և հրամայէ Քս՝ ոչ միայն առանց վաշխից տալ, այլ թէ՝ տուք այնոցիկ՝ որոց՝ ակն ոչ ունիցիք առնուլ:

Իսկ՝ յամենայն գործս ձերոց՝ տայք ողորմութիւն կարօտելոց և աղքատաց, զի այնու օրհնեսցի ամենայն ինչ ձեր, և առնուցուք զփոխարէնն՝ 'ի Քէ յաւուրն դատաստանի:

Ը Նուէարուք երկրպագութեամբ, և համօրէն ժողովրդեանդ՝ զխրատս պատուիրանին Ա.Յ զոր աւանդեմք ձեզ. Որոց մանաւանդ՝ առաւել պիտանացու է դեղ հոգևորական՝ առ ՚ի բժշկութիւն ոգւոյ, զի և դուք առողջանայցէք ՚ի մեղացն հիւանդութենէ.

Որով աղաչեմք զձեզ՝ մի անցաւոր կենացս հեշտութեամբ մարմնոյ՝ զյաւիտենական հեշտութիւն հոգւոց՝ զոր յարքայութեան երկնից՝ վայելեն սուրբքն, կորուսանէք.

Եւ զի՝ տաճար էք Ա.Յ որպէս ասաց Առաքեալն, և հոգին այ բնակեալ է ՚ի ձեզ՝ մկրտութեամբ աւազանին, մի՛ աղտեղանէք՝ պղծալից պոռնկութեամբ և շնութեամբ՝ զտաճարդ Ա.Յ որ են հոգիք ձեր, զի մի ապականեսցէ զձեզ ած ՚ի դժնդակ տանջանս անշէջ՝ հրով գեհենին, որպէս և գրէ Պօղոս.

Եւ մի՛ արբենայք գինւով՝ յորում գեղխութիւն և յիմարութիւն է, որ է մայր պոռնկութեան, և ամ պղծութեան, և անիրաւութեան, և վիճման, և աղտեղի բանից և անարգանաց, յորմէ ապականութիւնք լինին; զի մի՛ արտաքս անկանիցիք յարքայութենէ այ ժառանգութենէ՝ ընդ սպանողս, և ընդ չարագործս՝ ըստ Առաքելական բանիցն.

Եւ եթէ ոք ՚ի ձէնջ՝ մեղաւ այսօրինակ Ա.Յ, և կամ այլ ինչ յանցանօք, մի՛ կացցէ համառեալ ՚ի նոյն աղտեղի անօրէնութիւնն՝ մինչև ՚ի փախճանին օր, այլ՝ ՚ի ձեռն խոստովանութեան և ապաշխարութեան՝ քաւեսցէ զյանցանս իւր, և գործեսցէ յայնմհետէ՝ փոխանակ չարին՝ զբարիս.

Դարձեալ՝ մի՛ զեկեղեցիս ձեր՝ առնէք գործի այնպէս, ՚ի ձեռն չար և դառն յիշոցաց, մանաւանդ՝ որ զհաւատ և զհոգևոր անարգեն; և զմկրտութիւն աւազանին, և զմկրտիչ Յովհաննէս, և զերեսս, և զեկեղեցին, որ՝ քան զուրացութիւն և զթլփատութիւն մեծ են այս յանցանք, զի այլազգիք՝ որ ուրանան զամ քրիստոնէից զհաւատն; զնա ոչ առեն անարգել.

Իսկ այս՝ որ զհաւատն անարգէ, ոչ զմարդ անարգէ, այլ՝ զած, զի հաւատ՝ ամ ծառայաշտի՝ ած է, և որ զմկրտութիւն՝ և զմկրտիչ Յովհաննէս՝ անարգէ, առ հոգին Սբ է անարգու-

Թիւնն

թիւնն այն, զի նմա ծնանին մկրտեալքն առաքինաեն։ Եւ որ զհոգին մարդոյ՝ և զերկրս անարգէ, նոյն առ մեծ վերանայ հայհոյութիւնն, զի հոգին՝ յայն փչումն, և երեսն պատկեր է այ, նոյն և բերանն՝ քունդ է մարմնոյ և աշխանն քն։

Եւ արդ՝ մի՛ տրտմեցուցանէք զհոգին սուրբ այ, այոպիսի զազիր և աղտեղի բանիւք, զի մի՛ հեռասցի ՚ի ձէնջ այ Հոգին, որ բնակեաց ՚ի ձեզ՝ յաւազանին, և փոխանակ մտցէ և բնակեսցէ ՚ի սիրտս ձեր՝ հոգին սատանայ։

Դարձեալ՝ և զայս պատուէր՝ առ հասարակ ամ՛ հաւատացելոց առաջադրեմք, զի զմանկունս ձեր՝ երկիւղիւն այ սնուցանիցէք, խրատելով զնոսա՝ ՚ի մանկական տիոց՝ լինել ածասէր, ողորմած, աղօթասէր, և ուսուցէք նոցա զբանս աղօթից, և սաստեցէք չասելոյ ՚ի խօսս աղտեղիս, և զերդցատուութիւնս, զի ՚ի մանկութեն ժամանակի՝ առաւել անկի խրատ ծնողացն՝ ՚ի միտս մանկանցն, անջնջելի յիշատակաւ, ընդ որում և վարձս բարեաց՝ փոխարէն ընկալջիք ՚ի Քրիստոսէ։

Եւ գլուխ ամ՛ բարեաց՝ զսէր առ միմեանս կալջիք, և առ աղքատս, և մերկս, և ՚ի հիւրս, և բանտեալս, և հիւանդս՝ զկարեկցութիւն, և զողորմութիւն, որով արքայութեն լինիջիք ժառանգորդս՝ ՚ի Քն Յս։

ԺԶ — Կանոնք [illegible]

Պատուէր տամք և կանոնաց ազգի, պարկեշտութ և ժ բարեձևութ լինել յամի որպէս և վայելէ քրիստոնէից, և առաւել՝ քան ոսկւով և արծաթով, ամօթխածութ և պատկառանօք զարդարել զանձինս ձեր։

Եւ մինչ ՚ի գայթակղութե պատճառս մեղաց՝ զմի լաւ երկրպագութեանց՝ յայտ զանեսցէ զգոյն երեսաց իւրոց՝ օտարգեղոյք, զի մի՛ զեւր հոգին՝ և զցանկացողին իւրեանն՝ արկցէ ՚ի գուբն անօրէնութե։

Եւ մինչ՝ նմանող լիցի օձին՝ գործի անօրէնութեան լինելով սատանայի՝ զեր և կանանց անոռանեն։ Մի որպէս

Նա

նա՝ Եւայի ճաշակեաց զպտուղն մահու՝ խաբէութեամբ, նոյնպէս և սա՝ զանմահ կենաց և զարանց՝ տայ ճաշակել զպտուղն մահաբեր մեղաց։ Որ 'ի սկզբանն քաղցր երևի անձանց, և յետ կատարմանն՝ դառն քան զլեղի ։ Որ և զանէծս ածեն ժառանգեսցէ այնպիսին՝ յայս, զորս և զգործն ստացաւ ։

Պարծեալ՝ մինչ 'ի ձեռն՝ սնոտիական կախարդութեան, և անզանգեալ դեղատուութեան՝ զհետ երթիցէ ։ Զի այլ մեղք՝ 'ի գործմունք մարմնոյ ; և այս՝ 'ի հաւատն ։ Վասնզի՝ կախարդութիւնն՝ 'ի սնոտիէ է, և եթէ ոք՝ ոչ նախ հեռանայ յայս, և առնէ զինքն՝ սնոտի պաշտօնեայ՝ և երկրպագու, մի յաջողին կախարդութիւնքն։

Վասն որոյ՝ աղաչեմք, 'ի բաց լինել յայսպիսի մեծ և աններելի չարեաց, զի մի ընդ սատանայի դատապարտեսցի այնպիսին՝ 'ի հուր գեհենին։ Զի այս գործ՝ կռապաշտից է և ոչ քրիստոնէից, զոր Քն եբարձ զպատուհասն իւրով յաշխարհէ, զկռոցն մոլորութիւն, և զգործս նորին՝ չարութեան։

Նոյն՝ մինչ վերստին գործակից լինի սատանայի՝ չար գործովք կախարդութեան, և ընդ նմին այրեսցի 'ի հուր գեհենին յաւիտեան։

Եւ և այլ ինչ բազում գրել առ ձեզ՝ յածայլն պատուիրանաց՝ առ 'ի զգուշութիւն մեղաց, և յամ չար գործոց, բայց՝ զոր պակասն է 'ի գրոյս՝ ունիք ուսանել 'ի Քահանայից, և 'ի վարդապետաց, որք կարգեալ են յայս՝ տեսուչք հոգւոց ձերոց, որ ըստ օրէ համառօտել ձեզ՝ զբանն ճշմարտութեան։

Եւ մեք աղաչեսցուք զնա, զի հանցէ 'ի ձէնջ՝ զսիրտ քարեղէն, և տացէ ձեզ՝ սիրտ մարմնեղէն, լինել երկիր արգաւանդ, և արդիւնացուցանել զսերմն բանին մեր՝ հոգւոց ձեր, և տալ զպտուղ բազմապատիկ՝ 'ի չափ երրորդին։

Որով՝ զուարթագին և անարատ երեսօք՝ կացցուք յաւուրն դատաստանի՝ առաջի արդար դատաւորին, ասել՝ ահա ես և մանկունք իմ՝ զոր ետուր ցիս, և դասեսցուք ընդ արդարոյն՝ 'ի յաւիտենական կեանսն՝ ձեզ համանգամ, 'ի Քն Յն 'ի Տէր մեր, որ է օրհնեալ յաւիտեանս, Ամէն։

Վ. Ե Ր Ջ.

Ցանկ

Ցանկն Կարգաց Գրոց Թղթոյս Ընդհանրականի·

Առ համօրէն Հայաստանեա ազգս· երես 1
Առ Արժանաւորս որ ՚ի Մադրասայս· 16
Առ Առաջնորդս Սրբոց ուխտից Վանականաց· 31
Առ Առաջնորդս Եկեղեցեաց՝ որ են յ[illegible], որ կոչին Եպիսկոպոսունք· 35
Առ Դասս Քահանայից· 46
Առ Իշխանս՝ որ ըստ աշխարհի· 63
Առ Զինուորաց դասս· 71
Առ Քաղաքականսդ· 73
Առ Երկրագործս՝ և համօրէն Ժողովրդականսդ· 74
Առ Կանանց դասս· 75



Առ [illegible] [illegible]՝ [illegible] [illegible]՝ [illegible] Էջ-
միածնին՝ Սիմէոն Թագաւորացն Հայոց·

Զբազում արութիւն, քաջութիւն արարեալ՝ զազգս մեր բարձրա-
ցուցանողին Տէրունի, ամենահայրապետին մեր գլխաւորի Հայոց
զԹագաւորութիւն Վիրաց՝ [illegible] [illegible], զարթիր
զարթիր՝ զինուորութեան [illegible] [illegible], և կրօն [illegible] [illegible]
՚ի բերան, և արա զի ոչ միայն՝ ոչ [illegible] [illegible] [illegible] նորա, այլ՝
[illegible] [illegible] ՚ի լիճ հրոյն՝ [illegible] [illegible]·

Բարեկարգ գեղեցկութիւ զԹագաւորութիւն և զհամայն զաշխարհս Հայոց՝ յօրինողքդ Արշակունիք, Արքաւօրէն սլացմամբ ՚ի մրցմունս մարտի Պսակազարդ Պայծառացուցիչք հայրենեաց, յառակայանաւ Միհրդատանի. Արծուեանշան Դրօշակաւ վայելչացեալք, արդ է ժամ՝ ձայն տուք, և դիմեցէք երբեմ զԱրծուիս՝ տարածեալ զթևս ձեր՝ ՚ի ժողովել զցրուեալս՝ ՚ի յոլորտս տիեզերաց ։

Ցընծայողք ՚ի բանս Թրունի՝ և գտանողք զաւհար սքանչելեաց, ինքնանուէր Նախահաւատն Պանծալիդ Աբգար, որ ընկալեալ ՚ի Տէ զԹաշկինակն՝ ՚ի նշան յատկի Անձնավայելուչ սիրոյ՝ ունող Փրկչական Պատկերի, զազգս Հայոց շքեղազարդեցեր, ցնծունս զսիրտ մեր՝ բարձրացուցեալ վեհան՝ արա՛ նորոգեալս և յապատնիս, զի ապրեցուք յերեսաց աղեղան։

Նախաշաւիղք Լուսազարդ Ծանուցարհին՝ Հսկայազինդ Տրդատ՝ ՚ի ծննդեան Հոգւոյն Սբյ մկրտութեն Յօհաննէս՝ հեզիկ Գառինդ վերաձայնեալ՝ քաջայաղթ կռամոլ ձոնմանց՝ Նշանաւ Գառին՝ որ ՚ի վերայ լերին սիօնի, ազդիս մերոյ Թագազարդօղ, զերկրպագուսն զամենեսին՝ կնքօղդ դրօշմի նորա ՚ի ճակատս, տանջիլ առաջի Այ և Գառինն՝ համդերձաւորեալս, և զանունս մեր ՚ի դպրութե կենաց՝ Գառինն զենեցելոյ՝ դրեա՛ զոր մաղթեմ։

Փողրկացեալք ՚ի ցոյցս և Անյաղթելի մենամարտք ՚ի քաջարութիւն՝ Երկաթուիծք յանձնապաստանք՝ Հզօրք քան զանտառուսն, ու սանդողք որդւոցն՝ Ռուբինեանք, որոցդ առաջին Լևոն յա- Առիւնուն Պանծացեալ, Պսակեալք ՚ի Կայսերաց՝ ըստ անուան Առիւծանցն, արիք երբեմն առիւծք՝ ՚ի ցրուումն ամբարշտաց՝ Թագաւորք Իմաստունք, որոցդ ՚ի յարուցանումն՝ ոչ ոք կարօղ, բայց թէ այն որ ոչ ննջէ և ոչ ՚ի քուն երթայ պահապանն Իսրայէլի։

Որոյն Տեղւոյդ սանձանաց Լևոնդ Մեծի՝ յառկաղոյն ընկիլ Նշանդ՝ Արքայական Թագաւորութեան. Լևոնդ պաքարոտ՝ և Լևոնդ մածեալ, սաստ ցերբինս մեծամեծս՝ ցխանդ նեղոյ առաջինք, ընդունողք զհաւատարութիւն հօրհայն, թէ՛ ձեռք՝ զօրաւարելի զհին արկին Թագազարդ Տանս այսմիկ, և ձեռք նորա՝ կանգնեցին զսա. զի դու ես Յօթնաչեայն՝ որ հայիս ընդ ամենայն երկիր։



Թաթ անեղին յաման երևի, տառք Հայկական նշանագ- րի։
յորդանդ մաքուր մեծ Թարգմանչի, սուրբ Մեսրոպայ վարդապե- տի։



ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Պատճառ նորոց մրցմանն՝ Թագաւորին Հռոմայ Տրայանոսի. Եւ Մեծ Կոստանդիանոսի Հայոց՝ Սեւերոսի և Պրոբոսի Բռնաւորին՝ ըստ Երեցին առ մեզ։

ՄԱՐԳԱՐԷՆ ԴԱՒԻԹ Սաղմ. ՅԱՂԹՈՒԱԾՈՅԻՆ ԵՐԳՍՆ ՄԱՏՈացն՝ օրհնաբանէ, եթէ՝ յիշատակ յաւիտենից եղիցի արդարն, և Սողոմոն ասէ՝ թէ յիշատակ արդարոց՝ հանդերձ գովութեամբ։ Յայտ առնելով՝ զի թէպէտ և հասարակական վախճանաւն փոխի յաստեացս, սակայն՝ արժան մշտնջենաւոր՝ ինքեան թողու յերկրի՝ զարժանի յիշատակի գործս, որով և յազգս ազգաց՝ անխափան գովասանական երգով պատուի։

Զայս տեսեալ մեր՝ 'ի նուաղեալս ժամանակի՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Առաջնորդս, ոչ յապաղեցաք՝ առյայտ թողուլ զյիշատակ անուան նոցա, պարագրութեամբ բանի՝ 'ի հանդերձեալ ժողովրդեան՝ որք զկնի մեր լինիցին։ Զի և սոցայս՝ ախորժելի կարծեմ պատմութիւն, քան զնախ եղելոց՝ համապատիւ նոցա՝ սրբոց։ Որպէս և զկնի ամպոյ՝ Արեգական, և յետ ձմերայնոյն՝ գարնանային յօդոցն քաղցրութիւն։

Այսպէս և Երանելի Հայրս՝ 'ի նուաղեալ ժամանակս

յոր

յորժամ ձեռն մեղաց՝ տիրէր 'ի վերայ աշխարհիս, և մեգ թշուառութեան պաշարէր զմեզ՝ որպէս և գերութեան, երևեցաւ ջահաւորեալ վարդապետութիւն, և լուսակրօն վարուք և փարատեաց յաշխարհէ՝ զմրրիկ մեղացն, և զխաւարին կանաչացոյց զմեզ՝ 'ի ձեռնադրութիւն առաքելութեան՝ յանձնումն հոգևոր շափիղ հաւատի կատարմանն ՎԷ. Սրբոյն Պահլաւիկ, 'ի ցեղէ՝ Սրբոյն Գրիգորի. Երրորդ յաջորդ՝ Առաքելական Աթոռոյ Լուսաւորչութեան Հայոց, յետ Գրիգորիսի Վկայասիրին.

Վասն զի՝ զերանելի վկայասէր ձգնաւորն ՎԲ Տէր Գրիգորիս՝ յաջորդեաց հանգուցեալ նորին՝ ձեռնադրութեան որդի՝ և համանուն՝ Տէր Գրիգորիս, և էր Թոռականն Հայոց շնորհ. 'Ի մանկական հասակէ կարգեալ յԱթոռն՝ 'ի վերին տեսչութեն ընտրութէ, որև՝ ոնոյց վերջացին իւր՝ վարժեալ ամ Մծաշունչ առաքեալ՝ զՏէր Ներսէս, զորոյ բուռն է հար բանս պատմողականս.

Նոյն Սրբանեալն Գրիգորիս՝ յետ բազմածուփ տարբերութեան՝ 'ի խաղաղութեան ժամանակս դարձուցեալ 'ի սահմանս մեծագեղեաց, առ ափն Եփրատ գետոյ՝ ամրացեալ 'ի դղեակ բերդն՝ որ Հռոմկլայ կոչի, մերձ ունելով ինքեան զերջային՝ հաջակաւոր վարուք և իմաստութ, երկոցունց լեալ զժամանակս, և ալևորեալ հերօք.

Յաւուրսն յայնոսիկ յաւնէր խաղաղութիւն, 'ի մէջ երկուց իշխանաց հայատեղից՝ այսպիսի օրինակաւ.

Վասն զի՝ էին պատուով 'ի յունաց Արքայէն Սևաստոսութիւ, և էին ընդ ծառայութիւ, և հնազանդութիւ նորա.

Իշխանն՝ որոյ անուն Թէոդորոս, Տէր գոլով լեռնային կողմանց փոքուդայւոց, և բազում գաւառաց, և Թեկին առծէր ընդդէմ Թագաւորին Հոռոմոց՝ պէսպէս պատճառաւ, մնացեալ զերդմակուռ դաշինսն՝ որ 'ի մէջի, և զհնազանդութիւն նորա:

Իսկ Մարեպաշտ Իշխանն Օշին, որ և սա՝ Տէր գոլով գաւառաց՝ որ 'ի գահ կիլիկոյ, ունելով զանառիկ դղեակն 'ի Թիկունս տորոս լերինն՝ վերադիտակ մայրաքաղաքին Տարսոնի, հաւատարմապէս մնացեալ 'ի հնազանդութիւն Արքային Հոռոմոց.

Իսկ՝ ամբարտաւան իշխանն Թէոդորոս՝ 'ի խռովութի շարժէր զբարեպաշտ իշխանին օշնի, վ՟ն անբիծ հաւատոցն հաւատարմութեն՝ զոր ունէր առ Թագաւորն հռոմոց։ Եւ վասն այսր պատճառի՝ ոչ սակաւ խռովութիւնք լինէր և հեղմունք արեան՝ 'ի մէջ երկուց իշխանացն, մինչև հարկ լինել՝ Արքազան Կաթուղիկոսին Տն Գրիգորիսի՝ շարժել զբանաւոր և զիմաստուն եղբայրն իւր՝ զՍրբ Եպիսկոպոսն զՏէր Ներսէս, առաքել 'ի մէջ նոցա, որպէսզի՝ խոհականութեամբն իւրով՝ հնարեսցի համոզել զնոսա 'ի խաղաղութի։ Որև՝ աշխատասիրաբար ճանապարհորդեալ գնայր առ նոսա, և զհաւատացեալ գործն՝ արդեամբք կատարէր 'ի ձեռն իւրոյ միջնորդութեն՝ անքակ սիրով կապակցելով զնոսա ընդ միմեանս, և ինքն 'ի սէր՝ հայրազատ ընտանեացն դիմէր։

Քանզի՝ դուստր եղբօր նորա՝ էր օրինաւոր ամուսին օշնի սեվաստոսին։ Զօր և առեալ գերազոյն իշխանն՝ զԱրք բամնեալ Սրբ Եպիսկոպոսն 'ի ճանապարհ անկեալ՝ բերէր յիւրն սեպհական աւանն, ըստ արժանի՝ պատուելով մեծարեալ 'ի մէջ հայրազատ ընտանեացն, և կարևոր բարեկամացն, և 'ի յօրհնել զնոսա՝ և զդղեակն, և զամ՝ բնակիչս գաւառին։ Եւ ինքն դէմ եդեալ գնալ առ հայրազատ եղբայրն իւր՝ Արքազան Կաթուղիկոսն Տր Գրիգորիս։ Եւ յայնժամ՝ պատահէր նոցա՝ ըստ դիպուածոյ ճանապարհին՝ 'ի մամեստացւոյն քաղաք մտանել, ուր էր Թագաւորն իշխան ամն՝ դուքս կարգեալ կողմանցս արևելեայց։

Քանզի՝ այս սովորութիւն է հռոմոց՝ ըստ շրջագայութե ամի՝ զկարգեալ վերատեսուչ աշխարհաց՝ հանել, և փոխանակ նորա՝ զայլ ոք առաքել։ Եւ այս այր՝ իբրև զկորովամիտ և զիմաստուն՝ յայնժամ եկեալ էր՝ փեսայ գոլով Թագաւորին, և պատուով առաջին գոլ հեծելազօրացն, որ կոչի յունարէն՝ Պրոտոստրատոր։ Որոյ տեսեալ զխոհական առաջնորդն Հայոց՝ մեծաւ ուրախութբ ընծայ, յայտ առնելով՝ եթէ իղձք տենչանաց ունէի 'ի բազում ժամանակաց հետէ՝ խօսել ընդ ձեզ յանձաշունչ դրոյ, և ուսանել զպատճառ պառակտելոյ՝ մեր Եկեղեցւոյ Քրի։

Յայնժամ՝ կատարեալն յիմաստս՝ ուրախութբ ըն-

դունէր զՀայցուածն, և 'ի Հարցուածս բանի պատասխանւոյ՝ Հաւանեցուցանէր զբարեպաշտ իշխանն։

Որև՝ թախանձեալ զերանելին՝ զի զդաւանութիւն Հայաստանեայց՝ բանիւ տացեալ՝ գրով պարունակեալ տացէ նմա։ Որում՝ Հաւանեալ Հաճոյական խնդրոյն՝ կատարեալ զՀաւատով Հայցուածն, գրեաց զՄեր դաւանութի Հաւատոյ, և զկարգս Եկեղեցւոյ, և ետ 'ի ձեռս՝ յառաջ ասացեալ բարեպաշտ իշխանին այսպիսի օրինակաւ։

Գիր Հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, գրեալ 'ի Ներսէսէ Նոր Եպիսկոպոսէ՝ եղբօրէ տն Գրիգորիսի Կաթողի-կոսի Հայոց. 'ի խնդրոյ Գերապատւոյ Փեսայի Բարեպաշտ Թագաւորին Յունաց՝ Մանուէլի, Ալեքսի Մեծի Պրոտոստրատորի, յորժամ եկն յարեւելս, և էր 'ի Մամեստիայ Մայրաքաղաքին Կիլիկեցւոց. Ի Թագաւորութեան Հայոց. ՈԺԴ

Բանիւք գուշակեալ իմն խօսելով 'ի լսելիս խոհեմադունիդ, և Ընտանեաց անձինդ, Յաղագս մերոյ Հաւատոյ՝ և կարգաց Եկեղեցւոյ, Հարցմանց՝ որ 'ի ձէնջ առաւել պատասխանի։ Եւ քանզի խօսեցեալն բանաւոր չըթամբք՝ ոչ է բնաւորեալ 'ի յշտեմարանս յիշողականին մտաց անծախապէս, զմնայունութիւնն ունելով Հաստատուն։ Վասն որոյ՝ խնդրէք գրով արձանացուցանել զնոյն, յաղագս՝ անպարտ մնալոյ առ ձեզ՝ յիշատակ բանիցն՝ որ 'ի մէնջ։ Զորև տացուք սիրաբար՝ սիրողիդ զմիաբանութիւն, ըստ սակաւ գիտութեան մերոյ և տկարութեան՝ և ժամու փութոյ, Համառօտ և յայտնի բանիւ։ Նախ յայն՝ զդաւանողական պարագրելոյ Հաւատոյ մեր ճշմարտութիւն, և զեկեղեցւոյ կարգաւորութի, 'ի Հարցն մեզ աւանդելոց ընկալեալ, որ է այսպէս։

❧❧❧

Խոստովանիմք զՄիասնութիւն զԵրրորդութեան զՀայր, և զՈրդի, և զՍուրբ Հոգին, յորս անձնաւորութիւնս բաժանեալ, և ի մի բնութիւն և յԱստուածութիւն միա-ւորեալ:

Հայր անծին և անսկիզբն՝ յառաջ քան զյաւիտեանս: Որդի ծնեալ ՚ի բնութէ Հօր՝ անժամ և անմարմին, նախ քան զժամանակս:

Հոգին Սուրբ՝ բղխումն ՚ի Հօրէ, ոչ ըստ որդւոյ ծննդ-եանն, այլ յառաջ եկեալ աղբերաբար ինքեան միայնոյ քննելի օրինակն, և յարարածոց անզննելի:

Եւ ոչ էր երբեմն Հայր՝ յորժամ ոչ էր ընդ նմին Որ-դի, և Հոգի. այլ որպէս Հայր՝ միշտ Հայր, և ոչ յետոյ առացեալ զանուն Հայրութեան: Նոյնպէս և Որդի՝ միշտ Որ-դի, ընդ Հօր իւրում մշտնջենաւոր: Նոյնպէս և Հոգին Սուրբ՝ միշտ Հոգի էր, անմեկնելի ՚ի Հօրէ, և յՈրդւոյ, մի էութիւն, մի իշխանութիւն, մի կամք, և մի արարչագործ զօրութիւն յերիս անձնաւորութիւնս իմանի: Ոչ մեծութիւն և ոչ փոքրկութիւն, ոչ բարձրութիւն և ոչ խոնարհութիւն, ոչ առաջնութիւն և ոչ նուազութիւն, այլ մի կարգ; մի պաշտօն; մի երկրպագութիւն Սուրբ Երրորդութեանն զաւանեն, որով պայծառացեալ յոյժ էին եղեալքս այս, Երկնից երկ-նաւորացն, և Երկրիս երկրաւորացս, երևելի և աներևոյթ արարածք, յառաջին եղեալ արարչութե:

Իսկ յԵրկրորդումն ՚ի յԵրրորդութենէն՝ բանն Հօր Որդին միածին, կամաւ Հօր և Հոգւոյն, աւետեօք Հրեշտա-կապետին Գաբրիէլի, էջ յորովայն կուսին Մարիամու; ոչ նուազեալ ՚ի ծոցոյ Հօր՝ ըստ աստուածային անպարագրելի բնու-թեան, և ձգեալ զինքն՝ յարինէ անարատամաքուր Կուսին, որ ՚ի զանգուածոյն Ադամայ, միացոյց ընդ Աստուածութեան իւրում՝ անքննելի և անճառելի խառնմամբ, և եղև յերկուց կատա-րեալ բնութեանց՝ յԱստուածոյ և ՚ի մարդկայնոյ՝ մի անձնաւո-րութիւն կատարեալ, անփոփոխելի և անբաժանելի բնութ; ոչ փոփոխեալ մարդկային տկարն՝ և յօդական բնութիւն; յանձինս՝ և աստուածական բնութեան ՚ի վերայ կրեալ մարմնովն, և ոչ ապա անկարեկցական բնութիւնն ՚ի խառնակել: ընդ-

բնու

բնութեան մարմնոյ՝ մեխանիքս յերկիր՝ յանէծս պարզութէ, Թէպէտ և ունի՝ անմարմնոյն մարմնանալոյ, և բանին թանձ-րանալ, յորդորս անդրայն միաւորութեանն.

Եւ այլ՝ խառնի ընդ մարմնոյ՝ անմարմին բանն, և միա-ցուցանէ ընդ իւրեան՝ զմարդկային բնութիւնս, անայու-ցանելով զնա՝ խառնմամբն և միաւորութեամբ. ոչ փոփո-խումն՝ կամ այլայլութիւն ունելով 'ի միաւորութենն, բա-ղդում՝ և ոչ հոգի՝ և մարմին մարդկան, թէպէտ՝ և գերա-գոյն քան զարհեստն՝ կամէր ճշմարտութիւնն, որպէս ընդ-արարիչ՝ և ընդ արարած՝ գոլ համեմատութիւն. Եւ մի՝ մա-ճողեալ զմեր՝ ընդ երրորդին անհասանելի յեղանակաւ, և մնացեալ անփոփոխ՝ առանց և առանց, ոչ ըմբռնողական՝ որպէս օդ և ջուր յամանի, զի յարաւոյ կենաց զաստուա-կանն, այլ՝ միաւորեալ մերձեալ՝ 'ի մեր բան զայն՝ կրկնա-ժանեալ և անշփոթ միութեամբ. և առնելով զբնութիւն՝ աստ-ուածային, ոչ զայն անձնաւորութեամբ 'ի դրախտին, այլ՝ զոր յետ մե-զանաւորն և աստուածութեան. Զի և կոչեն Աստուած՝ յաղագս մարմնոյ եւս Բան՝ 'ի միաւորականին աղանձն բնութէն էր Աստուծոյ՝ միաւորեալ ընդ բնութենէ. Եւ ճշմարտականն եղև մարդ, և անպականելի մարմնոյ անդամոց և ա-պականութեան. Նոյնպէս և Հոգւոյն նոյնութիւն՝ յորժամ ընդ հոգւոյ մարմնոյն, ժամն աստուածութեան. Եթէ լցէ 'ի նորա ծախի. Իսկ՝ բնութիւնն մարդկային յաղագս անձնաւորութեան՝ անձա-խեղդի մեզ. Զի որոց սկզբն անապական է (զի առանց սեր-մանց՝ յանապականն կուսէ եղ ծնունդն). և կատարումն՝ անա-պական, (զի մարմին նորա՝ 'ի գերեզմանին ոչ ետես զապա-կանութիւն) համբերէ՝ զի և 'ի կենաց ժամանակին՝ որ ընդ ծնունդն, և ընդ մահն՝ լինել անապական։

Ես 'ի համբերէր և 'ի կամաւոր կրից՝ առեալ զօրանա-պական, այսինքն 'ի քաղցն, և 'ի ծարաւն, 'ի նեղելոյ և 'ի վաստակելոյ, 'ի արտասուելոյ և յարտասուելոյ, որք ճշմարտիւ և ոչ առաջօք՝ սան մեզ փրկանաց զանապականութ. Եւ այլ՝ յանկա-մայ և յանդամանէ կրից՝ խառնուրդանն ունիլ զանապականութէ, զի էր ինչ 'ի նմա՝ նման մերումն, և էր՝ որ 'ի վեր քան զմեր, ըստ զբեցելումն թէ՝ մարդ է, և 'ի վեր քան զմարդ. և Թէ՝ մարդ է և ո՞ ծանիցէ զնա։

Որդ՝ ըստ մերում հասանելոյ՝ այսպէս եղեալ միաւո
րութեն եղանակ՝ յարգանդի Կուսին՝ բնակելով 'ի նմա
ինն ամսեայ ժամանակաւ՝ հինգ յաճելեալ աճուրբք՝ ըստ
անդրանկութեն, և այն՝ որ կարօղն էր 'ի միում վայրկենի՝
լինել կատարեալ, որ ըստ օրէ աճմամբ զարգանայ, որպէս
զի՝ խափանեսցի այսուքիւք առաջօք կարծեցն զմարդեղութեն։
Եւ ծնանի որպէս մարդ՝ ած մարդացեալ, զկուսութի
ծնողին՝ անապական պահելով, զի և զծնունդն օրհնեսցէ
յանիծից, և զկուսութիւն նախապատուեսցէ ։
Թլփատեցաւ ութօրեայ, զի զուխտն ընդ հարսն կա-
տարեսցէ, և մեզ ուսուսցէ թլփատութի սրտի՝ հոգևորիս։
Եկն 'ի տաճարն քառասնօրեայ՝ ըստ օրինացն յընծայ
ումն, զի զմարդկային բնութիւնս՝ ինքեամբ ընծայեսցէ
հօր 'ի բարձունս։
Փախեաւ յԵգիպտոս, զի զմայրաքաղաքին կռապաշ
տութիւնն՝ դարձուսցէ յածպաշտութիւն, և զմեզ խրա-
տեսցէ՝ յօժարութեամբ փախչել ընդ նմա հալածանօք ։
Շրջեցաւ յաշխարհի՝ յամս երեսուն՝ աղքատութեամբ և
խոնարհութեամբ՝ ծածկելով զածութիւնն, զի զմեզ ճոխա-
ցուցեալ բարձրացուսցէ, յորժամ նորին ճանապարհին լի-
նիմք հետևօղք։
Եկն 'ի յորդանան՝ 'ի լրումն երեսնից ամաց՝ յայտնե-
լով զփառս Որդութեն իւրոյ՝ վկայութեամբ հօր, թէ՝ դա է որ
դի իմ՝ սիրելի, և հոգւոյն աղաւնակերպ իջմամբ։ Մկրտե
ցաւ 'ի Յովհաննէ՝ զի զջուրսն սրբեսցէ, և զհնութիւն մե-
ղացն՝ ընկղմեսցէ 'ի նմա, և զհոգևորականն տացէ մեզ՝
մկրտութիւն, ըստ վկայելոյն Յովհաննու թէ՝ նա մկրտեսցէ
զձեզ 'ի հոգին Սուրբ և 'ի հուր ։
Պահեաց քառասնօրեայ աճուրբք՝ երկրորդն Ադամ՝
վասն առաջնոյն ադամայ՝ զի ոչ պահեաց, և յաղթեաց
երեք փորձութիւքն՝ յաղթօղին մարդկան ։
Եւ յետայնորիկ ապա՝ զծածուկ Որդութեն իւրոյ զօ-
րութիւնն՝ յայտնի արար աշխարհի, զդևս հալածելով,
զհիւանդս բժշկելով, զկաղս գնացուցանելով, զմեռեալս
յարուցանելով, 'ի վերայ ծովու՝ իբրև 'ի ցամաքի գնալով,
'ի սակաւ հացից՝ զբազումս կերակրելով, զբնութիւն արա

րա

բանծայ՝ ուր կամիցի. փոփոխելով զջուրն 'ի գինի, և զհացն 'ի լոյս դարձուցանելով, և զլոյս ծնութեն իւրոյ՝ զծածկեալն երբև վարագուրաւ ընդ մարմնոյն՝ աշակերտացն իւրոց յայտնեաց 'ի Թափօրական լերինն, նախքան զյարութիւն, տէր զնոյն ծանուցանելով կենդանեաց և մեռելոց, իշխանաբար կոչմամբն մովսէսի և եղիայի։

Կայ այնուհետև՝ և կամաւորաբար յեղի՝ 'ի չարչարանս, զի զգիրս օրինաց և մարգարէիցն կատարեսցէ։

Նստի 'ի վերայ իշոյ և յաւանակի, յօրինակ Եկեղեցւոյ՝ հրէից և հեթանոսաց։

Կատարէ զզատիկն՝ ըստ օրինացն, զի զհինն 'ի նորն, և զստուերսն 'ի լոյս ճշմարտութեն փոխեսցէ։

Լուանայ զոտս աշակերտացն, զի զնախահօրն ոտիցն՝ որ 'ի ծառն գիտութեն ընթացեալ, մաքրեսցէ զյանցանս։

Տայ զմարմինն իւր՝ կերակուր կենաց, և զարիւնն իւր՝ 'ի քաւութեն մեղաց, զի որք առաջինն պտղոյն ճաշակմամբն մահացաք, զայսուիկ ճաշակելով կենդանասցուք։

Աղօթէ իմով բնութեամբս առ Հայր՝ վասն իմ, զի յառաջինն դարձուսցէ 'ի փառս, և զի տացէ օրինակ՝ աղօթել և մեզ 'ի փորձութեն մերում։

Տրտմեցաւ և արտասուեաց՝ ուրախութեն պատճառն երկնաւորաց և երկրաւորաց, զի բարձցէ զամենայն արտօսր յամ երեսաց՝ ըստ եսայեայ։

Երկեաւ, զի զերկիւղն բարձցէ զմահու։ Բռնեցաւ, զի զքիրտն երեսացն Ադամայ ջնջեսցէ։

Ապտակեցաւ, զի հարցէ ուժգին զթշնամւոյն։ Մերկացաւ, զի զամօթոյ ծածկեալ նախահօրն զգեստաւորեսցէ։ Արբ զլեղին, զի զդառնութեն մեղացն ճաշակման քաղցրացուսցէ։

Բևեռեցաւ 'ի խաչին, զի զմեզ արձակեսցէ 'ի կապանաց, և շնորհեսցէ մեզ կենաց՝ փոխանակ փայտին մահու։

Մեռաւ իշխանաբար՝ մարդկային մահկանացու բնութեամբս, և մնաց կենդանի ածային անմահական բնութեամբն։ Ոչ զոն մեռեալ, և ոչ կենդանի՝ ըստ բաժանողացն, այլ մի և նոյն անճառաւորութիւնն՝ և մի քան չարչարիւք, և մեռանէր մահկանացու մարմնովն՝ որ 'ի մէնջ, և կենդանի էր անմահ, և կենդանարար ածութեամբն՝ որ 'ի Հօրէ։ Որպէս

և

և Սուրբն Աթանաս ասէ՝ թէ, մաշկանացու մարմինն՝ ոչ վնասեաց զանմահ Աստուածութիւնն, քանզի՝ անախտ էր, այլ միայն մարմնաւորն. և ինքն անախտ՝ անմահին զօրութեամբն: Եւ յետ սակաւուց՝ ասէ թէ, մահ մարմնոյն եղև՝ համագոյակցին մաշկանացուացս:

Վասն որոյ՝ և մեք խոստովանիմք Աստուած և մարդ զՔրիստոս, ոչ բաժանելով սոսկական ասեմք զայս, մի լինել, զի նա ինքն է չարչարեալ, և ոչ չարչարեալ, Աստուածային բնութեամբն անփոփոխելի և անչարչարելի. իսկ մարմնովն չարչարեալ, և զմահ ճաշակեալ:

Յաղագս որոյ՝ մերոյքն ոչ՝ ասեն թէ՝ այլ ոմն է՝ որ չարչարեցաւ, և այլ ոմն՝ որ ոչ չարչարեցաւ:

Բայց՝ մի և այն որ է բան զբանն՝ որ չարչարեցաւ, և զմահ ընկալաւ մարմնովն, զի նոյն ինքն՝ անչարչարելի և անմահ որ բանն լինել մարմին չարչարելի կամեցաւ, զի չարչարանօք փրկեսցէ զմարդիկ: Քանզի՝ զոր ինչ մարդիկ զէնն չարչարիւր մարմին բանին՝ կայր ընդ նմին զօրովն բանն՝ յինքն մերձաւորէր, և լինէր յոյժ հրաշափառապէս իր: Զի ինքն էր՝ որ չարչարէր, և ինքն էր՝ որ ոչ չարչարիւր, չարչարէր չարչարելեաւքն, զի իւր ինքեան՝ չարչարեցին մարմինն. և ՚ի նմին չարչարելոցն՝ էր ինքն առանց չարչարանաց՝ անբաժանելի ՚ի չարչարելոյ մարմնոյն. զի Աստ զօրութիւն՝ անչարչարելի էր բնութեամբ, սակայն՝ ընդ չարչարելի մարմնոյն՝ անբաժանելի միացեալ էր անմարմինն, և մարմինն ունելով յինքեան՝ զանչարչարելի զբանն՝ ընդէր ոչ կարաց իւրոյ: Զայսոսիկ ասաց Աթանասիոս:

Նոյնպէս և մեք՝ անբաժանելի դաւանիմք զԱստուածութիւն յետ մահուն ՚ի մարմնոյն, և ՚ի մարդկեղէն հոգւոյն, և յոր ժամ՝ ՚ի խաչին էր, և ՚ի գերեզմանին՝ մարմնովն, Աստուածութիւն էր ընդ անձն հօր, և փառօք նորա լի էին երկինք և երկիր: Եւ հայր ընդ նմա՝ յերկիրս, ուր և ասաց, հայր իմ ընդ իս է, և ոչ եթող զիս միայն, զի ուր հայրն է՝ անդ է և Որդի և հոգին, և ուր Որդի է՝ անդ է հայր և հոգի, և ուր հոգի՝ անդ է և հայր և Որդի:

Որդ՝ իջեալ ՚ի գերեզմանն՝ մեռեալ մարմնովն և կենդանի Աստուածութեամբն, աւեր աւերումն դժոխոցն, և յարուցեալ

յե

յերիր աւուր՝ յարոյց ընդ ինքեան 'ի մեռելութենէ մեղաց՝ զհոգիս մարդկան հաւատացելոց, և եւս յայս՝ և մարմնոյ յարութեն՝ ընդհանրութեն իւրում՝ 'ի յերկրորդ գալստեանն։

Եւ յետ Խ աւուրց՝ վերացաւ յերկինս առ Հայր՝ նովին մարմնովն՝ յանդիման Առաքելոցն, և նստաւ ը աջմէ Մեծութեն Հօր 'ի բարձունս՝ ըստ Առաքելոյ, գալոց է նովին մարմնովս՝ որով համբարձաւ, դատել զկենդանիս և զմեռեալս՝ արդարութբ, և հատուցանել իւրաքանչիւր զգործս։

Եւ՝ որ յաղագս Սուրբ Երրորդութեն և մարդեղութեն ՔԻ այսէ մեր՝ ճշմարիտ խոստովանութիւն հաւատոյ, զոր համառօտ բանիւ եդաք առաջի։

Իսկ՝ որ ինչ միանգամ՝ վասն կարգաց Եկեղեցւոյ, և Տօնից և այլոց եւս հարցմանց՝ զորս ումանք 'ի ձերոց՝ այլ ընդ այլ կարծեօք՝ գործովք ծանուցին ձեզ մինչ, գրեսցուք և զայս՝ անսուտ բանիւ, զորս ունիմքն, և որոց հրաժարիմք։

Պարտալէք առաջին թէ, 'ի յունվարի 'ի Ե՝ տօնեմ վաղուն՝ աւետեաց, և յերեկոյին Ծննդեանն, և 'ի միւս վաղւոյն՝ որ է. Է՞րդ յունվար ամսոյ՝ մկրտութեն ՔԻ, և յայսցանէ՝ է ինչ ուղիղ, և է՝ որ արտաքոյ է ճշմարտութեն, և է պայմանի։

'Ի միում աւուր տօնել մեզ՝ զտօն Ծննդեանն ՔԻ և զմկրտութեն՝ 'ի Զ յունվարի, որպէս ընկալաք՝ յառաջին հարցն աւանդից. յայսմ՝ ուղիղ եմք գրեալքս։ Իսկ եթէ յունվար ամսոյ 'ի Ե՝ վաղիմն աւետեաց տօնեսջիք, այս չէ՝ լի է սուտութբ. քանզի՝ աւետեաց տօն՝ ըստ մարմնաւոր՝ ապրիլի ամսոյ է։ Իսկ՝ Ծննդեանն 'ի Զ յունվարի, երկոտասան աւուրբք յետոյ՝ քան զոր դուքն տօնէք. զի՞նչ հարկէր այդ՝ մեզ զերկուսն 'ի միասին տօնել անխորհրդարար։ Քանզի՝ Ծննդեանն և մկրտութեանն՝ 'ի միասին տօնելոյ՝ բազում ունիմք վկայութիւն։

Նախ զի՝ յառաջագոյն քան Եկեղեցիք՝ սկսեալ յառաքելոցն՝ այնպէս տօնէին, և յետոյ բաժանեցին ոմանք՝ վասն բեթլեհեմի և յորդանանու։ Քանզի՝ ոչ կարէին 'ի միում աւուր՝ յերկոսին ուխտսն կատարել զտօնն, հե-

ուի գոլով 'ի միմեանց, և փոքր փոքր աճմամբ՝ ընկալան և զայլ եկեղեցիք զնոյն։ Իսկ՝ հայաստանեայք՝ որպէս ընկալան 'ի Սրբոյն Գրիգորէ՝ անփոփոխ կալին 'ի նոյն։

Պարզեալ՝ զի և աւետարանիչն Ղուկաս վկայէ ասացեալ՝ ճշմարիտ լինել, գլուխ, ա. համր, 8։ Օր պատմէ 'ի տանի քահանայն՝ որ էր 'ի Թշրինի Ժ, և 'ի Սեպտեմբերի ԻԷ, մտանել 'ի Քահանայապետին զաքարիայ 'ի տաճարն, և արկանել խունկ, և տեսանել զանուն հրեշտակին, և լսել զաւետիս յղութեան ամլոյն, և կրել պապանձումն լեզուին՝ յոյժ հաւատալն, և ապա անէ թէ՝ երբև լցան աւուրք պաշտաման նորա, գնաց 'ի տուն իւր. և տուն նորա՝ ոչ էր յԵմ, այլ 'ի լեռնակողմն հրէաստանի, ուր զողջոյն ետ մարիամ՝ եղիսաբեթի. և աւուրք պաշտաման նորա էին՝ Է օր քահանայութեան տանն, և Է օր՝ տաղաւարահարացն, որ լինի երկոտասան օր։

Արդ՝ զերկուս տասն զայսոսիկ կոչէ աւետարանիչն՝ աւուրք պաշտաման՝ քահանայութեան զաքարիայ, զորս 'ի միասին տօնէին ըստ օրինացն, որ երբև կատարեցաւ, գնաց անէ 'ի տուն իւր, և 'ի Թշրինի Իզ, և Հոկտեմբերի Ժ, եղև յղութիւն եղիսաբեթի։

Արդ՝ որք 'ի մարտի ԻԵ՝ կատարեն զտօն աւետեաց Կուսին, զյղութիւն եղիսաբեթի 'ի Թշրինի Ժ, առեն՝ յառաջնումն աւուր պապանձման զաքարիայ, որոց ոչ վկայէ Աւետարանիչն Ղուկաս։

Իսկ՝ որք 'ի Է Յունվարի՝ տօնեն զտօն Ծննդեանն, և յետ երկոտասան աւուրց պաշտաման նորա՝ առեն զյղութիւն եղիսաբեթի՝ 'ի Թշրինի Իզ, ըստ վերադրեցելոյս, որում և վկայէ Աւետարանիչն։

Էր և երկրորդ վկայութիւն այսորիկ՝ ըստ նորին Աւետարանչին պատմութեան, այն զի՝ ասէ թէ, յետ էր ամսոց երեսնից՝ սկսել 'ի ծննդենէ պատի, և հարկ լինի՝ ըստ խմաստուն և աւելի ամսոց՝ 'ի նոյն թիւ ամսոց եկեալ՝ յորում և ծննդեան 'ի Յունվարի՝ հանդիպեալ, և մկրտութեան աւուր, յետ երեսնից ամաց, թէպէտ և պատկեր աւուրն՝ ոչ նմանապէս։ Որ և այլ իրս բազումս՝ առել փն տորին, այլ՝ ապացոյց յաստ է՝ խնամնոյդ, բայց եթէ այսպէս՝ և եթէ այն՝ 'ի փառս իւր կատարեսցի։

Ո. երգս Սրբոյ Ոսկանեանն՝ գրեալ էր ՚ի թղթի առ Թէ՝ ոչ առնեմք յեկեղեցին մեր. և այս ամբաստանութիւն ամենևին անհնար է ՚ի ճշմարտութէ, զի այնքան պատուի ՚ի մէնջ սրբանուէրն պատուէր յերկնաւորաց և յերկրաւորաց՝ մայրն Ք.Ն Մարիամ, մինչ զի՝ զբանս նորա՝ ոչ ՚ի յօր աւուրան ընդ երից մանկանցն, և ընդ մարգարէին դաւթի երգեմք բանից, այլ ՚ի կիւրակէս միայն, և ՚ի տօնս տէրունականս, որպէս և որք ՚ի ձեռաց տեղեակ են՝ եկեղեցական կարգաց մերոց՝ հաստատ առնեն զձեզ.

Դարձեալ և ՚ի թղթի առ գրեալ էր վասն մեր և այլ ոչ թէ՝ մի բնութիւն դաւանեմք բանին և մարմնոյն, յորում առօղեմար՝ ասեն ՚ի մէնջ ամբաստանեն, և այս յօդուածս բանից կարծանս պատասխանեմք, զաջ վասն ժամանա փութոյ՝ սակաւուք բառականացուք.

Ասեմք մի բնութիւն ՚ի Քս, ոչ շփոթմամբ ըստ Եւտիքեայ, այլ ըստ կիւրղի աղեքսանդրացւոյ, զոր ՚ի չորիս պարագայմանցն՝ ասէ ընդդէմ Նեստորի, եթէ մի է բնութիւն բանին մարմնացելոյ, որպէս և Հարքն ասացին. և ձայն կոչէ զԱթանասիոս, և որ յառաջ քան զնա. Եւ մեք՝ յաւանդութէ Սրբոյն՝ ասեմք զայս; և ոչ ըստ չարափառացն կարծեաց՝ շփոթութիւն, կամ յեղումն, կամ այլայլութիւն արկանելով ՚ի միաւորութիւնն Քի մի ասելով բնութիւն. Այլ փոխանակ մի անձնաւորութեան՝ զոր դաւանեմք ՚ի Քս, որ է ուղիղ, և խոստովանեալ ՚ի մէնջ, և մեք մի բնութիւն ասեմք զոյգ և նման, և ոչ [illegible] կարծեաց ատաջ. Եւ յայտ յայտնանի է, զի յորժամ բանիւ խօսիմք վասն նորին իրի՝ ոչ ՚ի մի միայն դաւանիմք, այլ՝ ըստ [illegible] յատկութիւն զուգանեմք, որպէս և չարաչարանայն և մահուան վերաստացեալքն յաղագս [illegible] Աթանասէ, այնպէս ասէ թէ Ըստ զոյգ բանին՝ անչարչարելի էր բնութիւն, սակայն՝ ընդ չարչարելի մարմնոյն՝ անբաժանելի միացեալ անմարմնն. և որք [illegible] Քանզի մի բնութիւն ոչ վասն [illegible] ասել ՚ի մէնջ, այլ յաղագս անբաժանելի և անձնամիաւորութեան բանին, և մարմնոյն.

Եւ

Նաեւ՝ յերկու բնութիւն ասելոյն՝ յորժամ ոչ վասն բաժանման լինելն ասացեալքն՝ բառ նեստորի, այլ՝ վասն զանշփոթութիւն ցուցանելոյ՝ ընդդէմ չարափառացն եւտիքեայ եւ ապողինարի, ոչ փախչիմք։

Այլ՝ զորօրինակ՝ հոգի եւ մարմին մարդոյ՝ են այլ եւ այլ բնութիւնք, վասնզի՝ մին երկնային է, մին երկրային. մին երեւելի, եւ մին աներեւոյթ. մին ժամանակեայ, եւ մին անմահ. սակայն՝ յետ միաւորութեն՝ մի բնութիւն ասի մարդն եւ ոչ երկու, եւ ոչ մի բնութիւն ասելովն՝ շփոթումն իմանի ՚ի մարդն, կամ հոգի միայն կարծել զնա, կամ մարմին միայն։ Այսպէս եւ Քն՝ թէպէտ եւ մի ասի բնութիւն, ոչ շփոթման աղագաւ են ասացեալք, այլ՝ վասն անճառ միաւորութեց՝ երկուց բնութեցն ընդ միմեանս, զի թէ այսպէս ոչ էր, հարկ էր ապա՝ ոչ երկու բնութիւն միայն, այլ՝ երիս բնութիւնս իմանալ ՚ի Քն, երկուս զմարդկայինս՝ հոգի եւ մարմին, եւ մի զածայինն։ Բայց միաւորութբն բարձան երկուութիւնք բաժանմանցն, ըստ Սրբոց Վարդապետացն ասելոյ։

Արդ՝ եթէ մի բնութիւն՝ վասն անքակտելի եւ անբաժանելի միաւորութեն ասի, եւ ոչ վասն շփոթման, եւ երկու բնութիւնն՝ վասն անշփոթ եւ անայլայլելին լինելոյ՝ եւ ոչ վասն բաժանման, երկաքանչիւրքն՝ ՚ի սահմանի են ուղղափառութեան։

Դարձեալ՝ գրեալ էր ՚ի գիրս, ՚ի բուսաբեր ձիթոյ՝ զոր շուշփոյ անուանեն՝ լինել միւռոնի մերոյ, եւ ոչ ՚ի ծառոց ձիթենեաց։ Ի՞նչ այս յերեւելի, եւ պատճառն ոչ այլ ինչ, այլ զի՝ ՚ի հայաստանեայց աշխարհն՝ ոչ են ձիթենիք վասն ցրտութեն օդոյն, հարկ եղեւ՝ զայն ինչ ձէթ՝ որ գտանէ յաշխարհն՝ ՚ի նիւթ առնուլ միւռոնի, եւ ոչ ինչ վնաս հագեոր՝ տեսանի յայտնել։ Զի թէ նիւթոյն էր զօրութի, զայն նիւթ միայն արժան էր խնդրել՝ յորում ածային ինչ ազդումն գոյր ՚ի նմա, այլ թէ Քահանայական օրհնութին եւ աղօթքն միացուցանեն ըստ նիւթ ձիթոյն՝ զածային շնորհն, ոչ ինչ է առաւելութիւն՝ կամ պակասութիւն, եթէ ՚ի պտղոյ ծառոց լիցէ ձէթն, եւ եթէ ՚ի բուսոյ։ Որպէս եւ

ար

արեանն ՔՆ նիւթ դինին, յորոյ և իցէ գունոյ՝ ընդունելի է, եթէ սեաւ, եթէ կարմիր, և եթէ սպիտակ։

Որ 'ի գիրս ասացեալ և վասն սրբոց պատկերաց թէ՝ ոչ ընդունին հայք ամենևին, և որ յայտնի է ճշմարտութիւնն՝ յայտնի ցուցանեմք։

'Ի հակառակութէ անտի՝ որ 'ի մէջ երկուց ազգացս է՝ բազում չարիս սերմանեաց սատանայ, որպէս առ ոմանս 'ի ազգէս ժողովրդոց մերոց՝ զպատկերաց սրբոց՝ զանընդունելութիւն, որք 'ի մէնջ դարուցն այնպիսիքն, նաև նորոյն 'ի վերայ դնեմք՝ որք յանդգնին հայհոյել։ Բայց մեք որք զառաջնորդականն ունիմք զաստուծան, ընդունիմք և երկրպագանեմք պատկերի անօրէնութեն փրկչին մերոյ. այլև՝ զամ սրբոց պատկերս՝ ըստ իւրաքանչիւր կարգի պատուեմք, զոր յեկեղեցիս մեր նկարեմք, և 'ի պատարագամատուցի հանդերձս, և պատուհասեալ ընդերանեմք զոչ ընդունողսն 'ի մերոցս՝ զաղէտսն և զախտաւորսն։

Գրեալ էր և զայս ինչ. թէ՝ զամ Խաչս բևեռեն, և այս՝ ոչ յիրաւի, քանզի՝ զորս 'ի միասար նիւթոյ են, որպէս զարծաթեղէնս և զոսկեղէնս, և զայլս՝ որք ոչ իւրեանց 'ի վերայ միմեանց են եդեալք, ոչ բևեռեմք։ Իսկ զփայտեղէնսն՝ զի յերկուց են՝ հարկ է երկաթեղէն բևեռօք այլն դնել, զի մի 'ի հողմոց, կամ յայլ ինչ պատճառէ՝ բաժանեալք 'ի միմեանց՝ անկցին. որ և նոյն իմն առաջին Խաչն՝ յորում ՔՍ բևեռեցաւ, խմանի երկուցն 'ի մէջ միմեանց գոլ, զի բաւական լիցի բառնալ զմարմինն, և ոչ քակտել։ Որդ՝ եթէ այլ խորհուրդ ինչ էր բևեռն, պարտ էր զամ Խաչս՝ որ յամ նիւթոց՝ բևեռել, և ոչ զփայտեղէնսն միայն, ուր երկիւղ է քակտելոյ և անկանելոյ։

Դարձեալ եթէ 'ի քարեղէն Խաչս՝ կամ յերկաթեղէնս՝ տեսցէ ոք բևեռս, որ ոչ 'ի յերկուց լինի մասանց՝ այլ 'ի միոյ, ծանիցէ զի այն՝ արուարձք ազնւոց են և հաւանականաց, և ոչ 'ի մէնջ հրամայեալ։

Դարձ

Պատմեալ վասն երից սրբազանութեանցն գրեալ էր, զի խաչեցար ասեմք ... և թէ մեք զսրբազանագործութիւն զայս՝ ՚ի դէմս Երրորդութեան երգեմք՝ որպէս և դաւանեմք և խորհին մաքրութիւն էր ասել թէ խաչեցար, այլ զի՞ առ մի անձնաւորութիւնն որդւոյ բարբառիմք զայսոսիկ, վասն այնորիկ՝ զմեծագոյն երախտիսն՝ որ ՚ի նմանէ առ մեզ եղեալ, ընծայեմք առաջի նորա, թէ Սա և Հայր և Հոգին, որ մարմնով խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ: Նա ընթեր նոյն և զմայր բանին Ս. Կ. բարեխօս և միջնորդ ունիմք առ միածին իւր, ասելով թէ՝ մատո՛ զաղաչանս մեր՝ որդւոյ քոյ, և ոչ մերոյ: Վասն որոյ՝ եթէ ՚ի դէմս Երրորդութեան ոք ասիցէ՝ որպէս դուք, և եթէ ՚ի դէմս որդւոյ միայն՝ որպէս մեք, երկոքեան՝ հաճոյք են նմ. յորժամ առանց հակառակութեան լինին ասացեալքն, այլ թէև՝ յայսմ վայրի՝ ՚ի դէմս որդւոյ ասեմք զսրբասացութիւնն, բայց ՚ի Ս. Պատարագին՝ առ երիս անձնաւորութիւնսն՝ զօրհնեալն երգեմք զերգս:

Նաև՝ այս է և անպատմանութիւն գրեալ էր զմէնջ թէ, ՚ի Սուրբ քառասնորդսն՝ զձէթ ... և ձուկն ձու շակեն ՚ի շաբաթ և ՚ի կիւրակէ:

Արդ՝ ցուցցուք ձեզ և զայսոսիկ ճշմարտութիւն Յաւաք ժամանակաւ՝ յառաջնորդէն առաքելոց՝ սովորութիւն ունէին իշխանքն Հայոց՝ յամ աւուր քառասնորդացն՝ ուտել ձէթ և ձուկն, և գինի ըմպել՝ ըստ ձերոց աշխարհաց, և ըստ Փռանկաց: Նաև՝ առաջնորդք ժամանակին՝ քարոզէին մեզ ՚ի բաց կալ յայնպիսի կերակրոյ՝ յաւուրս պահոց: ասելով՝ եթէ ձուկն առաւել է քան զկթեղէն կերակուրս, զի ձուկն՝ կատարեալ կենդանի է, և կիթն ոչ կենդանի, այլ ՚ի կերակրոց կենդանեաց մնացեալ: Վասն որոյ՝ թէ կամիցէք սրբութեամբ պահել ըստ կանոնացն Ս. Հ., ՚ի բաց կացէք՝ որպէս ՚ի կթոց, նոյնպէս և ՚ի ձկանէ, ապա թէ զայդ ոչ կամիցէք առնել, պահեսջիք զհինգ աւուր շաբաթուն սրբութեամբ, յամ պարարտ կերակրոց և ըմպելեաց, և ՚ի շաբաթու և ՚ի կիւրակէի՝ զայդ ինչ կերայք՝ յաղագս անժուժկալութեան ձերոյ՝ զձուկն և զկիթ: Օ ՚ի մէջ զձուկն միայն ուտելով՝ և

զկի

զկիթս ոչ կարծիցէ պահել, երբեւ պահոց կերակուր համարելով զձուկն, զի այս որովայնամոլից է, եւ ոչ պահողաց է սահման, որեւ ոչ յերկարեաց 'ի հայաստանեայսն, այլ յետ փոքր ժամանակի՝ բարձաւ վաղվաղակի 'ի միջոյ։ Եւ այժմ 'ի մերում ժամանակիս՝ բաց յիշխանաց եւ 'ի զինուորաց՝ յորոց ոմանք 'ի նոցանէ՝ ինքնակամ կամօք եւ ոչ կանոնական հրամանաւ, կամ 'ի մէնջ հրաման առեալ՝ մերձենան յաւուրս պահոց 'ի ձուկն՝ 'ի ձէթ, եւ 'ի գինի։

Բայց Եկեղեցական դասք ամենեքեան, եւ բազումք 'ի ժողովրդոց՝ ոչ միայն 'ի կթեղէն կերակրոց եւ 'ի ձկանց՝ 'ի բաց կան, որ ամենեւին անյիշելի է յաւուրս քառասնորդացն, այլ՝ յամ կերակրոց պարարտից, եւ յըմպելեաց գինւոյ։ Եւ թէ ոք անժուժկալութե սխալէ, եւ զղջացեալ խոստովանի, ծանրագոյն բեռն ապաշխարութեն 'ի վերայ դնեմք։

Գրեալ էր 'ի գիրս վասն մեր եւ այս ինչ, թէ գինեաւ միայն՝ առանց ջրոյ խառնման՝ մատուցանեն զՊատարագն. եւ յաղագս այսորիկ՝ բազում էին մեզ բանք՝ ասել 'ի վկայութէ գրոց, զոր վասն համառօտելոյ զբանս՝ աւելորդ-համարեցաք դնել զամ՝ բայց 'ի սակաւուց։

Առաջին՝ զի 'ի Լուսաւորչէն մերմէ՝ 'ի Սրբոյն Գրիգորէ ունիմք զայս աւանդութիւն, որպէս ընկալաւ նա՝ 'ի նախնեաց սրբոց հարցն, որ յառաջ քան զնա։

Դարձեալ՝ զի եւ Քն՝ որ մատոյց զինքն խորհրդեամբ Պատարագ 'ի վերնատանն, գինի միայն դրեալ է, զի էառ 'ի ձեռս եւ ասաց, այս է իմ արիւն, եւ անուն ջրոյ ոչ բնաւ յիշատակի, այլ եւ ասաց իսկ՝ յետ խորհրդոյն կատարման թէ՝ յայսմհետէ ոչ եւս արբից 'ի բերոյ որթոյ, եւ որթն զգինի եւ ոչ ջուր ծնանի, որպէս ասէ Յոհան Ոսկեբերանն՝ յաւետարանին մեկնութեն. իսկ եթէ՝ վասն ջրոյն եւ արեանն՝ որ ել 'ի կողէն, ասէք արկանել ջուր 'ի բաժակն, զայս դարձեալ՝ նոյն ինքն Յոհան Ոսկեբերան՝ 'ի նոյն բանի Աւետարանի մեկնութեն՝ որ ըստ Յոհաննու, զջուրն՝ 'ի խորհուրդ մկրտութեն մերոյ ասէ, եւ զարիւնն՝ 'ի սուրբ Պատարագն։

Նաեւ՝ այլք բազումք 'ի Վարդապետաց Եկեղեցւոյ՝ զոյն ասացին, եւ մեք նոցին բանիւքն եւ աւանդութեամբն

գոլով հեռաւորք. վասն այնորիկ՝ ոչ արկանէին զջուր, այլ անպատրաստ զինեալք՝ զանաշխատական արուեստն Քրիստոսի՝ կատարեալք պատերազմօք։

Այսպէս եկեալ այսպէս՝ եւ եկեալ այնպէս՝ միայն մնացեալ ձողելով պարտէ տղաաւաճառել՝ Ընդ այսր փարհեր [illegible]. եւ անձն նոյնն՝ ՚ի հանդէս եղ կատարեցին։ Սակ՝ անմաքրութիւն եւ պիղծ ծլին՝ Թէ անպարտ բարձրական [illegible], եւ եկեալ [illegible] հարկանելով, բարեկացուցանէ զմեղաւոր Պատմութիւն՝ զնմ, փոխանակ հաշտեցուցանելոյ։

Դարձեալ ես ՚ի գիրս եւ [illegible], Թէ զնա՝ խաչս հարեալ՝ յետ [illegible] նորա. եւ զՀնազանդ, եւ այս՝ ոչ ՚ի գրենոց եղեալ է յանձնս մեր, եւ ոչ ՚ի [illegible], զի միանգամ է զՀնութիւն խաչին, եւ ոչ բազմապատիկ՝ այլ զրեալս էր։

Եւ հնութիւն խաչին՝ ոչ է ՚ի մեզ, այլ յառաջին հայրն մերոյ, զոր նախնիքն մեր՝ Թադէոսեան [illegible], դրպէս եւ այժմ զառանձինս յաւիտեան [illegible] գրով՝ ՚ի հին գիրս, ոչ առաւել եւ ոչ նուազ՝ քան զմերս։

Զի գրեալ է լուսաւոր զմիրոյ խաչին՝ նախ ջրով, եւ ապա զինեալ ՚ի խորհուրդ երկուց կտակացն՝ որ ՚ի կողիցն քրիստոսի ելին, եւ առեալ սուրբ [illegible], եւ ընթերցեալ բանս մարգարէականս, եւ առաքելականս, եւ աւետարանական խորհրդականս, եւ յետ այնորիկ [illegible] քահանայականս, խնդրելով յայս այսմ խաչին զխորհուրդ, եւ զզօրութիւն այնմ խաչին՝ յորոյ մէջ [illegible] ընծայեցաւ. որպէս զինս հայածեցաք, եւ զախտ՝ ՚ի փառաց իւրոց արգելաք. եւ զքաւութիւն՝ որ վասն մեղաց մերոց եղանին ՚ի մեզ, [illegible] զարեցուցաք։ Եւ թէ ընակեալ ՚ի սմա մեզ՝ որպէս յառաջ ջին խաչն [illegible], եւ արդ զմա՝ լինել [illegible], եւ [illegible] զէն զօրութեան. զի երկրպագութիւն մեր՝ առաջի սորա՝ ոչ նիւթեղէն արարածոյ, այլ՝ քեզ միայնոյ անեղութեանդ Աստուածութեանդ մատուցաք, եւ որ այլ այսպիսի բազում պատգամաց բանիւ։

Եւ արդ առեալ զդրոշմեալ խաչն [illegible] կենդանութեան յարութեան, եւ երկրպագանեմք նմա, միանգամ միայն դրոշմեալ, եւ ոչ բազում անգամ՝ այլ եւ զրեալս էր։

Նցայ

Ցուցանէ մեզ գրեալքս և դոյս իսկ, թէ՝ բնաւք յամենայն 'ի նոյանէ առեալ թէ՝ Քո մարմին համագոյակից մեզ՝ Թանձր՝ մարմնաւորեալ՝ չարչարելի՝ երկրային՝ ապականացու, և եղանելի՝ ոչ էառ 'ի Կուսէն, այլ՝ անապական՝ անօսր՝ անչարչարելի՝ և աներևելի, և թէ՝ երևեցաւ մարդ՝ որպէս կամեցաւ, եկեր և էարբ՝ իբրև առ Աբրահամու:

Ուր պարզեցէք բանքս պատասխանի ունին կատարելագոյն՝ առաջին գրեալքդ առ 'ի մէնջ բանք: Այսպէս ասացաք փոքր ինչ, և առ այժմ դարձեալ:

Ընդէր զՔո Աստուած և մարդ՝ ըստ մարդկութեան համագոյակից մեզ, և ըստ Աստուածութեան՝ Հօր և Հոգւոյն. և նոյն ինքն՝ մի Աստուածութիւն՝ և մարմնաւորեալ՝ ըստ Աստուածային բնութեան, երկնային՝ անյեղ՝ անչարչարելի՝ և անմահ: Իսկ՝ ըստ մարդկային բնութեան, երկրաւոր՝ Թանձր՝ չարչարելի, և մահկանացու: Այսպէս ոչ առն և ոչ՝ բաժանեալ կարծեցեալն՝ որ առանձին առեալ բանին զմարմինն: Կանգի՝ չէ միաւորութիւն՝ բարձեալ երկուութիւնքն: Որպէս և բարձրագոյնքն և Աստուած ինքն՝ է երբեմն՝ զի մարմնոյն առին 'ի կերպ՝ համագոյակցին մերոյ ընդունել, և զանփոփոխելին անանձնացն իւր մերոյ՝ յառաջ Աստուածութեան գին Արարչին առեալ, յայտնի երեւի և այսօր, նոյն և յանփոփոխ Բանին զանփոփոխելի Աստուածութեան ո՛ր ընդ Հօր է՝ առնէ, և այսօր՝ զմարդկութիւնն. և նոյն և յանփոփոխ զանփոփոխ թագաւորութիւնն:

Որ՝ թէ բաժանումն գիտէր Սոփեստեան՝ 'ի մարդկութիւնն և յԱստուածութիւնն, պարտէր ասել թէ՝ բանն Աստուած երբէք, և չէ քան՝ այսօր, բայց՝ ոչ երբէք ցուցին բաժանումն երկուսին՝ յետ միաւորութեան, ոչ Սոփեստեալքն, և ոչ Աստուածաբանք Կիւրեղեան, որպէս և Յովհաննէս Նեռա-ւանիչն՝ զմարմինն շօշափելով՝ զբանն առաց շօշափել, ձեռք մեր ասէ շօշափեցին 'ի վերայ բանին կենաց:

Դարձեալ՝ և զմարմնոյն յատուկն՝ է զի Աստուածութեան տան, որպէս աստ խաչեալ, և արիւն Աստուծոյ, և չարչարանս, և մահս, ըստ Երանելոյն Գրիգորի, և այլոց սրբոց. և դարձեալ զինչ այլ եթէ ոչ՝ զանձնաւոր միաւորութիւնն, և զանբաժանելին գոլ նշանակէ:....

Վասն որոյ՝ և մեք խոստովանիմք զմարմինն՝ համա-գոյակից մեզ, զի 'ի զանգուածոյն է Ադամայ, և թանձր և ոչ առ աչս երևեալ՝ ձև միայն մարմնոյ, այն Աբրահամու երևեցաւ. և այս՝ ոչ միայն յառաջ քան զյարութիւնն, այլև՝ յետ յարութեան, որպէս և ինքն խակ ասաց, շօշափե-ցէք զիս և տեսէք, զի ես նոյն եմ, զի ոգի՝ մարմին և ոս-կերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք զի ունիմ։ Թէպէտ և Ծայրին զօրութեանն՝ յորժամ կամէր՝ թեթևացուցա-նէր զմարմինն, որպէս գնալոյն 'ի վերայ ծովուն, և ելանե-լոյն 'ի կնքեալ գերեզմանէն, և դրացն փակելոց մտանե-լոյն առ աշակերտսն։ Զի ոչ թէ՝ ինքն բնութեան օրինաց ծառայէր՝ որպէս մեք, այլ օրէնք բնութեան նմա ծառայէին՝ որպէս արարչի, ըստ որում՝ 'ի կուսական ծննդեանն՝ և յայ-լոց գերագունից սքանչելեացն՝ է իմանալ։

Ոչ թէ ոչ էր թանձր մարմինն, 'ի Խաչին զո՞ բևեռե-ցին, կամ որպէս զմեռեալ՝ 'ի գերեզմանի եդին, և Թովմաս յետ յարութեան՝ զո՞վ շօշափեր։ Ոչ թէ ոչ էր չարչարելի, զի՞րդ խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեր զհոգին։ Սակայն՝ կամաւ կրէր զամենայնն, և իշխանութեամբ և ոչ ա-կամայ և ակարութեամբ՝ ըստ իւր ինքեան ասելոյ, իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ, և իշխանութիւն ունիմ առնուլ զնա։

Իսկ՝ ապականացու ասել զմարմինն, եթէ յաղագս կամաւոր կրիցն՝ զոր առնոյր, քաղցոյն և ծարաւոյն, և աշխա-տութեանն, և արեանն հեղլոյն 'ի վերայ Խաչին՝ որով կենդա-նացոյց, խոստովանիմք և մեք զայս. ապա եթէ վասն ակա-մայ և անպարտելի կրից՝ ապականացու ոք ասիցէ զնա, այս-ինքն՝ կերակրոյ և ըմպելեաց՝ պէտսարար հոսմանց, զայս ոչ հաւանիմք։ Քանզի՝ ապականութեան՝ մեղաց է ծնունդ, և որ մեղս ոչ արար՝ ոչ տիրեաց նմա և ապականութիւն այսպիսի։

Դարձեալ՝ զի մնայր 'ի գիրս՝ եթէ կերաւ՝ ոչ ակամայ, այլ կամաւոր կրեաց, և այս կիրք ապականութեան՝ ոչ կամաւոր, այլ ակամայ՝. և բնութեան ներգործել 'ի բնութիւնս. և որ զայս ասէ՝ յայտ առնէ թէ՝ ոչ կիրքն նմա, այլ ինքն՝ կրիցն ծառայէր։ և թէ այսպիսում ապականելի կրից հնազանդեր ակամայ, յայտ է թէ և մեղաց՝ որ հայրն է ապականութեան,

'ի

՚ի ներքոյ անկեալ էր, զոր մի՛ լիցի իմանալ կամ՝ ասել՝ ուղիղ հաւատացելոց։

Իսկ՝ թէ առ ի հաստատութիւն մարդկութեան՝ ոք ասիցէ զայս՝ լինել առ նմա, բաւական են յայտնի կիրքն, և անանկանելիքն՝ որ գրեալքն են հաւատարիմ ասել՝ թէ ճշմարտապէս մարդ եղև, և անգրելոյն ոչ կարօտանայ, և վատթարագունից, այն՝ որ ճշմարիտ ած խոստովանի զնա։

Գրեալ էր վերստին զմէնջ թէ, վասն այնորիկ ասեն մի բնութիւն Քի, որպէս թէ՝ ամենևին ընկղմեցաւ մարդկութիւնն յածութիւն անդր, իբր օրինակի՝ զի կաթիլ մի քացախոյ և մեղր՝ ՚ի ծով անկեալ աներևութանայ, և այսմ՝ նմանի՝ առաջինն՝ որ ՚ի մէնջ բանք, ունին զպատասխանի։ Այն՝ զոր գրեցաք թէ ՚ի միաւորութեան՝ մարդկային թանձր և յօդական բնութիւնս՝ ոչ փոխեցաւ յանյօդ և պարզական բնութիւնն Այ, և ոչ իւրն կորոյս թանձրութիւն, և ոչ պարզ և անմարմնական բնութիւնն Այ խառնելով ընդ բնութեան մարմնոյ՝ փոխեցաւ, կամ այլայլեցաւ՝ յիւրն յաւէտ պարզութենէ։ Քանզի՝ քացախ և մեղր՝ այլայլին և ապականին անկեալք ՚ի ծով, որպէս ջուր և գինի։ Ոչ այսպէս և միաւորութեան եղանակ՝ Ածութե և մարդկութեան, զի ոչ որպէս՝ մարմին գոլով, յերաշի ապականելն խառնելոցն ՚ի միմեանս։ Իսկ մարմին և անմարմին՝ խառնին և միանան անձուաբար, և ոչ շփոթին ՚ի միմեանց, կամ՝ այլայլին, որպէս մարդկային հոգի և մարմին։ Եւ թէ արարած բնութիւնս այսքան, քանի՞ ևս է իմանալ՝ առաւել հրաշափառագոյն՝ զարարչական բնութեան միաւորութիւն ընդ արարածոյս։

Ասասցուք և փոքր ինչ՝ վասն առաջաւորացն՝ ՚ի մէնջ մանուանել պահոց, զոր հայհոյէք ադխոսաբար, սարգսի ուրուցն ասելով կախարդի, էշ և սկունդ ունողի, ՚ի յապրս տանելոցն ՚ի հաւատոյս մերոյ՝ առասպելաբանելով ՚ի զանազան իրս՝ վասն սորին, և պատմելով ստայօդ բանիւ՝ առ ջի ձեր։ Բայց առ մեզ՝ այսպիսում սարգսի յիշատակ՝ անգոյ է առաւել քան զերզերուծաքաղ անուանեալ, զի նա

թէ

թէև գոյութիւն ոչ ունի՝ անուճան պատահեցաւ, իսկ՝ սարգիսս այս՝ ոչ գոյութիւն ունի յազգս մեր, և ոչ անուն։ Զոր թէ է որ ուրեք՝ թէպէտ և մեզ անյայտ է, նզովէ զնա Կաթուղիկէ Եկեղեցի, և զհէշ նորա, և զսկուեդ, և զփխտօղ նորա, և զընդունօղ, զի զանուն նր՛ չէ ոք լուեալ յազգս մեր, բաց ՚ի Հոռոմոց, որ ասեն զրպարտելով զմեզ։

Նայլ մեք վկայութեամբ այդ՝ յայտնապէս գրեսցուք զձեր մոլորութիւնն՝ վասն սորին լրոյ, զի միոք ագիտութեամբ հայհոյիցէ, և մեղս գործիցէ անձին իւրոյ։

Արդ՝ առաջաւորաց ասի սա, վասնզի՝ առաջին պահք է հայաստանեայց, և պատճառն է այս ինչ։

Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր՝ յորժամ ել ՚ի վիրապէն, և ժողովեցան առաջի նորա՝ Թագաւորն Հայոց Տրդատիոս պատուհասեալ յԱյ՝ ՚ի կերպարանս վարազի եղեալ, և իշխանքն ամ՛ և զօրքն պատահարեալք, եւ ամենեցուն առ հասարակ պահս՝ Ե օրեայ անսուաղութե, զի մի ինչ ճաշակեսցեն, որպէս նինուէացիքն, որով եղև բժշկութի նոցա՝ ՚ի ձեռն նորա. և զայս պահս՝ որ վասն այսր պատճառի՝ յառաջագոյն եդաւ ՚ի Սրբոյն Գրիգորէ՝ նոյն ինքն Լուսաւորիչն աւանդեաց յեկեղեցիս հայաստանեայց՝ զնոյն պահել վերստին յամ՛ ամի շրջագայութե, որպէսզի՝ մի մոռասցին երախտիքն այ՝ եղեալ առ նոսա։ Եւ պատշաճ համարեցան խառնել զպահս զայս՝ որով ընկալան հայք զփրկութիւն, ընդ պահոյն Նինուէացւոց, որով նոքա ազատեցան ՚ի սպառնալեաց մահուանէն, զայն և պահեն մինչև ցայժմ՝ ազգ ասորոց և եգիպտացւոց։

Իսկ զի՝ սուրբ սա և յանուն Սրբոյն Սարգսի, մի վասն համանունութե գայթակղեսցի ոք։ Քանզի՝ այս Սարգիսս՝ որոյ տօնս է, իշխան էր բարեպաշտօն՝ ՚ի կապադովկիա, յաւուրս մեծին Կոստանդիանոսի, և որդւոյ նորա։ Իսկ՝ յորժամ Թագաւորեաց ամբարիշտն յուլիանոս, հալածեալ ՚ի նմանէ գնաց ՚ի պարս՝ առ շապուհ արքայ, և անդ բազում ՚ի զօրացն՝ դարձոյց ՚ի քրիստոնէութի, և ընկալաւ զվճիռ մարտիրոսութե՝ հանդերձ որդւովն իւրով՝ ՚ի նոյն իսկ արքայէն պարսից շապհոյ։ Քանզի՝ և օր վախճանին՝ պատահեցաւ լինել ՚ի յունվարի ամսոյ երեսուն, վասն այնորիկ՝

հաս

հաստատեսցին տօնել զյիշատակ նորա՝ յաւուր շաբաթուն, որ յետ պահոց առաջաւորին, որպէս և զՍրբոյն Թէոդորոսի՝ զկնի առաջին շաբաթուն պահոց քառասնորդացն՝ տօնեն ամ Եկեղեցիք։ Եւ այլ ասացեալ՝ այս է պատճառ պահելոյ մեր՝ զայս պահս՝ անուանեալ առաջաւորք։

Արդ՝ ըստ խնդրոյ ծառայութեան խոհեմագունից անձին՝ ոյդ պատուական գլխոյ, և ՚ի մանկական հասակէ՝ ունօղ զիմաստութիւն ծերոց՝ որպէս սողոմոն և զդանիէլ, երդաք առաջի պատուականութեան ձերոյ՝ համառօտ բանիւ, զեկեղեցւոյ հայաստանեայց՝ զճշմարիտ դաւանութիւն։

Եւ եթէ՝ յաղագս մարդկան հաճոյից, կամ երկիւղի՝ և պատկառանաց ազդաւ՝ ծածկեցաք ՚ի մէնջ դաւանութեանց հաւատոյ, և ոչ գրեցաք, կամ եթէ՝ աւելի ինչ գրեցաք՝ զոր ոչ ունիմք, որդէսզի՝ ընդունելի լինիմք առ ՚ի ձէնջ, ընդ անհաւատիցն և հերձուածողացն՝ ընկալցուք զդատաստան՝ առաջի ատենին Ք. Յ. Փրկչին՝ հաւատածածկեալ, կամ կեղծաւորեալ; ոչ է հեռի յանհաւատութենէ։ Եւ որ ոք յետ զայսպիսի բանից ՚ի մէնջ՝ կասկածեալ դարձեալ ՚ի մեզ՝ ոչ հաւատալով առաջելոցս, ինքն տայցէ պատասխանի Քի՝ յաւուր դատաստանի նորա, իբրև զպարսաւող անպատճառ նոցին։ Իսկ այն՝ զոր միանգամ լուէ և հաւատայ, և ոչ դատի՝ որպէս ասաց Քննօղն սրտից, է ճշմարիտ հաւատացելոյն՝ ընկալցի վարձս բարիս ՚ի Քէ Այ մերմէ, որում փառք և զօրութիւն՝ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Զայս ընկալեալ իմաստուն առնն, և օտարաբեր ընծայ իւր պատուելոյ զերանելին; և առաքեաց խաղաղութեամբ՝ ՚ի դղեակն լամբրօնի՝ հանդերձ զերապայծառ իշխանին օծնիւ, որ եկեալ մնայր ժամանակս ինչ, և վերըստին դարձ առնէր ՚ի Հայրապետական Աթոռն՝ առ նախապատիւ եղբայրն։

Իսկ՝ դէպքն՝ լինել ամի իշխանութեան իւրոյ, դարձ արարեալ ՚ի Թագաւորականն. քաղաքն Կոստանդնուպօլիս, տարեալ ցուցանէր միանի հաւատոյ հայաստանեայց՝ բարեպաշտ արքային, որոյ անուն էր Մանուէլ, և Հայրապե-

տին

ռին իւրեանց, հանդերձ ամ կղերիկոսօք՝ մեծի Նիկեղեցւոյն։ Աքանչացաւ, հիացաւ արքայն տեսեալ զզօրութիւն խնամոցին՝ որ պարունակեալ էր 'ի բանսն, հոմեալ հաւանեցաւ և ընդ ուղղադաւան խոստովանութիւնն. և վաղվաղակի՝ զայր ոմն 'ի նորքինեաց պաղատանն՝ Թագաւորական հրամանաւ առաքէ 'ի Խնդիր՝ Սրբոյ Նիկողոսին, դրեալ թուղթ առ նախապատիւ եղբայրն Տէր Գրիգորիս Կաթողիկոս՝ յաղագս այսր իրաց, այսպէս օրինակաւ։

Թուղթ Ռոմէին՝ Թագաւորին Հոռոմոց Մանուէլի առ Սրբազան Կաթողիկոսն Հայոց՝ Տէր Գրիգորիս



Մանուէլ ծիրանածնունդ արքայ՝ կայսր և բարձր միշտ, օգոստոս Ինքնակալ Հոռոմոց կոմնենոս, և Բէլայ՝ հաւատարիմ Թագաւոր։ Ի Ա շնորհիւ նորին՝ պատուական և Սրբազան Կաթողիկոսին Հայոց՝ Տէր Գրիգորիս, ողջոյն սիրոյ առաքեմք։

Յայտ է ամենեցուն՝ որք 'ի ձեռն Աստուծոյ մկրտութեան զՔրիստոս զգեցեալ են, լինել անթերի զքոկանդակ արդարութիւն, և նախ քան զամ՝ խնամ տանել՝ որ մերձ են առ իւր հաւատոյ, որպէսզի միաւորեալք 'ի քրիստոնէական լրումն՝ մի հօտ լինիցին ամ քրիստոնեայք, և 'ի միոյ հովուապետէ առաջնորդին՝ որ վասն մեր մարդացաւ տէրն, և միով գաւազանաւ հաճոյ հովուին 'ի միասին, և 'ի միում դալարաւոր վայրի ուղղափառութեան բանից, և 'ի նոյն ջրոյ՝ առողջ վարդապետութեան կերակրեսցին և արբցեն, և 'ի մի փարախ՝ ուղղափառ Եկեղեցւոյ տապանակեսցին։ Զոր առաւել և մանաւանդ՝ Ընդ պահանջէ յիմում թագաւորութեանս. Զի քան յաշխարհական Ազգաց՝ բազմապատիկ հոգոյ՝ այսմ մանաւանդ հոգ տանել Ազգաց հաւատացելոց։ Զի որքան կարողութիւն է՝ փոյթ ունել և ջան՝ յաղագս ուղղութեան ամ քրիստոնէից։ Այլ ինչ նուազ և ձեզ՝ պատշաճ իցէ Հայաստանեայցդ, և մանաւանդ՝ որք ամենայն օրինաւոր ընթերցման պարապեալ էք. և հոգևորական բանից հարցն վարդապետութեան՝ հմուտք, և սրբոց գրոց՝ անհատանելի մարդ

Թե

թեթեւացեալ մարք, սրաթափ մտաւորէն եղեալ աշխատասէրք 'ի միասին, և զբարեացն առնուլ 'ի հաւատարէն դցօղ պտղեցկութեն։ Զոր ծանեաւ Թագաւորութիւնս իմ, 'ի տեսեցեալ փեսայէն իմմէ՝ Պրօտօստրատօրէն։

Եւ զգամամ՝ զոր 'ի նմանէ և 'ի ձէնջ՝ յաղագս միաբանութեն մեր և ձեր՝ շարժեցաւ 'ի միջի ձերում, ընկալաւ Թագաւորութիւնս իմ՝ գրով տուեալ առ 'ի ձէնջ։ Այս առնեմք ձեզ յաղագս, խորհել և այց առնել Թագաւորութեն մերոյ՝ յաղագս քրիստոնէից՝ Հայոց հաւատոյ։ Զոր և 'ի միտ առեալ զեղեալ բանս՝ 'ի գիրս բարեպաշտութեն ձերոյ՝ որ Թարգմանեալ ցուցաւ, ուրախութիւն եղև ինձ և մեզ։

Արդ որոյ՝ խորհի Թագաւորութիւնս մեր՝ իմ լինել միջնորդ միաբանութեն՝ բաժանման ձերոյ։ Քանզի՝ զպատուականութիւն ձեր, և զմծաւէր մտադրութիւն, և զբարւոք առաջնորդութիւն՝ ծանեայ 'ի ձեռն այսր գրոյ։

Եւ արդ՝ խորհուրդ առեալ ձեր՝ արագ առաքել առ Թագաւորութիւնս մեր՝ հանդերձ ամ զգուշութբ և պատրաստութբ՝ զբանաւոր եղբայրդ քո, որ բանիւ զարդարեալ է; և յիմաստութիւն սեպհականեալ։ Զի ածցի 'ի Թագաւորական քաղաքս առ Արքայական Պատրիարքս, և Սուրբ և Ընդհանուր ժողովս, մերձ գոլ և Թագաւորութեանս իմոյ, որպէս զի՝ գործք բարւոք՝ իրաւամբք ըստ Այ՝ անօրինեսցի։ Եւ եթէ հնար լինի՝ բարձցի պատճառ ինչ դուլնութեայ՝ որ 'ի միջի մերում, և ոչ համարեսցի մէմ գայթակղութեն և քար գլորման Քն, այլ գլուխ անկեան՝ ճշմարիտ վէմն մեր՝ որ 'ի միասին յօղեալ միաբարէ զմեզ, և խաղաղսի հաստատութեն, և հիմն անսասանելի՝ որ առ նա՝ զհաւատս պահեցուք անդրդուելի, յոր հաւատացաքն և բժշկեցաք։ Եւ դուք՝ այսպիսի բարութեց՝ մեծագոյն պատճառ է՝ բազմապատիկ զվարձս շտեմարանէք ։

Արդ որոյ՝ և Թագաւորութիւնս իմ՝ առաքեաց առ ձերդ պատուականութեն՝ զպատուաւոր պալատիս զսիմքատ, յաղագս եկաւորելոյ եղբօրն քո, որում և հրամայեցաւ պատմել ձեզ՝ զամ բանս զայս, կարօղէք հաւատալ առ 'ի դմանէ ասացելոյն։ Ողջ լերուք։ Գրեցաւ յԱմսեանն Սեպտեմբերի՝ յինդիքտիոնին 'ի ԺԵ։ Իսկ

Իսկ՝ առն առաքելոյ փութանակի անցեալ զքաղաքաւն գաւառօք՝ գայր՝ հասանէր յաշխարհն միջագետաց՝ 'ի Հայրապետական Աթոռն՝ զոր 'ի սկզբանն նշանակեցաք։

Եւ գտանէր վախճանեալ յայնմ ամի՝ զԱթուղկան Տէր Գրիգորիս 'ի վեցհարիւր տասն և չորս Թուականին Հայոց։

Եւ բոլոր ազգիս ընտրութք՝ յԱջորդ յԱթոռն կարգեալ՝ զարժանաւոր եղբայրն նորին՝ զՏէր Ներսէս։

Մատուցանէր ապա՝ զնամակն արքայական՝ Նորապսակ Հայրապետին, զոր առ եղբայրն նորին՝ գրեալ էր։

Պատմէր բանիւ և զփափաք բարեպաշտ Թագաւորին՝ յաղագս Եկեղեցւոյ խաղաղութեն։

Իսկ նա՝ ունկն մատուցեալ լսէր զամ քաղցրութք, և մտ դնէր բանիցն զօրութեն, և զի՝ անհնարին էր յայնժամ՝ զխնդիր Թագաւորին կատարել, այսինքն՝ զիւրն երթալ 'ի Թագաւորական քաղաքն՝ յաղագս ծանրաբեռն լինելոյն Եկեղեցական հոգւոյք, պատասխանի գրէր Թագաւորին՝ օրինակ զայս, վերստին երկրորդելով զգաւանութի հաւատոյ՝ 'ի խնդրոյ Արքային Էմանուելի։

Պատասխանի Առաջին Թղթոյն՝ Թագաւորին Հոռոմոց Մանուէլի, Գրեալ Ներսէսի Կաթողիկոսին Հայոց։

Թագապսակեալ՝ ինքնակալ՝ ծիրանածին, և օգոստափառ Սուրբ Թագաւորի, երկնաւորին՝ յերկրի անուանակրի և աթոռակալի, գիր պատուական հրամանի՝ որ առ Հայրն մեր՝ ըստ հոգւոյ, և եղբայրն՝ ըստ մարմնոյ՝ Գրիգորիս Կաթողիկոս, եհաս առ մեր նուաստութիւնս, 'ի փոխանակ հօրյն՝ եղեալ որդիս։

Վասնզի՝ զնա 'ի զգայականացս յիմանալիսն կանխագոյն երկնաւորին՝ վերակոչեաց հրամանն արքային։ Որբս զմեզ՝ 'ի հօրն բարւոյ խրատու և խնամոյ՝ 'ի մէջ ծովու աշխարհի, և շուրջ եղելոյ օձից և կարճաց՝ թողեալ, յորոց

և

և տրտմութիւն թմբրեալք յոգի՛ ներքնովք և արտաքնովք. հնոյն և նորոցս պատճառաւ, զարթեաք որպէս 'ի քնոյ՝ զուարթարարս բանիւք՝ որ 'ի Սուրբ Թագաւորութենէդ։ Սրով պատառեցաւ քուրձն մեր՝ առ 'ի մէնջ, և զգեցոյց զուրախութիւն՝ ըստ գոհաբանութեան մարգարէին՝ որ յառաջագոյն։ Զանզի՝ ծանուցց մեզ զօրութիւն բանիւ՝ ոչ միայն անուանակցութեան և աթոռակալութեան, այլև՝ գործակցութեան Ճշմարտին կենդանուէլի արժանաւորել մեզ, այնմ՝ որ հարիւրոյն ոչխարաց և դրամոյն տասանց, էջ 'ի խնդիր նմանողութեանցն լրման։ Եւ զմիջնորմն ցանկոյն քակեաց և արար զերկոսեանն մի՝ արեամբ Խաչին իւրոյ։ Ըստ այսմ՝ և դուք՝ հանդերձեալ էք զանուանակցութիւնս և զաթոռակալութիւնս, ոչ միայն օրինակաւ կոչել, այլև՝ արդեամբք և ճշմարտութեամբ։

Զանզի՝ զցանկ օրինացն՝ զոր խրամատեաց Թշնամին, և զուռոն հաւատոյ՝ զոր քանդեաց կինճն վայրենի՝ 'ի ճշմարիտ որթոյն, փութալ խրամակարկատ լինել, և առ նոյն պատուաստել վերստին։

Եւ այսմ բարւոյ գործակից լինիլ՝ զմեր տկարութիւն հրամայեալ էք եղբօրն իմոյ՝ տալեւ 'ի Սուրբ Թագաւորութիւնդ, որպէսզի՝ զերբեմն աւանդեալն գրով՝ բան հաւատոյ դաւանութեան ինչ, 'ի խնդրոյ Քսասէր ոգւոյ, և արժանաւոր Սուրբ Թագաւորութեանդ փեսայի Պրոտոստրատորին, և հանձից եղեալ բարեպաշտութեան ձեռոյ, վերստին լուիցէք՝ կենդանի ձայնիւ՝ 'ի լուծումն տարակուսութեան պատճառի՝ որ 'ի սատանայէ և 'ի նորին գործակցաց, և 'ի հաստատութիւն սիրոյն՝ որ մին և միածայնեաց. յորմէ և միաւորութիւն Եկեղեցւոյ, և խաղաղութիւն մանկանց նոր սիոնի։ Յորոց միաբանապէս 'ի մի բերան՝ փառաւոր լինիլ համագոյ Երրորդութեան և մի Տէրութեան, փոխանակ՝ որ մինչև ցայժմ հայհոյութեանցն, յերկոցունց կողմանցն՝ սուրբ հաւատոյ միմեանց և աւանդութեանց։ Եւ մեր յօժարութիւն ընթացից առ այսուիկ այսքան՝ մինչզի՝ ոչ կենդանութիւն միայն՝ թէպէտ և տկարութիւն զգածեալ եմք, այլև՝ 'ի դերեզմանէ թէ էր հնար յառնել, և գալ՝ ըստ Ղազարու, որպէս և նա՝ յԱծային ձայնին կոչումն։

Բայց քանզի ճարտարապետն բնութեան՝ զախին ճըշմարտութեան՝ որ յայսր խաբուսիկ վերայ հաստատեալ էր՝ սասանեցոյց, և փոխանակ՝ զմերս հաստատեալ անարժանութ. արգելած յայժմուս՝ այսու պատճառաւ յորձակուտն կամաց յօժարութիւն, զի մի գուցէ՝ որ 'ի մէջ ապաստանուկ ջուրց անհաւատութեան՝ հաստատեալ կցցէս ընկղմեսցի 'ի զանազան ալեացս խռովութեանց՝ 'ի վերայ յարուցելոց :

Եւ թէ՝ և այս ոչ պատճառ խափանման պատահեալ էր, զի՞արդ կաթիլ մի գիտուն՝ հնար էր առ համատարած ծով իմաստութեան՝ համարձակել մերձենալ 'ի հարցումն և 'ի պատասխանիս, յորմէ վտակայ առոգանին՝ որ ընդ արեգակամբս՝ տունկք իմանալի դրախտին այ : Քանզի՝ ո՞ւր մեր վարժարանք՝ 'ի թագաւորական պատրաստեալ հրամանայն, և կամ յայս փառս և պարգևաց՝ յառաջացելոցն յիմաստս, որ մանաւանդ մանկաբարոյից՝ են առաւելագոյնի պատճառ փութոյ կրթութեան : Զի մեզ արդարև՝ 'ի դէպ է երից մանկանցն երգ առ ած՝ քան իսրայէլեան տոհմին յայնժամ, եթէ՝ մատնեցեր զմեզ 'ի ձեռս թշնամեաց մերոց, և եթէ՝ նուաղեցաք մեք քան զամ ազգս, և եթէ՝ ոչ գոյ 'ի ժամանակի այսմիկ իշխան՝ մարգարէ, և որ ըստ կարգի : Եւ որ արդարապէս դատի, զարմացման արժանաւոր վարկանի՝ 'ի շաւիղս միայն տեսանելով զմեզ իմաստութեան, և կաթիլ մի՝ 'ի հոսմանէ եդեմական ունելով աղբերէ, և 'ի հաւատոյ միայն լինիլ սահմանի ճշմարտութեան. այլ՝ զիմաստութիւն բանի, կամ զգիտութի հանճարոյ, ոչ պահանջէ 'ի մէնջ կատարելապէս :

Բայց՝ հաւատամք ողորմութեանն այ, զի որ շարժեաց զկամս ձեր յայսոսիկ, նոյն յորդորեսցէ և 'ի խնդիր երանել պատուական մարգարտին հաւատոյ՝ որ ըստ իմաստուն վաճառականին : Զի թէ ամենազօր բնութիւնն այն՝ որ զոր ինչ կամեցաւ՝ ըստ մարգարէին՝ արար յերկինս և յերկրի, յորժամ հանդերձեալ էր ժողովել զցրուեալսն, էջ 'ի հօրէ, ուստի ոչ երբէք մեկնեցաւ, և եկն յաշխարհ՝ ո՞ւր էրն իսկզբանէ, զկերպարանս ծառայի առեալ ըստ Առաքելոյ, խոնարհեցոյց զանձն՝ լեալ հնազանդ՝ մինչև մահու չափ և մինչև խաչի :

Ո՛չ է ապա յանմանելին և ձեզ՝ որ զնորին ունիք զօրի-
նակ, 'ի խոնարհել Աստուծոյ արքայութեան ձերոյ, և զալ յա-
րևելս՝ 'ի պատճառս նորին գործոյ և իրի։ Զի զոր նա ժո-
ղովոյ խաչին իւրով, և Թշնամին արդարութեան ցրուեաց
դարձեալ խորամանկութեամբն իւրով, դուք 'ի նոյն վերստին
ժողովեցէք 'ի փառս Կաթուղիկէ Եկեղեցւոյ։ Եւ ոչ
խոնարհութեան նորա՝ լինիք նմանօղ գործով, նոյնպէս և փա-
ռայն նորա՝ լինելոց էք հաղորդ, ըստ այնմ՝ զոր ասէ դարձեալ
Առաքեալ, եթէ՝ վասն որոյ զնա՝ Ած բարձրացոյց, և շնորհ-
եաց նմա անուն՝ որ 'ի վեր է քան զամ՝ անուն։ Զի ոչ այն
քան բարեպաշտական պատերազմաց յաղթութիւնք, և ամբո-
ղոյն քաղաքաց առաւել՝ անուն Թագաւորութեան ձերոյ
բարձրանայ, որչափ Եկեղեցւոյ քո՛ անկեալ խաղաղութի
ընդ սփիւռս, և զպատերազմսէր Թշնամւոյն՝ խորտակե-
լով զզէնս՝ մինչ խաղաղ, որ է հեռ, նախանձ չարեաց, և
քանդակեալն լինիլ՝ 'ի վէմակար իրս, յորոյ միջի է հայհոյ-
ութիւն անուանն Այ։

Որպէս նախնիքն ձեր և Աստուածայինքն՝ մեծն Կոստան-
դիանոս, և մեծն Թէոդոս, ոչ այնքան երկրաւոր Թագաւո-
րութեան իւրեանց՝ որչափ Եկեղեցւոյ՝ փոյթ ունէին հաս-
տատութեան։ Որովք և յանցաւոր կեանս՝ առատապէս վայե-
լեցին 'ի խնամս Այ՝ յաղթութեան Թշնամեաց, և ամ՝ յաջո-
ղութեանց, և յանանց 'ի կեանսն՝ երկնից Թագաւորութեան,
և վիճակին քո՝ պսակացն Այ եղեն արժանաւորք։

Բայց՝ զո՞րօրինակ՝ ամենազօրն Ած՝ որ կարող էր 'ի մի-
ում վայր կեան ժամու՝ յոչ էից գոյացուցանել զերեւելիս
ամ՝, ոչ միայն զզօրութիւն 'ի գործ արկանէր յառաջին ա-
րարչութեան, այլ՝ զիմաստութիւն, ըստ մարգարէին եթէ՝
զամ՝ իմաստութեամբ արարեր։ Նոյնպէս և երկրորդ ա-
րարչութեան՝ չունէր ինչ հարկ՝ մարդ լինելոյ, և այնպէս
վերստին ստեղծանել զմարդիկ, բաւական էր կամելն միայն,
և ամ՝ ինչ վճարել։ Սակայն՝ խոնարհեցաւ 'ի մերս տկա-
րութիւն, և էջ ուր անկեալ էաք, և այնու բարձրացոյց ը̄
ինքեան, և արար երկնայինս, այնու պէսպէս հնարիւք և
ճարտարութեամբ՝ որ նորին իմաստութեան էր վայելչական։

Այնպէս և դուք՝ եթէ հանդերձեալ էք Քն լինել

գործակիցք, պարտիք և ճանապարհի նորին՝ լինել հետևողք, և ճանապարհաց անօրէնութեան, որև յառաջինն է խոնարհութիւն, և որ նորին են մասունք՝ հեզութեան և քաղցրութեան, որպէս և զինքն առնուլ մեզ օրինակ այսոցիկ՝ հրամայէ, ուսարուք յինէն ասէ, զի հեզ եմ և խոնարհ սրտիւք:

Զի զո՞րօրինակ՝ բժշկական արհեստ՝ զդեղ առողջութեան՝ հակառակ պատճառի ախտին՝ մատուցանէ ախտացելոցն, նոյնպէս և բժիշկն հոգւոց. քանզի՝ ծանօթ էր նմա մեր հիւանդութիւն, առաջին պատճառ ՚ի հպարտութէ լինել իսկզբանն, նորին ազգաց՝ ընդ խոնարհութեան իջանելով ճանապարհ՝ գալ առ մեզ, զի զերանոյցեալ ամբարտաւանութեն սատանայի՝ խոնարհեցուսցէ, և զմեզ կամաւ հզեալ առ ինքն և ոչ ՚ի բռնութէ, յերկինս՝ խոնարհութեամբն բարձրացուսցէ:

Զնոյն օրինակ և մեզ արժան է առնել, ոչ թագաւորական ահարկու զօրութեամբ, այլ՝ քաղցրաբարոյն խոնարհութեամբ հզել առ ձեզ զհեռացեալս:

Որպէս և մեծն Գրիգոր Նիւսացին՝ յաղագս այս՝ ՚ի պատճէքի ճառին ասէ, եթէ՝ ՚ի վերոյին սահմանելն զմեզ՝ զաստատկութիւն բժշկութեան՝ ոչ առնու ՚ի կիր: Զի ոչ հարկանելովն և հիւացուցանելովն էր կարողութիւն՝ յաղագս ժամանակեաց ամբարտաւանութե, այլ՝ ընտանի և մարդասէրադոյն բժշկութեամբ մատակարարէ առ ՚ի յուղղութի: Այլ և ոչ զտուեալ ինչ ընկալեալ՝ յուղղութիւն բերել զբռնութեամբ ձեռին՝ ՚ի մեւս կողմն փոխելով, յորմէ բեկանել՝ քանթէ՝ ուղղեալ լինել: Նո՞ ոչ զձի խստերախ՝ հանդարտեցուցանել բռնութեամբ սանձուց՝ առանց ողոքանաց և զգաստացուցանող ձայնից:

Վասնզի՝ վերջհարիւր ամ աւելի եղելոյ ժամանակաց՝ բաժանման ՚ի միմեանց՝ անդամոցս ՔՍի. Նո՞ ՚ի մէջ յօդուածոցն՝ յոլովագունից մնալով ախտից սառելութե, և զոր սառելութիւնն ծնանիցի՝ թշնամանաց և հայհոյութեանց, և այնոքիկ կարծրացեալք և պնդեալք, մինչ զի՝ երկրորդ բնութիւն՝ հնացեալ սովորութիւնքն լինել, կարօտ է՝ բազում հոգևոր բժշկական իւղոց օծմանց, այսինքն սիրոյ,

գթութեանց, և ողորմութեանց։ Զի արտաքուստ մնալ՝ օտարութին առեալ՝ եւեթ արտաքս գնալ ; և այս խաղաղութիւն՝ որ յօդուածս անդամոյն կակղացի ; և անդամքն մերձաւորին յօդեալք շարակարգեսցին ընդ միմեանս։

Եւ այս լինի՝ յորժամ միջնորդ, խաղաղութեան՝ նախ զերևելի խաղաղութիւն՝ և զնիւթական սիրոյն ձգտեսցուք՝ առ ժողովուրդս ազգի մերոյ՝ որ ընդ իշխանութբ. որ թագաւորութեանն ձերոյ են, ծառայք։ Եւ ոչ միայն զերեսն՝ որ իբրև բնութեամբ ծառայից քոյս նախանձութեան լուսոյ արեգականն զգար եանցն առաւօտութիւն՝ առ ընդհանուր ազգս, այլև՝ ձերոյդ Եկեղեցական դասուց, և ռամիկ ժողովրդոց ; (որ իբրև զորդւորութիւն ունին, և զհամայնն պատուէրանաց կատարումն՝, և զարքայութեան երկնից ժառանգելոյ՝ բաժակին պատճառ՝ գործին զերդ և զհայհոյելն։) Հրամանեսցէք ՚ի բաց յայնպիսի պատերազմաւէր բարուց լինել, և սիրով և խաղաղութեամբ բերել՝ առ նմին՝ նե՛ս և պաշտօնակալքս։ Մեք ՚ի Հակառակոյն՝ վասն հայրենական փայտ արդարութ, առ ձերդ որպէս յանձուր ապաստանի՝ դիմեալք են խաղաղանալ։

Զի հակառակաբանի բարեաց մարտնելով՝ յառելլեալք ; մեծաձայնս՝ ի բարբարոսձիւր ողի յօժարեսցին ՚ի սէր միաբանութեան՝ զոր քրիստոսեան հաւատ ; և մի այլ լիցի՝ որպէս մինչև ցայժմ՝ պատճառ փախչելոյ մերոյ ՚ի ձէնջ, առ երթումն Եկեղեցեաց, և տեղեաց նոյ կործանումն, և նշանաց Քրիստոսի խորտակումն, և բարձումն նշխարաց պաշտօնէից, և զսոյս զարդարանաց; այլ և ոչ ՚ի մէջ Թշնամեաց Քրիստ յորս մերձ եմք։ Զի այսպիսի գործ՝ ոչ միայն և զբաժանեալսն՝ ոչ միաւորէ, այլև՝ զմիաւորեալսն պառակտէ ՚ի միմեանց։

Քանզի՝ հակառակակէր է բնութիւն մարդկան, զորս ոչ այնքան բռնութիւն՝ որչափ խոնարհութիւն և սէրն ձգէ՝ ՚ի հրամանացն կատարումն։ Եւ զի՞նչ ասիցեմք զգանաճոր կենդանեաց, ուր և զթուչունս վայրենիս և զգազանս, սիրով՝ քան բռնութեամբ, սովոր են մարդիկ վարժել։

Եւ արդ՝ առաջին այս՝ ՚ի հոգևորական դեղոյն՝ առելութեն և բաժանման հիւանդութեանց, պատճառ առողջութ։

Երկրորդ՝ լինի այնորիկ և մեծ քան զառաջինն՝ պատուէր առ ընդ նմ Եկեղեցիս՝ որ ընդ Թագաւորութբ

ձե

ձեռամբ, աղօթս առ նմ մատուցանել, զի զգթութիւն առանձնաւոր-կութիւն՝ որ առ ՚ի ձէնջ, մի լիցի մեղաց մերոց, և անարժանութեան՝ թոյլ տայցէ հոգւոյն բարեաց՝ առաւելուլ խափանել՝ իւրով խորամանկութեամբ, այլ ՚ի կատարելութիւն հասուսցէ զմեզ ողորմութեամբ իւրով։ Որպէս և մեք՝ առ այնր մերոյ եկեղեցւոյ՝ որ յարևելս, և ՚ի մեծն Հայս, և ՚ի մենաստանս՝ որ ՚ի սուրբ լերինս, գրեցաք զնոյն պաղատել առաջի նմա, զի բաւական՝ [illegible] երկայնամիտ ժամանակի հիւանդութիւնս Եկեղեցւոյ՝ հանդուրժեսցէ, և զտրտմութիւնս [illegible]՝ որ վասն բաժանման մեր ՚ի միմեանց, այսուհետև ՚ի սէր միաբանութեան ժողովեսցէ զորդիս՝ նորոյ սիոնի, և ուրախ եղիցի՝ ուրախութեան պատճառն մեր Ա.Ծ՝ հանդերձ սուրբ հրեշտակօքն իւրովք, յաղագս հաշտութեան մերոյ։

Իսկ հանճարեալք մարդասիրութեամբ Ա.Ծ, զի լինէին շարժեալ զմեզ ՚ի բարիս այս, զի ասացեալ է Ա.Ծ՝ որպէս զաւրկուն, ՚ի ձեռն չորից՝ առնել ՚ի վերայ աշխարհի, զի ասել մի եթէ՝ զչարսն չարաչար կորուսցէ. Նոյնպէս և զքաղցրութիւնն՝ ՚ի ձեռն բարի արանց, որ և երկրաւոր թագաւորաց՝ ամենաութիւն է զնոյն առնել։ Վասն որոյ՝ և յառաջին թագաւորացն՝ ոչ զոք, բայց՝ զձերդ միայն եսես խոնարհութիւն՝ այս մեծագունի բարւոյ՝ լինել պատճառ Եկեղեցւոյ. և որժամաւոր եղիցէք՝ որպէս լուաք ՚ի բազմաց, մանաւանդ՝ ՚ի Սուրբ Թագաւորութեանդ՝ հաւատարիմ ծառայէ յարուցեալ։

Զի ծանեաք զչորից մասանց առաքինութեանդ՝ զսէր և զյօժարութիւն բերեալ ՚ի ձեզ, մանաւանդ՝ երկիւղածս [illegible] դատաւորակերպ, որք [illegible] իմաստութեան՝ ըստ [illegible] և [illegible]։ Վասն որոյ յերևեալ ՚ի թագաւորութեան ձերոյ ժամանակի՝ անյաղթութեան [illegible] բարեաց է քրիստոնէից՝ իշխանելոյ ՚ի վերուստ։

Զանզի՝ զփիլիսոփայական բարկութիւն Ա.Ծ որ մատնեաց զեկեղեցի ՚ի ձեռս հեթանոսաց՝ վասն բաժանմանն եղև, և յետ բաժանմանն՝ Նոյնպէս և զթողութիւն Ա.Ծ առ քրիստոնեայս, և զօրացուցանել զերկոսին զթագաւորս և զզօրս քրիստոնէից, ոչ այլ իմիք լինիցի, բայց՝ միաւորութեամբն դարձեալ մեր եկեղեցւոյ քո։

Զի թէպէտ՝ և մարգարէութիւն ոչ է ՚ի ժամանակիս,

ակ

այլ՝ իմաստութիւնն Ս. Յ՝ առ ճանաչել, եթէ՝ արդարանայ. Ն՝ զայն ինչ խօսելով՝ առ նմ ազգս՝ որպէս դատաստանաւ, եթէ՝ եւ արարիչ ձեր՝ մարդ եղէ վասն ձեր, և չարչարանօք իմովք՝ և մահուամբ՝ զսա 'ի չար գազանէ անտի ցրուեալդ ժողովեցի 'ի միասին, և այսօրիկ մեծագունի երախտեաց փոխարէն՝ ոչ այլ ինչ պահանջեցի 'ի ձէնջ, բայց՝ զայս միայն պատուիրան աւանդեցի ձեզ, եթէ՝ սիրեցէք զմիմեանս։ Իսկ դուք՝ զիմ արհամարհեալ զսիրոյն պատուիրան, զթշնամոյն ձեր ընկալայք դարձեալ զերատ, զատելութիւն և զբաժանումն, վասնորոյ՝ դարձուցի զօգնութիւն իմ՝ 'ի սրտյ ձեր, և մատնեցի զձեզ՝ 'ի ձեռս հեթանոսաց։ Արդ՝ եթէ փոխիք դարձեալ 'ի սիրոյ իմոյ պատուիրան, և ժողովիք 'ի մի Կաթուղիկէ Առաքելական եկեղեցի իմ, փոխեցայց և ես 'ի բարկութէ անտի 'ի քաղցրութիւն, և զգեցուցից ձեզ զօրութիւնս 'ի պատերազմս, և զյարուցեալսն 'ի վերայ ձեր՝ նուաճեալս ձեր արարից։

Եւ արդ՝ զ՞որինակ առաւօտուն նշան՝ աւետիս տայ արեգականն ծագմանս, այսպէս և շարժումն կամաց ձեր յայտնոսին՝ գուշակէ զհաշտութեան Ս. Յ զակիզբն՝ ընդ եկեղեցի իւր սուրբ։ Զանզի՝ սիրտ թագաւորք 'ի ձեռին Ս. Յ է՝ ըստ իմաստնոյն։

Նաև՝ և լուեալք, թէ՝ *Հայրապետն հռոմայ՝ և փոխանորդն Պետրոսի Առաքելոյ՝ յիւրոց անտի իմաստնոց՝ առաքեալ խօսել առաջի Սուրբ Թագաւորութեան ձերոյ՝ վասն միաբանութեն հաւատոյ։

Նաև՝ որ զազգին տարօրց ունէր զՔահանայապետութիւն, 'ի նմին շաբաթու՝ յորում գլուխն մեր՝ վերափոխեցաւ առ գլուխն քն, և նա ընկալաւ զվախճան. և յորժամ ժողովեցան Եպիսկոպոսք ազգին իւրեանց՝ ձեռնադրեցին նոր Պատրիարգ, 'ի Պատրիարգէ անտի՝ և 'ի ժողովոց Եպիսկոպոսացն՝ առաքեցան առ մեզ՝ երկու Եպիսկոպոսք՝ վասն միաբանելոյ ընդ ազգիս մերում, զոր և ընկալաք սիրով, և սահմանեցաք 'ի պատշաճ ժամու՝ ժողով լինել առաջի մեր, և խօսել առ միմեանս՝ յանձաշունչ գրոց, զի թէ գտանիցի

աւան

* Ի յայլ օրինակս՝ Սուրբ և աստուածային տիեզերական եպիսկոպոսապետաց։

ռանձնութիւն ինչ 'ի մէջ Պերսաւմ՝ մինչդեռ Մեծամէր կա-նոնայ, բարձցուք յերկոցունց կողմանց, և զնուաղութիւն լցցուք՝ միաբանական սիրով: Աւստի ծանեաւք՝ ամենայն լի-նիլ շարժումն յայտնիկ, և ոչ ծածկեալ:

Այլև՝ զայս ես հայցեմք 'ի Տեառնէ քաղցրութեան ձերում, զի թէ անօրինեսցէ Տէր՝ խաղաղել մեզ առ միմեանս, մի եղիցի որպէս Տն առ ծառայս, և ծառայից առ տեարս, զի դուք զմերն պակասութիւն գտէք մեր առաջի; և մեք ոչ համար-ձակիմք 'ի ձերոց ինչ յորոց գայթակղիմք, ծանուցանել ձեզ: Եւ այս՝ աշխարհաւորաց է օրէն՝ և ոչ հոգևորաց; զի թէպէտ և նուաստականս՝ զբարձրագոյն ունիք աթոռ, և յիմաստութեան առաւելեալ քան զմեզ, այլ անձնիւթա-կան շնորհաւն՝ մի եմք հաւասարեցեալք 'ի Քս, մեծամեծք և փոքունք՝ ըստ Պօղոսի:

Արդ որոյ՝ եթէ սրբութիւնն ձեր՝ զհիմնարկեալս 'ի ձէնջ շինուած՝ խաղաղութեան յաւարտումն հասուսցէ՝ լինել քննութեան բան՝ 'ի միասին ժողովելոց, դիցուք երկո-ցունց բաժանեալ որմոյս՝ գլուխ անկեան և թագաւոր ըզ մէջն Քս՝ որպէս և է իսկ ճշմարիտ, և դատաւոր՝ զգիրս Առաքելոցն և Մարգարէիցն, և զուղղափառս Արդա-ւիրայ Եկեղեցւոյ, և մեք խորաքննեցուք որպէս դատա-խազք՝ կացցուք առաջի Թագաւորին՝ և Դատաւորացն՝ խօսեսցուք դատաստանաւ ընդ միմեանս, և խնդրեսցի ի-րաւունս 'ի նոցանէ, և որում բանի և դիմաց՝ վկայեսցեն դա-տաւորքն՝ ուղիղ և ըստ կամաց նոցա լինել, զայն ընկալցուք անհակառակ. և զոր վկայեսցեն՝ արտաքոյ եղեալ ճշմարտութեան, եթէ 'ի դաւանութիւն հաւատոյ, և եթէ յաւանդութիւնս Եկեղեցւոյ, թէ առ մեզ՝ և թէ առ ձեզ, յայնցանէ 'ի բաց հրաժարեսցուք երկոքեան:

Եւ քննութիւն՝ ոչ հակառակութեամբ և անօգուտ բա-նակռուութեամբ՝ որպէս մինչև ցայժմ՝ յորոց ոչ ինչ օգտեցաւ եկեղեցի այսքան ժամանակ, այլ մանաւանդ վնասեցաւ իսկ, այլ եղիցի հեզութեամբ և հանդարտութեամբ, և զբեռն իրե-րաց՝ բառնալով, և զտկարութիւն ակարաց՝ բժշկելով՝ ըստ հրամանի Առաքելոյն: Զի որ յաղագս հակառակելոյն յաղ-թելոյ խօսեսցի զբանն, որպէս զի փառս որսասցէ 'ի մարդ-

կա

կանէ՝ իբրև զպղծօղ, փախստական է՝ այնպիսին՝ բանին այ, և ոչ պաշտաւոր. և հարկանող վիրաւորեալ անդամոյն Քրիստոսի, և ոչ սպասող:

Այլ արժանէ ըստ մեծին Գրիգորի Նազիանզենի՝ յայտնի բերել՝ եկեղեցւոյ վարդապետաց, որպէս և Նա՝ առ Հոգւոյն նուաստացուցիչսն՝ որք զօրութիւն Ս.Յ ասէին, և զնա ասել՝ ոչ համարձակէին, ասէր՝ տուք զզօրութիւն Ս.Յութեան, և տացուք ձեզ Թողութիւն ձայնին, մինչև ընդ այլ ճանապարհ՝ 'ի նոյն եկեսցուք օթևան, և զայս ասելով՝ ասէ՝ իբրև զհիւանդս՝ զձեզ բժշկեմք, զի ընկալցուք եղբարս՝ զօտարացեալս յեղբայրութէ.

Եւ առ այսմ և դուք՝ զոր միանգամ դատանիցէք Թերութի բարեաց, կամ հիւանդութե ինչ պատահա 'ի մեզ, ոչ 'ի զրպարտութէ ասեմ՝ զոր ատելութիւնն ծնանի, և ոչ 'ի տարաբանութէ. ունանց աներկեւղից՝ 'ի մէնջ առ ձեզ հառաջածելոց, և զմեզ սղարտելով կարգաւորութիւն՝ 'ի հաւասու ձեզ կարծելով, այլ Թէ՝ զոր ունիմք խոստովանիմք՝ զայն դուք բժշկեսջիք, և մեք հաւանիմք իբրև հաւատարիմ բժշկաց, Թէև՝ դառնահամք լինիցին դեղքն: Այնպէս՝ և Թէ առ՝ ձեզ յառաջակէն ուղւոյ՝ զգաղափար մտեալ կցէ իրք ինչ՝ արտաքոյ ճշմարիտ աւանդից, զի զոյ քանն և իմաստնոյն՝ ը. առացելումն, և յայտնի 'ի մէնջ՝ առ ձեզ՝ անտես եղեալն 'ի ձէնջ՝ հնացեալ սովորութիքն, զայն՝ դուք բարձէք 'ի միջոյ Եկեղեցւոյ:

Ոչ է ինչ անօրէնն՝ կամ առաջին, կատարելոց յիմաստութե՝ յանկարծակի ընդունել զօգտակարութինս ինչ բանի: Ուրեմն՝ մեծն մարգարէ մօսէս՝ 'ի յոԹորայ, և մարգարէն և Թագաւորն Դաւիթ՝ 'ի նաԹանայ, ընդունէին խոնարհութբ, ոմն՝ զիմաստութենն իւր խրատ, և ոմն զյանդիմանութիւնն սխալմանց: Այլև՝ հմուտ բժշկաց սովորութի է, ոչ անարգանս համարել՝ յորժամ հիւանդանան յաշակերտաց իւրեանց՝ ընդունել դեղս բժշկութե, այլ մանաւանդ հրամայել՝ տալ առանց զանդխտելոյ, լաւ վարկանելով զառողջութիւնն խոնարհութբ, քան 'ի հիւանդութենն կալ հպարտութբ: Այլև բերք սոսաց՝ Թէպէտ և սղազոյն լինի՝ զայն սնեանելով, բայց յետոյ՝ և որ շուրջ զնոքեալս են՝

դիրք մարմնոյն, անկարանայ նկատել, որ և յախտանայն՝ այլում կարօտանայ աչաց և ձեռին, վասն առողջութեան։

Եւ արդ՝ այս պատճառ խնամոց բան՝ բաւական է զոր տուաք գրով՝ ծայրագոյն ձերդ խնամութեան, կարօղ էք սակաւուքս՝ զբաղումն խնմոյ՝ մատենագրական տեսութիւ, և զոչ պարունակեալն գրով՝ բանականքդ պատմեսցեն բանիւ՝ առաջի Սուրբ Թագաւորութեանդ։ Որք ընդ հոգւոր բանիւ՝ ծանուսցեն և զմարմնաւոր կեանս մեր տածանութ, զոր ունիմք՝ ի շուրջ եղելոցս զմեօք։ Ողջ լեր Թագաւոր օգոստէ՝ երկնաւոր Թագաւորին պահպանեալ զօրութեամբ։

Սահմանք հաւատոյ հայաստանեայց եկեղեցւոյ՝ գրեալ Ներսէսի Կլայեցւոյ Կաթողիկոսի Հայոց, 'ի խնդրոյ Մանուէլ Թագաւորին Յունաց՝ Կոմնենոսի։



Թէպէտ և աղքատութիւն մտաց և բանի՝ ոչ տայ թոյլ՝ 'ի բարձրագոյն քան զմեզ՝ համարձակիլ ձեռնարկութիւն, արգահատել 'ի համառօտ ծով գիտութեան ձերոյ՝ բաժակաւ միով՝ ջուր բանի, որպէս յաւելուած. կամ եթերականդ հուր խնամոցդ՝ 'ի դուզնաքեայ մերոյ նշուլից հանճարոյ։ Սակայն՝ հնազանդեալ Թագաւորութեանդ հրամանի՝ որ 'ի ձեռն մեծի պալատանդ ծառայի, առ մերս հասեալ նուաստութիւն, տալ գրով զհաւատոյ մերոյ դաւանութեան բանս, համարձակութեամբ եւ տկարութեամբ մերով։

Բայց և Միածնին հրաման՝ հրամայէ տալ ամենայն որ խնդրիցէ, յորոց ունիցի ինչ 'ի մեծամեծաց, կամ 'ի փոքունց։ Եւ եթէ ամենեցուն տալ՝ օրէնք է, քանի եւս բարձրագունիցն տալ։ Վասն որոյ՝ և մեք այսուհետեւ համարձակեալ տացուք սակաւուք՝ զլրումն խնդրոյն։ Ոչ նորագոյն 'ի մէնջ հնարագիտութեամբ, այլ զորս ընկալաք զշնորհ ինչ՝ 'ի պատուական և յանծախելի 'ի հօրց՝ նիւթոյ, 'ի մերոյ հօրն Լուսաւորչին և մարգարէից և առաքելոց վարդապետաց։ Ոչ ճարտարութեամբ բանից՝ յորս և ոչ կրթեցաք ուսանել, այլ՝ ճշմարտութեամբ հոգւոյն, որպէս ծանուցաւ մեզ՝ յամենայն ընտ։

Ոչ

Ոչ զհրեշտակամարդական խառնակութիւն ծածկելով՝ կերպարա-
նեալք զգայնս՝ լուսով ուղղափառութեան, որպէս և կարծիքն
յամենայն՝ զնոյն ախտացելոց։ Այլ՝ զոր ասէնկքս՝ յանսելի ոյթ
ոչ ալիք, զնոյն խօսքի և երկնային զգօնս, միայնութիւն մասց
մարդոց, և սրտից անցաւորի հոգւոյն որ զնա՝ քննէ և գտանէ։

Եւ քանզի՝ բաժակին՝ զուրախն առնելոյն ՚ի խնդրոյ
Միածնին՝ զոր և ընծայեցաք, անձամբ վարկանէաք՝ կեր-
ակուր զերծ բանն, ըստ սա նոքին խորհրդոյ, գիտելով
զառասպելսն, թէ՝ ստամբակութիւն բանի՝ պատերազմօղ է
լսելեաց։

Բայց՝ զի ձեռով հրամանաւ՝ այնդագոյնս պահանջեաց
թղթաբեր սուրբ թագաւորութեան՝ ՚ի մեզ, ոչ ընդդիմա-
ցաք հրամանին, այլ՝ յաւէտ լաք և զայս և ՚ի նոյնս որպէս զի
յերկրորդ և յերից կրկնաբանութեամբ՝ հաստատեսցի բանին
ճշմարտութիւն՝ իբրև վկայիւք, զոր և սկսանիմք աստ՝
ուստի սկսանելն արժան է։

Խոստովանիմք որպէս ուսաք ՚ի հարցն սրբոց՝ զՀօր
յատկութիւն առ անձնաւորութեան, անծին և ան-
սկիզբն։ Եւ զորդւոյ ծնունդ՝ անժամանակաբար ՚ի Հօրէ, անեղա-
պէս և անժամանակ։ Եւ զհոգւոյն բղխումն, և երեւումն, և զոր
ասէք առաքումն ՚ի Հօրէ անձառապէս։

Հայր ասի Հայրն, վասն պատճառ գոլոյն որդւոյ ծնըն-
դեան, և հոգւոյն եղողութեան։

Եւ Որդին՝ որդի, ոչ յաղագս առաջաւորութեան ինչ ծննդեան՝
ըստ նիւթականութեան, որպէս ՚ի կարծեն կոյսքն ոմանք, այլ զի ՚ի
ընդէջ Հօր՝ և ոչ արարած է, սակայն՝ երկնաւոր ծննդեամբ,
անհասանելի յարարածոց։

Հոգի և միածին, զի ոչ այլ ոք յառաջ քան զնա, կամ
՚յետ նորա՝ ծնունդ Հօր։

Բան և բանք, քանզի՝ անախտաբար է ծնունդն, ըստ օրի-
նակի մերոյս բանի՝ որ ծնանի ՚ի մտաց։

Եւ ոչ նախ Հայր՝ և ապա որդի, որպէս հասանէաւ, և
մերայական բնութեան է օրէն։ Այլ՝ որպէս յաւիտենական է
Հայր, յաւիտենական է և որդի, ընդ յաւիտենականին Հօր,
և

և մշտնջենաւորակից նմին 'ի սկզբանն և կատարածին, ծագ-
ման արեգական նմանելով ճառագայթից: Զի ոչ՝ ոչ նախ
արեգակն, և ապա լոյս, այլ՝ 'ի միում՝ ժամանակի երևին եր
կոքեանն: Նոյնպէս՝ և լոյս որդի, 'ի լուսոյ հօրէ ծագեալ,
և ընդ նմին մշտնջենաւորեալ: Եւ որպէս՝ ոչ փառք առանց
լուսոյ, և ոչ պատկեր՝ առանց նախատպի, նոյնպէս և ոչ
հայր՝ առանց որդւոյ, և ոչ որդի՝ առանց հօր, զի նա է լոյս
փառաց, և նկարագիր էութեն նորա, Քանզի՝ փառք է հայր,
և փառացն լոյս՝ որդի. սկզբնատիպ է հայր, և պատկեր անե
րևութին այ հօր՝ որդի: Վասն որոյ՝ համագոյ և արարչա-
կից դաւանիմք զորդի հօր:

Խոստովանիմք և զՀոգին Սուրբ՝ ճշմարտապէս հոգի
Այ, և ոչ յաղագս համանունութեն՝ համեմատեմք
զնա՝ արարածական հոգւոց, որպէս և ոչ զմին և զընութեն
որդի՝ հաւասարեմք շնորհօք որդւոց Այ:

Քանզի՝ Այ անուանելովն հոգի, բաժանէ յեղակա-
նաց հոգւոց:

Յառաջ եկեալ յանսկզբնականէն հօրէ անսկզբնա-
բար՝ անձնաւորութիւն կատարեալ, անիմանալի և անճառ-
ելիս՝ գոլով: Ըստ էութեն պատճառի՝ առ 'ի հօրէ միայնոյ:
Իսկ՝ ըստ ունակութեն և շնորհաբաշխութեն, հաւասարակից
հօր և որդւոյ: Ըստ ասելոյն որդւոյ՝ յաղագս նորին հոգ-
ւոյն, ոչ եթէ յանձնէ ինչ խօսի, այլ՝ յիմմէ անտի առնու,
և պատմէ, զի ամ որ ինչ հօր է՝ իմ է: Ոչ սկիզբն ու-
նելով ժամանակի, և ոչ փոփոխումն այլայլութեն՝ ըստ ա-
րարածոց. քննօղ՝ անքննելի խորոցն Այ. և յայտնիչ՝ անյայ-
տից խորհրդոց նորա: Էակից հօր և որդւոյ՝ ըստ մշտնջե-
նաւորութեն, և փառակից և կցորդ արարչութեն, ըստ հա
մազօր և համապատիւ գոլոյն:

Խոստովանիմք և զերիս զայս անձնաւորութիւնս՝ 'ի մի
Ածութիւն ժողովեալ և միաւորեալ, ոչ յայլ և յայլ
բնութիւնս բաժանեալս 'ի միմեանց՝ ըստ արիոսի, արարած
և ժամանակ 'ի ներքս մուծանելով, այլ՝ մի բնութիւն, մի
էութիւն, մի զօրութիւն, մի փառք, ամենասուրբ Եր-

րոր

բարդութեան՝ հանգամանացելոյ ձայնաւորելն։ Իսկ ոչ՝ դաւանեալ հոգեպահանին հնաւանդ սուրբն լիրեցայց հաստատելով, զի ըստ 'ի մի հաւասարել անձնաւորութիւնս։ Այլ՝ բաժանեալք անբաժանաբար, և միաւորեալք որոշմամբ, ըստ ուղղափառ հաւատոյն դաւանութեան։

Զանզի երեք դաւանեմք զանձինս, և ոչ առաւել կամ նուազ քան զերիսն, և բնութիւն մի, և ոչ յերիս բաժանեալս՝ ըստ անձնաւորութեանցն։ Որպէս և ծանեաւ Եկեղեցի 'ի սրբազնոյն սրբազանութեանց, զերիս սրբասացութիւնսն, 'ի մի հաւաքելով տէրութիւն և Ածութիւն։

Իսկ ոչ՝ վասն զի Հայր անծին է, և որդի ծնունդ, և Հոգին բղխումն, զանազանի 'ի միմեանց՝ և բնութեամբ, որպէս և ոչ այլայլ, և սէթ և եէնոյ։ Զի որ անծին է, և որ ծնունդն, և միւսն՝ թէպէտ և ոչ ծնունդ, այլ՝ յառաջանայ, բաժանին ոյսու ըստ բնութե։

Ոչ ոմն յերից հանդիպանաւցն մեծ 'ի բնութէ, քան ընդ որս կարգեցաւն։ Զի թէպէտ՝ և մեծ ասացաւ Հայր, յաղագս պատճառին է մեծ, և ոչ վասն բնութեան։ Զանզի բնութիւն հաւասարակից է որդւոյ և հոգւոյ, և ոչ յառաջագոյն նուազ գոլով Աստուածութեամբ Հօր, և առ սակաւ սակաւ յետ ժամանակի եկեալ 'ի լրումն, որպէս թէ՝ երբեմն յորժամ ոչ էր Հայր՝ ոչ ունելով զորդին, և ոչ իմաստուն, ոչ կրելով 'ի ծոց իւր զիմաստութիւնն, և ոչ զօրաւոր, յաղագս ոչ լինելոյ ընդ նմա զօրութեան։ Զանզի՝ Քս է Այ զօրութիւն, և Այ իմաստութիւն; ըստ Առաքելոյ։ Իսկ ոչ լանաւոր, եթէ ոչ էր բանն իսկզբանէ առ Այ՝ ըստ Յովհաննու; և ոչ ընդունակ կենդանութեան, եթէ էր երբեմն՝ յորժամ ոչ էր առ նմա հոգին կենդանարար։

Այլ է Հայր՝ միշտ Հայր, անփոփոխելի ունելով յինքեան զբանն, և զզօրութիւն, և զիմաստութիւն, և զկենդանութիւն։

Իսկ որդին՝ որդի յաւիտենական առ 'ի Հօրէ, և ընդ Հօր միշտ։

Իսկ Հոգին Սբ՝ մշտնջենաւոր հոգի Այ, և առ Այ։

Հայր՝ պատճառ, և որդի՝ և Հոգի՝ 'ի պատճառէն անժամանակաբար, և առանց պատճառի։ Հայր՝ ոչ սկսեալ

յու

յուծէ քէ։ Եւ Որդին և Հոգին՝ ելեալք 'ի Հօրէ, այլ յառաջ քան զժամանակ և զբնութիւն, արարիչ գոլով ընդ Հօր, ժամանակի և որոց ընդ ժամանակաւ՝ իմանալեաց և զգալեաց արարածոց, յանգոյից ածեալ է 'ի գոյութիւն։

Խոստովանիմք զմի յերից անձնաւորութեանց Որդի՝ կամաւ Հօր և Հոգւոյն, աւետեօք Հրեշտակապետին Գաբրիէլի, իջեալ յերկնից՝ զոր ասացին, և ուր էրն միշտ և Նախախնամէր, և Մտեալ անճառապէս, ուստի էջն։ Բնակեցաւ յորովայնի Կուսին՝ անբովանդակելին արարածոց, յորում առեալ զմերս մարդկային՝ և այլակերպելի բնութի, զհոգի՝ և զմիտս՝ և զմարմին, խառնեալ միաւորեալ ընդ անմեղ՝ և անապականն բնութեն իւրոյ, և եղև նորոգ՝ մի և անբաժանելի, փոփոխելով ոչ զբնութիւն մարմնոյ՝ յանմարմնութիւն, այլ զմեր մարդկային մարմինն՝ յաստուածութիւն, և զապականացուն՝ յանապականութիւն, և զմահկանացուն՝ յանմահութիւն, յորժամ կամեցաւ անփոփոխ՝ 'ի միաւորութեն պահելով զԲանին՝ և զմարդկային էութիւնն, ինն ամսեայ ժամանակի յղութեամբ՝ ծնեալ 'ի կուսէն, անխախտելի՝ կուսութիւն ծնողին պահելով։ Եւ նոյն ծնեալն 'ի Հօրէ անմարմնաբար, ծնաւ 'ի մօրէ՝ ըստ մարմնոյ, և որդին Այ՝ եղև որդի մարդոյ, ոչ այլ՝ Ա.Յ որդի, և այլ՝ մարդոյ, զմին որդի՝ յերկուս բաժանելով որդիս, ըստ հայհոյութեն Նեստորի։

Քանզի բանն՝ ոչ 'ի մարմին բնակեցաւ, այլ Թանձրացաւ 'ի մարմին, ոչ փոփոխմամբ, այլ միաւորութեամբ, և ոչ 'ի կուսէն արգանդի՝ արարչագործութե Թանձրացոյց իւր մարմին, ըստ չարափառաց ոմանց ասելոյ, այլ 'ի Կուսէն առ մարմին, ոչ օտար 'ի նմանէ, այլ 'ի նորին բնութէ, և ոչ առ աչօք՝ իբրև ընդ խողովակ ինչ անցեալ, ըստ նէ ախքեայ, և համախոհից նորին, այլ ճշմարտապէս մարմին զգեցեալ 'ի զանպաշտօնս ոդամայ՝ նոր խառնմամբ, և աքանչելի խառնուածով։ Օրինակաց՝ գերադոյն գոլով նմի։

Քանզի և արարչի՝ ընդ արարածոյ ոչ եղև իսկզբանէ խառնումն և միաւորութիւն, փոքր ինչ միայն՝ և ոչ նմին, հոգւոյ և մարմնոյ համեմատի 'ի շարախառնութե, Ա.Յ Է մարդոյ միաւորութիւնն, որպէս և Գրիգոր Նիւսացւոյ՝ 'ի

ԸԸ

բնութ գիրս՝ 'ի բանն՝ որ յաղագս հոգւոյ և մարմնոյ միաւո-
րութեան ասէ։ Վկայէ այսոցիկ Պորփիւրոս՝ հակառակ ՔՆ
շարժող զիւրն լեզու, մանաւանդ՝ հզօրագոյնք են թշնամեաց
վասն մեր վկայութիւնք, ոչ մի ինչ ունելով գիտաբանութեան
Նոյն Պորփիւրոս՝ յերկրորդում բանին՝ գրէ այսպէս, ոչ
է ասելի թէ՝ էութեան իրիք, անհնարին է լինել 'ի լրումն
այլ էութեան։ Ընդ այլում լինել, և զիւրն ամբողջ պահե-
լով՝ զմեծապունութիւնն իւր՝ ոչ փոփոխելով, այլ փո-
փոխելով զնա՝ մերձաւորութեամբն յիւր ներգործութիւն։
Նաև ասէ զայս՝ վասն միաւորութեան հոգւոյ և մարմնոյ։ Իսկ
եթէ 'ի վերայ հոգւոյ՝ յաղագս անմարմնութեան՝ ճշմարիտ
է բանս, որչափ ևս առաւել՝ 'ի վերայ բանին Այ, յաւէտ
անբաղդատաբար, և ըստ ճշմարտութեան անմարմնոյն։
Նաև մեր այսոցիկ համաձայնեալ հաւանեալք, եթէ
բանն՝ որ եղև մարմին՝ ըստ Յոհաննու, ոչ 'ի մարմին փոխե-
ցաւ՝ զիւրն կորուսանելով բնութիւն, այլ՝ ընդ մարմնոյ
միացեալ՝ եղև մարմին ճշմարտապէս, և մնաց անմարմին, որ
էրն իսկզբանէ։ Ոչ այլ ոմն մարմին, և այլ ոմն անմարմին,
այլ՝ մի և նոյն Քս է մարմին, և է անմարմին, մարմին՝ իբր մարդ-
կութեան՝ զոր առ, և անմարմին՝ իբր Աստուածութեան՝ զոր ունէր։ Նաև
նոյն տեսանելի, և անտեսանելի. շօշափելի, և անշօշափելի.
ժամանակեայ, և առանց ժամանակի։ Որդի մարդոյ, և որդի
Այ, համագոյ Հօր ըստ Աստուածութեան, և համագոյ մեզ՝ ըստ մարդ-
կութեան։ Ոչ ոմն և ոմն այսոքիկ, այլ՝ մի էութիւն, և մի
անձնաւորութիւն՝ 'ի յերկուց բնութեանց՝ 'ի մի Քս միացեա-
լոց, անշփոթելի և անբաժանելի միաւորութեամբ։
Նաև թէպէտ և մարդկային միտք տկարանան յայսոսիկ,
զի 'ի վեր է քան զբնութիւն, այլ՝ Աստուածային զօրութեան՝ ոչ
ինչ է անկարելի։ Զի եթէ հոգի և մարմին՝ արարած գոլով
Այ, կարէ լինել յերկուց հակառակացն՝ մի բնութիւն, և
ոչ մի 'ի նոցանէ՝ կորուսանէ զիւրն էութիւն 'ի միութեան,
քանի՞ արդեօք է կար և հնար՝ ամենազօր բնութեանն Այ, լի-
նել մարմին, և մնալ անմարմին. խառնել ընդ եղականի մար-
դոյս բնութեան, և պահել անփոփոխ՝ զանեղական բնութեան՝
որ 'ի Հօրէ։

Նաև

Եւ որպէս խոստովանիմք՝ յերկուց բնութեանց մի լեալ, եւ 'ի միաւորութեան՝ ոչ կորուսեալ զմի ոք 'ի յերկոցունցն. Նոյնպէս եւ զկամսն՝ ոչ այլ եւ այլ ասեմք, որպէս թէ Ածային կամքն՝ հակառակ լինել մարդկայնոյն կամաց, եւ կամ մարդկայինն՝ Ածայնոյն, այլ 'ի միոյ էութենէն՝ կրկին եղելոյ կամաց՝ ըստ այլ եւ այլ ժամանակի, երբեմն Ածայինն՝ յորժամ զմեծութեան կամէր ցուցանել զզօրութիւն, եւ երբեմն մարդկայինն՝ յորժամ զմարդկութեան կամէր յայտնել զխոնարհութիւն. Եւ այս՝ ոչ հակառակութեան, այլ անձնիշխանութեան են ցոյցք. Զի ոչ եթէ մարդկային կամքն՝ զմեծայնոյն բանադատէր. որպէս եւ 'ի մեզ, զի կամք մարմնոյն՝ ցանկայ հակառակ հոգւոյն. այլ մարդկայինն, մեծայնոյն հետեւէր կամաց. Զի՝ յորժամ կամէր եւ թոյլ տայր, յայնժամ զգայր կրկէր մարմինն. Որպէս եւ 'ի փորձութեան՝ յետ քառասնօրեայ պահոցն լրման, այսպէս կամեցաւ թոյլ տալ բնութեան մարմնոյն՝ քաղցնուլ. Զի թէպէտ՝ եւ այլ ասաց զկամս հօրն, եւ այլ զիւրն՝ ըստ առացելոյն, ոչ որպէս ես կամիմ, այլ՝ որպէս դու, համականութեան է այս ցոյցք, որպէս որդւոյ՝ առ հայր, եւ ոչ հակառակութեան, զոր յայտ առնէ եւ յայլում տեղւոջ՝ վասն յատուկ Ածութեան, եւ ոչ վասն մարմնաւորութեան, իջի ես յերկնից, ոչ զի զկամս իմ արարից, այլ զկամս հօր իմոյ, եւ իջեալ յերկնից, յայտ է թէ՝ անմարմին մեծութիւն էր, եւ ոչ մարմինն, զոր առ՝ յետ իջանելոյն յերկիր.

Եւ ըստ Ածութեանն զիա՞րդ համարձակի ոք բաժանել զկամս որդւոյ 'ի Հօրէ, եւ ո՞ր են կամք հօրն՝ իւրքն ցուցանէ որդին. Այս են կամք հօր իմոյ ասէ, զի ամ՝ որ հաւատայ յիս, ունից զկեանս յաւիտենից. Արդ՝ Հօր կամք են՝ տալ հաւատացելոցն յորդի՝ զկեանս, եւ որդւոյ չե՞ն կամք. Նա յսոքիւք միաւորեալ զհամականութիւնն, եւ ոչ զընդդիմադրութիւնն ցուցանէ՝ ըստ Ածաբանին Գրիգորի. Զանզի՝ յասելն՝ ասէ՝ որդւոյ առ Հայր՝ եթէ ոչ իմ կամքս եղիցին, այլ քոյդ, որ է իմն, յայտ արար թէ՝ իւր եւ հօրն՝ մի են կամք. Զի թէ ամ՝ որ ինչ հօրն է՝ որդւոյն է, եւ որ ինչ որդւոյն է՝ հօր, յայտ է թէ՝ եւ կամքն հօր՝ կամք են որդւոյ, եւ կամք որդւոյ՝ կամք Հօր.

Սա

Ըստ կամացս օրինակի՝ զոր առաջարկաք՝ 'ի միոյ անձնիշխան-կամաց Ածութեն, երկուց լինել անհակառակաւոր՝ Ածայինն եւ մարդկայինն. Համառօտաք եւ ներգործութեն; Նոյնպէս լինել Ածայնոյն եւ մարդկայնոյն՝ 'ի միաւորութեն անդ, ոչ զբարձրագոյնսն՝ Ածութեն միայն տալով առանց մարմնոյն, եւ ոչ զխոնարհագոյնսն՝ մարդկութեանն առանձինն՝ առանց Ածայնոյն. Զի թէ այսպէս ոչ էր, զիա՞րդ ասէր՝ որդին մարդոյ յերկնից իջեալ, կամ Ած խաչեալ, եւ ապեւն Ած լեալ: Այլ միոյ անձնաւորութեն զերկոսին զայսոսիկ խոստովանիմք, երբեմն որպէս զԱծ՝ զԱծայինսն ներգործելով, եւ երբեմն որպէս զմարդ, զմարդկայինսն. Զոր յայտ առնեն եւ անճառութեան նորա գործք՝ 'ի սկզբանէն մինչեւ ցկատարումն:

Ծնանի՝ թէպէտ յղացաւ որպէս զմարդ, այլ 'ի Հոգւոյն Սրբոյ՝ որպէս զԱծ:

Ծնաւ 'ի կնոջէ որպէս զմարդ, այլ 'ի կուսէ, եւ զկուսութիւն ծնողին՝ անապական պահելով՝ յետ ծննդեանն՝ որպէս զԱծ:

Թլփատեցաւ ութօրեայ որպէս զմարդ, եւ եբարձ զթլփատութիւն մարմնոյ, եւ ուսոյց զթլփատութիւն սրտին որպէս զօրէնսդիր թլփատութեն:

Ընծայեցաւ քառասնօրեայ 'ի տաճարն՝ որպէս զմարդ, եւ վկայեցաւ 'ի Սիմէոնէ որպէս զԱծ՝ արձակող կապելոց:

Փախեաւ 'ի Հերովդէէ որպէս զմարդ, եւ փախոյց զմոլորութիւն կռոցն յեգիպտոսէ՝ որպէս զԱծ:

Մկրտեցաւ 'ի Յովհաննէ որպէս զմարդ, այլ զմեղս Ադամայ լուեալ մկրտութեամբն, եւ 'ի Հօրէ եւ 'ի Հոգւոյն վկայեցաւ որպէս զԱծ:

Փորձեցաւ նոր Ադամն՝ որպէս զհինն, եւ յաղթեաց փորձողին՝ որպէս զստեղծիչ Ադամայ, եւ ետ իշխանութիւն որդւոց Ադամայ՝ որպէս զԱծ, կոխել զզօրութիւն թշնամւոյն:

Քաղցեաւ որպէս զմարդ, եւ զբիւրս կերակրեաց՝ 'ի սակաւ հացից որպէս զԱծ:

Ծարաւեցաւ որպէս զմարդ, եւ զծարաւեալս կոչեաց առ ինքն՝ արբուցանել զջուրն կենաց՝ որպէս զԱծ:

Վաստակեցաւ 'ի ճանապարհի որպէս զմարդ, այլ հանգիստ եղև աշխատելոց և ծանրաբեռանց մեղօք, քաղցր լծովն, և փոքրոգի բեռամբն՝ որպէս զԱծ։

Ննջեաց 'ի նաւին որպէս զմարդ, և գնաց 'ի վերայ ծովուցն, և սաստեաց հողմոյն և ծովուն՝ որպէս զԱծ։

Ետ հարկս որպէս զմարդ, այլ 'ի բերանոյ ձկան՝ նորաստեղծ ստատերս՝ որպէս զԱստուած։

Աղօթէր ընդ մեր և վասն մեր՝ որպէս զմարդ, և ընդունէր ընդ Հօր իւրում՝ զաղօթս ամենեցուն՝ որպէս զԱծ։

Արտասուէր վասն սիրելւոյն որպէս զմարդ, և դադարեցուցանէր զարտասուս քերցն՝ յարուց̃ եղբօրն՝ ոպ̃ զԱծ։

Հարցանէր ո՞ւր եդիք զՂազարոս՝ որպէս զմարդ, և յարուցանէր ձայնիւ զչորեքօրեայ մեռեալն՝ որպէս զԱծ։

Վաճառեցաւ դիւրագին որպէս զմարդ, և գնեաց զաշխարհ՝ մեծագնի իւրով արեամբն՝ որպէս զԱծ։

Եղև անխօս որպէս զորոջ առաջի կտրչի՝ ըստ մարդկային բնութեան, այլ՝ բանն է որ ի սկզբանէ, որով երկինք հաստատեցան՝ ըստ Ածային բնութեան։

Բևեռեցաւ 'ի փայտի ընդ աւազակսն՝ որպէս զմարդ, այլ զլուսաւորսն խաւարեցուցանէր, և զաւազակն 'ի դրախտըն մուծանէր՝ որպէս զԱծ։

Քացախ էարբ և լեղեաւ կերակրեցաւ որպէս զմարդ, այլ՝ զջուրն 'ի գինի փոխեաց, և դառնութեն ճաշակացն եղև քաղցրացուցիչ որպէս զԱծ։

Մեռաւ մարդկային բնութբ̃ն որպէս զմարդ, և զմեռեալս յարուցանէր՝ Ածային զօրութբ̃ն՝ որպէս զԱծ։

Ճաշակեաց 'ի մահուանէ մարմնովն՝ որքան ինքն կամեցաւ որպէս զմարդ, և եղծ մահուամբ զմահ՝ որպէս զԱծ։ Ոչ ոմն մեռեալ, և ոմն լուծիչ մահու, այլ ինքն մեռեալ, և ինքն կենդանի, և կենդանարար մեռելոյ։ Քանզի՝ մի և նոյն Քս̃, մարդ գոլով բնութբ̃ մահկանացու, և Ած գոլով բնութբ̃ անմահ։ Ոչ 'ի յերկուս բաժանեալ՝ զատ 'ի յերկուց միացեալ բնութիւնս, որպէս թէ՝ ոմն չարչարելի և մեռեալ, և ոմն անչարչարելի և անմահ, այլ՝ միաւորեալն յերկուց ընդդիմակացն, և մի լեալն՝ կրէր զերկաքանչիւր հակառակացն զկիրս, մարդկային բնութբ̃ն՝ զչարչարանս և

զմահ, և Աստուածային բնութեանն՝ զանչարչարելութիւն և զանմահութիւն։ Զի նա՝ որ մեռեալ եղև մարմնովն, նոյն կենդանի էր աստուածութեամբն։ Եւ որ չարչարեալ, նոյն էր և անչարչարելի։ Եւ որ քրտնեաց յերկիւղէ, նոյն՝ ընկրկեաց և զյարուցեալսն 'ի վերայ։ Եւ որ փոքր մի քան զհրեշտակս խոնարհեալ՝ զօրացաւ 'ի Հրեշտակաց, զօրացուցանէր զօրարածս ամ։ Եւ որ արարիչ գոլով էից՝ ըստ Աստուածութեանն ընդ Հօր, նոյն արարած՝ յաղագս մարդկութեանն՝ ըստ մեզ։ Զոր և քարոզիչք բանին՝ քարոզեն Աստուած և մարդ կատարեալ գերագոյն միութեամբ միաւորեալ՝ քան զհոգի և զմարմին։ Զի մարդկայինն ոգի՝ 'ի ձեռս Հօր աւանդեալ՝ բաժանեցաւ 'ի մարմնոյն, բայց Աստուածութիւնն՝ անբաժանելի մնաց յերկոցունցն, քանզի՝ էր միացեալ ընդ բանականի հոգւոյն, յորժամ էջն առ հոգիսն՝ որ 'ի դժոխս, և էր անմեկնելի 'ի մեռեալ մարմնոյն՝ որ 'ի գերեզմանի անդ, ոչ մասնաւորաբար, այլ բոլորն առ երկոսեան։

Սա ինքն նոյն՝ որ 'ի ծոց Հօր՝ և յորովայնի Կուսին, յաթոռ փառաց՝ և 'ի մսուր, ընդ աջմէ Հօր՝ և 'ի Խաչին, 'ի քրոբէս՝ և 'ի գերեզմանի, զի լի են երկինք և երկիր՝ փառօք նորա, յարուցեալ յերրորդ յաւուր՝ յարութիւն մեր և կեանք, եւ յերկինս՝ ուստի ոչ երբէք պակասեաց։

Եւ դարձեալ միւսանգամ՝ յարուցանել 'ի մեռելոց զբնութիւնս ադամայ, և դատել արդարապէս՝ զկենդանիս և զմեռեալս՝ ըստ հաւատոց, և խորհրդոց, և բանից, և գործոց, բարեացն եղելոց՝ զբարիսն փոխադրելով հատուցումն, իսկ չարացն՝ զվճիռ դատաստանի տանջանացն։

Եւ ինքն թագաւորեսցէ ընդ նմին թագաւորեցելովքըն՝ յանկէտ և յանվախճան յաւիտենին, ծանուցեալ յայնժամ կատարելապէս՝ զոր այժմ չափաւորապէս ընկալաք զգիտութիւն հաւատոյ՝ որ 'ի Հայր, և յՈրդի, և 'ի Սուրբ Հոգին, որում փառք և զօրութիւն յաւիտեանս, Ամէն։

Արդ ինձ՝ որ յաղագս հաւատոյ Երրորդութեանն և մի Աստուածութեան, և մի տնօրէնութեան որդւոյ՝ Աստուծոյ մերում հաւատոյ դաւանութեան, 'ի խնդրոյ վեհագունիդ հրամանաց՝ ասացեալ դուզնաքեայ ինչ բան, բաւականասցի առ այժմուս, իբրև պատճառս տալով իմաստնոյդ՝ Աստուծոյ խրատու իմաստնոյն, իմաստնագոյն եւս լինել։

Նո

Նորին՝ Յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ։

Ասացուք սահմանս և յաղագս աւանդութեանց Եկեղեցւոյ՝ զոր ունիմք ՚ի հարցն առաջնոց, և ընդդէմ կարծիս՝ ոչ ուղղացն զնոյն, և զպատճառս իւրաքանչիւրոյն՝ եթէ վասն էր առնեմք, դիցուք առ ընթեր ճշմարտութիւն՝ ըստ վկայութեան Ս. Գ. և ոչ խաբէութիւն։

Եւ նախ՝ վասն սրբոյ հացի պատարագին՝ զոր մեք և հռոմայեցիք բաղարջ, և այլ Եկեղեցիք՝ խմորուն կատարեն, և իւրաքանչիւրոք՝ յիւրումն փութայ արդարանալ։ Բայց՝ ճշմարտութեան սիրողաց արժան է՝ ոչ սովորութեան ծառայել՝ որպէս ազգս, և ոչ անխրատութիւն արդարանալ՝ որպէս վիճաբանն, այլ ՚ի հոգևորական դրախտս՝ յԱստուածային գիրս շրջել միտք, և խնդրել ՚ի նոցանէ զպտուղն ճշմարիտ, և առա ճաշակել։

Արդ՝ յաղագս նախատացեալ պատճառի խորհրդոյս՝ այսպէս գտանեմք ՚ի նոսա զճշմարտութիւնն։

Խորհուրդ անօրէնութեան ՚Քի՝ որպէս ամենեքեան, [illegible] և մարմնոյ և արեան նորա կատարումն՝ գուշակեցան մարգարէքն, ՚ի ձեռն բազմադիմի օրինակաց և բանից։

Եւ [illegible] նշանն Աբրահամու՝ որ օրինակ էր մեր նախանձորդաց, ոչ խմորուն, այլ բաղարջ հացիւ կերակրեցաւ ԱԾ, ըստ ասելոյն առ Սառա, փութա՛, թրեա՛ գրիւս երիս ալեր նաշհոյ, և արա նկանակս. որև՝ զնոյն նշանութիւն հացի՝ որպէս [illegible] յայնժամ՝ այժմ ՚ի մարդեղութեան իւրում՝ մարմին իւր [illegible] ըստ [illegible] որդւոցն Աբրահամու, փոխանակ որթուն և բաղարջին՝ զոր եկեր ՚ի Մամբրէ, ընդ հովանեաւ կաղնւոյն։ Եւ զի՝ բաղարջ էր հացն՝ զոր եփեաց Սառա, յայտ է ՚ի դիմացն՝ զոր ետ հրեշտակացն, զի դիւրաւ է թէ՝ բաղարջ եփեաց, և ետ նոցա։

Եւ որդիքն Իսրայէլի՝ յորժամ հանդերձեալ էին ելանել յԵգիպտոսէ, օրինադրեաց նոցա Մովսէս, ոչ բառնալ խմորեալ ընդ ինքեանս, այլ անհետ առնել զնա՝ զաւուրս եօթն ՚ի տանց իւրեանց, և բաղարջիւ միայն կերակրել՝ զաւուրս

եօ

եօթանցն ։ Որ էր օրինակ բաղարջն՝ Տեառնականն խորհրդոյն, և եօթն աւուրքն՝ եօթն դարու կենցաղոյս։ Որովք օրինադրէ ամենեցուն՝ որք յեգիպտականն անհաւատութենէն ելանիցեն, և վերին աշխարհն աճեսեալ ճանապարհորդիցեն, խմոր մեղաց՝ ոչ բառնալ ընդ ինքեանս։ Այլ կերակրել անապական և Ածային հացիւն, զգալեաւն և իմանալեաւն, այսինքն՝ մարմնովն իւրով՝ և բանիւն, որ ելանէ ՚ի բերանոյ նորա։

Այլև՝ զմանանայն՝ որ օրինակ էր կենացս հացի՝ ըստ պօղոսի, անխմոր՝ և ոչ խմորեալ՝ ուտէին յանապատին։

Եւ դարձեալ՝ յորժամ հրամայեաց Ած մօսէսի՝ ունայնաձեռն ոչ երևել առաջի նորա, զհացն զառաջաւորութեան օրինադրէր՝ դնել ՚ի սեղանն քաւութեան՝ յիւրաքանչիւրում աւուր, յօրինակ մարմնոյն Քի։ Եւ զի՝ բաղարջ էր այն՝ և ոչ խմորուն, յայտ առնէ բանն աբիաթարու քահանայի՝ առ դաւիթ ասացեալ, հաց պիղծ՝ առէ, այսինքն՝ խմորեալ՝ ոչ գոյ ՚ի ձեռին իմում, այլ հացն սուրբ զառաջաւորութեան՝ որ է բաղարջն։

Եւ զի առ հնովն՝ օրինակք բազումք են, եկեսցուք առ նորս, և ճշմարիտս։

Գառն ճշմարիտ՝ յորժամ եկեր զգառն օրինակին, և զբաղարջն ընդ եղեգին, յետ կատարելոյ զհինն՝ սկիզբն արար նորոյ ուխտին, ըստ Աւետարանական պատմութեանն, Եւ առեալ հաց ՚ի սեղանոյ անտի, յայտ է թէ՝ բաղարջ, քանզի առաջին օր էր բաղարջակերացն, ասաց՝ այս է իմ մարմին։

Նաև՝ կուսածին և անապականն մարմնոյն՝ ՚ի դէպ է բաղարջն, և ոչ խմորեալն՝ լինել օրինակ։

Արդ՝ բաղարջով կատարողացս զխորհուրդն սուրբ, այս՝ և որ նման սոցին՝ ՚ի գիրս սուրբս աւանդեալս։

Եւ պատճառ պատասխանատուութե կայ, և որոց խմորովն կատարեն՝ առնուլ բանս ինչ ՚ի վկայութէ գրոց, զի զիւրեանցն հաստատեսցեն, նախ՝ զգովութիւն խմորոյն՝ որ ՚ի փրկչէն, այն՝ որ օրինակ բերէ արքայութեանն երկնից, որ ոչ է խորհուրդ՝ սրբոյ հացին, այլ յաղագս քարոզութե աւետարանին։ Զի եմուտ յաշխարհ՝ որպէս յալիւր, և որք ընկալան զնա՝ խմորեաց զամենն զնա, շարժելով ՚ի սէրն Ածյ

Առ

Ընդունին գիրք և 'ի չարեաց օրինակ զխմորն, որպէս Պօղոս ասէ, Զատիկ մեր զենաւ Քս, այսուհետև արասցուք տօն, մի՛ 'ի խմորս հին, և մի՛ 'ի խմորս չարութեան և անզգամութեան, այլ՝ յանխմորս սրբութեան, և ճշմարտութեան.

Ասէ և Ածաբանն Գրիգորիոս 'ի Պասեքի ճառէն, եթէ խմորեալն՝ ոչ լինի հաց կենդանական.

Այլ թէպէտ և յայնժամ՝ որ 'ի նմանէ աւանդեցաւ խորհուրդն՝ բաղարջով էր, ըստ յառաջ ասացելոցդ, բայց՝ յառաքելոցն աւանդեալքն՝ չունին տալ մեզ յայտնապէս՝ զցոյց ճշմարտութեան, բաղարջիւ լինել, եթէ խմորեալ հացիւ, քանզի՝ հաց միայն հրամայէին բերել հաւատացելոցն՝ որով կատարէին զխորհուրդն:

Եւ արդ՝ եթէ փոյթ էր հողւոյն, միայն հաճոյ լինել Այ՝ և միւսոյն ոչ, ցուցեալ էր Եկեղեցւոյ, կամ Առաքելովքն, և կամ Սբց Վարդապետացն բանիւք: Բայց հաստատեալ գիտեմք, եթէ ոչ այլ ինչ է հաճոյ Այ, բայց՝ ուղղափառ հաւատքն, և մաքուր վարքն: Այլ եթէ պարզ մտօք՝ և ոչ հերձուածողական ինչ կարծեօք՝ կատարեն, այսուքիկ աւանդութիւնք են ազգաց, և ոչ առաւելութիւն, կամ նուազութիւն ինչ 'ի հաւատս: Վասն որոյ՝ յորժամ գլուխն՝ որ է հաւատն, միանայ և յօդի 'ի գլուխն Քս, յայնժամ և անդամքն՝ որ են աւանդութիւնքն, ուղղին, և կամ հաճոյանան միմեանց՝ 'ի փառս Քի Այ մերոյ:

Ասացուք ըստ կարգի՝ և յաղագս բաժակի արեանն Տն, Զոր մեզ միայն հաստատեալ աւանդութիւն 'ի Սրբոյն Գրիգորէ, և ոչ առ այլ Եկեղեցիս, անապակ լինելով գինի՝ առանց խառնմանն ջրոյ:

Որոյ նախ և առաջին պատճառ, վասնզի՝ անապական դրոյն արեանն Քի՝ յաղագս ընդ անապական բանին միաւորութեան, 'ի նոյն խորհուրդ՝ և զբաժակ արեան նորա՝ անապական կատարեմք, որ 'ի հարցուածականն առաջնէն յայտնի է: Զի եթէ անխառն 'ի ջրոյ՝ գինին՝ անապական կոչի, յայտ է թէ՝ խառնեալն ընդ ջուր՝ ոչ է, և ոչ ասի անապական:

Եւ դարձեալ՝ զի Տէրն յորժամ առ 'ի ձեռն զբաժակն, և տուեալ՝ ասէ արբէք՝ նորոյ ուխտի, յաւելլ թէ՝ ոչ ար-

բեց ՚ի բերոյ որթոյ՝ մինչև արբից զդա ընդ ձեզ նոր՝ յարքայութեն Հօր իմոյ։

Եւ երանելին Յօհան Ոսկեբերան՝ ՚ի սոյն բանի մեկնութեն՝ որ ըստ Աւետարանին Մատթէի, ասէ թէ՝ այսու զմիւս չար հերձուածն՝ արմատաքի խլէ, զի են ոմանք՝ որ ՚ի սուրբ խորհուրդն՝ ջուր ՚ի կիր արկանեն։ Ի բերոյ որթոյ ասէ, և որթն՝ գինի և ոչ ջուր ծնանի։

Թէպէտ՝ և որոց համար թուի ջուր արկանելն, թերևս զբանս երանելոյն փութան, էին առ նմին ոմանք՝ որ լոկ ջրով զխորհուրդն առանդէին, զոր յաղագս նոցա ասէ, և ոչ վասն ՚ի գինին խառնելոյ։ Եւ մեք զանուն նոցա՝ ոչ երբեք լուաք, և ոչ ՚ի գիրս՝ զանխիմաստիցն զայն հերձուած՝ ընթերցաք։ Զի որք ջրախառն գինեաւ առնեն, թերևս ունին ինչ պատճառս. իսկ՝ որք լոկ ջրով՝ առանց խառնման գինւոյ, յո՞ր աղբերօք անուն կատարեն զայն, ՚ի քննին՝ ոչ երբէք։ Զի նա գինի առ ՚ի ձեռս՝ ըստ աւետարանչացն, և ասաց՝ այս է իմ արիւն, և ոչ ջուր։ Եւ այլ որք զայս խորհուրդ՝ ոչ կատարեալ՝ բաց ՚ի Քէ, ոչ գինեաւ, և ոչ ջրով, ապա յայտ է թէ՝ բարուրք են այսոքիկ, և ոչ ճշմարտութի։

Նաև՝ զառ ՚ի կողիցն տն՝ կրկին աղբերացն ջրոյ և արեան հասումն առնուն՝ որք զջուրն արկանեն, ՚ի վկայութի իւրեանց առանդից։

Եւ ո՞ր իմաստք են՝ զմեծն և զսքանչելի հրաշիցն այնոցիկ զկատարումն՝ կարծել վասն այսր պատճառի լինել։

Զի եթէ փոյթ ինչ էր այս՝ նմ, բաւական էր ՚ի միտս ուրուք հոգեկիր արանց, կամ յառաքելոցն, կամ յերևելի վարդապետաց Եկեղեցւոյ՝ արկանել, թէ՝ արժան է ջուր ՚ի բաժակն ՚ի տէրունական խառնել, և ոչ մինչ հակառակէր կատարել զհրամանսն։

Բայց՝ ոչ մի ՚ի բաժակն արկանելոյ եղ ջրոյն վասն ընդ արեանն, այլ՝ վասն ՚ի մահն Քի մկրտութե խորհրդոյ՝ ի առաքելոյս, որ առ Հռովմայեցիսն գրէ, [illegible] գիտեմք ասէ՝ զի որ միանգամ՝ ՚ի Քն մկրտեցաք, ՚ի մահ նորա մկրտեցաք։

Զոր և սուրբն Յօհան Ոսկեբերանն՝ ՚ի մեկնութեան նախին բանի Աւետարանին՝ որ ըստ Յօհաննու, ասէ թէ՝ ՚ի յերկուց աղբերացն՝ որ ելին ՚ի կողիցն, ծնեալ եկեղեց

ցի

ցի, քանզի՝ ջրովն ծնանիմք վերստին աւազանաւն, և արեամբն՝ սնանիմք ճաշակելով զնա։

Սմին համաձայն և Գրիգոր Նիւսացի, 'ի բանն՝ որ վն թաղմանն տն, 'ի դիմաց արեմաթացւոյն յովսեփայ՝ ասէ, շօշափեցից զանարատ կողս նորա, յորմէ աղբիւրացաւ արիւն խորհրդական, և ջուր՝ վերստին ծննդական։

Եւ Սբն Եփրեմ՝ որ յասորոց՝ ասէ, եւ 'ի նմանէ բղխումըն ջուրց, զի շիջուսցէ զհուրն՝ ադամայ առաջնոյ, և եղեւ լուծանել զծառայութեն չարաւն նր։ Եւ և արիւն ողորմութե՛, որով գնեաց զմեզ 'ի ծառայութե՛ անտի։ Եւ քանզի՝ յարենէ է տն կենդանութե՛, կենդանացոյց զմեզ արեամբն իւրով։

Եւ այլք բազումք 'ի վարդապետաց՝ որք յիշատակեցին զայս բան, 'ի սոյն դէմս մեկնեցին, զջուրն 'ի մկրտութե՛ խորհուրդ, և զարիւնն 'ի ճաշակման։

Այլ զոր վն հացին ասացաք թէ՝ ուղղափառ հաւատոյ և Սուրբ հարս պահանջէ 'ի մէջ ած, և ոչ կամ խմորուն հացիւ, և կամ անխմոր՝ կատարել զածային խորհուրդն, զնոյն ասասցուք՝ և յաղագս բաժակին, զի թէ ջրով որ կատարէ՝ և եթէ առանց ջրոյ, ոչ և ընդ միոյ 'ի սոցանէ՝ կամ փառս ընդունիցի յայ, և կամ տանջանս։ Այլ որք սուրբ սրտիւ, և ուղիղ հոգւով մատուցանեն, փառաւորին 'ի նմանէ։ Եւ որք անմաքուր խորհրդով, և վատթար գործովք, տանջանաց անկանիցին, որով օրինակաւ և կատարեսցեն, եթէ անապակ, և եթէ խառնեալ ընդ ջրոյ։

Զի եթէ փոյթ ինչ էր այ և ածայնոյն, և հաճոյ, և կամ այս ինչ, և կամ այն, որպէս զայլ պատուէրանս՝ գըրեալ էին և զայս ևս։ Բայց Պօղոս առ կորնթացիսն՝ յորժամ զտէրունական խորհրդոյն՝ յիշատակեաց զկատարումն, ոչ պատուիրեաց խմորեալ հացիւ, կամ անխմոր, և խառնեալ ընդ ջրոյ գինեաւ, կամ առանց ջրոյ կատարել, այլ զոր մանաւանդ խնդրելին էր այ։ Փորձեսցէ ասէ մարդ՝ զանձն իւր, և ապա 'ի հացէ անտի կերիցէ, և 'ի բաժակէն արբցէ, զի որ ուտէ և ըմպէ անարժանութ, 'ի դատաստան անձին իւրոյ՝ ուտէ և ըմպէ, և թէ՝ պարտական եղիցի մարմնոյ և արեանն տն։ Եւ այլ քարոզքն Ածային բանին՝ նոյնպէս՝ ոչ զնիւթոյն զանազանութե, այլ զարժանաւորութե քարոզեցին։

Եւ դարձեալ և այս՝ աւանդութիւն Եկեղեցւոյ հայաստանեայց՝ 'ի նախնեաց անտի սկսեալ. Զի զտօն ծննդեան և մկրտութեան Տն՝ կատարեմք 'ի միում աւուր, և այն՝ ոչ վայրապար, այլ՝ յայտ խորհրդապէս. Քանզի՝ մեր Եկեղեցիք՝ խնդրեանն այսպէս կատարէին, որ գիտելի է և ձեռամբ իմաստութեան. և թէպէտ և յետ ժամանակի՝ յայլ եկեղեցիս՝ զմի տօնն՝ յերկուս բաժանեցին, մեք զաւանդեալն մեր 'ի Սրբոյն Գրիգորէ՝ անփոփոխելի պահեցաք, ըստ վկայութեան Սրբոյ Մեսրոպեանցին Ղուկայ, որպէս պատմէ յետ պապանձելոյն զաքարեայ, և ասէ թէ՝ յետ աւուրցն այնոցիկ՝ գնաց 'ի տուն իւր, և թէ՝ յղացաւ Եղիսաբէթ կին նորա.

Եւ աւուրք պաշտաման Քահանայութեան Զաքարեայ՝ կոչէ զհինգ օրեայ տօնն քաւութեան, և զեօթն օրեայ տօնն տաղաւարահարացն, որ լինէին երկոտասան աւուրք. Եւ տօնն Հրեշտակին, և պապանձումն զաքարեայ, յաւուր ջնումն աւուր տօնի քաւութեան եղև, որ էր ըստ եբրայեցւոցն՝ Թշրինի տասն, և ըստ Հռոմայեցւոցն՝ սեպտեմբերի քսան և եօթն, յորում ասէք դուք լինել զյղութիւն եղիսաբեթի. Այլ թէ՝ 'ի նմին յաւուր՝ յորժամ ետ աւետիս նմա՝ Հրեշտակապետն Գաբրիէլ՝ գնաց 'ի տուն իւր, և յղացաւ եղիսաբէթ կին նորա, և ոչ մնաց տօնին կատարման՝ ըստ Մեսրոպեանցին պատմելոյ, թէ՝ իբրև լցան աւուրք պաշտաման նորա, ապա գնաց 'ի տուն իւր, որ էր 'ի լեռնակողմն Հրէաստանի՝ քաղաքն Յուդայ. Այս՝ և զաւետիսն կուսին՝ 'ի քսան և հինգն մարտի՝ ասէք լինել, և զծնունդն՝ 'ի քսան և հինգն դեկտեմբերի, երկոտասան աւուրբք յառաջագոյն.

Իսկ մեք՝ ըստ սրբոյ Մեսրոպեանցին Ղուկայ պատմութեան, յետ երկուց տօնից՝ երկոտասան աւուրցն լրման, զորս աւուր պաշտաման կոչէ զաքարեայ, ասեմք զյղութիւն եղիսաբեթի, որ էր 'ի Թշրինի քսան երեք, և Հոկտեմբերի 'ի տասն, և լինի ըստ այսմ կարգի՝ աւետիս Կուսին Մարտամսու յաւուր ելից 'ի եօթն, և ծնունդն՝ յունվարի 'ի վեց, և 'ի նմին աւուր՝ յորում ծնաւ ըստ Թուոց ամացն, թէ և ոչ պատկեր աւուրցն 'ի վեցն յունվարի, յետ երեսուն ամաց եղև

մկրտութիւնն 'ի յորդանան, և այս անսխալ է։

Ո՛չ եթէ երեւմամբայ էր և ո՛չ առաւել և ո՛չ նուազ, ապա՝ յաւուր ծննդեանն հարկ է լինել և օր մկրտութեանն, եթէ պարտ է երեւուն ամին՝ անթերի մնալ և անաւելորդ։

Իսկ եթէ՝ յառաջ ծնունդ է, և յետ երկոտասան աւուրց մկրտութիւն, ո՛չ պարտ էր ասել, թէ յո՛ էր ամաց իբրև երեսնից, այլ թէ՝ յո՛ էր ամաց իբրև երեսուն և մեկ սկսեալ. որպէս և յանուանց աւուրցս է տեսանել, զի 'ի ծագել արեւուն՝ ո՛չ զանցեալ աւուրն կոչեմք զանուն, այլ զնորոյն։ Նա՛ 'ի թուականութե ամաց և ամսոց՝ յառաջնում աւուրն՝ յորժամ նորն սկսանի, նորոյն վերայ կոչի անուն, և ո՛չ հնոյն։ Այսոն այսր ամի՝ ուղիղ և յայտնի պատճառաւ՝ առաջին հարքն հաստատեցին՝ 'ի միում աւուր զծննդեանն և զմկրտութեն տօնել խորհուրդ, և մեք նոցին հետեւեալք՝ զնոցայն կատարեմք աւանդութիւն։

Զանդերձ ասացելովքս՝ է և այլ ինչ բան խորհրդական։ Զի որպէս ծնաւ ըստ մարմնոյ 'ի կուսէն սրբոյ, ծնաւ մկրտութեամբ և 'ի յորդանանէ՝ յորինակ մեզ. և զի երկոքին ծնունդք են, թէպէտ և զանազանեալք 'ի միմեանց՝ խորհրդեամբ և ժամանակաւ, վն այնորիկ սահմանեցաւ 'ի միասին տօնել, զառաջնոյ ծննդեանն, և զերկրորդ ծնունդն։

Այն և այլ ևս յոլովագոյն պատճառք՝ յաղագս արդարացուցանելոյ զմեր աւանդութի, և ցուցանել համաձայն՝ առաջնոց հարցն աւանդից, և թէ՝ ո՛չ ինքնահաճութեամբ բաժանեցաք մեք՝ յայլոց ազգաց, այսպէս տօնելովս։ Այլ այլք զմեր ունելով յառաջագոյն, և փոխեցին որպէս կամեցան, զոր այժմս ունին։

Իսկ՝ մեր եկեղեցի՝ անփոփոխ զառաջնոյն պահեաց սովորութիւն, եթէ հեռաւորութե աշխարհին պատճառաւ, և եթէ բաժանելոյն աղագաւ՝ յոյժ և ատելութեն եմուտ սխալ 'ի ներքս՝ ո՛չ գիտեմք։

Վասնզի ատելութիւն՝ ո՛չ միայն նորաձեւ աւանդութեց՝ ո՛չ տայ տեղի, այլ և՝ 'ի հին սովորութեանցն 'ի բաց լինել հնարէ, վասն ատելութե հակառակին։

Իսկ՝ սիրոյն զօրութիւն՝ ո՛չ միայն զպատշաճն և զդիւրինն, այլ և՝ զանդէպն և զդժուարինն՝ տայ յանձնառնուլ,

վասն հաճոյից օրինացն։

Եւ առաջի սմա թուի՝ յայտնի իրս պահանջել՝ ոչ թէ անմտէ, կամ պատկեր անձուին, այլ՝ հակառակութեան մտացն։ Զի յորում անձուր և տանէ որ անհակառակութիւն՝ հաճոյ է Տն։

Զինչ այլ մեծագոյն քան զԶատկին խորհուրդ, յորում բազում եկեղեցիք՝ բաժանեալ էին յառաջագոյն, որպէս պատմէ Եւսեբիոս կեսարացի, եթէ կողմանք ասիացւոց՝ յաւուր հինգշաբաթւոջն՝ ըստ հնոյ զատկին տօնէին ա-ւանդէ 'ի Յօհաննէ Աւետարանչէ։ Իսկ եկեղեցիքն հռոմայեցւոց՝ յաւուր միաշաբաթւոջն, 'ի յարութեան Տն մերոյ։ Եւ փոքր մի հակառակեցան՝ խաղաղութեան զաւրձեալ. Եւրն [illegible] առաքելոցն՝ [illegible], զի առաջ [illegible] եւ [illegible], եթէ՝ [illegible] հաւանոյն միաբանութեան՝ մի և նոյն է, չէ պարտ յաղագս անտից բա-ժանմանն՝ հակառակել ընդ միմեանս, զի ամ ինչ՝ որ 'ի միասնութիւն է, հաճոյապարտ է 'ի նմանէ ընկալեալ են։

Զոր օրինակ զգիրս մարգարէից, աւետարանաց, կամ առա-քելական թղթոցն՝ ոչ ինչ միայն զմտացն, յորժամ ընթերցեն՝ առաջի [illegible]։ Այսպէս և որք զհաճոյսն՝ առաջի աւետարանին, չէ ինչ միայն ոգւոյ՝ տանից կամ այլ ինչ անհնազանդութեան Եկե-ղեցւոյ՝ զանազանութիւն։

Արդ և երեքօրեան քառասնորդութեան՝ զոր Հայկա-կանք ձեռ, եթէ անձնանորութեան մեծապատիւն, և մեք 'ի դէմս որդւոց միայն, և եկեղեցին խորհրդականք և զեղջե-ցիկք, յորժամ առանց հակառակութեան ոչ առնէ։ Իսկ հակառակութիւն՝ հաշտութեան եղեւ պատճառ՝ [illegible] փառաբանութեան։

Զի ձևոյս զեղջ զպարտաւորել անձն զՔրիստոսին սուրբ խաչեալ, և մերըս՝ ընդդիմաբանեալ թէ պահեսցեն վասն մեր՝ ոչ սուրբ Տր՝ և հզօր՝ և անմահ՝ 'ի մահուն, այլ մարդ սոսկ։ Եւ եկեղեցին փութայ յաղթել՝ ոչ բարւոք յաղթութիւն միմեանց։

Ո՞րչ մեք թէպէտ և զայս առ որդէ միայն առնելոյ բա առաջնոյ հօրց անանդից, բայց 'ի բազում պաշտամանս

Եկեղեցւոյ՝ զերիս սրբասացութիւնս սրովբէիցն՝ Երրոր-
դութեան սրբոյ երգեմք: Եւ թէ լինէր միաբանութիւն եր-
կուքանչիւրոց կողմանց, ըստ կամացն Ա. Ծ., այսպէս դիւրաւ
յօրինէին՝ փոքր ինչ բանի յաւելուածով: Զառաջին զե-
րիս սրբասացութիւնս, զԱծն, և զհզօրն՝ և զանմահն, հօր
տալ. և զերկրորդ երիսն՝ որդւոյ. և զերրորդն, հոգւոյն
սրբոյ: Զի իւրաքանչիւր անձնաւորութեն՝ անթերի և հա-
մապատիւ՝ զերիսն տայցուք, և ոչ կիսակատար և ըստ մասին:
Որպէս թէ՝ Ած միայն ասել զհայր, և հզօր՝ անմահ՝ ոչ: Եւ
հզօր միայն զորդի, և Ած՝ և անմահ՝ ոչ: Եւ անմահ միայն
զհոգի, և Ած, և հզօր՝ ոչ: Այլ երեքեան մի ըստ միոջէ՝ զերիսն
տալ կատարելապէս արժան է:

Ի նոյն կերպարանս երեւի ծննդեան հակառակութեան և ոչ
ճշմարտութեան, և որ յաղագս որոյ խաչին բեւեռեալ
մարմնոյ, և կամ՝ առանց բեւեռի, զոր ոչ ասեմք:

Եթէ յորոց պատուէրանաց ընկալաք՝ զմեր պատուել
պատկերսն, և զխաչին նկարագրել, յայնպիսոյն ոչ ուսաք,
այլ՝ ի չարին խորհրդոյ, զի զհնարս իւր՝ առաջ հնչեսցէ
բեւեռեալ երկրպագութեան նշանին, զոյն և խորտակել՝ նորին
նշանամբ՝ ի կատարածին խաչեան, և՝ ի կործանում փրկութեանս:

Զի եթէ ոչ այս՝ զի՞նչ առաւելք պատմեսցուք զխաչս
՝ի հանգոյն բեւեռն էր, մեզ յայտնապէս դիտելի՝ ոչ այլ
ինչ, այլ՝ յաղագս անբաւ պահելոյ զերկրպագութեան՝ ՝ի մէջ միաբանեց
զհայոց, և յայտ առնէ, զի զսուրբ եղիցի և զարժանաւորս
նշանին նախնեացն՝ միայնարարք են, և ոչ յերկրաց՝ զբեւեռեալսն
ոչ բեւեռեմք, զի և նոյն խաչ Խաչին առաջին՝ ոչ առանց բեւե-
ռոյ խմանի, առ ՝ի կարող լինելոյ զծանրութիւն մարմնոյն
կրելոյ:

Իսկ որ խնամոյն ուսուցանէ մեզ՝ բեւեռն խաչին՝ որ
՝ի վերուստ ՝ի խոնարհ իջանէ, Աստուածութեան սահ օրինակ: Իսկ
խոտորնակն՝ մարդկութեան: Եւ բեւեռն՝ սորին կապակցու-
թեան, որ միաւորեաց զԱծ՝ ընդ մարդկան:

Արդ որ ոչ վկայեն հաւատոյ՝ ՝ի բեւեռելոյ խաչին լինելի,
և կամ՝ օգուտ՝ յոչ բեւեռելոյն, տգիտոյ՝ և ոչ կատարելոյ
խնձ թուի այսպիսեաց իրաց հակառակութիւն:

Եւ

Եւ կամ՝ յաղագս ողջնութեան խաչի, զոր ունիցի 'ի նմա նոյնն հարցն, որում՝ և ձեռքն հոգևորականին։ Զոր և յայսմ աշխարհի՝ զնոյն լոկ տեսաք յունարէն գրով՝ 'ի հին կտակարանս։

Եւ ո՞ր 'ի դէպ է, ընթեռնուլ նախ զնմանէն զբանն՝ զմարգարէիցն՝ և զառաքելոցն, և զաւետարանչացն, և զաւրէնս քահանայականս՝ 'ի վերայ նորա յօրինեալ խաչին, և ապա կանգնել յարկերս, և երկրպագանել. եթէ՝ լոկ նիւթոյն՝ առանց ողջնութեան՝ զերկրպագութիւն մատուցանել. որպէս զի՝ ոմն ձև քառակուսի՝ երկրպագելի եղիցի՝ որ 'ի նկարակերպութիւնս, կամ յայլ նիւթս աշխարհի։

Բաց յայսմ և յաղագս վերջակարգին պատկերի, և սրբոց նորին, 'ի վերայ սմին աղանդոյ՝ հակառակութիւն ցուցանի, և ձեռն առ պինդ պատճառաւ՝ երբեք ոչինչ բարձիւն 'ի միջոյ կարծելով՝ հանգիստ ազգս։ Բայց մեք և որ բանն մեզ՝ այսպէս ունիցի՝ և զորոշեմք, թէ որպէս զմարմնոյն խաչ ուսանելով՝ ոչ երկեւեալ նիւթոյն, այլ աներևութութեան այն, որ 'ի նմա, զերկրպագութիւն մատուցանեմք։ Բայց յաղագս վերջակարգ պատկերին՝ ոչ նիւթոյն և ոչ գոյն, այլ ՚ի ԲՆ. սոյն պատկեր աներևութութեան այն հոգւոյ, երկրպագանեմք նմա։

Իսկ զարդոյն զպատկերս պատուեմք և համբուրեմք, մտօք և բարեխօս առ Աստուած ունելով։

Սակայն՝ զերկրպագութիւն Աստուծոյ 'ի ձեռն նորա մատուցանեմք։ Զի երկրպագելի միայն արարչին է պատկերն, և ոչ ստեղծուածոց։

Եւ քանզի՝ պատկեր և անուն՝ մի և նոյն են լոկ կերպարանն, և սոյն ձայն՝ նշանակեցելոյ իրին։ Այս աչաց, և միւսն ականջաց տալով զգայութիւն և էութիւն։

Եւ երկրպագութիւն է և մարդոյ, ոչ արժանաւորաց միայն, այլ՝ անարժանից, որպէս զպատկերն այն որ է հայլին, ընդ միջոյ կրէ կենդանութիւն, և յետ բաժանելոյն 'ի միմեանց, երկոցուն միայն են երկրպագելի մարմինք։ Աստուած՝ հանգուցեալ է Քն. յաւելորս նորա՝ բան զբերելեալն։ Իսկ

ան

անսրբոցն ոչ երբէք, քանզի՝ թափուր են յածայնոյն։ Բայց՝ անուն և պատկեր՝ առանց էութեան, ոչ սրբոց է երկրպագելի, և ոչ անսրբոց։ Քանզի՝ արարչին միայն է ընդ ամ տեղիս լինել էութբ, որով և երկրպագի էութիւնն աներևոյթ, յերևելի պատկեր նորին և յանուն։ Իսկ՝ արարածական բնութե էութիւն՝ 'ի տեղւոջ յորում է՝ պարունակի, և ոչ յամենուրեք։ Եւ վասնզի՝ ոչ ունի երևելին պատկեր՝ զսկզբնատիպն իւր՝ աներևութաբար ընդ ինքեան՝ որպէս արարչին պատկեր. ոչ է երկրպագելի՝ որպէս նա, այլ և առաքելականն վկայէ բան, եթէ՝ հնազանդութեն որդւոյ՝ մերով բնութբս հօր՝ մինչև 'ի Խաչին մահ, այս փոխադարձ եղև առ 'ի Հօրէ, զի շնորհեաց նմա անուն ասէ, որ 'ի վեր է քան զամ անուն։ Եւ ո՞րով իւիք անուն նորա՝ վերագոյն է քան զամ անուն, ինքն յայտ առնէ, զի յանուն Յի Քի ասէ՝ ամ ծունր կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւորաց, և սանդարամետականաց։

Եւ արդ՝ եթէ անունն Քի որև պատկերն, այնու 'ի վեր է քան զամ անուն, զի երկրպագեն յերկնաւորաց և յերկրաւորաց, որպէս ասաց Պօղոս, և զի՝ պատկերն և անունն համապատիւք են, որպէս ասացաք, ապա չէ օրէն՝ զծառայական բնութե անուն և պատկեր, հաւասար բնութբ տիրականին պատկերի և անուան՝ երկրպագելի վարկանել։ Այլ պարտ է արարածոյս՝ արարչին միայն և փրկչին նկարագրեալ կերպարանի՝ զերկրպագութիւնն ընծայել։

Իսկ զմեծերիմ ծառայիցն Այ՝ զպատկերս և զանուանս՝ որ են բնութբ ծառայակիցք մեր, պատուել և յարգել՝ ըստ իւրաքանչիւր արժանաւորութե, և զառաքինութե նոցին զփառս՝ 'ի տեսլենէ իւրաքանչիւր պատկերացն, օրինակ առնուլ մեզ՝ բարեաց. զմտաւ ածելով զզանազան ձգնութինց՝ որ վս ճշմարտութենն. և որ անարգէ զնս, ոչ զնիւթ պատկերին համարեսցի անարգել, այլ զայն՝ յորոյ անուն պատակերն է նկարագրեալ, եթէ զնս, և եթէ զծառայից նր։

Թողից ասել՝ և որ վասն առաջաւորին պահոց՝ առաս-
պելականութիւն, 'ի ձերոց այսր յօղեալ վասն մեր։

Սարգիս անուն կրօնաւոր՝ էշ ունելով և բոկոտն, և ակնդէտ նորա՝ յառաջընթաց լինելով 'ի տեղիս՝ ուր հանդերձեալ լինէր ընթանալ սուրբին, աւետիս տալով գալըստեան նր՝ զի ընդառաջ ընթասցեն նմա, և 'ի շան նորին՝ անուն, վասն առաջաւոր լինելոյն՝ եդեալ անուն մեր՝ պանուն պահոցն, 'ի սրբոյն այն օրինադրութէ։ Որ վերագոյն՝ այս զրպարտութե աստուծած զմէնջ, քան զհեթանոսականացն առասպելեալ ծաղկանութիւնսն։ Նյականէ է ծնունդն աստեղութե, զի համբաւուց բարեաց՝ յաղագս աստեղոյն լինուն զելելոյ, և ուսա վերկանին, և սուտե և առասպելեաց բանից՝ բանան յօժարութիւ, և ճշմարիտ համարին, որպէս և մինչև այսու է տեսանել, զի թէ տակաւին 'ի խաւարի անգիտութեն նստէաք՝ որպէս 'ի կռապաշտութեն, չէր հնար այսպիսում ծիծաղական աւանդից հաւանել, թող թէ այժմուս՝ մինչ լցեալ է երկիր ամ՝՝ գիտութ՛ ան, և լոյսն իմաստութե՝ ծագեալէ յաշխարհ։

Նայլ մեք՝ զի առաջաւոր անուանեմք զպահսն զայն, առաջին այս է պատճառ, զի յառաջ գոլով քան զպահսն քառասնորդաց, և ոչ զկարապետ և զնախընթաց է նմին։

Երկրորդ՝ զի հայաստանեայցս ազգի՝ առաջին՝ այն են պահք, 'ի Սրբոյն Գրիգորէ հաստատեալ՝ յորժամ եկն 'ի վիրապէն, անսուաղութ՛ կեալ՝ օրինադրելով հարուածոցն՝ զաւուրս հինգ, յաղագս պատուհասին եղելոյ՝ բժշկութե։ Վասն որոյ՝ և բազումք ըստ նախնեացն սովորութե՝ ծոմապահութ՛ զաւուրսն զայնոսիկ անցուցանեն։ Զոր և յետոյ պատշաճ համարեցան, ընդ նինուէացւոցն պահոց՝ զայս կարգել պահք, ըստ տարոյն, և եգիպտացւոյն, ոչ և պահեն սրբութ՛։ Իսկ այն՝ զի յետ կատարման պահոյն՝ զՍրբոյն Սարգսի զօրավարի կատարեմք զյիշատակ, այս է պատճառ։ Քանզի՝ զկնի ժամանակի՝ 'ի նոյն թիւ ամաց, 'ի յերեւումն Յունվարի կատարեցաւ նա, վկայական արեամբ վասն Քի։ Վասն այնորիկ՝ սահմանեցին յաւուր շաբաթու՝ այնորիկ՝ զնորայն տօնի կատարել զյիշատակ։ Որպէս յառա

ջին շաբաթու քառասնորդացն՝ զՍրբոյն Թէոդորոսի տօնախմբեն, զոր յիշատակէ՝ ամ՝ հաւատացեալք 'ի Քն։

Եւ էր սա՝ ըստ պատմութեան սորին, իշխան երևելի աշխարհին զամիրաց, յաւուրս կոստանդիանոսի մեծի, քաջամարտիկ գոլով 'ի պատերազմունս բարբարոսաց, և բարեպաշտութեան հաւատով զարդարեալ 'ի Քն։ Եւ 'ի Թագաւորել յանցաւորին յուլիանոսի՝ փախուցեալ 'ի պարս, և անտանօր պսակեցաւ 'ի Քէ, հանդերձ որդւովն իւրով՝ Հկայևով՝ առաջի արքային պարսից շապհոյ՝ զբարւոք դաւանութե հաւատոյն, հատեալ զգլուխն սուսերաւ։

Արդ՝ այս ինչ որ յաղագս աւանդութեան հաւատոյ, և կարգաց Եկեղեցւոյ, գրեցաւ 'ի մենջ սակաւուք, յոր ժամ՝ ընթերցցի առաջի գերակատար իմաստութեան սուրբ Թագաւորութեան ձերոյ, մի կարծեսցի խաբէութեան և մարդահաճութեան ախտիւ՝ զայսոսիկ գրել մեզ, որպէս Թէ՝ զայլ ինչ խօսել գրելովս, և զայլ ինչ ունել ծածկեալ 'ի սրտի։ Եւ որ զայս առնէ՝ ցրուեսցէ ած զոսկերս նորա՝ ըստ բանի մարգարէին, որ վասն մարդահաճոյիցն։ Քանզի՝ լոյս հաւատոյ՝ ոչ ընդ գրուանաւ խաւարի ծածկի, այլ 'ի վերայ աշտանակի ճշմարտութեան եդեալ լինի։ Իսկ ծածկեալն հաւատ՝ փոքր մի՝ և հաւատարէ անհաւատութեն, զի խաբէութիւն է և ոչ ճշմարտութիւն։

Բայց դուզնաքեայ բանիս մերոյ սերմն՝ 'ի բարի և 'ի պարարտ անդս մտաց ձերոց սերմանեալ՝ աճեցունս և բազմապատիկս արասցէ Տն, և մի լիցի փշովք հեղձեալ, և կամ բուսեալ առանց արմատոյ, և արագ ցամաքել, և կամ յօդային Թռչնոցն կերեալ։ Բայց պտղաբերելով զպտուղ սիրոյ և խաղաղութեան՝ 'ի պատճառս առաջիկայիս գործոյ, ոչ միայն 'ի Թիւ առաջնոյն և միջնոյ՝ զոմելի երկրին պտղաբերութե, այլ՝ հարիւրաւոր 'ի չափ երրորդին, որով և վարձս՝ ընդ բանաւոր երկրի մշակացն՝ ըստ չափոյ պտղաբերութեան ընկալջիք 'ի Քէ յՍ.Տ։ Որում փառք և զօրութիւն՝ ընդ Հօր և ընդ Հոգւոյն Սրբոյ, Այժմ և միշտ և յաւիտեանս։

լմե Արդ՝ առեալ զնամակս 'ի ձեռս Թագաւորին ընթանայր 'ի մեծ Եկեղեցին, ցուցանելով աւետաբերսն Հայրապետին, և համագումար դասուց Եկեղեցականացն։ Որոց հաւանութեամբ ընկալեալ՝ չինէին յառաջին գայթակղութիւն՝ զոր ունէին առ Եկեղեցիս Հայոց, մանաւանդ և սկիզբն արկանէին միաւորութեան, և լուծանելոյ զկրճիմն պառակտութեան։

Բայց զի՝ Թագաւորն՝ արեւմտական աշխարհին չփոթմամբք զբաղեալ, անկարանայր գելոն յարևելս՝ ըստ հայցուածոյ Հայրապետին, զՌայր ումն ծնրատարրաքան Փիլիսոփայ՝ արտաքին գրովք կրթեալ, և Եկեղեցական ուսմամբ ճոխացեալ, վերստին առաքէր առ Հայրապետն, 'ի հարց՝ և 'ի փորձ։ Որպէսզի՝ ամենեքին 'ի վերայ հասցէ ճշմարտապէս կամաց հայաստանեայց՝ թէ անտրժելի է և նոցա միաւորութեան խնդիր։ Որդ եկեալ՝ զնամակս Ռոքային՝ մատուցանէր պապին օրինակաւ։

Թուղթ [illegible] Բասիլին՝ Թագաւորին Հռոմայ Մանուէլի, Ըս Տէր Կաթուղիկոս Հայոց, Ողջոյն խորհրդոյ ընդհանուրն՝ երկրպագութեան տեառն և սէր։

Մանուէլ քո այդ հաճատարիմ Թագաւոր ծիրանածին՝ Բծապսակեալ Բրքայ, հզօր և բարձր միշտ, օգոստոս և ինքնակալ Հռոմայ Կոմնենոս, յոյ հաստատուն պատուհական և իմաստուն Կաթուղիկոսի Հայոց տն Ներսիսի՝ ողջոյն սիրոյ առաքեմք։

Թագաւորութեանս մերում՝ 'ի վաղ ժամանակաց ծանուցաւ, բարեոք մտածութիւն ձեր, և կամ սակս միաւորութեան Եկեղեցւոյ, և ուղղափառ հաւատոյ։ Եւ քանզի՝ անկարօտ էք վերստին ուսանել, յաղագս պատշաճ գոլոյ ձեզ՝ համախոհ լինելոյ յայսմ ուղղափառ Եկեղեցւոյ, և հաստատել զմիաբանութիւն ձեր՝ ընդ Մեծազան Պատրի-

արքիս, և ըստ Ա՟ծայնոյ ժողովոյս: Որով և մեծապէս զուի խնամ-տունի ձեր, և երկիւղածութի, և վարձատրութիւն 'ի Տէ, բա-րեաւք չափ՝ նահատակայն, մն զլուխ անկեան լինելոյ ձեր՝ յետ զլխոյն Եկեղեցւոյ, երկուց բաժանեալ որոնց միացու-ցէք: Վ՟ն որոյ՝ և զԼիզիոն՝ Թագաւորութ մերոյ զՄայխստա Թէօդուխանոս՝ առ ձեզ երկիւղածուի առաքեաց Թագաւո-րութիւն մեր, ընդ նմին և զՀայր վանաց Հայոց, որ 'ի փիլիպ-պու պօլսեաց յաշխարհէն՝ զՅօհաննէս, Մականուն՝ ուղ-ման, որք՝ զոր միանգամ՝ պատմեն ձեզ, յաղագս այսր իրի պատճառանաց, որպէս 'ի Թագաւորութէ մերմէ խօսեցեալ՝ համարեցարուք լսել, յորմէ կարօղ է՝ հանձարեղութին ձեր՝ ծանուցել 'ի սակաւուց՝ զբովանդակ իմաստս բանին:

Եւ այսոյիկ լինելով բարեաց կատարումն, Նախ՝ Ա՟ծայ-ին մարդասիրութին վայելեցէք անձանց՝ և համօրէն ազգի լի-նելով առիթ փրկուե, սակս միաւորութե անդամոց Եկեղե-ցւոյ, և յետ այնորիկ՝ շնորհի Թագաւորութեա մերոյ բազմ-պատիկ բարեմասնութե՝ ը՟ կամաց ձեր և խնդրոյ, ողջ լերուք: Գրեցաւ յամսեանն Մայիս, յընդիքտիոնին յերեքն:

Ընթերցեալ զայս Սրբոյ Հայրապետին՝ սկիզբն առնէր յմբ հարցաքննութե, ընդ այրն իմաստասէր, և 'ի բազում ժամանակս զեղ երէին առ Ա՟ծաշունչ գիրս, էր ինչ՝ որ ընդ մի օրինակաւ նայէին, և էր ինչ՝ զոր իւրաքանչիւրոք այլով օրինակաւ Թարգմանէր, և մանաւանդ զԹուղթս սէյն կիւր-ղի՝ որ առ սեկունդոս, զառաջինն՝ և զերկրորդն, որ յայս առ-նէ 'ի բանս իւր, Թէ որպէս հարքն ասացին, մի է բնութե բանին մարմնացելոյ, առ այս ոչ կամէր իմաստասէրն անցա-նել ասելոյ՝ անձառ միաւորութեն՝ մի բնութիւն, այլ զերկուց բնութեանցն յատկութիւն, անշփոթ պահելով: Իսկ Հայրապետն Սուրբ՝ երկոքումբքն սպառազինէր, ըստ առաջին Սրբոյն, ընդդէմ՝ նեստորականացն միաւորելով, և առ եւտիքէանոսսն զյատկութիւնն ճշմարտելով:

Եւ յաղագս այսր իրի՝ վերստին գրէր Թուղթ առ Թագաւորն, երեքկին դաւանութե, և առաքէր ընդ իմաստ-նոյ առն՝ այսպիսի օրինակաւ:

Պատասխանի թղթոյն՝ Մեծի Թագաւորին Հոռոմոց Կիր Մանուէլի, Գրեալ Ներսէսի Կաթողիկոսի՝ վասն ճշմարիտ դաւանութեան հաւատոյ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ։

Հրամանք խնդրանակալութեան ձերոյ՝ ով քրիստոսապսակեալ Արքայ Հռոմայեցւոց՝ միշտ յաղթող օգոստէ, սիրող բարեպաշտութեան և խաղաղութեան Եկեղեցւոյ, էհաս առ նուաստս՝ յաղօթարարս՝ Սուրբ Թագաւորութեանդ։ Յորմէ ծանեաք զկամս ձեր, Աստուծոյն հետեւող կամաց։

Զի որպէս անուանակոչութեանն՝ այսպէս և գործոյ ճշմարիտ էմմանուէլին՝ փութայք լինել նմանօղ, այն՝ որ արար խաղաղութիւն յերկինս և յերկրի, և զմիջնորմն ցանկոյն քակեաց՝ ըստ Առաքելոյ։

Ընդ գրաւորական հրամանիս՝ ծանուցին և բանաւորս, զհրամայեալսն առ 'ի ձէնջ բան, Առաքեալքս 'ի Սուրբ Թագաւորութենէդ՝ փիլիսոփայս Մայիստր Թէոռիանոս, և համազգի մեր և համակրօն Յովհաննէս Հայր վանաց։ Յորոց ծանեաք՝ ծայրագոյն ունել ձեզ յօժարութիւն կամաց՝ յաղագս միաբանութեան Կաթուղիկէ Եկեղեցւոյ։ Եւ հաւատացաք՝ ոչ մարդկային լինել զայս խնդիր, այլ՝ աստուածային տնտեսութիւն և բարձրագոյն։

Զի որպէս գերակատար բնութիւնն խոնարհեցաւ 'ի մեզ, զի զմեզ բարձրացուսցէ. և ցուցիչն մեզ՝ թափեցաւ յերկրոյն փառաց առ փոքր մի, զի զմերս ունայնութիւն լցցէ 'ի լրութէ յիւրմէ, ըստ այսմ օրինակի և դուք՝ անկարօտ գոլով ամենայնի, բայց երբեք զկարօտս կարօտեալք՝ մերումս հաղորդել աղքատութե, ոչ 'ի նուաղութէ ինչ լրումն, այլ յԱստուածային սիրոյն յաղթելով, այն որ հրամայեն սիրել, ոչ միայն զընկերս՝ իբրև զանձն, այլև՝ զթշնամիս, և ոչ զանձին և եթ խնդրել զօգուտ, այլ՝ մանաւանդ զընկերին։

Վասն որոյ՝ և մեք խօսելով յանձնաշուենչ գրոյ՝ ընդառաքեալ խնամատարս՝ 'ի Սուրբ Թագաւորութենէդ, ողջացաք միօք, 'ի լսելն զբան հաւատոյ Եկեղեցւոյդ Հոռոմոց։

Քանզի՝ 'ի սկզբանց ամանց՝ որ յայսկոյս ծովու յանձնեալ Հռոմոց, լռեալ էաք մեք, և որ յառաջ քան

զձեզ, բանս ոչ առողջս 'ի տնօրէնութեն քն̃ խօսեցեալս, և էաք հիւանդացեալ գայթակղութբ̃ մտաց, իբր թէ՛ 'ի մասն ինչ կարծեաց նեստորի խոնարհելով ձեր :

Որպէս և դուք վասն մեր՝ 'ի մերոց ուխտաց և այլոց ստամբելոց 'ի մէնջ, յաղագս անկարգ գնացից իւրեանց՝ լուեալ էիք։ Որք և զչարախօսութիւնն՝ որ վասն մեր, իբրև զընծայ ինչ մատուցանէին առաջի ձեր, և որոց նախքան զձեզ՝ 'ի հաճոյս լինել ձեզ կարծելով։ Որով էիք և դուք գայթակղեալ 'ի միտս՝ համարելով զմեզ համախոհ նեստ-քեայ, և որոց ընդ նմա՝ մի բնութիւն ասողացն չարաչար :

Սակայն՝ 'ի քննութէ անտի՝ մերկացաւ պատրուակեալ ստաբանութիւնն՝ որ յաղագս երկաքանչիւրոցս, և հալածեցաւ, և յայտնի եղև ճշմարտութիւնն և հաստատեցաւ, հեռի զոլով ձեր՝ 'ի նեստորի բաժանմանէն, և մեր՝ յեւտիքեայ շփոթմանէն ․ և հուպ եկեալք միմեանց՝ ուղիղ դաւանութբ̃ հաւատոյ, հնարհօքն այ̃։

Բայց քանզի՝ աթոռ թագաւորութբ̃ մերոյ՝ որով և ·Ք·ահանայապետականն իշխանութիւն յառաջանայ, բարձեալ է այժմ 'ի բռնակալութէ այլազգեաց ։ Նորին աղագաւ և հայրապետութեանս հալածեալ 'ի հայրենին աշխարհէ և յաթոռոյ, յօտար աշխարհս տարաբերի պանդխտութբ̃ ։ Յորոց պատճառէ՝ ոչ ունիմք մերձ զօրս ըստ ժամանակիս Եպիսկոպոսունքն Հայաստանեայց՝ և վարդապետք, և առանց խորհրդակցութբ̃ նոցա՝ անմարթ է զկատարեալն տալ պատասխանի՝ հարցմանց ձերոց, զի մի փոխանակ միաբանութեան՝ զանազան պատճառս տացուք բաժանմանց, և շարժումն և փոփոխական երևեսցին բանք մեր։

Յաղագս այսորիկ՝ ոչ պատշաճ համարեցաք, միայն մերս մերձակցիւք գրել զպատասխանին՝ մեծի խորհրդոյս, մինչև առաքեսցուք 'ի մեծն հայք և յամ̃ կողմանս, և ժողովեսցուք զամենեսեան՝ յորս էցէ զօրութիւն իմաստութե, և առաջի դիցուք նոցա, զոր խնդրէքս 'ի մէնջ՝ զհաւատոյ և զկարգաց Եկեղեցւոյ բան, և մեք թեթևաբեր և յորդորին 'ի պատճառս սիրոյն և խաղաղութեն, զի ընդ ձեզ՝ որ սկիզբն էք այսմ հոգևոր բարեաց, և մեք արժանի լիցուք խաղաղարարացն երանութբ̃ հասանել՝ խոստացելոցն 'ի ·Քէ·։

Բայց

Բայց զի Մակարիոսս 'ի մեծութէ նոր՝ խնդրեցին փոքր ինչ. և առ այժմ առաւ զգրով զբան հաւատոյ՝ մեր դաւանութեն, և սուրբ թագաւորութեն նոր առաքել առաջին Օշտր 'և առաջնորդ սահմանեալ՝ ոչ 'ի մէջնդ, այլ՝ 'ի Սրբոց Սարգսաւորաց եկեղեցեաց բանից, յորոց նախկան զգաժանութիւն, որք և այս ինչ:



Խոստովանիմք հաւատոյ և անեղ՝ զամենասուրբ զերրորդութիւնն, յերիս անձնաւորութիւնս բաժանեալս, և 'ի մի բնութիւն, և 'ի մի Աստուածութիւն միաւորեալ: Ոչ պակասեալ 'ի ժամանակի, և ոչ զաղափարեալ, կամ փոփոխեալ, որպէս զեղծականացս բնութիւն:

Հայր անծին, վասն զի ոչ յումեքէ, և որդի՝ ծնունդ հայրական անժամանակաբար, որպէս բան 'ի մտաց. և հոգին բղխումն 'ի հօրէ, անքննելի և անիմանալի:

Նախկինքն Հայր, և յանսկզբնականէն հօրէ սկսեալ որդի՝ և հոգի; անեղապէս և անժամանակաբար, անհաս մտաց, և անճառ բանից: Մի կամք, և մի զօրութիւն, և մի իշխանութիւն, մի արարչութիւն եղելոց, և մի նախախնամութիւն 'ի վերայ ամի, որով լի են երկինք և երկիր փառօք նորա:

Իսկ 'ի վախճան ամաց՝ մին յերից անձնաւորութեանց որդի, հաճութեամբ Հօր՝ և Հոգւոյն՝ խոնարհեցաւ 'ի մեր բնութիւն՝ վասն մերոյ փրկութեն, և էառ կատարեալ Ածութիւնն՝ զկատարեալ մարդկային բնութիւնս՝ զհոգի և զմիտս և զմարմին, 'ի Սրբոյ Կուսէն Մարիամայ: Իսկ եղև նոր խառնումն 'ի յերկուց անբաժանելի բնութեանց՝ Ած և մարդոյս 'ի մի անձնաւորութի միացեալ, և ծնաւ 'ի նմանէ Ած մարդացեալ: Իսկ որդին այ՝ որդի մարդոյ եղեալ՝ և կոչեցեալ, ոչ փոփոխեալ յաստուածային բնութենէն, և ոչ այլայլեալ 'ի մարդկային կրթութենէն, այլ անճառելի միաւորութիւնն Ածութեն և մարդկութեն՝ միայն անփոփոխելի, և առանց յեղման բնութեան, երևումն՝ մտաց աչաց միայն տեսանելի, սակայն՝ անբաժանելի և անորոշելի:

Քանզի գերագոյն քան զարարածոցս խառնումն՝ ի-

մա

մանի արարչին բնութեան՝ ընդ արարածոյս։ Ոչ է տեղի՝ կամ բաժանելի 'ի միմեանց 'ի միաւորելն, և կամ լուծանելն զմի-մեանս այլայլութեամբ։ Իսկ՝ արարչին բնութեան զօրութիւն՝ ա-րուեստ ոչինչ տկարանայ, միացեալ ընդ մերս բնութեան անբա-ժանելի, և ոչ լուծումն, կամ փոփոխումն ընկալեալ Աստուա-ծութեան 'ի մարդկութիւնն, կամ մարդկութեան յԱստուածութիւնն, այլ միայն միաւորութիւնն՝ անորոշելի, և անշփոթելի։

Վասն որոյ՝ ոչ ըստ Նեստորի 'ի յերկու բնութիւնս և 'ի յերկուս դէմս բաժանեմք զՔրիստոս, և ոչ ըստ Եւտի-քեայ և համախոհից նորին՝ 'ի մի բնութիւն ժողովեմք շփոթմամբ և այլայլութեամբ։ Այլ՝ ունիմք ասել զերկու բնու-թիւնն՝ ըստ մեծին Կիւրղի Աղեքսանդրի՝ յառ Կոզոզիոս թղթին գրեալ՝ ընդդէմ Ապօղինարի, և որոց՝ ըստ նմա, ե-թէ՝ բնութիւնք երկուք, յաւելու ասել և զպատճառն։ Քանզի՝ Աստուած և մարդ, և այս յիրաւի, զի թէ Աստուած միայն էր, և կամ մարդ միայն, 'ի դէպ էր ասել մի բնութիւն ունել, կամ Աստուծոյ՝ և կամ մարդոյ։ Իսկ՝ յորժամ Աստուած է, և մարդ միա-ցեալ, անճառելի խառնմամբ և անայլայլապէս, յայտ է թէ՝ Աստուծոյն ունէր բնութիւն և մարդկային, այլ՝ միաւորեալ և անբաժանելի, ըստ հոգւոյ և մարմնոյ նմանակի։ Եւ ևս՝ գերազանցեալ ճշմարտութիւնն քան զօրինակդ՝ առ միաւո-րութիւն երկուց բնութեանց, զոր ինքն իսկ վարդապետն յառաջ մատուցեալ ասէ, թէ՝ ոչ այլ ոք և այլ, մի լիցի. զի մի են խառնեալքն. Աստուծոյ մարդանալովն, և մարդոյն Աստուածա-նալովն։ Եւ այլ ուր ասէ, եթէ՝ կրկին էր, յայտ է՝ թէ բնու-թեամբ և ոչ անձնաւորութեամբ։

Իսկ՝ զմի բնութեան եղանակ՝ զոր ասեմք մեք, մի՛ ոք յայլ-դէմս կարծիցէ, բայց՝ յաղագս 'ի յերկուց բնութեանց՝ ան-բաժանելի միաւորութեան, զոր ուսաք 'ի յուղղափառ վար-դապետաց Եկեղեցւոյ, մանաւանդ՝ 'ի Սրբոյն Կիւրղէ Աղէք-սանդրացւոյ՝ որ ընդդէմ Նեստորի։ Որպէս և գրէ առաջին թղթին՝ որ առ Սեկունդոս, եթէ խոստովանիմք մի բնութիւն բանին մարմնացելոյ, որպէս և հարքն ասացին։ Իսկ յերկ-րորդումն թղթին՝ որ առ նոյն, ևս յայտնագոյն ասէ։ Քանզի զի նախ դնէ զհակառակացն բան, որք ընդդէմ գտանելին ասացելոյն 'ի նմանէ բանի այսմ՝ թէ մի է բնութիւն բա-

նին

նին մարմնացելոյ: Զի թէ յերկուց բնութեանց ասեն ժողովեցաւ էմմանուէլ, և 'ի միաւորութենն՝ մի բնութի եւեթ բանին մարմնացելոյ, հետևի տմ՝ իրօք՝ պարտ գոլ ասել զնա չարչարել յիւրն բնութիւն: Որոց առնէ պատասխանի՝ յետ յոլովից բանից՝ և զայս ևս, թէ՝ զի՞նչ հարկ էր 'ի յիւրն բնութիւն չարչարել, թէ և ասի յետ միաւորութեանն՝ մի բնութիւն որդւոյն մարմնացելոյ: Քանզի՝ թէ ոչ էր 'ի բանս տնօրէնութեան բնաւորեալն՝ կրեալ զչարչարանս, ուղղակի ասէին զայս թէ՝ հարկ էր տմ՝ իրօք՝ բանին բնութեան ընդունել զչարչարանս: Եւ դարձեալ ասէ, ասեն հակառակորդքն; զի եթէ մի է բնութիւն բանին մարմնացելոյ, հարկ է տմիւ ասել՝ շփոթութիւն ընդունել և խառնակութիւն, որպէս ծախեցելոյ մարդկայնոյն բնութեան 'ի նմա: Եւ անգիտացան դարձեալ՝ որք զուղիղն թիւրեն, եթէ՝ ըստ ճշմարտութեան է մի բնութիւն բանին մարմնացելոյ: Եւ յետ սակաւուց՝ օրինակաւ յայտնէ զբանն, ոչ միայն ասէ 'ի վերայ պարզին ըստ բնութեան՝ ասի մին ճշմարտապէս, այլև՝ 'ի վերայ յոնոցիկ՝ որ ըստ շարադրութեանցն են ժողովեալք: Որպէս և մարդն է 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ, քանզի՝ այլատեսակք են այսոքիկ, և 'ի միմեանց ոչ համագոյք, սակայն՝ միաւորեալք՝ մի բնութիւն մարդոյն կատարեն, թէև՝ շարադրութեանն բանիւք է 'ինքեա զանազանութիւն, ըստ բնութեան 'ի միաւորութիւն եկելոցն: Ուղղորդս խօսին ապա՝ որք ասենն, զի թէ մի է բնութիւն բանին մարմնացելոյ, ամենևին և տմ իրօք հետևեսցի շփոթութիւն լինել, որպէս ծախեցելոյ և դադարելոյ մարդոյս բնութեան, քանզի՝ ոչ ծախի, և ոչ որպէս ասենն դադարեալ լինի:

Եւ այլ ևս բանք՝ որ 'ի սոյն միտս բերեն՝ յոլովագոյնք են 'ի սորայն կիւրղէ և յայլոց վարդապետաց ասացեալք, որոց տեղեակ է՝ ծայրագոյն ձեր իմաստութիւն:

Եւ սոյն Վարդապետ՝ որ ընդդէմ բաժանողացն զայս խօսեցաւ, ընդդէմ շփոթմամբ ասողացն զմի բնութեն՝ զայս ասէ 'ի նոյն առաջին թղթին, թէ՝ զմտաւ ածեալ զմարդանալոյն եղանակ՝ տեսանեմք, զի երկու բնութիւնք եկեալք առ միմեանս՝ ըստ միաւորութեան անանջատելւոյ, անշփոթաբար, և անփոփոխապէս: Քանզի մարմինն՝ մարմին է, և ոչ

ծութիւն, թէև՝ եղև այն մարմին ։ Նոյնպէս և բանն՝ ան է, և ոչ մարմին, թէև՝ իւր արար զմարմինն տնօրինաբար։

Նաև յետ սակաւուց ասէ թէ՝ յորժամ եկեալ 'ի մտածութիւնս միայն, և 'ի տեսութիւնս հոգւոյ աչօք, եթէ զի՞նչ օրինակաւ մարդացաւ միածինն, և երկուս գոլ ասել զբնութիւնսն, և մի՛ Քս և որդի և տէր՝ զբանն մարմնացեալ, և մարդացեալ ։

Սորով և մեք առաջնորդ ունելով զասոսն՝ առ ճշմարտութեան ճանապարհն՝ որ տանի առ Ած, ուղղապէս և զգաստաբար բերելք 'ի կրկին տեսութիւնս բանից, մի ասելով բնութիւն բանին մարմնացելոյ՝ ըստ Սրբոյն Կիւրղի, յաղագս անճառ միաւորութեան, և երկուս՝ ըստ Ածաբանին Գրիգորի, վասն անկորուստ և անյեղլին գոլոյ բնութեանցն՝ Ածայնոյն և մարդկայնոյ ։ Ոչ միակողմանի ունելով զզէն արդարութեան, այլ՝ յաջմէ և յահեկէ՝ ըստ Առաքելոյ ։ Այդ և քաջամարտիկ զինուորքն քո արարին և ուսուցին։

Զի որպէս ընդդէմ բաժանմանն Արիոսի՝ որ 'ի բնութիւն Երրորդութեան, զառ 'ի Սաբելէ ասացեալ զբնութեան միութիւն՝ եդին, և զանձնաւորութեանցն մի ասելն 'ի բաց ընկեցին, և ընդդէմ Սաբելի՝ զբաժանումն անձնաւորութեանցն, որ 'ի յԱրիոսէ ասեալ, զմիոյ բնութեան բաժանումն արտաքս ելեցին յեկեղեցւոյ։ Նոյնպէս և զառ յԵւտիքեայ՝ և նորին նմանեաց զշփոթմանն երկանակ խոստեցին՝ անարգեցին, և զանբաժանելի միաւորութիւն՝ երկուց բնութեանցն՝ Այ և մարդոյ, առեալ՝ ընդդէմ եդին Նեստորի, և որոց ընդ-նմին բաժանողացն, որք երկուս բնութիւնս ասացին, բայց բաժանեալս և ոչ միաւորեալ 'ի ներքս միոյ Քի ։ Իսկ զառ 'ի Նեստորէ զբաժանումն՝ 'ի բաց եդին, որպէս զորոմն դաւանութեան՝ և զանկորուստ միաւորն երկաքանչիւրոցն 'ի միաւորութեան՝ Այ բնութեան և մարդոյ, եդին ընդդէմ Եւտիքեայ՝ և որոց նմանաքան ընա, և յետ նորա՝ մի բնութիւն ասողացն չարաչար ։

Նաև այս՝ ըստ բժշկայն մանկանց օրինակի, որ ոչ միայն 'ի յառողջարար նիւթոյ, այլև 'ի մահաբերաց առնուն դեղ կենաց ։

Նոյն՝ և մեք ըստ ուղղափառաց հարցն աւանդութեան՝

նզովեմք զայնոսիկ՝ որք վասն յեղման և այլայլութեան՝ մի բնութիւն ասեն բանին մարմնացելոյ, կամ թէ՝ ոչ 'ի մեր մէ զանգուածոյս՝ առ զբնութիւն մարդկային, և միացոյց ընդ ածութեն, այլ՝ ինքն իւր առեալ մարմին յօրովայնի կուսին. և կամ թէ՝ յերկնից բերեալ, և կամ թէ՝ առաջօք երևեալ մարդ, և ոչ ճշմարտութք: Եւ որք այլ այսպիսի ինչ պատճառանօք ասեն զմի բնութիւն 'ի քն, և ոչ վասն անբաժանելի և անշփոթ միաւորութե:

Նոյնպէս նզովեմք և զայնոսիկ՝ որք 'ի յերկուս բնութիւնս բաժանեն զմի քն՝ ըստ Նեստորի, այլ ասելով զած, և այլ զմարդն: Զմարդն՝ չարչարելի և մեռեալ, և զածն՝ անչարչարելի և անմահ, և ոչ միաւորութեն սան զերկաքանչելեաւն, զչարչարանսն և զանչարչարութիւնն, զմահն և զանմահութիւնն:

Այլ մեք հաւատամք այսպէս, եթէ ածն բան՝ որ 'ի Հօրէ ծնեալ յառաջ քան զամ յաւիտեանս, անտեսանելին, անչարչարելին, անմահն, էառ զմեր բնութիւնս կատարելապէս՝ 'ի կուսէն, և միացոյց ընդ իւր ածային բնութիւնն, անշփոթ և անբաժանելի միաւորութբ, և եղև անտեսանելին ըստ Ածութեն՝ տեսանելի ըստ մարդկային բնութեն, և անշօշափելին՝ շօշափելի, և անչարչարելին՝ և անմահն՝ ըստ ածային բնութեն, չարչարեալ և մեռեալ մերով բնութբ, ոչ բաժանմամբ՝ որպէս թէ ոմն չարչարելի, և ոմն անչարչարելի, ոմն անմահ, և ոմն մեռեալ: Այլ որ չարչարեալ և մեռեալ՝ մարդկային առեալ բնութբ, նոյն անչարչարելի, և անմահ՝ Ածային իւրով բնութբ: Վասն այնորիկ և արիւն այ ասի, և չարչարանք և մահ, և ած խաչեալ, զորս՝ ոչ առանձինն՝ բնութեն այ տամք, այլ՝ անճառ միաւորութե:

Եւ զօրինակ՝ յատուկ Այ բնութեն՝ անհնարին է չարչարանս ընդունել և մեռանել, նոյնպէս և մարդոյ բնութե առանձին՝ անկարելի է, մահուամբ կեանս տալ մարդկան: Սակայն՝ միաւորելովն բանին այ ընդ մարդոյ բանականի բնութե, անհնարելին՝ հնարաւոր եղև, և անկարելին՝ կարելի:

Քանզի՝ չարչարեցաւ անչարչարելին՝ չարչարելեաւն, և մեռաւ անմահն՝ մահկանացուաւն, որով կենդանացոյց՝

մար

մարմին նորա՝ և անդամքս, յօդեալք 'ի կենդանի և կենդանարար դլուխն մեր Քս, որ է օրհնեալ յաւիտեանս, Ամէն։

Արդ՝ այս ինչ յայժմուս տաճար փառք 'ի շնորհ՝ յաղքատմանց և ակար իմաստից մեր՝ ձեռամբ գերակատար իմաստութեն, առ 'ի գխելոյ գլուխանդամ Եկեղեցւոյ Հայաստանեայց՝ զանփոփոխելի դաւանութիւն հաւատոյ, որ 'ի Սուրբ Երրորդութիւնն, և 'ի տնօրէնութիւնն քն, որով 'ի մանէդ կարօղ էք զբոլորն ճանաչել, որպէս որք գոյզն ճաշակած՝ զբովանդակն 'ի կերակրոյ և յըմպելեաց՝ իմանան զախորժելին, և կամ զոչ ախորժելին։

Իսկ՝ զկատարեալն բան՝ յաղագս սմ խնդրոյ, որքան է 'ի մէջի մերում անհաւասարութիւն լինչ, 'ի հաւաքումն ժողովոյն՝ ըստ վերոգրելոցդ, գրեալ տացուք առաջի Սր. Թագաւորութեն ձերոյ։ Գրեալ 'ի Թուականութեանս Հայոց ոՃԹ։ Յամսեանն Հայոց՝ Արեգ, և Հռոմոց՝ Հոկտեմբեր։

Ճանք նորա առեալ զթուղթն՝ հանդերձ հարցմամբքն լմր և պատասխանեօքն, ըն զի՝ զամենայնն 'ի դրի դրոշմեաց, ընթեռնայր առ Թագաւորն; ապա 'ի ձեռին ունելով և ցուցանէս հարցմանցն նշանագրութի, և զհպատասխանեաց յօժարամիտ լինել 'ի միաբանութիւն՝ յայտնէր գիրն, որ 'ի Սրբոյ Հայրապետէն՝ առ Թագաւորն, զոր ասեալ բազեացապարտ արքայի՝ զուարճանայր և բերկրէր յանձն, մեծ համարելով Սրբոյն Եկեղեցւոյ զմիաբանութիւն, քան զբոլոր հաստատեցելոց տերութեանց յաղթութիւն։

Ապա՝ սմ դպիր Եկեղեցականացն՝ և սմ Թագաւորազարմն մեծի պալատանն՝ 'ի ձեռս առեալ զնշանագրութի հարցմանցն՝ յայսկոյս և յայնկոյս ընթեռնային, առ միմեանս ասելով, տեսէք զԿաթուղիկոսին Հայոց՝ խոհական ճարտարութեն հանճար, նայեցարուք ընդ շաղկապ ուղիղ խոստովանութե, ընդ որ զնոյն երկաւղել բովանդակ պատմեն։ փառք այ՝ որ տեսանեմք առաջնորդ Եկեղեցւոյ, այսպիսի 'ի նոր գելոյս ժամանակի։

Բանզի՝ այլն իմաստուն, ոչ եթէ խոհական բանին և գիտութեն պատմութե հրապարակ ցանկացողաց, այլ առաւել

'ի սքանչելի վարուցն պատմութիւն, որում ականատեսն եղև, և զհեզահայեցութիւն հոգւոյ, և զպարկեշտութիւն անձինն, և զճշմարտական կրօնն՝ զոր ետես, պատմէր առաջի ամենեցուն։ Եւ թէ՝ որպէս 'ի հարցմունս խոնարհամիտ, և 'ի պատասխանիսն հանդարտ, խաղաղութիւն խնդրող, և զսիրոյն օրէնս հաստատող։ Որոյ իրաւի եղեալ մեծամեծաց և փոքունց՝ զամոլորութիւնն երկրորդ բնութիւն եղեալ, այսինքն զատելութիւնն՝ որ առ Հայաստանեայս, 'ի զրպարտ կարծեաց՝ 'ի սէր դարձուցանէին։

Եւ այնուհետև էր տեսանել՝ մեծ համարձակութիւն մերոյս սեռիս՝ 'ի Թագաւորական քաղաքին Եկեղեցեան, և առ ամենեսեան արդարացեալս, 'ի հարց և 'ի փորձ։

Բայց սակայն՝ զբարեպաշտ Թագաւորին զփափաքն 'ի միաբանութիւն, ոչ կարեմք գրով պատմել։ Քանզի՝ զոր օրինակ ոք 'ի համագամ կերակրոց՝ առաջի իւր ունելով, զսեղանաւորեալ ընտրութիւն ճաշակելեացն, զմի ախորժակայն առ ինքն առեալ՝ անփոյթ առնէ զբազմութիւն կերակրոցն, այսպէս և սա՝ իմանալի մտօք՝ ճաշակեալ ծայրիւ մատին՝ 'ի քաղցրութիւն խաղաղութեան Եկեղեցւոյ, անփոյթ առնէր զբազմաճոխական աշխարհական զբազմունսն։

Եւ վերստին դարձեալ սակս այսր իրի՝ զնոյն փիլիսոփայ և ճարտասան՝ առաքէր առ երանելի Հայրապետն՝ թախանձելով, 'ի գլուխ հանել զսկզբնաւորեալն խաղաղութիւն, զի մի՛ ասէ՝ հասարակական վախճան՝ որ մահուն, միում 'ի մէնջ պատահեալ, և գտանիցի անկատար այս գործ, որոյ ճարտարապետ՝ և ոչ միոք լինիցի իբրև զմեզ։

Գրէր և ողջայցուածս խնդրոց, զոր ասէ՝ մեծ Եկեղեցին պահանջէ 'ի ձէնջ՝ ութն գլուխ, ընդ որս՝ և Թուղթ տիեզերական Պատրիարքին, յաղագս այսպիսի իրաց համկամութեն՝ ամ Հռոմայեցւոցն իշխանութեն։ Թուլացուցել և զայս թէ՝ 'ի գլխոց այտի՝ որ ախորժելի թուի ամ հայաստանեայց, կատարելով շինեցէք զդայթակղութիւնս մեր, և որոց ոչ կամիք զհաճոյականն հնազանդութիւն, զպատճառն յայտնելով՝ պատասխանի արարէք։

Զայսպիսի նամակն՝ օտարբեր ընծայիւք՝ առեալ դայր իմաստունն, որոյ անունն Թէօփանոս, և ժամանեալ 'ի

ի Հայրապետականն ԱԹոռ, տալ զԹուղԹն 'ի ձեռն Սրբոյ ԿաԹուղիկոսին:

Զայնոսիկ զնամակսն՝ համաձայն հայաստանեայց Եպիսկոպոսք և Վարդապետք, որ են 'ի միջադէտս, և յետ լեառնս Տօրոսի՝ ընԹերցեալ Սրբոյ ԿաԹուղիկոսին, անպատշաճ վարկան՝ առանց Արևելեան Եպիսկոպոսացն՝ կատարելապէս գրել պատասխանի, յայտ առնելով, զի Թէ պէտ՝ և ԱԹոռս տարագրեցաւ ըստ մեղաց մերոց՝ 'ի մէջ այլասեռից, և աշխարհ մեր՝ յանօրինաց 'ի ստրկաւ մասնեցաւ, սակայն՝ հիմն հաստատուն մեր՝ նոքա են, և գլուխն անհընարէ առանց անդամոյն՝ գործել ինչ կատարումն առնել:

Արդ՝ ծանուցեալ զփափաք մեր Սրբոյ Արքային, ածեալ 'ի մեզ կրկնապատիկ սէրն առաջին, և ժողովոյն բաղմուԹե՝ զնոյն միտս ընձեռեալ ստանալ:

Զայս լուեալ Հրեշտակին առաքեցելոյ 'ի Թագաւորէն, իրաւունս վարկաւ զասացեալսն, և պահանջեալ կրկին նամակացն պատասխանի:

Վասնզի՝ ժողովոյն գումարումն՝ 'ի յամառնայինն պատճառէր եղանակ, առ որ ժամանակ՝ ոչ կամեցաւ նա համբերել:

Յայնժամ խոհականն յանձն՝ գրէր ըստ դիւրով ժամանակին պատասխանի Թագաւորին, և Պատրիարքին զայս օրինակ:

Պատասխանի Թագաւորական գրոյն՝ Տեառն Ներսեսի, Երրորդ անգամ:



Քրիստոսապսակեալ բարձր և յաղԹող ինքնակալին Հոռոմոց՝ ծիրանածին ՄԾ Թագաւորին կիռ Մանուէլի խնդալ միշտ: 'Ի Ներսիսէ նուաստէ ծառայից՝ ԱԾ, և շնորհիւ և ողորմուԹե նորին՝ ԿաԹուղիկոսէ Հայոց:

Երկրորդ յետ ածեղէն մատանցն գրաւորուԹե՝ զոր ընկալաւ իմ՝ 'ի ձեռն Մօսխի, ընկալաք և մեք՝ զառ 'ի յայ հաստատեալ ԹագաւորուԹէդ՝ գրաւորական հրաման՝ որ ժանաւոր պատուոյ՝ ոչ Քրիստոսապսակեալ ծիրանածին բարձր՝ և յաղԹող միշտ՝ օգոստոս, և ինքնակալ Հոռոմոց կոմնինոս՝ Տէր Մանուէլ՝ պարունակող դերապատուուԹե ընդհանուր ԹագաւորուԹեց, որ 'ի ներքոյ երկնից: Որոյ հաւանելն՝ մեր նուաստուԹս՝ զօրուԹ մնաց, և քանից պարագրե-

լոյ, ընդ Թագաւորական գրոյ՝ և զոր բերանով պատմեցաւ ՚ի բանաւորաց՝ Մէ Թագաւորութեդ Թղթաբերաց։

Եւ այն՝ որ յաղագս Տ̃ն մերոյ անօրինական խորհրդոյ, զոր նշան հակառակութե՛ մարգարէացաւ լինել՝ ծերունին նը, ոմանց կանգնելոյ, և ոմանց գլորելոյ, որով և ՚ի գրելոյն մեր՝ զխոստովանութի հաւատոյ մեր, խնդրեմք առ ՚ի միտս, և ՚ի Մէ գիրս ընթերցեալ՝ զնոյն բացայայտելով բանիւ՝ առ ՚ի բառնալոյ զայթակղութե ՚ի բանս այս զայթակղելոցն ՚ի մէջ

Ծանուցաւ բանիւ, և որ յաղագս տօնից և կարգաւորութեց Եկեղեցւոյ, որով զանազանիմք ՚ի միմեանց։ Եւ վա ժողովոյ ոմանց ընդունելութե։ Եւ տուեալ իւրաքանչիւրքն գրով ՚ի Թէօդիանէ Իմաստասիրէ, որոց առ ՚ի մէնջ միայնոյ տալ պատասխանի՝ ոչ համարեցաք ՚ի դէպ, այլ՝ ՚ի լինել համ դերձեալ համդիսական ժողովոյն՝ դիցուք առաջի զխնդրելիս, և զոր հնար լինի՝ բանադատել զերկրորդ բնութիւն՝ զհնացեալ աւանդ սովորութե ազգիս, ընկալցուք յայժմուս, և այն՝ յաղագս Ընծայէին սիրոյն հաղորդութե, և ոչ իբր ՚ի մոլորութէ դառնալով ՚ի ճշմարտութիւնն։

Քանզի՝ աւանդութի Եկեղեցւոյ մեր՝ զոր ունիմք, ՚ի վկայութէ ածաշունչ գրոց հաստատեալ են։ Եւ մնացեալն՝ կամ՝ ներելի ՚ի ձէնջ՝ որ ոչ ինչ յածայինսն բերելով պակասութի, և կամ փոքր փոքր ամենամբ սիրոյն՝ ուղղեսցի և այն ըն ժամանակի։ Եւ զանձն՝ զորս առ դաւանութիւն հաւատոյ, և կարգաց Եկեղեցւոյ, ՚ի պատճառս միաբանութե, հաստատեսցի ՚ի մէջ ժողովոյն բանի, ծանուսցուք գրով և բանիւ մեր Թագաւորութեդ, ՚ի ձեռն ոմանց Եպիսկոպոսաց ժողովոյն, և Վարդապետաց՝ առ ՚ի մէնջ Առաքելոց։

Նաև՝ զոր մերս ազգի իցեն՝ զայթակղութե պատճառք, իւիք իւիք ՚ի ձերդ կողմանէ՝ բառնալ եթէ հաճոյ թուեսցի, յորժամ դիցուք առաջի ՚ի վկայութէ մեր գրոց՝ առ ՚ի յողջացուցանելոյ զմիտս մեր հիւանդացելոց յայսոսիկ. նմանելով ձեր մեծին Պօղոսի, զի զոր յածայնոցն օրինաց ունէր հրամանաւ կերակուր՝ ՚ի բաց լուծանէր ասելով, ոչ կերայց միս յաւիտեան, զի մի զեղբայրն իմ զայթակղեցուցից, թող թէ զոր գիտելայն յօրինաց և ՚ի կանոնաց։ Ողջ լեր օծեալդ յԱյ, յաղթօղ եղեալ հակառակամարտիցն՝ զօրութբ ճշմարիտ օծելոյն Քի։

Թուղթ

Թուղթ Տեառն Ատտիկոսի Կոստանդնուպօլսեցւոյ առ Տէր Մեսրոպ Վարդապետն Հայոց։

Ա[illegible] և ընդհանրական Կաթողիկէ եկեղեցւոյ Թագաւորեալ քաղաքին Կոստանդնուպօլսոյ Պատրիարքէ՝ Տէր Մեսրոպայ, ողջ լինել 'ի Քրիստոս Աստուածաշնորհ [illegible] և ողորմութիւն և կամք նորին Կաթողիկոսի Հայոց՝ [illegible] Սահակայ Պարթևի [illegible]։

'Ի մէջ իմաստութեան [illegible] ընկալեալ զոր հանդերձ տղայական մտաց մեր, յարգանօք, իբրու բանիւ, և մեծացուցին իմաստութիւն՝ պարունակեալ ընդ գրով, զոր արարեալ զմեզ լցոյց ուրախութեամբ, որպէս և զգիտունն Հոգւոյն 'ի վերնատանն, և յիշելով [illegible] Աստուածախօսն զբերանն մարգարէին գրելոյ [illegible], և իմաստութեան [illegible] կուրս իմաստից Հոգւոյն [illegible] և [illegible] զոր [illegible] մեր [illegible], որ 'ի մէջ [illegible] յիշատակաւն զօրութիւն, զնոյն առ 'ի յարգումն [illegible] բարձրագոյն զօրութիւն և քաղցրութիւն։ Որպէս երբեմն յառաջագոյն [illegible] 'նկարել [illegible] Եղիա [illegible] [illegible] զաւազանն, [illegible] զի [illegible] զգիտութիւն [illegible], և [illegible] յաջողող [illegible]։

Եւ մեր բան [illegible] յիշելով [illegible] յայս, կատարեալ Եկեղեցւոյ [illegible] Հոգւոյն մերոյ սրբոց, ընծայելք գնոյն [illegible] և կենաց, [illegible] Հօր 'ի [illegible] եր յամենայն 'ի վերջոյ, և ոչ յայլ և յայլս բաժանեալ յօտարական Հոգւոյ մոլորութեանց, այլ ասելով Պօղոսի, և առաքելոց, կամ [illegible], կամ այլ ուրուք 'ի [illegible], այլ՝ քո [illegible]։

Զայսոսիկ ողջախոհութեան քոց՝ որ 'ի մէջ փոքու[illegible] [illegible], [illegible] [illegible] Հոգին և որդւոյն Հօրն, որպէս [illegible] [illegible] [illegible] 'ի գործ [illegible] [illegible] լինել [illegible]՝ Որում և մեր կամք և յօժարութիւն՝ ոչ խիստ և անգործ, և ոչ առ 'ի յայլ [illegible] Հնարս

գիտաց արհեստին , այլ դիւրալուր և հաւանական՝ ճշմար-
տութեան բանի 'ի ճշմարտասիրաց , ըստ կուսին երկրորդի՝
ունկնդրութե բարւոյն, յորմէ կեանք . և ոչ ըստ կուսին
առաջնոյ՝ հաւանութե չարին, որով մահ:

Քանզի՝ սիրելի էր մեր՝ այս խաղաղութիւն 'ի մանկու-
թէ, որոյ և հասանել ըղձանայաք, մանաւանդ յորժամ տե-
սանէաք 'ի պատահել միմեանց՝ ձեր և մերս իմաստնոց, ոչ
արտաքոյ ուղղափառաց վարդապետայն խօսելով երկաքան-
չիւր կողմանցն զբանսն, որոց պիտանացու էր միայն զօդ կա
տարմանն սէրն, մայրն խաղաղութե, այլ ոչ ճարտարութե
բանից՝ ունայնացուցիչ Խաչին քի՝ ըստ Առաքելոյ:

Այլ զայս մեծագոյն էր՝ և ծածկին գործ՝ ամբարեալ
պահէր յառաջատեսութիւնն այ՝ ձերում արժանաւոր սր
բութեդ. զոր և ծանուցն իսկ՝ գրաւորականս ձեր բան, բազ-
մապատիկս ունելով գովեստ խաղաղութե՝ յածայնոցն բա
նից : Որոց և բացեալ առ լսողութիւն թղթին ճարտարի՝
զականջս սրտից՝ ընկալաք յոգիս, 'ի նոյն իսկ գործարանի
թաքուցեալ զբանս ձեր՝ յոր և դաւիթ զծածկեալն: Քանզի
գիտելի է իմաստնոց , զի ճշմարիտ խաղաղութեն՝ ոչ ինչ է
զուգահաւասար յէիցս բարեաց:

Վասն որոյ՝ և աւանդեալն Եկեղեցւոյ պատուէրան՝
զվերինն քարոզէ միշտ հայցել յայ՝ տալ զխաղաղութիւն
երկնային: Զսոյն յայտ առնէ և Տէրունականն՝ որ յաղագս
յաղօթից բան, գալ արքայութեն Այ 'ի մեզ , որ է տէրա-
պէս խաղաղութիւն , և լինել հաճութիւն կամաց նորա՝
յերկրաւորքս , որպէս և յերկնայինսն, յորս է բնաւորեալ
ընդ բիւրոց բարեայն ունակութեց՝ և սէրն և խաղաղութե
պտուղ , որ է յաւէտ և անփոփոխելի:

Նաև՝ առ Երրորդութիւնն Սուրբ՝ հրաշափառամբ,
երից անձանցն՝ մի գոլով կամք մշտնջենաւորաբար, որ և
միով իշխանութե, և միով տէրութե թագաւորեալ յաւի-
տեանս: Եւ յանեղական երրորդութեն լուսոյ՝ յեղականացս
իջանէ վայր՝ աղբերաբար հեղեալ 'ի նմանէ խաղաղութեն
նշոյլ : Առաջին առ անմարմնականացն իննուցն դասուց՝ ե-
րից քահանայապետութեցն երկնայնոց՝ զանազանութիւնս,
և ապա ըստ մօրուացն Ահարոնի՝ իւղոյն իջման օծութե,

յորմէ և 'ի գրասպանութենէս, և 'ի դաւոսանն, որք ներ յՕթսմանեան Եկեղեցւոյ՝ անխնութեանցն Հայոց, աստուածային տանձ էր Ն. Յ ընկալեալ զՔահանայապետութիւն, որպէս նախ Նախաթարմուկայ խաղաղութե առնել յանձնանէ՝ որ զօգւոց խաղաղութեանն առել մեծիս, և զաւուրն հաստատոյ՝ զառ 'ի չարն մտադրեսցէ.

Նաև՝ յետ իսկ օծելոյն եղև խաղաղութիւն մեր ընդ Ռուսաց, և անուանեցաւ, զմիջնորդն ցանկալն քանիցով, և 'ի միութիւն մերձեալ բարեմաւս խնամելով, զերկնաւորսն՝ և զերկրաւորս, և զոր 'ի հրէից և 'ի հեթանոսաց յեկեղեցի. Նման նմին և փառք իմ նորոգ՝ համաստ յայսմ սեղ խաղաղութե կապակցութիւն՝ առաւելս զանսահմանակէ նորին, և զանխռովելի՝ զՔրիստոսակեան սուրբ Թագաւորեղ՝ զպոտանութիւն կամաց՝ և զեղբայր, մինելով զբունս անցեան՝ ընդ ազգայն Եկեղեցւոյ՝ եկեղեց զասացելոց սրբոց միացուցիչ.

Ամենայն մեծի արքայից՝ և համանման՝ նախաձօնեայ բարերարը սրբոց նորին, և զհօրդ հասարակաց՝ ծանեաց զկամակցութիւն յայս պատճառ հոգևոր խաղաղութե, յորմէ առաւել եւս պահանջի, զի նմա՝ մարմնոյ և նիւթականաց համաձայնութե անաւասութիւն յայս.

Իսկ ձեզ՝ հոգւոց և հոգևորականաց, ոչ միայն անխռովութիւն, այլև՝ դաստիարակութիւն, և բժշկութիւն, և որքան յայտնի ընդ բազմադիմի գործոցն և անուանեալ զօրանալութիւնք, որ 'ի քաղաքին խաղաղութե աշխարհի զմնայակերպ խաղաղութիւն՝ նախ ձեզ պահանջելի, և ձեռք ած եկեղեցեաց էր. Որպէս 'ի միոյ լուսոյ, բազում ճառագայթք.

Նմանապէս՝ մինչև արքայութեան Ն. Յ՝ ամենեցուն տիրել, զի համօրէնակ միայն առնել ճարպաս լուսաւորելոյն 'ի ձէնջ, աշխատասիրի եւ և մանկունք իմ զօր եսուր ինձ.

Վասն որոյ՝ ոչ զարմանք վասն առ մեզ սերմանելոյ զանուն խաղաղութե. Նախ յաղագս հարկաւորաբար յանձն եղելոյ ձեզ յայս առաքելութեան, որոյ առաքեալ Պօղոս՝ անմարմնաւոր լինել. Երկրորդ՝ վասն օրինաց հայրականն սիրոյ՝ ընդ եկեղեցւոյն ծոցի զաւակութեան զոր և մեր 'ի քաղցր սեր-


մա

ժամանեղէդ՝ Տն Միխայելէ Ընդամերձ Պատրիարքէ՝ Թագաւո-րականն քաղաքիդ՝ ընկալեալ զբան խաղաղութեան, փու-թասջիք ոչ լինել ձանձրալիցս, կամ ապառաժ և փուշ, ՚ի կորուսանողաց զսերմն բարւոյն, այլ երկիր բարի և պա-րարտ, օգնութեամբ այնմ՝ որ տայ սերմն սերմանողաց, և զհաց բանին՝ կերակուր հոգւոյ, և տալ պտուղ Ն.Ճ՝ զմի յերիցն գավելեաց:

Եւ այս լինի արժանաւոր ձեր՝ և որոց ընդ ձեզ սէրց՝ առ ած պաղատանօք: Որպէս զի՝ ՚ի համդերձեալ լինել ժո-ղովոյն մերոյ՝ որ ՚ի մեծն Հայոց, և յընդհանուր կողմանց Եպիսկոպոսաց և Վարդապետաց, ինքնին Տէր՝ ըստ խոս-տացելումն, եկեսցէ ՚ի մէջ՝ զբանն խաղաղութեան տալով ՚ի միտս և ՚ի լեզուս ամենեցուն:

Զի ոչ մարդկային ախտիւ՝ անօգուտ բանակռուութք, և սնոտի յաղթասիրութք, յորմէ ոչ ինչ օգտեցաւ եկե-ղեցի՝ այսքան երկար ժամանակաւ, այլ հոգւոյն Այ խոր-հրդակցութք խօսեսցին ամենեքեան՝ մի չինուն ոգւոց:

Եւ որպէս առ մեզ՝ սոյնպէս եկեսցի առ ձերդ համդի-սական ժողով, զի Սուրբ սկսեալ խորհրդոյս՝ նուաճ լեցի կատարումն, որով և ած փառաւորեսցի յամ լեզուս ազգաց, յեկեղեցիս արդարոց, ՚ի մի միաբանութիւն հաւատոյ: Ողջ լեր գլուխ՝ յետ գլխոյն Եկեղեցւոյ:

լթ  Է յետ արձակելոյ զթագաւորական նամակն՝ ըստ վերոգրելոցդ խնդրանն, ինքն ժողովոյ հրաման հանէր յամ հայաստանեայս, սկսեալ յԱթոռոյն Աղուա-նից՝ մինչև ՚ի կողմանս տաւրոսացւոց, և մինչև ցԱրևմտային կողմանս, զի ամենեքին ՚ի միասին եկեալ Եպիսկոպոսք և Վարդապետք, հարք վանաց՝ ձգնաւոր կրօնաւորօք, առ ՚ի քննել զխնդիրն խաղաղութեան, և ամենեցուն միաբան պատասխանել:

Իսկ՝ ինքնին իմաստասէրն Ն.Յ և ամենահասանելի խորքն՝ ՚ի նոյն ամի վերափոխէր զերանելի Հայրապետն Սուրբ՝ ի խաղաղաւէտ յանվախճանն խաղաղութիւն, յամսեանն օգոս-տոսի՝ որ օր տասն երեք էր՝ յաւուր հինգշաբաթի, և ՚ի

Թուականին Հայոց ՚ի ռիը։ Այլ մեզ՝ այս գործ անհաւատալի՝ մինչև ցայս վայր։

Բանզի ՚ի ճգնաւորական կրօնից տկարացեալ երանելոյն՝ ը մերժեալ, յամ ժամ ձ՚նչէր ցաւօք՝ պարկեշտ անձն, և համեստ ամենայնին եղանակ ՚ի վերայ՝ Ջերմայնին օգնոյն տապացուցանէր զուրբն, և փազփազակի փախճան հասանէր, առ ոչ մեծ հասեալ Եկեղեցւոյ մեր, և բովանդակ զար մեօ, և ոչ միայն մեզ՝ այլև՝ համօրէն ՚ի Թադէոսականն ժամանէր քաղաք. փշտանայր բարեպաշտ որքայն և հաստատչենք առէր, մեծ գրգռեալան և արթուն՝ բարձաւ այսօր յԵկեղեցւոյ Տ. Ո. գրկեցան հայաստանեայք՝ յԵրկրորդ Լուսաւորչէն իւրեանց։ Մի Սրբանելի Հայրապետ, զկարդ զկին փափաք անկատար թողեալ ժամանեցեր առ Քս. Սակայն մեք զարժանի յիշատակի անուն քո՝ ընդ առաքելոյն Արրայն գլասակարգեմք, անմոռացնելով ուղղափառութիւն ՚ի Քն, և սո- տուէր հրամայեալ եմ ՚ի Թադէոսական քահանայից եկեղեցւոյ՝ յիշատակել զնա ընդ առաքելոյն սրբոյն՝ անմոռացութեամբ։

Գրեալ և Թուղթ միաբանութեան՝ նոյն իմբն բարեպաշտ Թադէոսին, ՚ի հայրապետ որդի Ներսէսին՝ որդւոյ Աթանասի ՚ի Տէր Գրիգոր, և առաքեալ արքաղանչեալ փոխեալ խնա- մոյն յոյս Թէոփանեայ՝ զալ և առ ոգիշոյն՝ նախապատիւ Հայ- րապետին, որպէսզի՝ ընկալեալ ասէ ՚ի նախնեացն՝ և յերկրորդ եւ Հոգին քոյ՝ ՚ի ձեռն քո կատարեսցի։

Իսկ նորա եկեալ յարեւելս՝ ՚ի խաղաղութիւն Ճանապար հայոն արգելաւ, և ոչ կարաց հասանել ՚ի Հայրապետական յաթոռն՝ առ Ներսէսական Հայրապետն, այլ միայն զնամակն Թադէոսական՝ առաքեաց ՚ի ձեռն Հեթումայ սմբատ Ճար տարայ՝ և հեռի Ճանապարհէն։ Զոր ստեալ՝ և ընթերցեալ Տէր Աբրահ Հայրապետին Գրիգորի՝ ուրախ եղև յոյժ, և առաքեաց պատասխանի՝ ը խմաստուն Կոստանդի ուսմամբ հռոմ ազգաւ Սասանդրին անուն, որ ՚ի նոյն քաղաքէն հռոմէացի էր, և առաջի իւրեանց ունել, որպէսզի ձեռ- նադրեսցի Սոյ Եղիսաբեթայ շուշանեակ զաւառացն, ՚ի մէջ բարբարոսին մշակաց։ Այլ ընթացեալ նա՝ խաղաղական զրոյց առ Թադէոսին, որ է այսպէս։

Թուղթ Գրիգորի Կաթողիկոսի Հայոց. Որ էր Տեառն Ներսէսի յաջորդելոյ շնորհալւոյն. Առ Երջանիկ Թագաւորն Հոռոմոց Մանուէլ։



Բարեպաշտի՝ ամենակալ արքայիդ Հոռոմոց՝ Էմմանուէլի, որ նման գոլով ընդհանուր տիեզերաց՝ ծայրագոյն պատուով և իշխանութեամբ, Գրիգոր նուաստ Կաթողիկոս Հայոց, և որ ընդ իւև լծակցեալ ժողովք՝ Հայաստանեայցս Եկեղեցեաց, աղօթիւք ողջոյն առաքեմք։

Հիմն բարի՝ զոր ունի՝ քո Աստուածասիրութիւնդ՝ 'ի ձեռն խնամոտ ծառայութեանն՝ հասարակաց մեր Հօրն՝ և Հայրապետի, յայտ և անկասկած է։ Քանզի՝ որպէս ծանուցաւ նախ քում բարեպաշտութեանդ՝ յառաքեալ մեր գրոյն, յառ քո կենսական մերձաւորեցաւ 'ի մէջ ոգւոյն կատարելոց՝ հանգչելով 'ի միջնորդութեան Քրիստոսի։ Եւ իմ նուաստութիւն նորին յաջորդ՝ նմին է և բանիցն աշակերտ, և փափագող առ 'ի զշնորհածին նմանութեան։

Այլ այսն՝ նախ լինի պատճառ յաղագմանն՝ իմ տարակուսութեան, և ապա 'ի վաղ ժամանակաց հնացեալ մոլորութեանս չարութիւն։ Եւ երրորդ և մեծ պատճառ՝ բացակայ և հեռի լինելս 'ի նախախնամողաց դթոյ քոյ, առ 'ի այն պարծ ձեռնարկելով։

Այդ՝ ծանիցէ քո Աստուածութիւնդ, զի զանազան խնդիրքն որ 'ի ձէնջ, զոմանս յետ նահանջէ 'ի խաղաղութէս, առ որս հնազանդեալ է ամբողջութիւնն։

Այնպէս՝ են բազումք՝ ընդ որս ոչ կարեմք խօսել՝ եւրե ընդ հողեղէնս, այլ՝ ոչ ընդ մարմնաւորս։ Որոց՝ երեւելոյն՝ կամք ջանեմք, և ոչ հաստատուն կերպարանս, զի ոչ կարեմք։ Յաղագս այնպիսեացն թեթևացուցանել խնդրեմք՝ 'ի նախակարգեալ գլխոցն, մինչև ուղղի ամբողջ խաղաղութիւն։ Եւ այնուհետև՝ ինքն սէրն ծնանի և բուսացանէ, զորս իւր ամենայն է օժանդակ։

Գործեալ՝ և բազմագոյն մեծ ունիմք՝ առ ընթեր լինել ամենայն արքայիդ՝ յայս աքանչելի խորհրդ գործառնութիւն, եթէ անօրինէր ամենահզօր կամքդ՝ վերին խնամոցն օժանդակութեամբ։ Որպէս և տեսանեմք, զի որկէք հիմն 'ի պէտս

փրր

փրկութեան եկեղեցւոյ, նլեալ 'ի հանդէս՝ ընդդէմ անօրինաց. և աղօթեմք տեսանել զյաղթութեան կատարումն:

Այլ դժուարագոյն քան՝ զոր ինչ կարծեմ է՝ երկրորդ անգամ լսել 'ի մէնջ՝ Ածաւէր Թագաւորդ. զի զնոյն ինքն զերանելի Հայրապետն մեր զՆերսէս՝ կենդանի բանիւքն իւրովք՝ ունիմք առաջնորդ առ քո խոստովանութեան՝ 'ի մէջ մեր. որև՝ զձեր Թագաւորութիւնդ նուաճեալ 'ի հաւանութեան ամենիմաստ գիտութեան՝ յոր առ մեզ ողորմութեան:

Եւ այժմ ըստ հաւատարիմ՝ առաքեալ առաջի ձեր նուաստութիւնս մեր՝ զպատուական Քահանայդ կոստանդին՝ որ անձնաւին հասու է՝ որ առ 'ի սուրբ աթոռս՝ նոր հրովդոյ, առ ոտս սրբոյ հօրցն մնեալ, և զխ ինքն դաստիարակեալ, որ կարողապէս յայտնեսցէ առաջի հանդիսական Աթոռոյդ՝ լեզուաւ զճշմարտութիւն, յառաջադոյն 'ի մէնջ գրեցելոյն: Եւ աղաչեմ, զի առցէ դա զձեռնադրութիւն Արք Եպիսկոպոսութեան՝ մայրաքաղաքին յերապօլսի, և կողմանցս Եփրատայ՝ 'ի Պատրիարքէն Անտիոքայ: Քանզի՝ և արժանի իսկ է, սրբութեա՝ և իմաստութեա՝ և հասակաւ կատարեալ գոլով: Ողջ լեր յարքունական Տէրութեանդ՝ պարագայց ամօք, Կարօղ օգոստոս՝ և ինքնակալ բարձր Ածաւէր Թագաւոր:

Առեալ զայս գիր՝ քահանայն կոստանդին՝ և ընդ իւր նմա իշխանք՝ 'ի տէրականն Աթոռոյն, և էհաս առ Թագաւորն յորժամ էր յարևելս 'ի պատերազմ՝ ընդդէմ [illegible] սուլթանին [illegible], զոր ընթերցեալ բարեպաշտն Թագաւորն ուրախ եղև, և առաքեաց զնոսա 'ի քաղաքն Թագաւորական, մինչև 'ի դարձն իւր 'ի պատերազմէն՝ [illegible] բանակն [illegible]: Եւ ընդ մնանել նորա՝ ծանեաց պատրիարքաց՝ զոր 'ի հայս ճշմարտութիւն հաւատոյն և վարուց:

Եւ Քանզի էր ազգաւ հռոմ և Քահանայ 'ի նոցանէ, տեղեակ և Հայոց օրինաց, հաւանեցուցանէր զպատրիարքն, և յանձն առնէր զտեղարարս չարախօսն:

Եւ եղև յամել Թագաւորին 'ի պատերազմին զամ մի, և նորա մնալ 'ի քաղաքին: Իսկ քահանայն մեր՝ ծանրացաւ

ձե

ձեռն անօրինացն 'ի վերայ, և յաղթեցաւ բարեպաշտ Թագաւորն՝ յայլազգի սուլթանէն խլիճասլանայ, մերձ յեկոնիայ՝ 'ի տեղւոջն՝ որ կոչի մելիոկէնի, յամսեանն Սեպտեմբերի, և 'ի Թուականութեան Հայոց 'ի ոիե։

Իսկ Թագաւորն բարեպաշտ՝ լուրոյ անձամբն քաջամարտիկ լեալ, բազում յաղթութիւն և արութիւն ցուցեալ յայլազգիսն, զբազումս 'ի նոցանէ՝ դիաթաւալ յերկիր կացուցեալ, մինչ զի՝ երկերիւր զարկ նետից՝ և որմ բաց բազմաց՝ հանդերձ պարսաքարիւք 'ի նա դիպեալ, 'ի տեսչութենէն Այ և ոչ մազ մի 'ի հերաց գլխոյ նորա՝ պակասեալ, այլ՝ յազգէ Թագաւորին՝ աւելի քան զեօթանասուն այր՝ հանդերձ այլովք իշխանօք և հեծելազօրօք՝ 'ի տեղին խողխողեալ այլազգեաց, գերեցին և զսուրբ Խաչն փրկական, հանդերձ պատկերաւն՝ ամենօրհնեալ սրբուհւոյն և մօր տեառն։

Իսկ՝ բարեպաշտ Ռուքայէն ժողովեալ զմնացեալ զօրսն՝ բանակեցաւ 'ի նոյն տեղի պատերազմին՝ պատնէշ շուրջ արկեալ, խնդրեաց զխաղաղութիւն յայլազգի Սուլթանէն։ Իսկ նորա կատարեալ զհայցուած կամաց՝ բարեպաշտ Ռուքայէն, շնորհէ նմա և զնշանն փրկական՝ հանդերձ պատկերաւ սրբուհւոյն։ Եւ առ վաղիւն դարձ արարեալ՝ մնացեալ զօրօքն՝ 'ի Թագաւորականն Քաղաք։

Սակայն՝ և ոչ զանց արարից զնորահրաշ զսքանչելեացն այն՝ զոր գործեցան, Թէև՝ երկարեսցուք զբանս։

Քանզի՝ 'ի նոյն ամի՝ չորիւք ամսօք յառաջ՝ յետ սէյ պասեքին՝ յաւուր նոր կիւրակէին՝ յառաւօտուն պահու՝ ընդ ծագել արեւուն՝ եղև խաւար 'ի վերայ երկրի, զոր ոչոք 'ի մարդկանէ էր տեսեալ այնպիսի, ոչ որպէս զխաւարումն արեգական, այլ՝ որպէս զհաստատ գիշերի, յորժամ՝ լինէ առանց լուսնի և աստեղաց, 'ի յաշխարհէն պաղեստինացւոց՝ մինչև 'ի բիւզանդիոն, և յայլ բազում գաւառս։

Նաև՝ քննեալ եղև իմաստասիրաց բազմաց, և գտաւ դիր աստեղաց՝ և ընթացք արեգական և լուսնի յիւրեանց կայանս, առանց իրիք սայթաքման, և մնաց այնու աշխարհս ժամ մի, և ապա եղև լոյս յերկիր։ Այլ եթէ զկորուստ քրիստոնէիցն գուշակեաց՝ ոչ գիտեմ, և եթէ զայլոյն

սաստկութիւն՝ որ ՚ի [illegible] զայն եւս։

Ընդ մեզ զանձնայիւ ՚ի նոյն՝ ամսոյն եղելոյ քանիցս։ Քանզի՝ յորժամ ժամանեաց Թադէոսին քարոզելոյն՝ ՚ի Թագաւորութեանն քաղաք, եւ ժամանեցաւ Աբգարու Դատ բժշկել, զԱբգարեայն կատարեցին՝ Սոյն Եղիշէիկայս, զասա խնդրոյ Կեդրոնացիք, եւ կոչեաց ամսոյն՝ զգետոյ նշխարս խաչին, նոյն եւ մեծ Նիկեացին՝ հանդերձ Դիոնէսիոսի, եւ զամենայն ժողովն։

Օրինակս զայսոսիկ ընկալեալ Կաթուղիկոսն Հայոց Գրիգոր, եւ ընթերցեալ խորհրդակցութ Եպիսկոպոսաց եւ Վարդապետաց, ուրախ եղեւ յոյժ։ Քանզի՝ փոխանակ նոյն զնոյն՝ զոր ՚ի ժամանակս Նիկիական Տէր ՚Հիսուսի Քրիստոսի, որ ծանր Թուէր յայս մեր, մեծն զայս խնդրեցին պղնձեայս բան՝ նիւթ մշտնջենաւորութեան, եւ քննեալ զայն զամէն ուղղափառ է համաձայն սրբոց հարցն։

Եւ յայնժամ սոյն՝ ըստ հրամանի Թագաւորին եւ խնդրոյ՝ հրաւէր եհան ժողովոյ՝ ՚ի մեծն Հայս եւ յայլ եւս, եւ ՚ի Սեբաստ քաղաքէ նմին, եւ ՚ի Սիս քաղաքն՝ որ մեծ է կոչի, ժողովել յամենայն եպիսկոպոսաց ՚ի Հռոմայական Աթոռ՝ փոխանակ այսր խնդրոյ, որպէս զի՝ տեսցեն զառաքելական բանիւ ճշմարտութեան Նիկիական Ժողովոյ։

Եւ ժողովեցան յամենայն գաւառաց Եպիսկոպոսք՝ ՚ի Սիս Գաղատիոյ, ՚ի Հռոմայեցւոց Աթոռն ժողովեալ ուր էր ամենայն Եպիսկոպոսաց, եւ կատարեալ զժողովոյն ամենայն հաւանու Թեամբ Տէր մերոյ յի քսի ՚ի խաղաղութիւն, եւ յետ այսորիկ վաւերացուցին ՚ի քննութեան՝ գրեցեալ Թղթովն ՚ի Թագաւորին ժողովոյ եւ կնքեցեալ։ Եւ ընդ նմին եւ յեպիսկոպոսապետն տանն Վարդապետացն, եւ խնդրեաց զայս։

Եւ յետ սորին կարգեալ քաղաքացւոցն բանիւ ՚ի Թղթոյն զամէն զամենեցունց համաձայն սրբոց հարցն, եւ ուղղափառ անպակասելի յամենայն խոստովանութեան, որ ՚ի Տէր մերոյ յի քի նորոգութեան։

Յայնժամ սոյն յաջողեալ կամօք՝ Կաթուղիկոսն Տեառն Գրիգոր, եւ մեծ բարեխօսութեան Եպիսկոպոսացն Հայոց՝ առաքեաց զնոսա ՚ի Յոյնս, եւ ընկալան զայն՝ եղելոյ համաձայն, միաբանեալ՝ եւ զայնս ուղղափառ անփոփոխ, եւ յա

ծաւ

ծառ սատանայական կրձիմն հակառակութեան։

Այլ զի՝ և էր խորհրդածեալ Կաթուղիկոսն Սուրբ՝ գրեալ պատասխանի համաձայնութբ ժողովելոց Եպիսկոպոսացն՝ և ամ Հայոց՝ Թագաւորին և Պատրիարքին խնդրոյ՝ զոր 'ի հայք խոստովանութիւն՝ պատշաճ բան և ճշմարիտ, և գրեալ զնոյն ստորագրեաց Կաթուղիկոսն՝ և ամ Եպիսկոպոսունք, և յայտ արարին զհամաձայնութիւնն գլխոյն՝ առանց հակառակութե 'ի պատասխանին Հռոմայ՝ օրինակաւ այսպիսի։

Թուղթ Գրիգորիսի Կաթողիկոսի Հայոց՝ յաւանակցութե ընդհանուր ժողովոյ Հայոց։ Պատասխանի Թագաւորին Հռոմայ Մանուէլի, յորում և ողջունափառ պատուականութեան՝ ըստ խնդրոյ Արքային, յաւանակցութե՝ և ձեռնագրով ամենայն Հայաստանեայց Եպիսկոպոսաց։

Բանիւ զօրացեալ՝ և նովաւ պսակեալ՝ արքայից Արքայ՝ կարող և բարձր միշտ՝ օգոստոս և ինքնակալ՝ Թագաւոր Հռոմայ Մանուէլ կոմնենոս։

Գրիգորիոս Նուաստ ծառայ Քի, և շնորհիւ նորին Կաթուղիկոս Հայոց, և որ ընդ ինև Սուրբ ժողովս, զգիր հրամանի ձեր ծանեայ՝ հանդերձ ժողովովս և ամ Եպիսկոպոսակցօքս։

Ծանեաք զի՝ բարեփառ Թագաւորութիւնդ՝ կարողապէս տնօրինէր զխաղաղութիւն՝ 'ի ներքոյ ձեռին կայսեր՝ տիեզերական իշխանութեանդ, փոխութիւն ամենատեառն խնամոց մատուցաք, երկայն ժամանակաւ յերկարել 'ի նոյնդ՝ խնդրեմք յայ, ևս դերագոյնս զօրութբ և փառօք, հանդերձ մանուկածին և մանկապարգև՝ ծիրանածին արքայիւք՝ հարազատ անդրանկաւ ձեր Ալէքսիոսիւ, և բովանդակ մեծապատիւ զարմիւդ։

Իսկ՝ զհարցումն հաւատարիմ հաւատաքննութեանս՝ ճաշակեալ խնդութբ սրբոյ եղաք հաւանութբ։ Եւ 'ի քաղցրութե պատգամ՝ ծանեաք զծառդ, որպէս և միշտ գիտէաք պատուականին ուղղափառութե, և հաստի՝ հայրենի

աւանդութեանցն, զոր յեկեղեցւ սուրբ՝ գտեք։ Այլ զի՞ ձայնակից նոյն ուղղափառութեան է սուրբ Եկեղեցիս այս՝ որ 'ի մեզ, յայտ է իմաստուն ձեր՝ որ 'ի հօրն մեր՝ և 'ի նախայաջորդէ սոյ Աթանասյ՝ 'ի Տն Ներսիսէ գրեցելոց նամակյն, նմին և մեք աշակերտեալք, և ուղղափառ դաւանութեան քարոզք։

Բայց՝ և փոքր ինչ երկրորդեմք՝ առ 'ի յայտարարութ ընթացակցութե Հօրն մեր՝ անստերիւր շաւղաց։ Զանզի՝ և ինքն ընդ երանելիս հանգուցեալ Հայրն մեր՝ յայս Ձմմրիա և պատճառաւն հիման վերայ՝ շինեալ եկն, և եղեւ զեկեղեցիս հայոց անշարժ՝ և ստամիք արատոյ, որպէս և յայտարար ձեզ։ Ոչ եթէ նորոգ եմուտ 'ի մեզ ուղղափառութիւնն, այլ զոր ունէաք, նոյն և յայտնեցաւ։

Այսմ իր՝ գումարեալ ժողովք հարց սրբոց, որք 'ի ժամանակս ժամանակս եղեն 'ի սուրբ և 'ի Կաթուղիկէ եկեղեցիս՝ ընդդիմամարտք զանազան հերձուածոց, յայտնի վկայէն 'ի մէջ մեր, թէ ո՞յք, և վասն որո՞յ պատճառի շարժեցան այն, և սրբոց հարցն՝ որք միաբանեցան յաւուրս քննիչ ժողովս՝ ուղղափառութեան ձայնակցիմք, և զնզովեալսն 'ի նոցանէ՝ նզովեմք։ Որք արդարև յորդարեցին զժռճարինսն՝ 'ի դիւրինս, և զատարսն՝ 'ի հարթ ճանապարհս։ Եւ խլեցին զորամն ապականիչ, որք են գայլք՝ 'ի հանդերձս գառանց, յորոց զգուշացուցին զբանաւոր հօտս օչխարաց։

Եւ 'ի սոցանէ՝ առաջին և տիեզերական ժողովն՝ որ 'ի Նիկիա, 'ի ժամանակս Արտակէր Թագաւորին Կոստանդիանոսի, որք զհամագոյութեն հաւատոյ՝ հաստատեցին ընդդէմ արիանոսացն։ Եւ էր մի 'ի սրբոց ժողովոյն՝ Արք Եպիսկոպոսն Հայոց՝ մեծն Արիստակէս՝ որդի Սրբոյն Գրիգորի, յորմէ ընկալեալ զուղղափառ դաւանութիւնն՝ Նիկիական ժողովոյն՝ զգուշացաւ Եկեղեցի մեր, և անփոփոխ մնայ յարիանոսացն աղանդոյն՝ մինչև ցայսօր

Եւ երկ ժողով և 'ի Կոստանդնուպոլիս՝ ընդդէմ հոգեմարտիցն, ճ՛ որս էր՝ և մերն Հայրապետ Սուրբն Ներսէս, որում և աշակերտեալք, անբացաք 'ի մակեդոնի աղանդոյն։

Եւ երրորդ ժողով յեփեսոս՝ ընդդէմ Նեստորի, որ ըստ պատահման ժամանակին՝ ունէր զաթոռ Արք Եպիսկո

պոսութեան Կոստանդնուպօլսի, սա ոչ ծածկին դաւանէր զսուրբ կոյսն, և զՏէր մեր յն քն ոչ յերկուց բնութեանց միաւորեալ, այլ՝ շարադրութիւն յարակցեալ, ընդդէմ որոյ ժողովեալ երկերիւր Սուրբ Հարցն՝ յԵփեսոս, արտաքս ընկեցին զնորին չար հերձուածն՝ յեկեղեցւոյ, և եդուն մեզ զուղղափառ հաւատ՝ ժողովական թղթովք՝ Սրբոյն Կիւրղի Աղեքսանդրու Հայրապետի, զորս ընկալաւ հայրապետն հայոց՝ Մեծն Սահակ, և խորշեցոյց զեկեղեցի մեր՝ 'ի նեստ-որի չար հերձուածոյն։

Դարձեալ և այլ և այլ ժողովոց կանոնադրութիւնք 'ի մէջ մեր, և ընդունելի են, որք զզանազան կարգս Եկեղե-ցւոյ հաստատեցին, և զպէսպէս հերձուածս հերքեցին։ Որք և Անկիւրիայ ժողովն՝ 'ի հերքումն Լիկիանոսի ամբարշտու-թեան, որ 'ի զոհս կռոցն՝ բռնադատէր զքրիստոնեայսն։ Եւ Կե-սարիայն՝ ընդդէմ յուսթից կանոնաց։ Եւ Նէոկեսարիայն՝ ընդդէմ անխտիր պոռնկութե։ Եւ Գանգրայն՝ ընդդէմ Եւստաթեայ հերձուածոյն։ Եւ Լաւոդիկեան՝ ընդդէմ չորեք-տասաներորդացն։ Եւ Սարդիկեայն՝ 'ի պէտս եկեղեցական կարգաց։

Յայս ուղղափառ ժողովոցս՝ և որք այլքն համգոյն՝ ունիմք զհաւատոյ դաւանութիւն, և 'ի նոցին կանոնադրութեանց՝ զգործոց պարկեշտութիւն, և զմեղաց խոտրութիւն, և զե-կեղեցական կարգաց՝ վայելչութիւն։ Որոց և առաջնորդու-թեան՝ հայրենի դաստիարակութեամբ՝ ուղեկից լինիմք, զգու-շացեալք առ 'ի յոչ խոտորել յաջ, և ոչ յահեակ, յար-քունական պողոտայէն՝ զոր ցուցին մեզ։

Վասն այնորիկ՝ և համարձակութեամբ նզովեմք, զառ 'ի նոցանէ՝ նզովեալ հերձուածողսն, զարիոս՝ որ ոչ ասաց զորդի՝ 'ի բնութենէ հօր. զմակեդոն՝ զի հայհոյեաց զհոգին Սուրբ, զպօղոս շամշատացին, և զնեստոր՝ նորին հերձուա-ծոյն նորոգիչ, որք մարդ դաւանաքեայ՝ ասացին զՏէրն մեր, և զՏէր մեր յն քն, յարակցութեամբ և հաւասութեամբ շարայարեալ յԲն, և ոչ անձառ և զբանչելի միաւորութեամբ։

Նզովեմք և զամբարիշտն Եւտիքէս, որ զմիութիւն Բնութեան և մարմնոյն՝ շփոթմամբ դաւանէր, և ոչ յատ-կութեամբ՝ 'ի հայեցողութիւնն բնութեանց։

Ընդունիմք իսկ՝ և երդակցիմք սուրբ և Ընտրեալ հարցն, որք այսոցիկ հերձուածողս՝ մանաւանդ ձգնեալ հակառակ կացին, և զուղղափառ հաւատ՝ Ընդհանուր վարդապետութեն եկեղեցւոյ՝ գրով ետուն մեզ. Զորս առեալ ընկալաք, և միշտ ընթերցմամբ՝ 'ի նոցին աշակերտութեն փութամք գտանել անմոլար։

Վասն այսորիկ՝ և յարկեալ հիմանն՝ որ 'ի նոցանէ, մեք շինեմք զկատարելութեն մերոյս յայտարարութիւն, առաջի քում ինքնակալութեդ, և Ընդհանրին ժողովոյդ, եւ՝ և որք համաձայնին ընդ՝ 'ի սոյն ընդհանուր հաւատամանեացս գրուածս։

Հաւատամք 'ի մի Ած Հայր ամենակալ՝ արարիչ երկնի՝ երևելեաց և աներևութից, որ ունի զգոյն այինքեանն։

Եւ 'ի միածին բանն՝ յիմաստութիւն, Որդի 'ի Հօրէ՝ անսկզբան և միանձնաւոր։ Ոչ յառաջնեալ բան, և ոչ խառնական, ոչ կարօտ՝ զորով յոչ կատարելութե, և ոչ հաստուածս՝ յանակնա բնութեն, և ոչ առաջարկութիւն։ Բայց որդի ինքնակատար, կենդանի, ազդող, ճշմարիտ պատկեր Հօր՝ հաւասարազօրագոյն և համամփուա։ Զանզի՝ այս են կամք Հօր՝ ասէ, զի պատուեսցեն զորդի՝ որպէս պատուեն զհայր։ Ած ճշմարիտ, յԱծ ճշմարտէ, որպէս և ասէ 'ի Կաթուղիկեն Յովհաննէս, եթէ՝ եմք 'ի ճշմարիտ որդւոյ նորա 'ի Քս, որ է Ած ճշմարիտ, և կեանք յաւիտենականք։ Ամենակալ՝ յամենակալէ։ Զանզի՝ ամենեցուն՝ որոց իշխէ հայր, իշխէ և ունի որդի։ Համանգամ՝ 'ի բովանդակէ, նման Հօր՝ որպէս և ասաց Տէրն, եթէ որ եսես զիս, տեսանէ զհայրն իմ։ Ծնեալ անճառապէս և անհասապէս, քանզի՝ զազգատոհմ նորա ո՞ պատմեսցէ։

Հաւատամք և 'ի Սուրբ Հոգին, որ զնոյն քննէ և զխորս նոյ, որ բղխէ առ 'ի Հօրէ՝ անձնաւոր եւ՝ հաւասար և անեղանելից որդւոյ, և լինի զարդարանս՝ զօրութեամբ իւրով։

Խոստովանիմք՝ կամօք հօր և գործակցութեամբ հոգւոյն զմիածին որդին՝ 'ի վախճան յաւիտենից իջեալ 'ի ծոցոյ հօր, որև յանարատ Կուսէն Մարիամայ՝ զմերս ընկալաւ մարմին: Եւ յետ զամ՝ փրկագործ տնօրէնութեանն կատարելոյ, եդ զանձն վասն մեր՝ 'ի չարչարանս, մեռանել թաղումն կամաւ՝ յա քն: Որպէս և ասէր, ոչ որ բառնայ զանձն իմ՝ յինէն, իշխանութիւն ունիմ դնել զսա, և իշխանութիւն ունիմ՝ միւսանգամ առնուլ զսա: Որով մարմնով խաչեալ և մեռեալ յաղագս մեր, յարեաւ 'ի մեռելոց՝ և վերացաւ յերկինս: Անկիզելի ճանապարհնի եղեալ մեզ, որ 'ի յերկրէ զոլով՝ ցուցաւ մեզ լոյս՝ 'ի խաւարի, փրկութիւն՝ 'ի մոլորութենէ, կեանք՝ 'ի մեռելոց, զմուտ 'ի դրախտն յորմէ արտաքսեցաւ ադամ, յոր դարձեալ եմուտ 'ի ձեռն աւազակին, որպէս ասաց՝ այսօր ընդ իս լիցես 'ի դրախտին, ուր և կարապետն մեր եմուտ [illegible], որով հանդերձեալ է գալոց զկենդանիս և զմեռեալս:

Որք՝ այսպիսի յառաջ և հաւատոյ դաւանութեամբ՝ առաքելականացն եղբայրակցութեան [illegible], [illegible] և Տեառնէ Յօհաննէս՝ [illegible] 'ի նախամարգարէն Մեծասանին՝ առեալ, խաչեցաւ երկանն, և թաղեցաւ ան Մն, և ծնեալ էր թաղեցաւ: Այս էր խաչեցաւն [illegible], որ ինչ նշխար եղև: Եւ 'ի թուղթն Կաթուղիկէ, որ ասէ խաչեցաւն, զորմէ լուեալն, որում և առաքեալքն իւր եղեն, և ձեռք մեր շօշափեցին 'ի վերայ բանին կենաց: Յայտնեցաւ մեզ երեք, թէ խաչեցաւն էր նա՝ որ 'ի սկզբանէ առ հօրէ՝ բանն էր. որ և ած հաւատարանն, և առաքելոցն. [illegible] առաքելոցն մարմին [illegible] և բնակեցաւ ընդ՝ ձեռք մեր՝ շօշափեցին 'ի վերայ բանին կենաց. յայտ առնելով զանճառ միաւորութիւն բանին և մարմնոյն: Զանզի՝ զմարմնոյն զկենդանի անկեալ՝ շօշափեցին նա՝ վասն անճառ իմանալի միաւորութեան՝ բանին խառնեալ ընդ զկենդանի շօշափել: Որպէս և այսմ հանգոյն՝ առնէր [illegible], որ եւս զնա՝ եւս զհոգին:

Արդ զսա՝ պարզ զդաւանութիւն և զմարմնոյն՝ Յօհաննէս Նուրբ և անոսր բանիւ եւ մեզ, զգուշութիւն, Պետրոս և Համարձակ խօսի առ ակարանիս հրէայսն՝ 'ի հրապարակա-

խօ

խօստութեան, որ յետ երկման հոգւոյն, մեք եբրայեցիք՝ ա-սէ, զյն նազովրեցի՝ զայր ցուցեալ 'ի ձեռն յոյց, նշանօք եւ զօ-րութբ հոգւոյն սրբոյ, մատնեալ 'ի ձեռս անօրինաց, բեւե-ռեալ 'ի փայտ՝ սպանիք, զոր ած յարոյց 'ի մեռելոց: Քանզի ոգի նորա՝ ոչ թողաւ 'ի դժոխս, եւ մարմինն՝ ոչ ետես զա-պականութիւն, յորում ամ մարգարէքն ըմբռնեցան, որք եւ ասաց դաւիթ:

Նոյին համաձայնի, եւ շաւղայն ընթացակից լինի Պօ-ղոս՝ յիւր թուղթսն, քանզի՝ ըստ Ածութեն՝ 'ի թուղթն որ առ յեբրայեցիսն, կոչէ զորդի՝ լոյս փառաց հօր, ըստո-րում ասէ, 'ի վախճան աւուրցս՝ խօսեցաւ Ած հայր ընդ մեզ՝ որդւովն, որ է լոյս փառաց, եւ նկարագիր էութե նորա, որ կրէ զամ՝ բանիւ զօրութե իւրոյ, սրբութիւն մեղաց մե-րոց արարեալ՝ նստաւ ընդ աջմէ մեծութեն 'ի բարձունս: Յայտ եւս է՝ թէ լոյս փառացն հօր՝ եւ նկարագիր էութեն՝ է որդի, ըստ Ածութեն: Իսկ՝ զսրբութիւն մեղաց մերոց արար մարմնովն, զոր 'ի կուսէն առ: Որպէս եւ ասէր, հայր՝ ես 'ի վերայ սոցա՝ սրբեմ զանձն իմ, զի եղիցին եւ սոքա սրբեալք ճշմարտութբ:

Սակայն առաքեալս նորին՝ որ քնէ խօսէր պօղոս, յան-ձառ միաւորութիւնն հայելով, զնոյն ինքն՝ զոր լոյս փառց ասէ, զնոյն եւ զսրբութե մեղաց՝ արարող: զի ամենեքին կար կեսցէ զբերանս այնոցիկ, որք տեսութե բնութեանցն՝ հոգւոյ աչօք, եւ անձնաւորութե յատկութիւն՝ 'ի ներքս ածեն, յամն եւ յամն տրոհելով զմի տէր մեր՝ յն քն: Քանզի՝ ահա ասաց թէ՝ որ է լոյս փառաց՝ ըստ Ածութեն, նոյն ինքն եւ սրբութե մեղաց արարող՝ մարմնովն, որով եւ նստաւ ընդ աջմէ մեծութեն՝ 'ի բարձունս: Զնստելոյն ականատես եղեւ նախավկայն Ստեփաննոս յաղաղակելն՝ տեսանեմ զեր կինս բացեալ, եւ որդի մարդոյ՝ զի կայ ընդ աջմէ նր:

Բայց զմարմնոյն յատկութիւնն՝ երբեք ոչ խորշէ պօ-ղոս՝ խոստովանել մեզ: Վասն զի գրէ՝ այսու անօրինել զմերն փրկութի: Քանզի՝ փրկեցաք մարմնոյն՝ որ 'ի տէր մեր յն քն, անօրէնութբ, ուստի եւ փոքր մի խոնարհեալ ասէ, զտէրն հրեշտակաց, քան զհրեշտակս՝ չարչարանօք մարմնոյն, որ եւ՝ յաւուրս մարմնոյ իւրոյ՝ ուժգին գոչմամբ եւ արտաս

ու

ոճով՝ աղօթս մատուցանէր, և լսելի լինէր առ լաւութեան։

Տացէ զարծաթ բանի պատուիրանացն Տ͞յ՝ 'ի սեղանաւորս, որ են անձինք լսողացն, զի յորժամ եկեալ պահանջեսցէ տոկոսեօք տէրն՝ զաճումն արծաթոյն, և գտցէ, ասասցէ՝ ծառայ բարի և հաւատարիմ, մուտ յուրախութ͞ի Տ͞ն քո։

Որով և դուք ամենեքեան՝ առ 'ի դմանէ հովուեալքդ՝ և արածեալքդ 'ի վայրի դալարւոյ առաքինութեան, և 'ի ջուր հանգստեան պատուիրանացն Տ͞յ, փութացարուք ընդ առաջնորդիդ հոգւոյ ձերոյ՝ մտանել 'ի յառագաստն ուրախարար՝ երկնաւոր փեսային՝ մշտնջենաւոր հարսանեացն, ասելով դորա՝ մեծապանծ պարծանօք առաջի Տ͞յ՝ վասն ձեր, թէ՝ ահաւասիկ ես՝ և մանկունք իմ, զոր ետուր ինձ։

Եւ այս լինի, յորժամ հետևող լինիջիք՝ Ա͞ծային ճանապարհի վարուց դորա, որ հանէ յերկինս։

Եւ պահելով զհոգի և զմարմին ձեր՝ յա͞մ պղծութ͞է աշխարհական ցանկութ͞եց, զի տաճար լինիցիք Տ͞յ՝ հոգւով, և ա͞ծային տեսութ͞են արժանաւորք՝ ըստ երանութ͞են Տ͞ն։

Դ

'Ի բաց լինել յանառակ արբեցութենէ, որ մայր է սպանութեան՝ և պոռնկութեան, և ամ չարեաց, և յիմարեցուցիչ իմաստութեան՝ որ տուեալ է մեզ՝ յԱյ, և սիրել զչափաւորութիւն 'ի գինի՝ և յամ կերակրոց վայելս, այնքան՝ մինչ զի զուարթութիւնն միայն կրել՝ 'ի գինւոյն արբմանէ, ըստ մարգարէին թէ՝ գինի ուրախ առնէ, և ոչ զբաղում տրտմականն՝ որ 'ի յանչափութենէ անտի ծնանի։

Զբանս բարիս խօսել ընդ ընկերս՝ առ 'ի պատճառ սիրոյ՝ որպէս կամք են Այ, և մի զթշնամանաց՝ և զանարգանաց, և զչարաչար յիշոցաց՝ բարբառել խօսս, որք զատելութիւնն ածեցուցանեն։ Եւ մի ոք տայցէ զլեզուն՝ գործարան սատանայի՝ որպէս օձին, զի նովաւ խօսեսցի զբանս բարկութեան, և զնենգութեան։

Խօսեցարուք զճշմարտութիւն՝ իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, և մի զխաբէութիւն, և զստութիւն, զի ճշմարտութիւնն՝ յԱյ է, և ստութիւնն՝ 'ի սատանայէ։

Մի անիրաւէք և մի զրկէք զմիմեանս, այլ անկեղծ սիրով սիրեցէք զընկերս՝ և բարի արարէք միմեանց, և զոր ինչ քեզ չար թուի՝ ընկերին մի առներ, և զոր ինչ կամիս՝ թէ առնեն քեզ այլք, զնոյն արա և դու այլոց, որպէս պատուիրեաց Քս։

Աղօթից ստէպ կացէք, զի աղօթքն են՝ որ բարձրացուցանեն զմարդիկ առ Այ, և խոնարհեցուցանեն զԱծ՝ առ մարդիկ։

Ողորմութիւն կարօտելոց՝ մի պակասեսցի 'ի ձէնջ, զի և դուք ողորմութի գտանիցէք յԱյ, յաւուրն դատաստանի։

Եւ գլուխ ամ բարեաց՝ զի առաջնորդին ձերոյ՝ հնազանդ կացէք, և մեծապատիւ ընդունիցիք զդա՝ որպէս զհրեշտակ Այ, և մի ըստ առաջին ընտանեկան սովորութեան՝ արհամարհիցէք, այլ իբրև զնոր առաքեալ յԱյ՝ ընդունեցարուք։ Եւ մի՛ ոք հակառակօղ՝ և ընդդիմաբան գտցի, զի մի կրեսցէ զխորասոյզ լինելն՝ ընդ Դադանայ և Աբիրոնի։ Եւ զհաս կանոնական՝ զուարթառատ սրտիւ հատուցէք 'ի ձեռս դորա, որպէս Այ, և ամենայնոցն նուէրս, յորմէ և ձեզ պարգևեսցի առ 'ի վերուստ՝ պարգևացն առատութիւն։

Եւ արդ՝ 'ի մտանել դորա յաշխարհդ յայդ, մնայէ և

շնոր

շնորհք ողորմութեան քո՝ առ մեզ, և բարձցէ 'ի մէնջ՝ զամ պատուհաս՝ որ վասն մեղաց, և տացէ պտղաբերութիւն երկրի մերում, և զանձուն անդեոց, և զբարեխառնութիւն թագաւորաց, և զխաղաղութիւն յաւուրքն թշնամեաց, և զշինութի աշխարհաց։ Զի վայելեսցուք յանցաւոր կեանս՝ հաստատուն բարութեամբ՝ որ 'ի սմա, արժանաւոր լինիցիք՝ բարեաց գործովք՝ յաւիտենական կենացն հասանել՝ 'ի ձեռն Յի. Քի. Տն. մերոյ։ Որում փառք յաւիտեանս Ամէն։

Շնորհեսցուք մեզ զօրաւ՝ և պարգեւս հոգեւորականս, զնոյն օծումն՝ զՄիւռոնն Սուրբ, զոր 'ի լուսաւորութիւն արասցէ Հոգին Սուրբ՝ նորածնելոցն աւազանաւն, և 'ի լրումն՝ ամ եկեղեցական կարգաց։

Նորին Տեառն Ներսէսի Կղայեցւոյ Թուղթ 'ի Սամոսատ քաղաք, յաղագս ուխտադրելոյն դարձի։

Ներսէս ծառայ քո, և ողորմութեամբ նորին Կաթողիկոս Հայոց. պատուական Քահանայիցդ՝ որ 'ի Սամոսատ քաղաք, Թորոսի քոր Եպիսկոպոսի՝ և այլ եւս քահանայակցաց քոց, և իշխանէր քաղաքական արանցդ, գաւանիդ՝ և համօրէն տանուտէրացդ՝ հոգեւոր որդւոց մերոց, Ողջոյն սիրոյ՝ և օրհնութեան, առաքեալք յԱծընկալ Սրբոյ Նշանէս, և 'ի Սուրբ Լուսաւորչէն Գրիգորէ՝ և յԱթոռոյս, զորս միշտ անշէջ պահեսցէ Տր Ած՝ 'ի հոգի և 'ի մարմին։

Գրեալ էր մեզ, զի վաղ ուրեմն էհաս 'ի մէնջ գիր՝ առ մեզ, յաղագս արեւորդեացդ՝ որք 'ի քաղաքի մերում բնակեն, եթէ կամին և աղաչեն, 'ի հաւատն Քի խառնել զնոսա, զի որպէս ազգաւ և լեզուաւ 'ի տոհմէ Հայոց են, յօժարին՝ զի և հաւատով՝ և հոգւով՝ 'ի նոյն միաբանութեան հաւատացելոցն ընդ նոսա։

Եկին և առաջի մեր 'ի նոցանէ, և զնոյն բանս աղաչենաց՝ խօսեցան ընդ մեզ։ Եւ մեք ծանուցաք նոցա՝ զոր ընթերցեալ էաք 'ի գրոց՝ վասն դիւրապաշտ սգանդից նոցին, և զոր լուեալ էաք 'ի համբաւէ յընտանեաց նոցին, զգա-

նա

նաղան չարիս, բանիւ՝ և գործով՝ զնոցանէ: Զի ոչ յաղագս Հաւատոց՝ պղտորելոցն անուանեալք՝ միայն խաւարեալք 'ի լուսոյ Աւետարանի փառացն Քի, և թագնաբար ունելով 'ի սիրտս՝ զաղանդն սատանայի՝ ոչ հնազանդեցան Առաքելոցն քարոզութեանց: Այսպէս և տրևորդէքդ յաղագս մեր, 'ի մասին՝ սատանայական խաւարին միացեալք՝ ոչ կամեցան լուսաւորիլ՝ Աստուածային լուսովն, 'ի ձեռն Լուսաւորչին մերոյ՝ Սրբոյն Գրիգորի: Այլ սիրեցին զխաւար՝ և ոչ զլոյս, մինչև ցայսօր ժամանակի:

Նա թէ 'ի նոյն աղեալ բարեաց ժամանակս մեր՝ ողորմեցաւ Աստուած նոցա, և երաց զխաւարեալ աչս հոգւոյ նոցին, հրաժարել 'ի սատանայէ, և դիմել առ Աստուած, ոչ խաբէութեամբ, այլ ճշմարտութեամբ, գոհութիւն զթութեանն Այ՝ մատուսցուք: Որպէս և դոքա՝ որ առ մեզս եկին, յուրաստ եղեն երդմամբ միաբան՝ 'ի չար աղանդոյ անտի, և նզովեցին բերանոք իւրեանց՝ որ զայնպիսի ծածուկ անաստուածութիւն ունէին յինքեան: Նա զոր ինչ սահման եդաք նոցունց՝ յանձն առին կատարել զԱմ:

Այսմ որոյ՝ և մեք զտէրունականն կատարեմք հրամանն՝ առ նոսա, թէ որ գայ առ իս՝ ոչ հանից արտաքս: Քանզի կամի Աստուած զԱմ մարդիկ՝ զի կեցցեն, և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն, ըստ Առաքելոյն:

Եթէ ճշմարիտ լինիցի դառնալ նոցա՝ առ Աստուած, ուրախութիւն է Այ, և հրեշտակաց 'ի յերկինս, և մեզ 'ի յերկրի՝ ընդ փրկութիւն՝ այնքան հոգւոց մարդկան: Իսկ եթէ ստութեամբ լինիցի դարձ նոցա, որպէս և կարծեն բազումք զնոցանէն, և դարձեալ անդրէն 'ի փոխանն իւրեանց դառնան, մեզ և ոչ մի ինչ է վնաս: Զի մեք վասն հրամանին Քի կամիմք, և ջանամք արկանել զնոսա՝ թէ հնարիցի՝ և զԱմ ազգս, 'ի յուղիղ Աւետարանի նորա, այլ ընտրելն՝ և ժողովելն զպարի բարին յամանս՝ ըստ առակաւոր բանի Աւետարանին, և զխոտանսն 'ի բաց ընկենուլ, արդար դատաւորին է, յորժամ նստցի յաթոռ փառաց իւրոց, և հատուցանէ իւրաքանչիւր՝ ըստ հաւատոց և գործոց:

Արդ՝ Աստուածային հրամանաւն՝ զայս ինչ պատշաճ համարեցաք յաւանել առ դոսա: Գրեմ ամ քահանայեցդ՝ հանդերձ

պատուհական աշակերտօքդ մերովք՝ 'ի մեծ Եկեղեցւոջն՝ որ 'ի քաղաքիդ, և ժողովել զարևորդիսն անուանեալ՝ զամենեսեան, զայր և զկանայս՝ և զմանկունս, 'ի դրունս Եկեղեցւոյն, և նախ հարցանել ցնոսա, եթէ՝ կամի՞ք 'ի բոլոր սրտէ, և յամ՛ մտաց, և 'ի զօրութե՛ ձերմէ՝ թողուլ զառաջին մոլորութիւն հարցն ձերոց, և գալ 'ի Ճշմարիտ Ըծգիտութիւն քրիստոնէութեան։ Եւ յորժամ զայս յանձն առնուն, և ասեն, եթէ՝ կամաւ և յօժարութե՛ սրտից՝ 'ի բաց կամք 'ի սատանայական խաբէութեց հարցն մերոց, և դիմեմք առ Քն։ Յայնժամ՝ դարձեալ երիցս անգամ հարցէք ցնս, որպէս ընդ երախայն 'ի ժամ մկրտութե՛ն, եթէ հրաժարի՞ք 'ի սատանայէ, և յամ՛ խորհրդոց՝ և 'ի բանից՝ և 'ի գործոց նորա, և կրկին յանձնառունն, և ասեն թէ՝ հրաժարիմք, ապա յարևմուտս դարձուցէք զդէմս երեսաց նոցա, և տացէք թէ՝ թքէք յերեսն սատանայի՝ երիցս անգամ, և անարգեցէք զնա՝ որպէս զպիղծ և զսուտ, և զանիծեալ։

Եւ յորժամ զայս առնեն, ապա ուսուցէք նոցա՝ թէ զարեգական՝ մի այլ ինչ համարիք, քան թէ ճրագ աշխարհի, զոր ստեղծ արարիչն ած, և եդ զնա յերկինս՝ լուսատու լինել երկրի։ Նոյնպէս զլուսին՝ և զաստեղս։ Եւ զբարտի ծառն՝ մի աւելի պատուէք քան զունայն՝ և զկաղամախին, և զայլս 'ի ծառոց, և մի կարծէք թէ՝ փայտ Խաչին քն բարտի էր, ստութիւն է այդ՝ և խաբէութիւն սատանայի, որ մոլորեցոյց զձեզ, և եհան յայդ։ Քանզի այդ ծառ՝ որ բարտի անուանի, 'ի կռապաշտութե ժամանակին՝ 'ի պաշտօն առեալ էր նոցա, յորս և դուք մնանէին, և 'ի մարդկանէ երկրպագութիւն ընդունէին։ Եւ մոլորութիւնն այն՝ թէպէտ և յոյլոց ազգաց՝ որ յաշխարհի են, բարձաւ ողորմութեամբն Ք.Ի, բայց առ ձեզ՝ որպէս զխմոր չարութե՝ թաքեաց և պահեաց սատանայ։ Զորս և դուք բարձէք զչար սովորութիւն զայն 'ի ձէնջ, եթէ կամիք գալ առ ճշմարտութիւնն Քի։ Եւ ոչ միայն աւելի պատուէ մի դնէք բարտի ծառոյն՝ քան այլ ծառոց, այլև անարգ համարեցէք զնա՝ քան զայլ ծառս, որով և սատանայ անարգեսցի։ Եւ եթէ այլ ոք 'ի ձէնջ՝ գիտէ առ նա դիւական ինչ բժժանք, և զայնոսիկ յայտնեցէք նմ, և տացէք թողուլ, և 'ի բաց կալ։

Եւ

Նմանապէս դարձուցէք զերեսս նոցա յարեւելս, և հարցէք թէ հաւատայ՞ք յամենասուրբ Երրորդութիւնն, 'ի Հայր՝ և յՈրդի՝ և 'ի Սուրբ Հոգին, որ է երեք անձնաւորութիւն, և մի էութիւն, և մի բնութիւն, և մի զօրութիւն, և մի իշխանութիւն, և մի արարչութիւն։ Որով եղեն յոչնչէ՝ ամ արարածք՝ բանիւ նորա, երևելիք և աներևոյթք, երկինք և երկիր, և որ ինչ յերկինս, և որ ինչ յերկրի, հրեշտակք և մարդիկ բանաւորք, և արեգակն՝ և լուսին՝ և աստեղք լուսատուք տիեզերաց, և կենդանիք՝ երկրաւորք՝ և օդայինք, և ջրածինք, և ամ բոյսք և տունկք, և անշարժք և շարժունք, և չիք արարած գոյաւոր՝ անմարմին կամ մարմնաւոր՝ որ ոչ է ստեղծեալ՝ ճշմարտին Ն. Տ։

Հաւատայ՞ք և 'ի մարդեղութիւնն Քի, որ մի յերեք անձնաւորութենէն՝ որդին Այ՝ կամեցաւ լինել հաճութեամբ Հօր՝ և Հոգւոյն Սրբոյ՝ որդի մարդոյ, ծնանելով 'ի միշտ Կուսէն Մարիամայ՝ վասն փրկութե մարդկան, որ և մկրտեցաւ 'ի Յովհաննէ 'ի յորդանան, և 'ի Հօրէ՝ և 'ի Հոգւոյն վկայեցաւ, և փորձեցաւ 'ի սատանայէ, և յաղթեաց փորձողին։ Զդևս հալածեաց, զհիւանդութիւնս հոգւոց և մարմնոց՝ որք հաւատով խնդրէին 'ի նմանէ, բժշկեաց։ Զկոյրս լուսաւորեաց։ Զկաղս գնացոյց։ Զմեռեալս յարոյց։ 'Ի վե̄ ծովու՝ իբրև 'ի ցամաքի գնաց։ Հողմոյն և ծովուն սաստեաց որպ զօրաւոր, և դադարեցին։ Սակաւ հացիւք՝ զբիւրս կերակրեաց։ Յետ բազում այլոց զօրութեանց և նշանաց՝ զոր արար, եկն կամաւորութբ 'ի փրկագործ չարչարանսն, զոր կրեաց մերով բնութբս, 'ի Խաչին բևեռեցաւ, և թաղեալ՝ և զծնունդս իւր՝ արձակեաց 'ի կապանաց մեղաց։ Մեռաւ մարմնով, և կենդանացոյց զմարդիկ հոգւով։ Իջ 'ի գերեզման՝ և ազատեաց զհոգիսն՝ որ 'ի դժոխս։ Յարեաւ 'ի մեռելոց յերրորդ աւուր, և շնորհեաց զյոյս յարութե մարդկան՝ ըստ նմանութե իւր, 'ի յերկրորդ գալստեան իւրում։ Համբարձաւ յերկինս մարմնով մեր՝ առաջի աշակերտաց իւրոց, և նստաւ ընդ աջմէ Հօր իւրոյ՝ 'ի բարձունս։ Որև գալոց է միւսանգամ՝ դատել արդարութբ՝ զամ ազգս մարդկան, Բարեգործացն՝ որք 'ի ճշմարիտ հաւատս քրիստոնէութեան են, զբարիս հատուցանելով, և

անհաճառելին՝ և անդարձ մեղաւորացն, զյաճախեմնալն տան Ջանսն պատրաստելով՝ ընդ սատանայի, և դիւաց նորա։ Եւ ինքն մեծք լուրովք և արդարովք՝ Թագաւորեսցէ անվախճան՝ յաւիտեանս յաւիտենից։

Եւ յորժամ՝ ըշմարիտ հաւատոյ դաւանութեանս քրիստոնէից՝ զոր գրեցաք, յանձնառուն և խոստովանին, ածէք զնոսա յեկեղեցին, և զորս ոչ են մկրտեալ 'ի նոցանէ երախայացուցէք, և խոստովանեցուցէք զկատարեալսն հասակաւ, և դիք փոքր ինչ ապաշխարութիւն, և յետ ժամանակի ինչ՝ մկրտեցէք զնոսա. և որք տղայք են և մանկունք՝ զնոսա 'ի ժամն մկրտեցէք։

Իսկ զայնոսիկ՝ որք յառաջագոյն մկրտեալք լինին, միայն զխոստովանութիւնն առեալ, և ապաշխարութիւն եդեալ, և Սբ Միւռոնաւն զճակատն դրոշմեցէք և զգայարանսն, ասելով՝ Յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն Սբյ, և ապա խառնեցէք 'ի Հօտն Քի։

Եւ որպէս հրամայեաց Քս՝ աշակերտացն, Թէ՝ յետ մկրտելոյն զաշակերտեալ հեթանոսսն՝ ուսուցէք նոցա պահել զամ՝ զոր պատուիրեցի ձեզ։ Զնոյն օրինակ և դոցա արարէք, պատուէր տալով 'ի բաց կալ 'ի սպանութէ, 'ի շնուէ, 'ի պոռնկութէ, 'ի գողութէ ընկերաց, 'ի յարբեցութենէ, և յամ՝ չար գործոց սատանայի՝ զորս ատէ ած, և փոխանակ այսոցիկ, լինել եղբայրասէր, և ոչ միայն զայլոց ինչ՝ ոչ գողանալ, այլ՝ յիւր արդար վաստակոցն տալ կարօտելոյն՝ ըստ հրամանին Քի, և նախանձել նոցա՝ եթէ զամենս տեսանեն 'ի հեն քրիստոնէից, զի աներկիւղութբ գնան, և օրինացն այ՝ զհակառակն գործեն։

Նա Թէ՝ և 'ի Քահանայից տեսցեն անկարգ ոք՝ և աներկիւղ, մի՝ զայթակղեսցին՝ սակաւուցն վատութբ, 'ի ճշմարիտ օրէնս քրիստոնէից։ Այլ 'ի լաւսն և 'ի յընտրեալ հայեսցին, և յայնցանէ առցեն իւրեանց օրինակ բարեաց։ Զի վասայն՝ ոչ Թէ օրէնքն այ՝ հրամայեն վատ լինել, այլ իւրեանց ծուլութիւնն՝ և անմտութիւնն, և սատանայ՝ որ հակառակ է բարեաց, տայ զօրէնսն Այ՝ արհամարհել 'ի կորուստ անձանց իւրեանց։

Նոյնպէս՝ և կանանցն պատուէր տուք, 'ի կախարդու-

թենէ՝ և 'ի դեղատուութէ, և յամ դիւական աղանդաւորութէ 'ի բաց կալ։ Զի ամ որ՝ որ կախարդութն զհետ երթայ, դիմացեալ է պաշտօնեայ և երկրպագու։ Որ առնէ՝ և որ առնել տայ, այնպիսին՝ ոչ հաղորդելի է արժանի, և ոչ թաղման քրիստոնէից։

Նոյնպէս՝ և որ զպղծ և զաղտեղի իրս 'ի կերակուրս, կամ յըմպելիս խառնեալ՝ տայ ուտել քրիստոնէի, վասն դիւական սիրոյն՝ որ յայդ որոշէ՝ և 'ի սուրբ հաղորդութենէ զրկէ, և զկատարեալ ապաշխարութիւնն ծնանի, և զգուշացուցէք զնոսա՝ յամ 'ի յայսպիսի բժժաղործութէ։

Եւ այս լիցի հաստատեալ օրէնք նդ՝ 'ի վերայ առացելոցս, արանց և կանանց, զորս կարճառօտիւք՝ և թեթևագոյն գրեմք։ Երկիցս կամ երիցս 'ի տարւոջն՝ խոստովանել զյանցանս իւրեանց՝ Քահանայից, կամ եւս յոլովագոյն, և յանձնառնուլ զապաշխարութիւն՝ զոր դնէ Քահանայն վասն մեղացն, կատարել պահօք՝ և աղօթիւք, և ողորմութե, որով և թողութիւն յանցանացն՝ զոր խոստովանեցաւ՝ առ ժամանօրի մեղուցեալն գտանել յայ։

Եւ յամ ժամու աղօթից՝ եկեսցեն զհետ այլ քրիստոնէիցն՝ յաղօթարանն առ Քահանայսն, և երկրպագեսցեն արարչին ամի այ, և աղօթս արասցեն առաջի նորա, և խնդրեսցեն զքաւութիւն մեղաց, և արժանի լինել արքայութեն երկնից, և փրկել 'ի գեհեննին տանջանաց, և պահել զհոգի և զմարմին՝ 'ի կեանս յայս՝ անարատ և անփորձ յամ որոգայթից սատանայի, և յամ վտանգից և փորձութեց։ Եւ զպահս կանոնականս՝ զոր այլ քրիստոնեայք պահեն ընդ տիեզերս՝ պահեսցեն և նոքա սրբութե, 'ի պարարտ կերակրոց՝ և 'ի թմբրեցուցիչ ըմպելեաց։

Ուսուցէք նոցա և զայս, ունկնդիր լինել և լսող Աւետարանական ձայնին, և այլ Ածաշունչ գրոց բանից։

Եւ որ 'ի Քահանայից՝ գիտութիւն ունիցի, հասկացուցէք նոցա՝ զծածուկ բանս գրոց՝ ըստ կարի ձերում։

Ունէք և յորդւոց նոցա՝ յուսումն գրոց սրբոց. զայս և մեք խնդրեցաք 'ի նոցանէ՝ յորժամ եկին առ մեզ, և նք յօժարութե խոստացան տալ։ Զի թերևս արժանի լինիցին՝ 'ի զաւակաց իւրեանց Քահանայութե, որպէս և յորդւոց

քրմաց՝ սուրբն Գրիգոր ուսոյց, և ձեռնադրեաց Քահանայս, և Եպիսկոպոսունս։

Եւ ձեզ՝ որ ջանայք աշխատութեամբ և ուսուցանելեք, մեծապէս վարձս տայ ԱԾ, որպէս ասաց մարգարէիւն թէ՝ որ հանէ զպատուականն յանարգէն՝ բերան իմ կոչեսցի։ Եւ ՛ի վե՛ր ածի՝ և զանունն զոր ունին ՛ի նախնեաց իւրեանց՝ արևորդիք կոչելով, յայտնեալ փոխեսցեն, և ՛ի ՔԻ մեծ և սքանչելի անունն՝ անուանեսցին քրիստոնեայք։ Զոր Սուրբ Առաքեալքն հաստատեցելոցն ՛ի ՔՍ եղեն զանուանս զայս՝ ՛ի մեծն Անտիոք։

Եւ մեք աղաչեսցուք զԱԾ՝ շինել զդրօշս ՛ի վերայ վեմին հաւատոյ, զի և դրունք դժոխոց սատանայ և կամարարք իւր, ոչ կարասցեն շարժել զդրօշս ՛ի Ճշմարիտ հաւատոյ, և յօրինաց ՏՆ մերոյ ՅՒ ՔԻ։ Ընդ որում Հօր և Հոգւոյն Սրբոյ, փառք և զօրութիւն՝ յաւիտեանս յաւիտենից Ամէն։

Եւ յորժամ շնորհօքն այ՝ խառնեին ՛ի հաւատն ՔԻ ըստ վերոգրելոցդ օրինակի, իմաստունք և գիտնական, և երկիւղած ՛ի ՏԷ Քահանայից՝ ընտրեսցեն նոքա ժողովուրդ, որ կարող լինին յածաշունչ գրոց՝ միշտ ուսուցանել նոցա, և խրատել։ Եւ մի՛ վասն նորերոց Եկեղեցւոյ՝ գայթակղեցուցանել զնա, հարկիւ պահանջելով, կամ զմկրտելոյ, կամ զխոստովանութեն, կամ զհաղորդի, կամ զթաղման, կամ զայլ ինչ պտղաբերութեն, այլ զոր իւրեանց կամաւ ընծայեն՝ բաւական համարել։ Եւ հեզութբ խրատեսջիք զնոսա, և մի խստութբ, զի և դուք վարձս բարեաց ընդունիցիք յԱյ, և մի՛ գայթակղեցուցչացն զպատուհաս՝ երկան իշոյ կախել ընդ պարանոց՝ և ընկղմել ՛ի ծով։

Ներսէսի Երջանկայի՝ Եղբօր Կաթողիկոսի Հայոց՝ Տեառն Գրիգորիսի, պատասխանի եղեալ Յովհաննու ուրումն Սարկաւագի ասացելոյ՝ ՛ի Մայրաքաղաքն Մեծին Հայոց։



զգայլի դիտաւորութիւնն՝ գրաւորական քում նամակի՝ ընդ ծնեալս բանի, տեսի և զհայրդ բանիս, որով ծանուցար՝ վեհագոյն ՛ի սիրոյն իմաստութեան՝

քան

քան զյոգունսն՝ 'ի ցամաքեալ ակրոյ՝ ժամանակիս ։

Եւ քանզի 'ի մասանց Հոգւոյն՝ զորս Թուէ առաքեալն, ոչ ունէաք զազգսն լեզուաց, և ոչ հուպ զոք 'ի հաւաստի Թարգմանողաց, ծածկեցաւ անգիտուԹե վարագուրաւ՝ իմաստուԹիւն ձեր՝ 'ի մէնջ, որոյ աղագաւ՝ ոչ փոքր ինչ սորջացաք, մինչև խոհական մնկայու՝ Ստեփաննոս իմաստունն մերասեռ՝ յորմէ ընկալաք մեք զգիրս, ծանոյց և զբանին զօրուԹիւն ։

Հարցումն գոլ քոյ առ իս, եԹէ ասիցէ՞ք ըստ մեզ՝ լուծումն յապականուԹիւն, զկերակուրսն և զըմպելիսն՝ որ 'ի մարմինն տէրունական, որով լինել կատարեալ մարդ, ապա ԹԷ ոչ՝ Թերի և անկատար ։

Եւ ԹԷպէտ և անտեղի էր իմաստնոյ ըստ քեզ՝ և հաճոյեցելոյ ած գոլ զնա, և մտածելն այսպէս, Թող ԹԷ բանիւ ձայնել, և գրով, և ոչ պատասխանելն պատշաճ։ Քանզի ո՞վ ոք յառաջնոյն՝ որք 'ի Հոգւոյն ընկալան զիմաստս, 'ի դէպ վարկաւ զայսոսիկ հարցման՝ կամ պատասխանւոյ, կամ բոլորովին իսկ բանի՝ յիշատակի գոլ արժանաւոր ։ Սակայն՝ զի մի կարծիցիմք ախտանալ 'ի յերկուցն զմինն, արհամարհուԹե, կամ անգիտուԹե, տացուք աղքատիմաց մերով բանիւ՝ առացելոցդ պատասխանի, և այն՝ սոսկմամբ և երկիւղիւ. զի որոյ մտածուԹն զարհուրանս, զի՞նչ ասա՝ և յեղյեղելն լեզուաւ ։ Ո՛չ ձերումդ ինչ ընդդիմակ՝ եԹէ ոչ ախորժէք լսել, բայց տպաւորեալք հաճանական մտօք յայտնակ, այլ՝ զմեր միայն ցուցանել դաւանուԹե, զորս ունիմք աւանդուԹբ 'ի սուրբ հարցն ։

Խոստովանիմք մեք զբանն ած՝ մարմին եղեալ ըստ Յովհաննու՝ անփոփոխապէս, և ոչ 'ի մարմին բնակեալ՝ ըստ Նեստորի, որպէս զոմն ածազգեցեալ, և յղացեալ ոչ՝ օրէնօք բնուԹես, ըստ ոմանց չարափառաց, այլ 'ի վերքան զօրէնս հասարակաց՝ ըստ արարչական իւրոյ զօրուԹեն՝ 'ի Հոգւոյն Սրբոյ, և 'ի Կուսէ յանապականէ, որպէս վկայեն Գաբրիէլ և Եսայիաս, առնելով ճշմարտապէս՝ զբնուԹիւնն ադամայ, ոչ զոր ունէր յանմեղուԹեն՝ և յանապականուԹեն, այլ զհնոյն՝ և զմեղանչականին, և զապականացուի ։ Քանզի՝ և Մարիամ՝ յորմէ և մարմինն, ծնունդ էր մեղուցելոյն ադա֊

մայ։ Եւ ըստորում զհնութիւնն փոփոխեաց 'ի նորոգումն, և եղև, և անուանեցաւ՝ նոր ադամ՝ փոխանակ հնոյն. նմանապէս՝ և զմեղանչական մարմինն՝ յանմեղութի, ըստ այնմ թէ՝ ոչ արար մեղս, և ոչ ոք յանդիմանեսցէ զնա վն մեղաց։

Նոյնպէս և զծնունդ մեղացն զապականութիւն՝ փոխեաց յանապականութիւն, անդստին յորովայնի Կուսին, որպէս ասէ Սուրբն Աթանաս Աղեքսանդրացի, թէ վասն զի՝ մարմինն Քն՝ յանմահութէ՝ և առանց մեղաց էր, ոչ գտաւ 'ի նմա ապականութիւն։ Եւ թէ զմեղս աշխարհի առ բառնալ, որ է մայր ապականութե, զիա՞րդ ապա մոլորեալքն ասեն՝ թէ ապականացու էր մարմինն Քի։ 'Ի սոյն միտս ասէ և Գրիգոր Սքանչելագործն, որ ոք ոչ խոստովանեսցի զՔն՝ անյեղլի հոգւով՝ և անապականելի մարմնով, նզովեալ լիցի։ Ըստ այսմ և այլք բազումք՝ զորս յայլում ժամու թողցուք զյոլովսն ժողովման, և մեք որքան 'ի մէնջ՝ առ ձեռն պատրաստ մտածութեց, 'ի շնորհողէ բանին՝ վյյ է բանս, դիցուք զլուծումն խնդրոյս։

Ասէք դուք՝ անկատար գոլ զմարմինն Քի, յոչ կրելն զապականութիւն, և մեք ասեմք զընդդէմն, անկատար՝ վասն ապականութեն, և կատարեալ՝ վասն անապականութեն. և ցուցցուք 'ի բնաւորապէս օրինակէ։

Ոսկի՝ իսկզբանն մաքուր է ըստ բնութեն, իսկ՝ եթէ խառնեսցի 'ի նմա պղինձ, կամ՝ այլ ինչ անարգագոյն նիւթ, և անկեալ 'ի հուր՝ մաքրի 'ի ժանտացուցչացն նիւթոց, անկատա՞ր լինել ասի 'ի կատարմանէ, եթէ մանաւանդ յառաջինն դառնալ կատարելութիւն։

Ըստ այսմ՝ և մերս բնութի՝ ոսկեղէն էր 'ի սկզբանն, և առանց ապականութե, և յորժամ մեղաւ՝ խառնեցաւ ը մեղացն՝ և ժանտ ապականութե։ Իսկ՝ բնութեւս արարիչն կամեցեալ վերստին ստեղծանել՝ և յառաջինն դարձուցանել յանապականութիւնն, խառնեաց յորովայնի Կուսին՝ զապականակիր բնութիւնս՝ 'ի հուր Ածութեն իւրոյ, իբրև 'ի քրայս ոսկեգործաց, և մաքրեաց խառնմամբ և միաւորութեամբ՝ 'ի յեկամուտ կրիցն մեղաց, և ապականութէ։

Եւ արդ՝ յայտնանէ՞ երևի քեզ անկատար, խառնեա՞լն յապականութիւն, եթէ մաքրեալն յապականութէ։

յայտ է՝ որք միտս ունին՝ եթէ՝ մարդուքն․ որպէս առաջնումն քան զհիւանդութիւն, և անկարօտն քան զկարօտեալն։ Ո՞վ է զո՞րօրինակ ուր լոյս՝ չիք անդ խաւար։ Նոյնպէս՝ ընտրութեամբ անապական բնութիւն Աստուածութեան խառնեալ, չէ հնար ապականութեան՝ զիւրն ներգործել կիրս։

Իսկ՝ կիրք ապականութեան առել 'ի նմա՝ ըստ օրինաց մարմնոյն, զքաղցն, և զծարաւն, զվաստակելն, և զննջելն, և զլալն, ոչ է անօրէն, զի միայն այսոցիկ և դիւրք սրբոցն։ Բայց՝ յայս առնեն դժուարել՝ եթէ ինքն ոչ հեռանէր կրիցն՝ ախտից որպէս մեք, այլ կիրքն՝ ծառայաբար նորին կամաց, ոչ ժուժկալութեամբ՝ ըստ առաքինեաց, այլ իշխանաբար՝ ըստ Ածութեան։ Եւ յայտ է 'ի քաղցն անօթ՝ զոր գրէ Աւետարանիչն, եթէ՝ 'ի լրման քառասնեկին՝ ապա քաղցեաւ ․ ․ Զմինչ յօժամ՝ քաղցեաւ՝ յանժամ թոյլ ետ բնութեանն՝ կրել զիւրսն՝ վասն փորձողին համոզելոյ։

Իսկ՝ եթէ հաստատուն կերպարանոյ հաւանիք առել 'ի նմա՝ որպէս 'ի մեզ, ապա՝ ոչ կիրքն նմա, այլ՝ ինքն կրիցն հեռաւոր ծառայաբար, յորժամ լինի հարկաւորապէս՝ և լուծմամբ ունայնութեան ախտաց։ Ով է և մերս թափուամբ՝ լրման կարօտանայ, և կորեաւ վասն այսորիկ 'ի նմանէ՝ կամաւորաբար կրել զնա, որոյ միայնն գիրք։ Հետևեցին նմա և այլքն 'ի հարկէ՝ որ 'ի մեզ հիւանդութիւնքն, որ 'ի ջերմից կերակրոյն, կամ 'ի ցրտագունից. յաճելոյն և որ 'ի մաղձից ախտք՝ և արեան, և մաղասոյ, որք կերակրովքն առաճելուն և պակասեն։ Թողից առել և զարեանցն որակութիւն՝ ոչ կամաց բերումն 'ի մեզ ։ Եւ արդ՝ կատարելութեան նո այսորիկ ցոյցք, եթէ անկատարութեան։ Եթէ որ կատարելութեան առէ զայս՝ չէ ընդհատ յայնմանէ՝ որ առողջ՝ ոչ զօրս յառողջութեան են, այլ զիւր ախտիւք հիւանդացելոյն առիցեն, և ատամնոզս՝ զկուրացելոյն, և ոչ զորպագոյն բժշկն՝ բացարձակ պատուաւոր զօդ։

Եւ եթէ հասարակաբար էր մարմին ըստ մեզ, ընդէ՞ր ասացաւ վասն նորա թէ՝ մարդ է և ո՞ ծանիցէ զնա, և մարդ է և անդր քան զմարդ ։ Աւրեմն ոչ ինչ մեղան՝ որք ասեն ասացին զնա մարդ, և ոչ Ած․ զի որք զայս ասեն՝ ոչ ինչ աճելի դնեն զնա՝ քան զմի ոք 'ի սրբոցն՝ առաքինութեամբ

յա

յանամշխարհայն, մարդասիրեսցէ ընդ մարդկանց՝ հոգւոյն սպառ-ժակեր.

Եթէ դարձեալ՝ քանզի մեղսն գիրք՝ զանմեղադրանելի եղեան կալել նման՝ ըստ մարդկան, և զայն՝ յարժամ կամիցի.

Այլ՝ զի՞նչ քան զծածուկ ապաշխարութիւն անգոսնելի է՝ 'ի մեղս՝ և անկանոն. Եթէ այսպէս՝ մինչ զի՝ ոչ ժուժկալ և վայրկեան մի կարել բնութեան.

Եթէ դարձեալ մեղիցէ, զի զամ գործեսցէ՝ ոչ վասն խաբ, այլ յաղագս մերոյ տկարութեան, կամ օրինակի.

Եթէ արդ՝ այնպիսի կերպ՝ զոր ասէք, զի՞նչ մեղ ներգործ-ծեցին բարութիւն՝ 'ի լինելն, կամ յոչ լինելն՝ ապաշխարութեն.

Եթէ դարձեալ՝ ո՞վ գրեաց 'ի սրբոյն յայտնապէս՝ թէ եղև, թէև՝ ո՞վ որ գրեաց զոչ լինելն՝ ընդդիմաբանեսցէ զուգ. Եթէ թէ ոչ էր հնար ցուցանել երկոցունցս, պարտ էր հա-ճանել՝ և հետևել վայելչականին՝ Նոյնոյն մարդոյ, և համաձայնականին մտաց, և համաձայնել լուծիչ զօրութեան ապաշխարու-թեն՝ զնա, և ոչ ասել յապաշխարութէ. Բայց՝ ցուցցուք 'ի գրեցելոց՝ որոց լսելն ախորժելի.

Գրեցաւ զնմանէ թէ՝ զմեղս ոչ արար, և բաժակաւն համարեցաւ հոգւոյն՝ անմեղութեան անուանելին; և անապաշխարն զնա համարել. Վասնզի՝ ապաշխարութիւն ծնունդ է մեղաց, և յայտ է թէ՝ որ ոչ ունիցի զծնօղն՝ ոչ կրէ և զծնունդն. Եթէ զի՝ ոչ որ զտաւ յորդիս ադամայ՝ առանց մեղաց ունա-կութեան, և ոչ մի՝ ըստ Յոբայ, Դաւթի, և Սողոմոնի, վասն որոյ՝ հարկաւորապէս անկեալք եղեն, և ընդ ապաշխարութեան կրիւ. Իսկ՝ որ միայնն եղև առանց մեղաց, միայն զտաւ և առանց ապաշխարութեան. Եթէ որպէս՝ որոյ սկիզբն յապաշխա-րութէ, և կատարումն ապաշխարութիւն. Հարկէ զի և 'ի միջոցն՝ ընդ ապաշխարելի կրիւք լիցի. Այսպէս և սկիզբն՝ ու-րոյ սկիզբն՝ և կատարումն՝ բոլորովին անապաշխարութիւն էր, համաձայնել է և առանց կարծեաց, և զմիջոցն եւս լինել ընդ անապաշխարաբար կրից.

Զի եթէ 'ի գերերզմանի անդ՝ որ վայր է ապաշխարութեան բնութեան, ասացաւ զնմանէ՝ ոչ ունել զապաշխարութէ, զի՞նչ երկբայելի է 'ի կենդանին՝ ոչ զօլ ապաշխարողու. Վասն զի՝ մեռ ապաշխարողու՝ զհանդերձել կատարումն նշանակէ,

որ

որպէս 'ի սահմանի մարդոյս՝ մահկանացուն, և մանկան թագաւորի՝ հանդերձելոյ թագաւորել, և կամ այլոց եւս՝ որք ընդունակք են յառաջատուութեան բարուց իրի, և կամ վատթարի։ Նոյնպէս և մերում մարմնոյ՝ որոյ առաջի կայ ապականելն 'ի գերեզմանի, յիրաւի ասի ապականացու, զի և կրէ իսկ՝ յառաջագոյն, 'ի նշանակ մարմնոյն ապականութեան՝ զկերակրոցն և զըմպելեացն ապականութիւն, և զկերս ախտիցն՝ և ցաւոցն։ Իսկ յայնժամ՝ որ յապականութենէն տեղւոջ՝ անապական միայն հանդերձեալ էր, զիա՞րդ ոք 'ի հաւատացելոց՝ յանդգնի ասել նմա ապականացու։

Եւ զի ասիցէք ընդդիմադրաբար, ուստի՞ թուք՝ և քիրտն, և արիւն, եթէ ոչ՝ կերակուր, և արիւնացեալ, և 'ի մաղձ յեղափոխեալ, և 'ի մաղաս, յորմէ և աւելորդացն հոսմունք՝ զորս բնութիւնն պահանջէ։

Հարցցուք և մեք եւս, ուստի՞ և նոյն ինքն մարմինն, զի ոչ յարենէ, և ոչ 'ի կամաց առն՝ ըստ մերումս, այլ 'ի կուսէ միայնոյ։ Եւ եթէ անկատար՝ եթէ ոչ հասումն ապականութեան, անկատար ապա մարդ, զի ոչ յերկուց ըստ մեզ, այլ 'ի միոյ։ Եւ եթէ այս հաւատարիմ է, զի 'ի միոյ՝ մարդ կատարեալ եղև, և ոչ պահանջի բնութենս հետևիլ, հաւատարիմ լիցի և անկարօտն միայն՝ յոչ կամեցեալսն, և առանց հոսմանն 'ի կամաւորսն։

Եւ եթէ ասէք զայնոսիկ ունիլ զրոյլ՝ և զայս ոչ, առասցուք առ այս, եթէ՝ ոչ կարծէին՝ որք գրեցին, ամբարշտել ուրուք՝ յայսպիսի իրս, առ այն՝ որ ամիէ վերագոյն էր՝ քան զհասարակաց բնութեամբ։

Եւ պարծեալ՝ զի յօրինադրոյնք զնմանէ ասելն՝ որ ոչ տուեալ գրոյ, և մի այս՝ ոչ հիւանդանալ նմա ըստ մարմնոյ, ուր արդեօք գրեցաւ յԱւետարանսն, և կամ ոչ ծիծաղել։ Եւ մի՞ թէ ժպրհի ոք ասել հիւանդութիւն այնմ՝ որ զցաւս մեր էառ, և զհիւանդութիւնս մեր եբարձ, և կամ ծաղր՝ որ վայ տայր, որք ծիծաղէին։ Նոյնպէս՝ և որ յաղագս խնդրեցելոյ բանիս, թէպէտ և ոչ գրեցին յայտնի՝ վասն անպատշաճ վարկանելոյ, զայնպիսւոյ անարժան իրի յիշատակ՝ առ ամենամաքուրն՝ ոչ զէն, զի և ոչ է, քաւ լիցի. այլև՝ զի չէ։ սակայն հաւատալի է՝ ճշմարիտ որդւոյն՝ յերաց

ան

նեստի, և 'ի նմանական բանիցն, առանց հաստատուն կերից լի-նել՝ զայն մարմին։

Նմա՞ մի թէ անկարելի՞ է այս՝ ոչ, որ և առ մարդիկ՝ յորժամ կամեցաւ, փոխեաց զբնութեան սահման, որպէս ցեղփեայսն՝ և յանապատին, և 'ի բաբելոնի։ Թողում աստ և զորս 'ի նորս յոլովագոյնս, զի թէ պարտէր՝ ամենայնիւ կենել ըստ բնութեան, և ըստ խոստովանութեան ճշմարիտ մարդ-կային էր բնութեան, եթէ զմի 'ի մինչ, և ոչ այլ էր։

Իսկ՝ յաղագս քրտանն՝ և թքոյն, և ջրոյն՝ և արեանն, որովք և զկերակրոյն ասէք հոսումն հաւաստի՝ աստուածայ զայս։ Զի թէ այնորիկ փկանայ և մեզս՝ որպէս մերս, և ոչ վասն պատճառի իրիք՝ յիրաւի։ Այս թէ՝ յորժամ կամէր, և ոչ հանապազ, և պատճառի աղագաւ՝ ոչ արդարանիցէք։

Ջանիցէ՝ եթէ ուք յերկիր, այլ կ'ի ծնէ կոյսն լուսաւոր-եալ. քրտնեաց, այլ զգիրտն երեսայ նախահօրն զամպեց-ցոյց. եւ ջուր 'ի կողիցն, այլ շիջոյց զբոց յանցանաց կաղա-ծինին, և լուծայ զաշխարհս 'ի մեղաց։ Արձակեաց և արիւն, այլ գնեաց զծառայելս մահու, և զոխացոյց զծարաւիս արեամբ։ Իսկ առաւականելի և ակամայ այնորիկ կրեալքն՝ զոր ասէք կրել, զո՞րս արդեօք երբեմն 'ի մերոց կարեաց, թուէի թէ՝ և ոչ ընաւ։ Այլ մանաւանդ՝ ցուցանի այնու՝ անկանիլ ընդ ար-կութեամբ մերով, այն՝ որ ոչ է զգածեալ՝ ակամայութեամբ՝ ըստ Սեւերոյ։

Իսկ եթէ յաղագս հաւաստի առնելոյ զմարդկութիւն՝ պատճառիք ասել զայս, բաւական են ցուցեալքն 'ի դէպս առաջս, խոնարհութիւնքն ճշմարտել զմարդեղութեան նորա, և բարձրագոյնքն՝ զաստուածութեան նորա։

Որպէս և ծնանելին 'ի կուսէ՝ յայտ առնէր թէ՝ մարդ էր։ Իսկ 'ի կուսէ՝ զի Աստուած էր։

Քաղցնուլն և ծարաւելն՝ զի մարդ էր, իսկ յորժամ կամէր, և ոչ 'ի հարկէ, զի Աստուած էր։

Ննջելն 'ի նաւին՝ զի մարդ էր, իսկ թեթևանալն մարմնոյն՝ 'ի վերայ ջրոյն, և սաստէր ալեացն, և ձեռն առ Պետրոսի, զի Աստուած էր։

Սատակելն՝ զի մարդ էր, և հանգիստ լինել աշխատե-լոյն, զի Աստուած էր։

Ընդ խռովանալն՝ և արտասուելն, զի մարդ էր, և ձայնիւ յարուցանելն զմեռեալն՝ և բառնալ զմահ յաշխարհէ, զի Աստուած էր.

Խոնարհելն յոտս Առաքելոցն՝ զենջակաւն, զի ծառայի ունէր զկերպարան. իսկ յայտնելն զինքն ՚ի լերինն՝ զգեցող զլոյս որպէս զօթոց, զի լոյս փառաց էր Հօր, և նկարագիր էութեան նորա։

Հոգալն՝ և երկնչելն, և տրտմելն, զի մարդ էր, իսկ զաշակերտսն քաջալերել յաղթելոյն աշխարհի, և ասելն՝ մի երկնչել ՚ի մարմնոյ սպանողացն, և մի հոգալ, և մի խռովիլ սրտիւք, զի Աստուած էր։

Ըմբռնեցաւ յորժամ կամեցաւ՝ զի մարդ էր, իսկ անըմբռնելի մնաց՝ յորժամ ոչ կամէր՝ և ոչ ինքն՝ զի Աստուած էր.

Չարչարեցաւ և խոցեցաւ, որ թուէին կիրք տկարութեան՝ զի մարմին էր, իսկ զկապեալսն լուծանել կապողին, և բերել զնա ընդ խաչափայտին, զի Աստուած էր։

՚Ի կատարումն ամենայնի՝ մեռաւ ճշմարտապէս, զի մարդ էր, և անմահ մնաց ՚ի մեռելութեան, զի Աստուած էր։

Եդ իշխանաբար՝ որպէս ասաց՝ զանձն իւր ՚ի մահ, և ՚ի գերեզմանի, զի ցուցցէ թէ՝ մարդ էր, և էառ դարձեալ յարութիւն ՚ի գերեզմանէն, քանզի Աստուած էր։

Արդ՝ որք սիրեն զճշմարտութիւնն՝ բաժանական են ապաքէն և ոչ նման սոցա՝ պատճառք հակառակոյ, եթէ տուգապէս էառ մարմին, և ոչ առ աչօք՝ ըստ երևութից, և ոչ ես կարծեմք՝ կերպարանն համան ճշմարտել. Աստուածք զայն՝ ՚ի ծախումն զօրութեան և կամաց փառաւորեցելոյն։ Ոչ որպէս դատապարտեսցի պերոս ՚ի մարմնի իւրում՝ ըստ Առաքելոյ, ոչ մեղանչելոյն, դատապարտեաց և զծնունդ մեղացն զապականութիւն, ոչ կրելոյն զնա։

Հարցուք և զայս ես ցձեզ, զի եթէ՝ որոյ նախքան զյարութիւնն՝ կերպարանոց ասէք կրել զապականութիւն, զի՞նչ զօրոյ յետ յարութեանն ասիցէք. և թէ՝ մինչև ցյարութիւնն ապականականիր ասէք՝ ՚ի հարկէ զմարմինն, և յետ յարութեանն ապա անապական, և ասանց հարկի բնութեան, ըստ սեպհական անտրամաբանութեան, որպէս լուայք՝ զի ասաց. ոչ ինչ մեծ գտնէք զնա՝ քան զմեզ, զի և մեք ՚ի մերն յարութեան փոփոխելոց եմք յանապականութիւն. Ճշմարիտ

ա

ասէր Տն առ աշակերտսն՝ 'ի համարելն զնա ոգի, եւ նոյն եմ և ոչ փոփոխեալ, և շօշափեցէք զիս և տեսէք մարմինս, և ոսկերս։

Եւ զորս՝ յառաջ քան զյարութիւնն արար, 'ի տկաց բազունեքցն և 'ի զօրաւորացն, զի ճշմարտեսցէ մարդկութիւն, և յայտնեսցէ Աստուածութիւնն, արար զամենայն և յետ յարութեանն, վասն նորին պատճառի՝ զի մի երկբայեսցէ ոք, թէ չ'լինել, այլ՝ նոյն և անփոփոխելի։

Զի այն՝ որ միանգամ կնքելով յարեաւ, և դրօքն փակելովք եմուտ, նոյն է՝ և որ զինքն կուսութեան՝ անարատ պահեաց 'ի ծնանելն։ Եւ որ վերացաւ յերկինս մարմնով, զնոյն նովին մարմնով 'ի միւսում օրում՝ նախքան զյարութիւնն, 'ի գահավէժ առնել զնա։

Եւ ըստ որում բարձրագունիւքն՝ նոյնպէս և խոնարհագունիւքն եցոյց, զի և նոյն զինքն, նախ՝ և յետոյ։ Զի որպէս եկեր՝ և էարբ յետ յարութեանն առ ծովեզերբն առբերելոց, և զձկանն խորովելոյ մասն՝ զոր խնդրեաց, և զխորիսխ մեղու. և ոչ ըք ժպրհէ առնել հալումն յապականութեան, այլ 'ի ծախումն միայն՝ ըստ ամենակարող խորոյ զօրութեան, ինքեան միայնոյ գիտելի զեւրան, որպէս զբազումս 'ի անօրէ նախկանեացն, և 'ի մէնջ անքննաբար հաւատացեալ։ Նոյնպէս հաւատասցին և այնոքիկ կերակուրք, որք յառաջ քան զյարութիւնն՝ լինել ըստ ապացուցելոց օրինակի։

Յիշատակեալ էիք 'ի գրեցեալսն՝ և զյուլիանեայ ախկանացելոյ, և զոմն՝ անուն յակիւղէ, որպէս թէ՝ մերս՝ նոցայն է՝ դաւանութիւն, ոչ ասելս ապականացու՝ զմարմինն Տն. և այդ՝ ոչ արդարապէս դատեցեալ։

Քանզի՝ զյակիւղէն ոչ բնաւ ճանաչեմք, և յուլիանեան այն՝ որոշի 'ի մէնջ՝ իբրև զմի 'ի չարափառացն, զի ոչ միայն անապականն ասաց, այլ և անչարչարելի, և անմահ՝ զմարմինն։

Բայց մեք՝ զՔրիստոսի՝ ոչ որք մի որոմանցն խառնումն՝ ոչ եւս ցորեանն 'ի բաց ընկենումն, այլ՝ զորոմն միայն, նոյնպէս՝ և ոչ զի խառնեաց զանչարչարութի և զանմահութի՝ ընդ անապականութեն, հարկ ինչ է ընդդէմ նմ ընդ չարչարելիս, և մահկանացուն և զապականացուն առնել, այլ զզարտուղն պահել և զխոտանն 'ի բաց ընկենուլ։

«Քանզի՝ չարչարականս անձինք զմարմինն՝ և մահկանացու, թէև՝ ոչ ակամայ՝ ըստ մերումս, այլ՝ որքան կամք եղեն առողին՝ ճաշակել 'ի նոցանէ, բայց ապականացու ոչ մեք՝ ոչ էր, և ոչ ապականելի, մի՛ լիցի։ Ո՛չ ի ոչ տիրեալ եղև յապականութենէ, որպէս և ոչ 'ի մեղաց՝ ըստ նախկին առաջնոյն. բայց ինձ ոչ փոքր է հետևել, վասն այսր խնդրոյ ունիլ ձեզ։

Ո՛չ եթէ յայնք՝ առ որս կարծիս է բաժանման, ընկերին յայտնակ, զի զիւրեանցն հաստատեսցեն, դուք վասն զի՝ է մեզ առաջ խոստովանիլ զմիութիւնն, է՞ր ազգաւ տայք տեղի՝ այդպիսի խորհին անմարդշատութեն կարծեաց. ընդ է՞ր և ոչ յառաքելոցն պատկառէք հեթանոսաց, ծխծաղելիս նշ՝ զքրիստոնէից անուանել կրօնս։ Արդ թէպէտ՝ և ոչ եմ խոստովանին՝ և որդի, սակայն՝ յաղագս 'ի կուսէ ծննդեանն՝ միայն գիտելոյ, և ոչ չարչարանս տանելոյ, և ոչ մահ, թող թէ՝ այսպիսի անարգագոյն կիրս։ Բայց յայտնի է թէ՝ որք յայնքան անկարելի իզօրացանեն զմարմինն, և յանապականութի, թէև՝ խորհին ընդունել, ոչ խոստովանելին որդւոյ՝ զմնոյն Ն.Յ՝ միացեալ ընդ նմա, նաև՝ ոչ իբր 'ի տածմանց՝ ըստ Նեստորի։ Աւրեմն և յայս պատճառէ է՝ խնդրոյն ապականութեն խորհրդոյն, զոր անճանդուքի իմն կարծէաք նախկնականն։

Ն.մ՝ մեր հայրապետացս եկեղեցի՝ իսկզբան հաւատոյ քրիստոնէութենն՝ մինչև ցայժմ՝ յայս դաւանութեա մերայ հաստատեալ է։ Խոստովանել զմարմինն Տն՝ անապական, 'ի ծննդենէն մինչև ցյարութեանն, ոչ 'ի կամաւոր չարչարանացս, և 'ի մահուանէ, այլ 'ի պարտաւորելի և ակամայ կրից՝ որք մերոցդ ցուցաւ։ Եւ այնքան հաւատարմագոյն մինչ զի համարձակեալ էր իւրոց մեռոց ընդունելի, եթէ համարձակեսցէ ասել՝ ոչ միայն զայն մարմինն՝ որ միացեալ է Բանին, այլև՝ ըստ կուսին սկզբ՝ յետ անճառելի յղութեն՝ առաջագոյն զնկեղգեալ կրից, որ և բոլորեցն ախտաւոր շարժմանց, որք են հոգւոյ և մարմնոյ։ Ոչ ուր եմ ընակէ տիրապէս՝ ոչ ծառայէ բնութե, որպէս և ոչ մարմնոյն՝ և ոչ հոգւոյն։

Նորին Ներբողն՝ ՚ի Մատթէոս Լուսաւորչեան Մեծամեծն.

Բազում մեզ՝ որ ՚ի ճշմարտութեանն՝ այսպէս պարտ է համառօտել։ թէ՝ յորմէհետէ եղև Կոյսն բնակարան Հոգւոյն և Բանին, բառնալ ՚ի նմանէ՝ բոլոր կրից մարդկայնոց։

Զի եթէ Յովհաննէս ՚ի փոքր մի մերձաւորութենէն՝ այնքան մաքրեցաւ, զի՞նչ է ասել զնմանէ՝ որ բովանդակ զմնութիւնն Այ ինն ամսոց ժամանակաւ կրեաց յորովայնի՝ մարմնով, ոչ միայն թէ քաջապարծ ցանկութեանց, այլև՝ ՚ի բովանդակ հարկաւոր կարեաց համառօտեալ է արտաքոյ լինել նմա՝ յայնմհետէ։

Այլ այսպիսի կարծիք՝ նոցա է՝ որք ոչ Ած խոստովանին զծնեալն՝ և Ածածին զծնօղն. զորս թողցուք արտաքոյ իբրև զմեռեալս հոգւով։

Արդ՝ այսօրիկ առ ՚ի մէնջ սահմանք՝ ըստ ժամանակիս զանանութեն և տեղւոյ, և բերողի դարձի փութով; ոչ զմէջն ժամանեալ ժողովել զբանս վկայութեան՝ այսր խնդրոյ։ Այլ՝ որ ՚ի մերս նմանատախոհութեանց՝ առ ձեռն պատրաստ բանից, այնքան՝ որով ծանիցէք զմեզ՝ այսուցիկ պատուադաւանօղս, եթէ համանականք ձեզ՝ եմ պաշտօնեայ, այլ եթէ անախորժելիս, և այնպէս պաշտօնեն։ Մին՝ զի շահեսցուք զերջանուն՝ եթէ իցէ հնար։ Եւ միւս, զի և մեք ՚ի լոյս և ՚ի ճշմարտութիւն, արտաքոյ կուրութեան և մոլորութեան՝ կորոյ էնն, եղիցուք։

Որչ լեր սիրօղ իմաստութեան՝ և քննօղ, կրկին սպասաւոր բանին Այ զարդարեալ և իմաստնացեալ։

Ողջունեն զքեզ Ը ողջունիս քում՝ և Գրիգորիս Նիկեղեցւոյ, համբերձ խոհական սպասաւորօք։

Ողջունեմ և զոս ՚ի դիմաց մեր՝ զՅովհաննոյապետաց և զՅովհաննէսի, և զբովանդակ Կղերիկոսս Կաթուղիկէ Նիկեղեցւոյ Մելիտինոյ, յորում յաղօթմն միաբանականն կցորդել, և մերում հայցել կրել՝ տալով ՚ի դժրանաց՝ յաւ բոյս նեղելոց, ՚ի փառս Քի Այ մերոյ, Ամէն։



Նորին Տեառն Ներսէսի Կլայեցւոյ Հայոց Գերեալ է առ Քիլի-
կեցին, առ հիւանդացեալս մարմնով, որք յամենայնայ ամաց՝ նախաւոր
եղեն, զոր ծանուցին նմա գրով։



Ընկալայ զգիր թախծանաց զանխառնակելոցդ մարմնով զուարթուկ անտեսանելոցդ, որ յերկնային քաղաք, և լցեալք արտասուօք՝ յաղագս այնպիսի հարուածելոցդ մարմնով, որ է յանգիտելի դատաստանացն նորա։ Այն՝ որ շարժեալ և կշռեալ բաժանէ յիւրաքանչիւրումն՝ զօգտակարն, (Թէպէտ և մարդիկ՝ ոչ իմանան,) զառողջութիւն, և զախտաժէտութիւն, զմեծութիւն և զփոքրկութի, զփարթամութի և զաղքատութիւն։ Արդ և ձերդ տկարութիւն՝ և անբուժելի ցաւք մարմնոյ, ոչ այլ ուստեք է՝ քան թէ ՚ի հրամանէ և ՚ի կամացն նորա.

Իսկ այնոքիկ՝ որք խառնեցուցանեն և զդուռն զձեզ՝ անյուսութեան բանիւք, և վէրս ՚ի վերայ վիրաց, և ցաւս ՚ի ցաւոց՝ յաւելուն, որպէս ՚ի գրելոյս ձեր ծանուցաւ, անտեղեակ են իրաւանց բարձրելոյն, և արժանաւորք պատուհասի, մեղանչեն թէպէտ՝ և ոչ իմանան, որ ըստ բարեկամացն յօբայ՝ շարժէ ՚ի վիշտ ձեր՝ ոխս զայնպիսիսն, զի մի միայն մարմնով, այլև՝ մտօք և տանջեսցէ զձեզ, ունայն ՚ի մխիթարութենէն՝ մեծի յուսոյն առնելով, որ կայ ձեր առաջի։

Այլ և յօբ՝ ոչ այնչափ խոցումն ընդունէր ՚ի հոգին, Է որդւոյն և ընչիցն կորստեան, և Է մարմնոյն վերայ, որքան ընդ բարեկամացն՝ և կնոջն զայրացուցանող բանից։ Որս յորդորէր սատանայ՝ վիճել ընդ նմա, առ որս ասէր թէ՝ բժիշկ մեղանչականք էք դուք, և ողջացուցիչք չարեաց՝ ամենեքեան, եղիցի ձեզ համբերել, և համբերել լիցի յաղ դարութի։ Եւ զի ընդդէմ կամացն նորա՝ խօսէին առ յօբ, բարեկամքն, յայտնի է յայնմանէ՝ որ ՚ի կատարումն փորձութեանն՝ ասէր նմ առ նոսա, զի թէ ոչ էր յօբայ ծառայի իմոյ՝ աղօթս արարեալ վասն ձեր, սատակեալ էր իմ զձեզ՝ վասն անիրաւ խօսելոյ զինմանէ։

Քանզի՝ սովորութիւն է սատանայի, զի յորժամ այլով հնարիւք՝ ոչ կարէ խախտել զառաքինին հոգին, ՚ի ձեռնարկս

յա-

յուսոյն՝ որ առ Ած, գտանէ զհանգիստ ՚ի մարդկանէ Թերի ՚ի հաւատոց՝ և տգէտ յիմաստութենէ գրոց, և ՚ի չար գանձուց արտաքոյ նոցա՝ խօսի զանյուսութենէ բանսն առ ձեզ, և առ նմանեալս ձեր՝ ներդեալ մարմնով, որպէսզի՝ անյոյս լինելով վասնդին ՚ի ներդութիւն, և տրտմեսցեն զոյն, և անմտանս լինին ՚ի վարձուցն։

Արդ՝ պահանջէ Աստուծոյն օրէնքն՝ յամ մարդոյ, որ առողջ են մարմնով, ձեռնատու լինել տկարացն՝ և ոչ հակառակ նոցին, ՚ի փորձութեանցն՝ արդեանցն գտցի՝ բառնալով զկարիս նոցա, իսկ աղքատացն՝ ՚ի տես պալ. վշտացելոցն՝ ըստ հրամանին Քի, և բարի բանիւք մխիթարել զնոսա, և վշտակից լինել՝ և արտասուել, յորժամ ոչ է ձեռնհաս օգնել նոցա՝ այլ իւիք։ Եւ որ զայս առնեն, մասնակից լինին երանութեան աղքատացն։

Իսկ՝ որ փոխանակ ողորմութեան՝ արհամարհեն և նախատեն զնոսա, առ Քն վերաբերին նախատինքն այն. և այդ զողորմութիւնն՝ զոր առնէ ոք աղքատաց, իւր համարի Քն, նոյնպէս և զարհամարհանս նոցա, և զզանս նախատանաց, և զամ արտմական կիրս՝ զոր ածէ ոք ՚ի վերայ ներդելոյն և տառապելոյն, յինքն վերաբերէ Քն։ Զոր և առ ձախակողմեանսն ասէր, եթէ քաղցեայ և ոչ կերակրեցիք զիս, և այլն ամ. և յորժամ նոքա ասիցեն, Տէր երբ տեսաք զքեզ քաղցեալ, կամ ծարաւի, կամ մերկ, և ոչ պաշտեցաք զքեզ։ Ասէ ցնոսա՝ որովհետև ոչ արարէք ՚ի միում ՚ի փոքրկանցս յայսցանէ, և ոչ ինձ արարէք։ Եւ յորժամ Պօղոսի երևեցաւ Քն մինչ ՚ի հրէութեան էր, և ձայնէր առ նա յերկնից՝ Սաւուղ Սաւուղ զի՞ հալածես զիս, ոչ եթէ զՔն՝ որ ընդ աջմէ Հօր իւրոյ՝ նստէր ՚ի բարձունս, կարող էր հալածել Պօղոս։ Այլ՝ զիւրոյ հաւատացելոցն հալածանս՝ իւրն համարելով ասէր զայն։

Արդ՝ որպէս զմխիթարութիւն զխնամս՝ և զչարչարանս՝ և զհեղումն արեանց՝ իբրև անձին իւրոյ համարեալ, այնպէս վրէժ առնէ Քն յանհաւատսն, յորժամ գայ փառօք Հօր իւրոյ՝ դատել զաշխարհս։ Նոյնպէս՝ և իւր աղքատացն և վշտացելոցն ՚ի վերայ ներդութեանն՝ զոր կրեն, և այլ ևս ներդութիւն հասուցանէ ոք՝ բանիւք նախատանաց, կամ այլ ինչ անիրա-

րա

բանուք՝ փոխանակ մխիթարելոյ զնոսա, և ցանկալից լինելոյ, վրէժս առացեն՝ յարդար դատաստանի անդ, որպէս զհակառակն հրամանին Քի·

Իսկ՝ որ ներելոյն վասն քո՝ և աղքատացն անտես ոչ՝ և հիւանդացն՝ և հայկանոր ոխտոյիցն կարօտելոյ՝ ողորմած լինի, և օգնական ըստ կարողութեան իւրում, կամ՝ կերակրելով, կամ՝ զգեցուցանելով զմերկութիւն, կամ՝ քաղցր բանիւք մխիթարելով զվիշտն, կամ՝ ողորմութիւն տալովն ազատեսցէ 'ի ծառայութենէ, 'ի յերկիւղէն զակամեան իւրում՝ յառաջ կոչեսցէ Քն զնմանիսն, և առ ինքն տամ՝ անեզերաց՝ գոհանայ փառաւորել առնելոյ, թէ՝ ողջամտութեան քան զոր ետ պատուիրեսցի՝ արարին·

Զի ոչ միայն 'ի սուրբ նկլին առ իւր Քնչ հիւանդ էր, և 'ի բանտի, այլև՝ ազատեցին զիս ողորմութեան տալովն՝ 'ի բանտէ կապանաց, և 'ձեռնտու եղին ինձ՝ 'ի հիւանդութեան, գեղմունք և այնպէս պատուհասութիւք, և դղեաց իմ՝ և զծարաւ՝ ոչ միանգամ՝ այլ բազում՝ անդամ լցին, և ծածկեցին մերկութեան իմոյ՝ զգեստուք իւրեանց, պատսպարեցին զիս 'ի տունս, և 'ի սեանսմանեաց·

Նոր՝ փոխանակ ազատելոյն զիս՝ 'ի մարմնաւոր կապանացն՝ ազատեսցեն եղկելին անքան՝ 'ի կապանաց մեղաց իւրեանց, և փոխանակ այնպիսեացն կերակրոյն և ըմպելոյն՝ զոր 'ի քաղց իմ՝ և 'ի ծարաւ՝ կերակրեցին զիս, և արբուցին ինձ, տաց նոցա՝ զանապական կերակուրն, և զանմահաբար ջուրն կենդանի՝ որով այլ ոչ ևս քաղցնուն և ծարաւեն · Եւ ընդ դիւրամաշտելի զգեստուցն իւրեանց՝ որով ծածկեցին զմերկութիւն իմ, զգեցուցից նոցա՝ զլուսեղէն պճնազարդ առաջին, զոր մերկացան նախահայրն իւրեանց·

Եւ յայտնի 'ի Տէրունական բանիցս հաստատիմք՝ և առաջաքս, թէ՝ որ արբուսցէ միում 'ի փոքրկանցս յայսցանէ՝ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝ ոչ կորուսցէ զվարձս իւր· Եւ թէ փոքրս այս ողորմութեան յիշատակ պահի առ Աստ, և ոչ կորիցէ վարձ՝ առնողին, զինչ է առնել մեծամեծ ծացնս·

Նոյ՝ զորօրինակ մարտիրոսքն՝ որք վասն 'ի Քն համատոյն՝ համբերեցին այնպէս չարչարանաց՝ և մահու՝ 'ի յանիրաւ մարդկանէ, փառաւորին և պսակին 'ի Քէ՝ յորժամ

դայ միւսանգամ յաշխարհ։ Նոյնպէս և ամենեքեան՝ որ
զցաւս մարմնոյ և զնեղութիւնս՝ որ գան 'ի վերայ այսմ ա-
պականացու բնութեանս, և ժուժկալութեամբ տանին՝ և գոհա-
նան զայ, ոչ լինի նուազ 'ի վկայիցն՝ Քի փառացն լինելոյ
արժանաւորք։ Մանաւանդ դուք՝ որ առաւել նեղիք քան
զայլս 'ի նեղելոյն մարմնով։

Աբրահամ՝ 'ի սկզբան մանկութեան իւրոյ՝ հաճոյ եղև
այ, որպէս և գրեալ է՝ թէ հաւատայ Աբրահամ յած, և
համարեցաւ նմա յարդարութիւն, բայց՝ յետ փորձելոյն զնա
այ, վասն որդւոյն յողջակէզ խնդրելոյ, յորում հաճոյ գը-
տաւ տալովն յօժարութեամբ, ապա լուաւ զկատարեալ օրհնութիւն
այ, և հայր ազգաց բազմաց եղև, և հիմն՝ և ժողովրդեան ար-
քայութեան երկնից։

Եւ յոբ՝ յառաջ քան զփորձութիւնն՝ վկայեցաւ յայ՝
արդար լինել և անարատ։ Բայց յետ յաղթելոյ փորձութեացն
սատանայի, համբերելովն՝ և գոհանալովն զայ, ապա արժա-
նաւոր գտաւ յաղթանակի՝ պսակին համբերողաց։

Պօղոսի վարշամակ երեսացն՝ որով զքիրտն մաքրէր,
զհիւանդս և զախտաժէտս բժշկէր, բայց՝ իւրն մարմնոյ
տկարութիւն՝ զոր ունէր, ոչ բժշկեցաւ մինչև ցվախճան,
քանզի՝ կամքն այ՝ այն էին, որպէս և ինքն խոստովան լինի,
երիցս՝ ասէ աղաչեցի զտէր, զի 'ի բաց արասցէ յինէն, և
ասէ ցիս տէր՝ շատ են քեզ շնորհք իմ, զի զօրութիւն իմ՝
'ի տկարութեան կատարի։ Նոյնպէս՝ և ամ արդարքն՝ 'ի հի-
նումն և 'ի նորումն՝ 'ի փորձութեանս յաղթող լինելովն՝ հա-
ճոյք գտան այ։

Եւ եթէ՝ էր աղագաւ կամի ած՝ զսուրբս իւր և զսիրելիս
տալ 'ի նեղութիւն մարմնոյ՝ 'ի կենդանւոյս, և ոչ 'ի հեշ-
տութիւն, և 'ի դիւրութեան։ Ասեմք կարճ՝ և համառօտ՝ յայտ-
նի բանիւ, յածայնոյն իմաստից։ Քանզի՝ նախահայրն մեր
ադամ՝ քաղցր պտղոյն հեշտութեամբ կորոյս զԱծային փառսն՝
և զկենդանւոյն անմահականս, և զդրախտին վայելչութիւնն, և
փոխանակ ընկալաւ զերկիր փշաբեր, և զկեանս տրտմականս՝
և զախտալիցս, և զտաժանելիս, և մահ 'ի կատարածի. վսն
և արարիչն՝ և տէրն ամի՝ երկրորդ ադամ եղև և անուանե-
ցաւ, 'ի բնութեան նորին անկելոյ մարմին յաղագս փրկութեան

նորա, և ընթացած ընդ կենցաղոյս ճանապարհ՝ ոչ հեշտութիւ, այլ՝ դերադոյն առաքինութիւ, 'ի յօրինակ մարդկան՝ որք ընդ նորին ճանապարհ կամեսցին գնալ, ուր և ինքն իսկ տէրն՝ խրատ տայ ճանապարհակցաց իւրոց ասելով, թէ՝ որ ոք կամեսցի զկնի իմ գալ, թողցէ զամ ինչ՝ զոր ունի, և ուրասցի զանձն իւր, և առցէ զխաչ իւր հանապազ, այսինքն՝ զպէսպէս առաքինութեանց չարչարանսն, և ապա եկեսցէ զկնի իմ։ Եւ ընթացողացն զհետ Քի այսպիսի ճանապարհաւ՝ ո՞ւր լինին օթևանք՝ 'ի յերևկեանս կենցաղոյս, ոչ 'ի յարկա՝ համապատիւ ծառայից, այլ՝ ուր տէրն է ամենեցուն։ Ուր և յայլում տեղւոջ՝ հրամայէ թէ՝ ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ՝ եղիցի։

Եւ արդ՝ վասնզի սակաւք են 'ի մարդկանէ՝ որ անձուկ ճանապարհաւն, և նեղ դրամբն՝ մտանեն յերկինս, այսինքն՝ մաքուր կուսութ., և կամաւոր առաքինութեք, ընդ որ դաւք ճգնաւորացն՝ գնացին յառաջագոյն, և մեզ ուսուցին։ Ո՜վ այսօրիկ՝ ամենիմաստ գիտութիւնն Այ՝ որ կամի զի ամենեքեան կեցցեն՝ և 'ի գիտութիւն ճշմարտութե եկեսցեն, և արժանաւոր լինին՝ անձառ բարեացն խոստացելոց, ոմանց թոյլ տայ՝ ակամայ աղքատութբն՝ ընդդէմ կալ մարմնոյ հեշտութեց, կարօտ լինելով՝ հարկաւոր պիտոյիցն, զի այնու արդարասցին, և յայլոց վերայ արկանէ ցաւս մարմնոյ, ոմանց առօրեայ, և ոմանց մինչև ցվախճան, յորժամ տեսանէ, զի առողջութ. մարմնոյն հիւանդանայ հոգւոյն մեղօք, որպէսզի՝ մարմնոյն հիւանդութեքն՝ բժշկեսցէ՝ անդխաբար զհոգւոյն հիւանդութիւնն։

Եւ զայս՝ 'ի յերկուց անդամալուծիցն է տեսանել, մին՝ զոր 'ի պրոպատիկէ աւազանին, առ որ ասէր Քն՝ յետ բժշկելոյն, թէ՝ ահա ողջացար, մի ևս այլ մեղիցես, զի մի չար ինչ լինիցի քեզ. յայտ արարեալ եթէ՝ մեղքն են պատճառք՝ երեսուն և ութ ամեայ անդամալուծութե նր։ Եւ երկրորդն՝ զոր 'ի ցոճացն կախեալ իջուցին առաջի նր, առ որ ասէր՝ թողեալ լիցին քեզ մեղք քո. որով յայտ արար թէ՝ վասն մեղաց կրեաց զցաւսն, և յորժամ զմեղսն՝ զոր կրէր 'ի հոգւոյն, եթող նմա Տր, յայնժամ և մարմին նորա՝ վասն մեղացն ախտացեալ, ընկալաւ զառողջութիւն։

Եւ

Եւ որք զայսպիսի ցաւս՝ երբեք զերդ բժշկութիւն ըն-
կալցին յոյս, և գոհանալով զնմանէ՝ համբերեն նեղութեանն,
և տանին կամաւորապէս՝ զակամայ կիրսն, այնպէս համբերի
ած՝ և հատուցանէ վարձս, որպէս թէ՝ յաղագս պատճառա-
նի նորա՝ կրեցին կամաւ զնեղութիւնսն ։ Իսկ՝ որք տրտն-
ջեն զայս, և անիրաւ ասեն զդատաստան նորա, թէ ընդէ՞ր
չարայն ներէ՝ կալ առողջութ, և մեզ՝ որ ոչ նոյնպիսի եմք,
թոյլ տայ կրել չարչարանս՝ և աղքատութիւ ։ Նոյնպիսիքն՝
զնեղութիւնսն կրեն, և 'ի վարձուցն՝ ունայնս եղանեն, այլ
վարատեալք 'ի քաւարանն վիճակեն ։

Եւ այս լինի 'ի տգիտութէ և յանհաւատութէ, որք ոչ
ճանաչեն զխորս դատաստանացն Այ, թէ ընդէ՞ր զոմանս կամի
բժշկել՝ նախատացեալ դեղօք, և զոմանց անփոյթ առնէ ։

Ո՞չ տեսանեք, զի և մանկունք բժշկաց՝ զնոյնս առնեն,
զի զորս ոչ ճանաչեն՝ ունելով զցաւս անբուժս՝ ոչ ձեռ-
նարկեն առ այնպիսեան խտրանօք, կամ դեղօք ինչ ։ Իսկ՝ առ
ծանուցեալսն՝ հնար լինել բժշկութեց, ամ ինչք փութան
տալ զառողջութի ։ Այնպէս՝ և Աշխարհի բժիշկն հոգւոյ
և մարմնոց ած՝ հայեցեալ 'ի սիրտս մարդկան, առ որս տե-
սանէ բարեաց ինչ մասն, արկանէ 'ի վերայ աղքատութի, կամ
ցաւս, կամ զերկուսեան, զի զաւակ բարւոյն սերմն՝ 'ի բա-
զում պտղաբերութիւնս աճեցուսցէ ։ Իսկ՝ յանբժշկելիս՝
զոր ճանաչէ 'ի ցաւս մեղաց, ոչ ձեռնարկէ 'ի բժշկել հիւան-
դութե, կամ աղքատութե, այլ թոյլ տայ՝ ըստ կամս անձանց
գնալ, մինչև 'ի վախճան, 'ի փոքր ինչ բարեաց՝ թէ ունիցին,
հատուցումն, զի անդ՝ առանց պատասխանւոյ երթիցեն ։

Բայց՝ ոչ ամ հիւանդութիւնք՝ վասն նախատացեալ
պատճառիդ են, զի բազումք՝ յաղագս հակառակութեանց
տարերացս ծնանին՝ յորոց և մարմինս է, զոր և հաւասարա-
պէս կրեմք, որքան 'ի մնութս եմք ախտաւոր, եթէ արդարք՝
և եթէ մեղաւորք ։ Նաև այն՝ որ յայս լինի, յայտնի է իմաստ-
նոց՝ յորժամ իմաստութը քննեսցեն 'ի գիրս սոցա ։

Պարծեցաք և զայս ասեմք, եթէ զաղքատութիւն և զնե-
ղութիւն՝ զոր արկանէ ած՝ 'ի վերայ նեղելոց, ոչ միայն
վասն մեղաց նոցին՝ մաքրութե է, որպէս վերագոյնդ գրե-
ցաք, այլ զի՝ առողջքն և փարթամքն գթալով 'ի նոսա, և

ողորմութիւն տանելով նոցա՝ թողութն մեղաց հասցեն
յայս, և ողորմութիւն առցեն 'ի նմանէ՝ ըստ ճշմարիտ երա-
նութեան ՔԻ, զոր ասէ՝ երանի ողորմածաց՝ զի նոքա զողոր-
մութիւն գտցեն։ Որպէս զի՝ ամենեքեան արժանաւորես-
ցին խոստացելոյ բարեացն հասանել, աղքատք՝ աղքատու-
թեամբն, և չարչարեալքն մարմնոյ ցաւօք՝ չարչարանօք, և նեղ-
եալքն՝ նեղութեամբն, յորժամ գոհութեամբ տանին զնեղութիւնն՝
և զչարչարանսն՝ և զաղքատութիւն, և ըստ պատուիրանացն
ՏՆ մաքուր վարուք կեցցեն. նոյնպէս և մեծատունքն՝ և
փափկացեալքն՝ 'ի ձեռն ողորմած լինելոյն՝ առ այնպիսիսն,
հասցեն մեղաց քաւութեան, և երկնից բարութեանցն, զքաղց-
եալսն կերակրելով, զմերկսն զգեցուցանելով, զօտարսն
ժողովելով, զհիւանդսն և զբանտեալսն յանձանձելով, և
մխիթարելով։ Ու՛ ճշդութեամբ՝ զի մի՛ ըստ յիմար կուսիցն 'ի
պակասել իւղոյն՝ շիջանիցին լապտերքն։ Այլ՝ ըստ մարգա-
րէին խրատու՝ սփռել զոճարթ առատ սրտիւ, և տալ տնան-
կաց։ Զի որ խնայէ 'ի ժամանակի սերմանելոյն զցորեանն,
և ճշգելով սերմանէ յերկիր, ճշգելով և հնձեսցէ՝ 'ի ժա-
մանակի հնձոյն, և որ առատապէս սերմանէ, լնու բազմա-
պատիկ անձամբ՝ զգիրկս իւր որայիւքն։ Արդ՝ լսէ զերանա-
ւէտ բարբառն ՔԻ՝ եթէ եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժա-
ռանգեցէք՝ իսկզբանէ պատրաստեալն ձեզ զարքայութիւն։

Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել՝ որք ողորմելի ու-
նին զկենդանականս զայս կեանս, և որք ողորմուքն՝ որ առ-
նուա, գնեն զարքայութիւնն երկնից, 'ի ՔՍ ՅՍ 'ի Տր մեր,
որում փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից՝ Ամէն։



Տեառն Ներսիսի Իթ. Եպիսկոպոսին Ն Սարգսաւագի, և Համօրէն
տեառն Եղիշեայ. Սոյն յաճախ տօնի արժանեաց՝ ծաղկեալ 'ի նոյն-
մանն Տեառն Գրիգորի Կեսարացւոյ Էլեւոր նորին, 'ի յերանաբան-
եալ Կեսարացեանն Հայոց.

Առ ձեզ են բանք իմ՝ դասք սրբազանից Քահա-
նայապետաց՝ և Քահանայից, և իմաստուն Վար-
դապետաց, որք իբրև զանդամս՝ յիւրաքանչիւր կողմանց ժո-
ղովեալք 'ի մի լրումն մարմնոյ, հասէք աստանօր՝ կոչմամբ
'ի հրամանէ գլխոյ Եկեղեցւոյ. որպէս զի՝ նախ՝ և ընդ-
նմին մէն ինչ յանդորրեաց՝ և ոչ 'ի պատուհասականաց, ձեռամբ
ճարտարապետական արուեստիւ յղկեալ, 'ի շինուած մար-
մնոյ Քրիստոսի յօդեսցէք իմաստաբար:

Զայս ապաքէն՝ նուաստաբար յայտնեմ նուիրելոյ ան-
ձին փոքրկութիւն, խոնարհութեամբ և մտադրութեամբ՝ զլսելիս
մտաւորութեան, դաւանելով այսորիկ բանից, որ ոչ 'ի լսելիս
հրեշտակաց մատուցանեն, և յօդս զգենուլ, այլ 'ի կենդանութեան
պահելով՝ ըստ ընդունակաց իմաստնոյն որինի:

Բազմապատիկ գիտութիւն՝ յերկուս բաժանի՝ յանմարմինս և
'ի մարմնաւորս. անմարմնոցն ասեմ՝ երանականն պատուա-
եալ միտքն՝ անմահութեան և անախտութեան, անփոփոխ ընկալեալ
զկայանս փառաց, և զպատիւ, յորմէ հետէ գոյացեալ եղեն.

Քանզի կոչեցեալք են աթոռք, և տէրութիւնք, և իշ-
խանութիւնք, և զաստիճանս նոցունց՝ ոչ փոփոխելով յայլս
բարձրագոյն 'ի խոնարհութիւն, և ոչ փոփոխելին՝ յորոց ստա-
ցան, մինչև յաւիտեան, այլ յաւէտ մշտնջենաւորութեամբ
ունին՝ զոր 'ի լինելութեան ընկալան յարարչէն.

Իսկ աստ այժմ և մարմնաւորաց ազգի՝ նոյնպէս ընդել-
եթէ կացեալ էաք 'ի պատուիրանն սկզբնաւորին, բայց զի
պատուիրանազանցութեամբ մեղաք, և յաղագս մեղացն՝ մե-
ռաք, և մեռելութեան կորուստ զգեցաք յաւերժականս, և
դատապարտեալ գնացաք 'ի հայրենի ժառանգութենէն. յետ այսր
մեղաւորաց, և անձինք դատապարտեալք՝ անկեալք նորին աղաղակաւ
անմխիթար և փափաքելոյն՝ ամ ինչ եղև, եթէ Միածինն Հօր
ծնեալ աստուածն, և եթէ նորոգեաց զմարդկային կենդանութիւն,

Եւ զի այս այսպէս գոլով՝ հնարաւորեաց բնութեան իմաստութիւն, մանաւանդ թէ՝ 'ի վերուստ տուեալ, որպէս զի՝ փոփոխմամբն զմիմեանս՝ անմահարար, և մահկանացուացըս սեռ՝ ըստ անմահիցն կոչելն զգործ, և զիշխանութիւն Բատորուն և զնահապետսն՝ մարգարեքն փոխանակեցին, և զմարգարէսն՝ դասք Առաքելոցն և Աշակերտանչացն, և զնոսին՝ հետևօղք նոցին Հայրապետք՝ իւրաքանչիւր տոհմի՝ և Աթոռոյ, և Վարդապետք Եկեղեցւոյ, որք են ըստ Առաքելոյ 'ի հաստատութիւն սրբոց, 'ի գործ պաշտաման, 'ի շինուած մարմնոյն Քի։

Յորոց է և մերն Հայր՝ Լուսաւորիչն Հայաստանեայց Գրիգորիս, և որք 'ի նմանէ՝ ըստ հոգւոյ և մարմնոյ ծնունդք՝ յառաջ եկեալ ժառանգք, և աթոռակալք, և որք յետ նր՝ կացեալք յաստիճան Հայրապետութե, հանգոյն նր և ընտիրք մարդկան, մինչև 'ի մերն նախնիք, և արեանառուք, և հաւատացաք Սրբոյ Լուսաւորչին՝ 'ի Գրիգորիս, որ և մականուամ Նախաձայնեալ, և 'ի Բանուլեա, որք ոչ ըստ մարմնոյ միայն ժառանգեալք՝ նորին ազնուականութե, այլ և՝ հոգևորացն հետևեալք հօրն առաքինութեանց։ Իսկ՝ լցօղք Եկեղեցւոյ լուսաւորութե՝ յետ նոցին, Ընծայանեաց գրոց կաթուղիկոսաց թարգմանութեանց, և այլ՝ բարեկամութեան՝ յանձնութեան յառաջացեալք՝ 'ի նուաճեալս մերձնում դարու ժամանակիս։

Եւ զկնի՝ նոցին զինթայս կենդաղական՝ բարեաց կատարելոյ, և առ ոտն ժողովելոյ, զորդիսցեալն ինքեանց հարազատապէս՝ մարմնով և հոգւով, և 'ի գիրկս իմաստունոցանց սնեալ, և 'ի հրահանգս հանճարոյ՝ ոտնկալն իմաստից՝ յառաջին տեղացն կեթեալ՝ իմն Գրիգորիս, եղեալ ըստ մարմնոյ, և հայր ըստ հոգւոյ. հաստատեցին 'ի նախնական իւրեանց՝ աթոռակին Աթոռ՝ ըստ գրեցելումն, փոխանակ հարց քոց՝ եղիցին որդիք քո։ Ոչ յաղագս ըստ մարմնոյ ընտանութե միայն, այլ և՝ հոգւոյն ընտրութե նախադասեալ, որով յոյժ հրաշափառագոյն՝ բանիւ և գործով՝ քան զբազումս յաթոռակալացն՝ դասէ սա նախնեաց՝ 'ի մաքրութե հոգւոյ՝ ըստ հոյ գոլով զուգամնանութե, յիմաստս բանի, և 'ի շարադրութիւնս տառի՝ գեղեցկապէս և ըստ կարգի, 'ի միաբանութիւնս՝ իբրու թէ՝ նոյն է որք կենդանի խօսեցան

հայ

ձայնիւ, 'ի գիտութիւնս գրոյ՝ ծայրագոյնս, և 'ի խորհուրդս հանճարոյ՝ ըստ տէրունեանն խրատու, բարւոք խորագիտութեամբ։

Ուր զի՝ յերկիւղէ մարդահաճութեն զանգիտեալ, մանաւանդ զի՝ խմուսն և ոչ օտարի աղաղակաւ՝ դրոշմեալցս բանի՝ դոյլութիւն յարմարի։ Նորին վասն՝ ոչ է ընդ բովանդակն անցանել՝ սորին գովելի գործոց, զոր 'ի մանկական տիոցն՝ մինչև ցայժմ, 'ի դէպ վարկաք՝ զպանդխտական կենացն՝ 'ի դժնեայ պահեալ ժամանակին՝ զհամբերութիւնն իմաստախրաբար, զփոփոխումն անտեղի 'ի տեղւոջէ՝ ըստ փոփոխական կենացս, և յայնոսիկ՝ անփորձ պահել՝ ըստ խնամոցն Ա.Ծ. զիւրականս Աթոռ, զշինուածոցն՝ ըստ իւրաքանչիւրոն տաժանման՝ եկեղեցեաց, և հանգստարանի ուխտից, ոչ տալով քուն աչաց, և նինջ արտեւանաց՝ ըստ Դաւթի։

Թէպէտ՝ և ըստ մեղաց մերոց՝ ոչ ժառանգեցաք ըղձեալն սրբութե՝ զոր ստացաք, պչար իշխողաց՝ և զանբարեաց, առօրս մերձ պահեալ մերասիրաց՝ և օտարասիրաց, զխորհուրդս՝ և զկամս չարեացն՝ նահանջել իմաստութե և ներողութե. և որք յանդգնեալ ժպրհեցան՝ գործով ցուցանել զչարութիւն, զնոցին վրէժխնդրութեն բարկութե՝ հեղեալ առ նոսա, ոչ վկայեն իրազեկք այսորիկ, և տեսօղք։

Ո՛նչ, և որ առ իւր հարազատս՝ և եղբարս՝ բարեյն պատճառ՝ և փոյթ լինելոյ՝ տեսլի է, որ ըստ մեծին զօրաբաբիլն՝ ժողովեալ ցրուեալս, և եղև հայր՝ փոխանակ հարցն, զոմանս ըստ աշխարհի տնօրինելով, և զոմանս հոգևորապէս, որպէս և զինս անարժանութիւն, զի 'ի վարժումն ածայնոցն իմաստից ներկրթեալ արժանացոյց՝ ըստ հասակին յառաջատւութե, և աստիճանացն բարձրութե։

Ո՛խորդ թող լիէ առանց յիշատակի, և հանրականն՝ որ սովաւ՝ և 'ի սմանէ բարեգործութիւնն այն, որ աշխարհակործանս ժամանակի՝ նախախնամութեն ԱԾ և իւրով իմաստութեն, և ջանիւ, և առատաձեռն ծախիւք, բիւրոց և հազարաց՝ պատճառ փրկութե՝ և ազատութե 'ի ծառայութէ, որ և փրկեցան՝ 'ի զանազան յերդուաց՝ և յաշխարհաց աղաղակեն։

Արդ՝ սա որ 'ի մանկութե մինչև յաւագութս՝ ըստ հաճոյիցն ոչ քաղաքավարեալ, և ոչ և միով իւիք՝ յիւրաքանչիւր հասակին՝ դողդողեալ 'ի հակառակացն, այժմ 'ի

ծերութիւն պատուական հասեալ, և 'ի կրից՝ ախտակիր բնութեան վտանգեալ, յառաջ կոչելով զմերս անարժանութի, և տուեալ առնուլ զծնընկալ Աթոռոյ իւրոյ՝ փոխանորդութեան. զոր ոչ միայն այժմ, այլ ևս կանխագոյն ժամանակօք՝ գնէր զայս առաջի, և պատճառ յառաջագոյն ոչ լինելոյն, ոչ յիշխանական սորայն կամաց, այլ՝ միշտ 'ի հրաժարելոյն մեր, յաղագս հեզութեան անձին, և հոգևորացն պակասութեան։

Իսկ զի՝ չէր պարտ՝ զահարժանիւ զանց առնել՝ և եղխա-զարու յառաջ մատչել, մինչ յաջողութիւն էր ըստ մարմնոյ, իսկ այժմ՝ զի զօրացաւ քան զբնութիւնն՝ տկարութեան կիրք, վասն այնորիկ՝ հարկեմք ընդունել զհարկեցուցիչ հրամանն սորա, թէպէտ և ոչ ինչ նուազ և մեք՝ նոյնն տկարութեամբ զգածեալ եմք։

Այլ՝ զահի հարեալ եմ, և դողամ ըստ մեծի մարգարէին, զի թէ նա՝ յառաջերին՝ միջնորդ եղեալ Աստուծոյ՝ և մարդկան, զայսոսիկ կրէր և ասէր, քանի՞ ևս արդեօք՝ որ 'ի ծայր մարտութէն, զարհուրելի է։

Իսկ անդ մօտէս՝ և սեղանն Աստուծոյ, և խոստակցութեան արժանաւորն, և ասա՝ հեռացելոյ անձին՝ 'ի նորին առաքինութեան արժանաւորութենէ։

Քանզի՝ որ մայրք են՝ առաքինութեանց սկզբունք՝ իմաստութիւն, արութիւն, ողջախոհութիւն, և արդարութիւն, մերկացեալ գտանին յիմում իշխանականի մասին։

Զի ոչ խրատեցի զբանն՝ որ յիս, իմաստութեամբ, և ոչ զցանկութիւնն՝ ողջախոհութեամբ, և ոչ դարձեալ զայսոսիկ խրատեցի արդարութեամբ. որպէսզի՝ կառք Աստուծոյ՝ ըստ քառակերպեան, յորդարեցից այսու՝ զանձն, այլ մանաւանդ՝ հակառակայն բերմամբ՝ անմտութեան և հեզգութեան, բղջախոհութեան և անիրաւութեան, օտարացեալ 'ի ճշմարիտ բարւոյն՝ ընտանի չարին եղէ ներգործութեան։

Իսկ զի՝ որ յոյժ մերձենայ՝ մանաւանդ գերագունի Քահանայապետութեան, նմանութեամբ՝ Աճանաւ պարտի առաքինութեամբ՝ ըստ գեղեցկութեան, ըստ չափոյ զօրութեան եղանակի՝ և հոգեղէնս բնութեան, որպէս ետուն մեզ օրինակ՝ որք յայս գործ տնտեսութեան տանն Աստուծոյ՝ կոչեցեալք եղեն 'ի Տեառնէ։

Այս առաջին՝ մարգարէքն որ 'ի հոլովեայ ընտրեալք,

հովիւք կռուեցան տանն Լովտի, որք մահուչափ՝ յաղագս մըր-կութե հօտից իւրեանց՝ ձգնեալք չարչարանօք եղէն յԾէս։

Եւ յետ նոցա՝ դարք առաքելոցն, որք մերկացեալք յաշխարհէ՝ և յաշխարհայնոց՝ ըստ վկայելոյ Տն, եթէ՝ դուք չէք յաշխարհէ, և ըստ Պօղոսի՝ եթէ՝ ինձ աշխարհ 'ի խաչ-ելեալ է, և ես աշխարհի. զորս և 'ի կարգս առեալ զմեռե-լութենն օրինակ՝ առէր, 'ի պահս բազում անգամ, 'ի քաղց և 'ի ծարաւ, 'ի սով, և 'ի մերկութիւն, և որ մի ըստ միոջէքն-ամ։ Եւ զի՝ հալածեալք եղեն վասն արդարութե, գրէ դարձնել զպատմութն, ես կարեմ յի՛ քի՛ մն ձեր հեթանո-սաց։ Զնոյն առնել օրինադրեցին և ամ հովուաց, որք յետ նոցա՝ զանձինս իւրեանց կամեցան դնել 'ի վ̅ր հօտին Քի։

Որպէս և եղեն իսկ՝ նմանօղքնոցա, Հայրապետք՝ յընդ-հանուր տիեզերս, որք և շինեցին յիւրաքանչիւր տեղիս՝ և ժամանակս՝ զնմանալի շինուած հաճատոյ՝ 'ի վերայ հիման առաքելոց, և մարգարէից։ Ո՛չ 'ի փայտից՝ և 'ի խոտոյ՝ և յեղեգանց՝ ըստ հերձուածողաց, և մարմնասիրաց բանից և գործոց, այլ՝ ուղղափառութե իմաստիւք, և զանազան ա-ռաքինութե գործովք, որ համեմատի յոսկի՝ և յարծաթ, և յականս պատուականս։

Որովք՝ ոչ միայն զինքեանց զարդարեցին զպատկեր՝ 'ի վայելչութիւն և 'ի նմանութիւն՝ սկզբնատպին, այլև՝ զբազ-մաց՝ որք առաքինութեց նոցա՝ եղեն հետևօղք։

Իսկ՝ ես անհամեմատս յամի՝ բազմամասն սոցին առա-քինութեց օրինակաց, զի՞արդ ձեռնարկեցից՝ տաժանելի ուղւոյ, և տկար մարմնով, 'ի վերքան զզօրութիւն անձին, և զարժանաւորութիւն՝ 'ի գործ և 'ի պաշտօն։

Որպէ՞ս համարձակեցայց 'ի սպասաւորութի այսր հովուութե ուր հովիւն քաջ՝ զանձն իւր եդ 'ի վերայ ոչխարաց, և նմանօղք նորա. և ոչ ես զանձն իմ արածեցի օրինաւն նց, ըստ ամբաստանելոյ հովուացն իմի՝ մարգարէին, որ կայ առաջի՝ ոչ միայն ընդ անձին, այլև՝ ընդ հօտիցն տալ պատասխանի։

Զիա՞րդ և 'ի բժշկականն ժպրհեցայց՝ տածումն մարմնոյ Եկեղեցւոյ, ըստ սամարացւոյն օրինակի, անբժշկելի ա-նելով զանձն՝ 'ի զանազան ախտից՝ անյայտից և յայտնի ե-

ղերոց, որով և առիս՝ ասացեալքն ընդդիմաբանին, բժիշկ բժշկեա զանձն քո։

Օրհնեալ և քաւիչ մեղաց անսահմանեցայց՝ կարօտս քաւութե բազում խոց սխալանաց, և կամ վարդապետ՝ որ ոչ գործով արդարացուցի զբան վարդապետութեն։

Որպէ՞ս դաստիարակ կամ դայեակ՝ ըստ Պօղոսի, տղայացելոց 'ի Քս, որ ոչ նախ դաստիարակեցի զոգիս՝ գաւազանաւ խրատու, և ոչ արբուցի սմա կաթն և մեղր՝ 'ի սեղանէ պատուիրանացն քո։

Օրհնեալ լոյս անսահմանեցայց աշխարհի, և կամ աղ, խաւարաւ տգիտութե և մեղաց՝ մթացեալս, և յաղագս անհամութե՝ անպիտանացեալս երկրի և աղբոյ, արդարոց և մեղաւորաց, և արտաքս 'ի բարեացն՝ ընկեցեալս 'ի կոխումն նոցին։

Որպէ՞ս հարց որբոց Պետ վերակոչիմ, որ և ոչ աշակերտութեանց՝ փոքունց 'ի նոցանէ արժանաւորիմ։

Օրհնեալ գլուխ Եկեղեցւոյ՝ յետ գլխոյն, որոց և գարշապար չ լինելոյ՝ քո ուղիղ դատման, ունիմ արժանաւորութի։

Որպէ՞ս մշակ և տնկագործ՝ խնամալի այգւոյ՝ և թզենոյ՝ քո տէրունեան առակին, որ ոչ նախ զխմն բանաւոր երկիր մշակեցի, և 'ի պտղաբերութիւն հասուցի։

Օրհնեալ կոյր գոլով՝ զառաջնորդականն յանձն առեալ եմ՝ և կոչումն, անձին՝ և առաջնորդելոցն՝ խորխորատ լինել պատճառ։

Կամ որպէ՞ս կերակրիչ քաղցելոց՝ և մատուցակ ծարաւելոց, իմաստութե հացիւն՝ և կենարար բաժակաւն, սովեալս առ ծուլութե, և պապաքեալս՝ յերկաքանչիւրոյն լցմանէ, ուր զի օրինակքն ճշմարտութե՝ 'ի վերնատունն նախ արբին, և ապա արբուցին տիեզերաց։

Օրհնեալ միջնորդ Այ և մարդկան, ոչ ունելով համարձակութիւն՝ կալ առաջի և մաղթել՝ քո մոխսի, անցանել բարկութեն 'ի ժողովրդենէն, որ և ես իսկ՝ յաղագս պէսպէս օրինազանց լինելոյ՝ զարհուրիմ 'ի ցասմանէ պատուհասից։

Կամ որպէ՞ս դատաւոր մեղուցելոց լինիցիմ ինքնադատաւ յանխաբ դատաւորէ ինձէ մնայ՝ որ յիս։

Օրհնեալ դէտ՝ ըստ մարգարէին, լինել յանդգնեցայց ակնդաչաւ, որ ոչ միայն 'ի բազուսս ոչ նկատելով ըզ թշնա

թշնամին՝ ազդեմ պաշտպանելոյն, այլ՝ յանձին իմում՝ կրեմ յօժարութբ զտէգս՝ և զնետս նր՝ կամաւ տկարացնելու։ Այլ որպէ՞ս հազարապետ խորհրդոյն Այ, որ ոչ ռամիկ յածայինն լինել արժանաւորիմ։

Թողից աստ զևս բազմապատիկ անուանս միում այս աստիճանի կոչեցեալ՝ ըստ գործոյն, որ և ոչ մի ՚ի սոցանէ՝ իմում համեմատի թշուառութեն՝ դիւրապէս զատմամբ։

Եւ այս՝ յառաջին Առաքելոյն աստիճանայն փորձէ։ Քանզի՝ ոչ սպասաւորեցի իւղոյն սրբութեն՝ անուշահոտ վարուք՝ ՚ի սրբութենն, և ոչ մատուցի զանձն՝ Պատարագ կենդանի սուրբ՝ հաճոյ Այ, ըստ խրատու Առաքելոյն, Քահանայութբն՝ անպատարագելի ոչխարին պատարագելոյ։ Եւ ոչ ՚ի տեսչութենն՝ սակաւուն հօտի՝ սրբուցի զջուրն հանգստեն, կմ՞ արածեցի ՚ի վայրի դալարւոջ՝ խնամութբ։

Եւ զի՝ այսուքիկ այսպէս իսկապէս խոստովանել զանձնէ՝ և ոչ առ խոնարհութե, անդիտանամ յերկաքանչիւրոյն ընտրութեն. զի թէ՝ զոր պահանջէ յինէն՝ Հայրս հոգւոց, և դուք ընդ նմին՝ գործունեայք բարեաց, յանձն առից, զոր հուրիմ երկիւղիւ՝ նայեցեալ յիմ տկարութի, և ՚ի մեծի այսր աստիճանի բարձրութիւն՝ և ծանրութի, մանաւանդ՝ ՚ի չար՝ և յանման բարեաց՝ ժամանակիս, ուր ոչ միայն յարտաքնոցն՝ որք հակառակ են հաւատոյս, նեղեալ տագնապիմք՝ ըստ մարմնոյ, և աղաւաղին կարգ Եկեղեցւոյ, այլ՝ անուանեալ քրիստոնէից։

Նաև՝ յորոց կցորդ են կարգի մերոյ՝ և ձեւոյ, որք յաղագս փառամոլ ախտի՝ հակառակ գտեալք են, և Ածայնոյ Աթոռոյս, ինքեանց Հայրապետութե տեսանս մերոյ՝ մին չև ցայժմ, որպէս ծանօթ է ամենեցուն, և զազատելս ՚ի Բէ՝ զեկեղեցի սուրբ, ընդ հարկաւ արարին անօրինաց, կամաւ և ոչ ՚ի հարկէ։ Որոց տալոց են զվրէժ հատուցման՝ այրմամբ գեհենին, առաւել քան զայլոց մեղանաց։

Թողում աստ զմեծն պատճառ, զի եմ ոք՝ ընդ ձանապարհ կամաց իւրոց գնայ՝ և ոչ ընդ Ածայինն, և եթէ ոք՝ յորոց հարկ ՚ի վերայ է, և յանդիմանէ զանխրատսն, և սաստէ՝ ըստ Առաքելական հրամանին, ոչ միայն զի ոչ դառնան ՚ի չարեացն ՚ի բարիս՝ որպէս օրէնք է Ածապաշտից, այլ՝

ընդդիմաբանեալ հակառակլին, և թշնամի կատարեալ, և դաւաճանող յանդիմանչացն լինին։ Եւ եթէ լաւ՝ յաղագս այնպիսեաց երկիւղից՝ և ոչ խօսի զճծայլին բանն, լաւ է դասացեալն, ծառայ չար և վատ, պարտ էր արկանել զարծաթն իմ՝ ՚ի սեղանաւորս։ Եւ սեղանաւորքն՝ ոչ ՚ի միում աշխարհի բնակլին, որպէս այլոց ազգաց, զի դիւրին էր շրջել առ նոսա առաջնորդացն, և սերմանել զբանն, այլ ի մեղաց մերոց՝ ցրուեալ են ազգ մեր՝ և ժողովուրդք, ընդ ոլորտս տիեզերաց՝ ՚ի մէջ օտարասեռ ազանց։

Նաև՝ Աթոռս սուրբ՝ դրդուեալ ՚ի հաստատութէ, ՚ի զանազան և յանպատշաճ վայրս տարբերի, ընդ հարկաւ և երկիւղիւ այլասեռից, և անօգնական՝ և աննուէր մերասերաց, որում ոչ է կար՝ համարձակ շրջել և ուսուցանել, այլ թաքնաբար լինել, որպէս զփաստապարտս։

Իսկ եթէ յայսցանէ՝ և որ նման սոցին, զանգիտեալ ընդդիմանամք կոչողին հրամանի, երկնչիմ՝ դարձեալ՝ յանհնազանդութեն դատաստանէ՝ ըստ գրեցելոյն, որդի անհնազանդ՝ ՚ի կորուստ եղիցի։

Եւ այսոցիկ տարակուսանացն ելք՝ ոչ այլ ուստեք, բայց եթէ՝ յամենահանճար աղօթից ձերոց. զի թէ՝ ուր երկու կամ երեք ժողովլին, ՚ի մէջ նոցա է Քս ըստ անսուտ հրամանին. քանի՞ ևս առաւելօք հաճոյական է լինել ՚ի մէջ այսքանեաց օրհնազանից հարց՝ բոլորեցն ՟ձ, ժողովելոց յանուն նորա, յաղագս հոգևորականս խնդրոյ։

Այլև՝ որ ընդ ՟ձմ տեղիս է՝ և մերձ առ ամենեսեան՝ որ կարդանն առ նա՝ ճշմարտութբ, յորմէ հայցել պաղատիմ՝ ՚ի բոլոր սրտէ ջերմագունիւ արտասուօք, Գլխոյդ եկլցւոյ, և որ ը քև յօդեալ Քահանայապետից՝ և Վարդապետաց, և դասուց Քահանայից՝ և կրօնաւորաց, յաղագս բարձման մի կարօտացելոյս անձին՝ ձերումդ աղօթից օգնականութե։

Եւ կերպարանք աղօթելոյն՝ զոր հայցեմս, նախ և առաջին՝ այս է։ Զի՝ ըստ տուեցելոյն ձեզ ՚ի վերուստ՝ արձակել յինքնակամ կապարանէ սխալից՝ և մեղաց՝ խնդրեցէք, զի յայնմանէ՝ որ անդամալուծին՝ և պառնկլին՝ Ածաբար հրամայեաց իւրաքանչիւրոյն թէ՝ թողեալ լիցին քեզ մեղք քո։ Որպէսզի՝ զոր միանգամ ՚ի ծննդենէ առաջանելին՝ մինչև

ցայս

ցայսօր մեղուցեալ եմ՝ անմեղին բնութեան, երկից և մի ածու-
թեան, երեք կմալք միութեան, հոգւով՝ և մարմնով, և մտօք,
՚ի խորհուրդս՝ և ՚ի բանս, և ՚ի գործս, թողուլ շնորհեսցէ՝
ամենատես բարերարութեան իւրով: Բժշկեսցէ զհոգւոյս
խոցոտածոյ՝ և զմարմինս յիւրական տկարութեանց կրից:
Եւ օրհնութիւն ձեր՝ Ածային՝ որ հանդերձեալ է իջանել
՚ի վերայ մեղաւորիս, լինել որպէս հուր մաքրիչ աղմոյ յան-
ցանաց անձին իմոյ՝ ըստ իջման հոգւոյն՝ ՚ի դասս առաքելոցն,
սրբել յեղելոց ողալմնայն՝ զներքին և զարտաքին զգայա-
րանս, և զանդամս, և զբոլոր շարժմունս հոգւոյ՝ և մարմնոյ,
և առնել զիս նոր՝ փոխանակ հնոյ, և պահել նոյին նորո-
գութիւն՝ յապագայն հրնայուցիչ կրից, մինչև ՚ի կէտ կոչ-
ման իմոյ ՚ի Քն:

Երկրորդ յետ այսորիկ՝ ըստ կարգի, և առաջին՝ ըստ զօ-
րութեան, պաշտօնիկ ՚ինէ՝ ձեզ վասն իմ խնդրել: Զի
թէ ողորմութիւն իւրով՝ յայսոսիկ անօրինաց զիս լինել՝ և
ոչ ներողութիւն, տացէ զօրութիւն տկարութեան իմոյ, և զեր-
կնաւորս սուրբ, ՚ի դատախարակութիւն անձին իմոյ: Որպէս
զի՝ յառաջակայ գործ տնտեսութեան Աւթուղիկէ ընդհան-
րական Եկեղեցւոյ, և պհովուէ բանաւոր հօտից Քի, և
զառաջնորդութեան օրինակ՝ առաջնորդելոյն առ ած՝ ուղիղ
և անմոլար՝ ըստ ածային պատուիրանայն, և տուեցելոց
բարեաց օրինակացն կատարեցից: Մի և մի՝ իւիք՝ որքան է
զօրութիւն, խոտորել ախտաբար՝ ՚ի հակառակն կողմ, և
կամ նուաղեցուցանել հեղգութեամբ՝ ՚ի յաւագունիցն, մի բա-
նիւ՝ և մի գործով, և մի յօժարութեամբ խորհրդոց: Այլ ու-
ղիղ համառօտել զբան հաւատոյ՝ ճշմարտութեամբ, և յարդա-
րել զգործ արդարութեամբ՝ և սրբութեամբ, և ամ մտաւօք բա-
րեպաշտութեան՝ ըստ օրինացն այ:

Լինելով և ինձ՝ յայսմ տեսչութեան՝ հովուապետական գործոյ,
մի գայթակղութեան լինել տկարաց, կամ ՚ի հայհոյութեան պատ-
ճառս կարգի և հաւատոյ: Այլ՝ օրինակ բարեաց՝ տեսողաց,
բանիւ՝ և գործով, և ՚ի փառս՝ փառաւորել անուանն Այ:

Լոյս լինել՝ անպիտանիս խնամողելոյ, և առ մտրմտքիչ՝
յանդիմանող բանիւ՝ ՚ի մեղս գանձելոյ: Ըստ աղաւնոյ՝
միամիտ ՚ի սէր պատուիրանացն Քի, և ըստ օձի՝ բարեօք

խո

խորագիտութիւն՝ ընդդէմ չար խորամանկութեանց սատանայի, և նովաւ զօրացելոյն. որում՝ հնարաւոր իմաստութիւն՝ Առաքելական ուռկանաւն՝ զմարդիկ 'ի կեանս, և հանել 'ի ծովէ աշխարհի՝ ցամաք յախտից՝ յերկիրն արդարոց, ժողովել զբարիսն՝ յշտեմարանս արդարութեան. Յորում արժանի լիցուք մեք՝ ձեօք հանդերձ աստ և առ ած, ահաւասիկ ես և մանկունք իմ՝ զոր ետուր ցիս, և 'ի Տէ լսել՝ ծառայ բարի և հաւատարիմ՝ եկ՝ մուտ յուրախութիւն Տն քո:

Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել համօրէն՝ և հօտից, երկնային բարեացն՝ 'ի ժառանգութիւն արքայութեան՝ որ 'ի Քն: Ընդ որում Հօր՝ և Հոգւոյն Սրբոյ, փառք և զօրութիւն՝ յաւիտեանս ամէն:

Պարծանս՝ ասացեալ, զոր մանաւանդ խնդրելին է, ոչ զի՝ և յաղագս հանդիսին Եկեղեցւոյ՝ և այլոց հայաստանեայց ջերմեռանդն սրտիւ՝ աղօթս առ բոլորեցուն ած՝ մատուցանել:

Եւ զհայրն մեր զաստուածային՝ զԼուսաւորիչն Գրիգորիոս՝ հանդերձ որդւովք իւրովք սրբովք, որք 'ի վերայ օրէնացն այ՝ յառաջնում թագաւորացն հայոց, և 'ի վայրենաբարոյ իշխանացն՝ տառապանս կրեալք են յաշխարհի, բարեխօս կացցուք առ ած, մանաւանդ թէ՝ զնա առ նոսա:

Զինախնդիր թողուլ շնորհեալսն՝ արդարոյս անիծելոյն զոր հեղին 'ի մէջ որդւոց ժողովրդեան իւրեանց, որով և ամենեքեան եղեն բարեկամ նոյ՝ այսքան երկար ժամանակ, բառնալով զթագաւորութիւն և զիշխանութիւն, և մատնելով 'ի սուր՝ և 'ի գերութիւն, և ցրուելով՝ ընդ հեռաւոր աշխարհս, 'ի աղքատութիւն և 'ի ծառայութիւն՝ ազգաց:

Եւ յորժամ հաշտեսցին ընդ, այս դարձցին՝ և պայծառասցեն առ այր մեր, բառնալ զպատուհաս պատուհասի յանցանաց, զոր մարգարէացան զայլ 'ի մէջ մեր, հալածել յարուցեալսն 'ի մէջ, և փրկել զմեզ՝ 'ի բռնաւոր աղխեծոց: Եւ զանել զերերեալսն՝ 'ի մանէ կապանաց, որք նստին 'ի խաւարի, դարձուցանել զամենն՝ յՅն հայրենիս, ուր 'ի ձեռն զօրաւորաց զօրագլխաց իւրեց, յարուցեալ թագաւոր արդար, և իշխանս յիրաւունս նոյ՝ հաստատեսցէ:

Զի ոչ 'ի խաւարն և յապականութեան՝ զբարեկութեան բա-

ժակ

ժամ արբուք 'ի ձեռանէ Տն, նոյնպէս' 'ի ձեռն հնազանդելոյն օրինացն որ, զբարցրուն բաժակն' և զողորմուն' արբցուք։
Որով զ' 'ի մի բերան' փառաւոր արասցուք զամենայն Երրորդութիւն, զՀայր' և զՈրդի, և զՍբ Հոգին, Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից' Ամէն։

Թուղթ Տեառն Գրիգորիսի Կաթողիկոսի Հայոց, գրեալ եղեւ [illegible] Ներսէսի Լամբրոնացւոյ, Հրամանաւ [illegible] 'ի [illegible] Յաղագս [illegible] : Յաղագս [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible], Եւ [illegible] [illegible] [illegible]. Եւ [illegible]. Եւ [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible]. և այլ [illegible] 'ի [illegible] Ամէն։



Որ թէպէտ և աներեւոյթն հրամանս յորդորէ զմեզ գրել' քննել զգիրս, և Առաքելոյն Պօղոս խրատէ' մեզ զնել ընթերցմանց մխիթարութե։ Սակայն' յայլում վայրի հրամայեալ է' [illegible] և 'ի [illegible] բանութէ, գրելով առ Տիմոթէոս, եթէ' 'ի յիմար' և յան խրատ խնդրոց' հրաժարեա, գիտելով' զի անտի ծնանին կռիւք, բայց ծառայի Տն. ոչ է պարտ կռուել, այլ հեզ լինել առ ամենեսեան։ Քանզի' այլ է խնդրութիւ քննել զգիրս, [illegible] հրամանքն' առ 'ի շահ օգտութե [illegible] և լսողաց, և այլ է' յիմարաբար խնդիր լինել բանի' 'ի կռիւ ծնանելոյ [illegible]։

Ոչ զ[illegible] եթէ 'ի դէպ ժամանակի էր [illegible] [illegible] 'ի պատառ ծագումն զբանութե, [illegible] [illegible] հրամանք [illegible], քարոզ եղեալ էր նոյն [illegible], որպէս և զիրք ցուցանեն։ Այլ զի [illegible] [illegible] [illegible] եղե [illegible]։

Եւ որ բաղում արժանաք են 'ի յերկինս, [illegible] 'ի բաժակոյ' [illegible] [illegible] [illegible] [illegible], և զնոյն

որ

արմատս՝ դարձեալ՝ անմարք 'ի մարդկանէ՝ ախտից և մեղա
լութեան սաստիկ պատճառ, աղխատաբար վարելոյն առ նա։
Եւ ըստորում՝ զմի և զնոյն սուսեր՝ ոմանք բարւոք 'ի
կիր արկանեն՝ ընդդէմ թշնամեացն՝ նովաւ զինելով, և
ոմանք 'ի չարն՝ առ սիրելիս, կամ ընդ անձին՝ նովաւ վարե
լով. Զնոյն է տեսանել և 'ի բանս Ածաշունչ գրոց։
Զի որք ըստ իմաստութեան հոգւոյն՝ գիտեն քննել՝ և
իմանալ զմիտս բանին՝ որ 'ի նոսա, լուսոյ և կենաց լինին
առիթ՝ քննողաց նոցա, ըստ ասելոյն, Ճրագ են բանք քո ոտից
իմոց. և թէ՝ լոյս են հրամանք քո՝ 'ի վերայ երկրի. Եւ թէ՝
պատուիրանք տն՝ լոյս են և լոյս տան աչաց. Եւ թէ՝ բանն՝
զոր խօսեցայ ընդ ձեզ, կեանք են յաւիտենականք։
Իսկ՝ որ զկերպարանս բանին միայն՝ ընթեռնուն 'ի
գիրս, և զզօրութիւն մտացն ծածկելոյ՝ ոչ կարեն ճանաչել
ուղղապէս, վասն ոչ աշխատելոյ ուսմամբ 'ի նոսա. այլ՝
ծեքեն զբանն՝ ըստ թիւր և տկար՝ խորհրդոց իմացուածոցն,
և կարծեն յանձինս՝ եթէ գիտեմք։ Լաւ էր նոցա՝ ոչ բնաւ
ճանաչել զգիրս, այլ՝ կեալ անմեղութեամբ ընդ տգէտս, և ոչ
կորնչել, քանզի մոլար գիտութեամբ անկանիլ 'ի վիհն կոր
ստեան՝ ըստ դպրացն և փարիսեցւոցն, կոյրք գոլով՝ կուրաց
առաջնորդք։
Վասն որոյ՝ և զՔահանայսդ՝ յամենայնք և շաղթան կո
չեցելոյ պաշտամայդ, ինկզմանէ լսեմք յայտնելն լինել բամ
բասելի կիրս. Յորոց միջի՝ բազումք ծնան հերձուածք, յոյ
ժմ պատճառէ. Զի ընթեռնուք զգիրս սուրբս, ոչ վասն
օգտելոյ՝ կամ օգտեցուցանելոյ զժողովն՝ որպէս օրէնն է, և
պահանջի 'ի Քահանայից. այլ յաղագս հակառակութեան,
և յաղթելոյ միմեանց՝ 'ի կործանումն լսողաց։ Եւ ոչ երբէք
զարհուրեմք՝ 'ի յահագին վճռոյ դատապարտութեան տն՝ որ վն
գայթակղեցուցչացն՝ ոչ միայն զբազումս, այլ զմի, և զայն
'ի փոքունց՝ 'ի նոա հաւատացելոց, որոյ՝ զկախելն երկանի
իշոյ՝ ընդ պարանոցն՝ և անկանիլ 'ի ծով՝ 'ի կեանս յայս լաւ
ասաց լինել, քան 'ի հանդերձեալն՝ անկանել 'ի հուրն յաւի
տենական։
Եւ դու՝ որ զայդքան բազմութիւն հաւատացելոց՝
որք ձեռամբդ աւանդեցան հովուութեան, ջանայք խախտել
'ի

՚ի ճշմարիտ դաւանութենէ հաւատոյ, և բարւոք աւանդութեանց՝ հարց առաջնոց. որո՞ւմ կորստեան՝ և գեհենի ակնկալուն ո՛չ է առաջի ձեր, որոց փոխանակ բարւոյ՝ չարեաց լինիք պատճառք, և ընդ լուսոյ՝ խաւարի և կուրութեան առիթ, և ընդ կենդանական արօտի՝ մահաբեր ճարակաց։ Որպէս և ծանուցաւ մեզ ՚ի մերոց՝ յառաջագոյն եկելոցն առ ձեզ, մանաւանդ՝ յայժմուս հասելոյ առաջի մեր՝ դրոյ, պատճառն իշխանեիդ ահիծուղ։ Յորմէ հասու եղաք՝ ունել անխնա-տաբար հակառակութի ձեզ՝ առ միմեանս։ Ոմանց ՚ի ձէնջ առել՝ յաղագս չարչարանաց և մահուան Տն մերոյ, եթէ՝ էական բնութիւն բանին՝ մեռաւ ընդ մարմնոյն՝ ՚ի վերայ խաչին. և այլք՝ ընդդէմ այսոցիկ, թէ՝ մարդն միայն չարչարեցաւ, և մեռաւ։ Նա որս՝ ՚ի դէպ է առ իւրաքանչիւր կողմանս, նախ զՏէրունական առել բան՝ որ առ հարցումն սադուկեցւոցն, եթէ՝ մոլորեալք՝ ոչ գիտէք զգիրս, և ոչ զզօրութիւն Այ։ Զանզի՝ երկոքեան խոտորիք ՚ի ճշմարտութէ՝ Ածաշունչ գրոց։ Պարտէր ձեզ՝ յընթեռնուլն զգիրս՝ ՚ի յայտնի եղելոց բանիցն կերակրիլ, և զծածկեալսն՝ լռութ պատուել, որպէս նոքին իսկ ուսուցանեն կերբ. ըստորում առաւօտ բանիւ ծանուցանէ Մովսէս՝ ՚ի խորհուրդ գառինն, թէ՝ ոսկր նր՝ մի՛ բեկցի. որ են բանք՝ ածայնոց գրոց, ոսկրատ և անուտելիք, և դժուարիմանալիք, յորոց հրաժարեցուցանէ Գրիգորիոս Ածաբան՝ զտգէտս և զտխմարս, ո՛չ չարաչար խորտակել զնոսա, և բաժանել։ Վասն որոյ՝ արժանաւոր՝ որք փոյթ ունին ճանաչել զճշմարտութիւնն, նախ քան զամ իմանալ նոցա զօրութիւն գրոց. և ո՛չ միադիմի՝ երբև զմիականիս, այլ՝ երկու աչօք հայել ՚ի կրկնապատիկ բանս նոցա,

Զանզի՝ մարդեղութիւն փրկչին մերոյ՝ ՚ինչան հակառակութե տարացաւ լինել՝ ՚ի ծերունւոյն Սիմէօնէ. և ոյք խօսեցան ՚ի անօրէնութիւն նորա՝ հերձուածողք, ոչ միով կերպարանաւ՝ և համանկից միմեանց, այլ՝ հակառակաբար բերելով երերաց։ Եւ վասն այսորիկ՝ հարկ եղև հարցն սրբոց, ընդդէմ իւրաքանչիւրոցն՝ զանազան դնել բանս, և լուծանել զնոսա՝ որպէս սաբէլ լիբէացի՝ ՚ի մի բնութիւն, և ՚ի մի անձնաւորութիւն՝ զԵրրորդութեն ժողովեաց, ՚ի բանս

իւր։ Նա՛ արդեօք՝ ընդդէմ նմին՝ յերկս բաժանեալ բնութիւնս, և անձնաւորութիւնս։ Իսկ հայքն սուրբք՝ ըստ ուղղականին առաքելոյ, որ բարբառ էր 'ի բանս նոցա՝ շահամարտելոցն յեկեղեցւոյ, և զխոստովանեալ 'ի բաց ընկեցին․ այսինքն՝ զմի բնութիւն որ յաղագս սրբոյ Միաւորութեան, զայն 'ի տարէ կէ ասացեալ, և զերկս անձնաւորութիւնն՝ առ 'ի արտաքս ընդունել մասնեցին։ Իսկ՝ զմի անձնաւորութիւնն՝ զոր ասէլ ասաց, և զայլ և այլ բնութիւնս՝ զոր արկու հայհոյեաց, խոստել և անարգել հրամայեցին։

Դարձեալ՝ և առ միաւորութեան բանին Այ՝ բազումք 'ի հերձուածողացն խօսեցան հակառակ միմեանց։ Այլ նեստոր՝ և համախոհք իւր՝ յերկուս որդիս, և յերկուս բնութիւնս՝ բաժանեցին զմի քն, և ասացին բանին Այ՝ առեալ զմարդն, որպէս զմի 'ի հոգեկիր արանց, և զնոյն քարկեալ չարչարանօքն՝ և մահուամբ, և ոչ Այ ասացեալ խաչ և մահ, որով փրկութիւն; այլ լոկ մարդոյ։ Իսկ եւտիքէս՝ ընդդէմ նմին; մի բնութիւն ասաց՝ ոչ միաւորութեամբ, այլ շփոթմամբ և այլայլութեամբ․ այսինքն թէ բանն Այ՝ ձև և նմանութիւն միայն էառ 'ի սրբուհւոյ կուսէն, և ոչ ճշմարտապէս մարմին եղև։ Նա՛ զմի բնութիւնն զայն՝ չարչարեալ ասէ և մեռեալ։

Նա՛ ոչ միայն սոքա, այլև՝ բազումք նախքան զսոսա 'ի հերձուածողաց՝ խօսեցան զայսպիսիս, որպէս պօղոս սամոսատացի, և ապողինար, և այլք ևս։

Աստ որոյ՝ և Աստուածային Եկեղեցւոյ՝ ընդդէմ իւրաքանչիւրոց սոցա՝ խօսելով զբանն, մինչ հակառակ միոյն բարբառեն, 'ի միւսոյն կողմն լինել թուին ոմանց; և այս պիտոյս լինեն գիրք սրբոցն։ Զի յորժամ ընդդէմ բաժանողացն խօսին, 'ի միութեան յաճախեն բանս։ Իսկ՝ յորժամ ընդդէմ չարաչար միացուցանողացն՝ զանշփոթութեան բնութեանցն ասեն ցուցանել։ Նա՛ սխալմունք յընթերցողացն՝ յայսմանէ լինին, զի առ ունկնդիրն միայն հայելով 'ի բանն՝ ոչ քննեն զպատճառն, վասն որոյ խօսին զայնպիսիսն։ Նա՛ և որք 'ի միաբանութեան են յօժարամիտ, և զմիութեան բանն առնուն՝ առաջելոցն իւրեանց 'ի միութեան, զորս ընդդէմ բաժանողացն խօսեցան Աստուածայինք։ Իսկ բաժանողքն՝ զորս հակառակ շփոթողացն զանշփոթութեան բնութեանն եղին՝ զբանս առ-

նուն

նուն՝ հակառակամտութեն իւրեանց ջատագովս, և այս եղև պատճառ կորստեան՝ սմ հերձուածողայն՝ իսկզբանէ մին-չև ցայժմ։

Այսն որոյ՝ և մեք հետևելով ուղղափառացն բանից՝ խօսեսցուք առ ձեզ՝ համառօտ և յայտնի բանիւ, յաղագս վերջասացեալ հակառակութեանց, որ է այժմ 'ի միջի ձե-րում. է՝ զոր 'ի մէնջ, և է՝ զոր 'ի սրբոյն վկայութէ, ոչ որքան արժանն է յոլովս խօսիլ՝ և դժուարինս՝ վասն մեծա-գունի խնդրոյս, այլ ըստ ժամուս փութոյ, և ձերոյ ակարութ մտաց և լսելեաց։

Ահ արդ՝ դիցուք զբանս՝ նախ առ այնոսիկ՝ որք զբնութե նոյ՝ յանդգնին ասել չարչարեալ՝ և մեռեալ 'ի վերայ խաչին, որք ոչ գիտելով՝ զարիաւսին կրեն հերձուածս չարու-թե՝ յանձինս, այն որ չարչարելի առաց զբնութիւն բանին։ Որպէս և Գրիգոր Ածաբանն՝ յառ Կղեդոնիոս բանին՝ յայտնապէս ասէ ընդդէմ ապօլինարի։ Զի թէ առանց հոգւոյ էր ասէ՝ մարդն, և զայս՝ և արիանոսքն ասեն, զի յածութիւնն՝ զչարչարանս բերցեն, որպէս 'ի շարժօղ զմար-մինն զայն։ Նոյն միտս ասէ և Սուրբն Աթանաս, ընդդէմ արիոսականացն, եթէ՝ Ածութին ոչ խոցի, վասնզի՝ հոգի է նա՝ անչարչարելի, և անպատելի, վասնզի՝ զմարմինն խո-ցեալն հրէայքն։

Ահ արդ՝ որք զայս ասեն՝ նման են այնոցիկ՝ որք 'ի փոքր վիմէ՝ որ առ ճանապարհի, զգուշանան՝ զի մի գթեա-ցին, և 'ի բազմաբազմոյն գահից՝ կամաւորապէս հանեն զան-ձինս 'ի խոնարհ։ Նատարում և դուք զգուշանալով յայնմա-նէ՝ զի մի մարդոյն տայցէք զչարչարանս՝ և զխաչն, զանմահին բնութիւն տայք՝ ըմպանել 'ի մահուչանէ. զոր և ոչ գեք ժպրհէին ասել, և ոչ ոք 'ի չար հերձուածողացն, բայց յա-րիոսէ՝ որպէս վերագոյնն ցուցաք։ Ահ այն՝ զի ոչ խոստա-վանէք զնա 'ի բնութէն հօր՝ ծնունդ, այլ յետև յարարա-ծոյ՝ յետ ժամանակի գոյացեալ։ Ահ վասն այնորիկ՝ ըստ եղականացս՝ ընդ չարչարանաց կրելոյ՝ դնէք զնա։

Զանզի՝ եղական բնութիւնքս՝ ընդ ախտիւ չարչարա-նաց անկանին, իմանալիքն՝ և զգալիքս։ Իմանալիքն՝ հոգեկն

կք

կրիւք միայն։ Եւ մարդիկք՝ հոգեկան և մարմնական։ Իսկ անեղ բնութիւնն այ՝ ազատ է 'ի չարչարանաց ախտից։ Եւ այնքան հեռի են 'ի բնութէ նորա՝ չարչարանք, մինչ զի՝ թէ և կամի չարչարիլ և մեռանիլ, ոչ կարէ։ Զի թէև՝ ամենակարող է, այլ՝ 'ի բնութէ իւրմէ՝ որ է՝ անչարչարութիւն՝ և անմահութիւն, փոփոխումն ընդունիլ ոչ կամի։

Գիտեմք զի լսեք 'ի գիրս՝ արիւն այ, և չարչարանս, և մահ, և ած խաչեալ, և բանն պետրոսի՝ զոր ունիք ջատագով, թէ կերանք՝ բանին և մարմնոյն, և եթէ մահ՝ բանին և մարմնոյն. և որ այսպիսիք են բազումք։

Բայց՝ մի մոլորիք զբարբառս գրեալսն՝ չարաչար իմացեալ, զի այլ են այսպիսի ասացելոցս միտք, և ոչ զոր դուքդ կարծէք, եթէ զայս ասելով՝ զածային բնութիւնն ասեն չարչարեալ և մեռեալ։ Քանզի՝ այլ է բնութիւն այ, և այլ է բնութիւն մարդոյ։ Բնութիւն այ անեղ է, և միշտնջենաւոր, և անախտ, և անմահ։ Իսկ բնութիւն մարդոյ՝ եղական, և ժամանակաւոր, և ընդ ախտիւ անկեալ, և մահկանացու։ Բայց՝ յորժամ կամեցաւ արարչական բնութիւնն՝ ընդ արարածոյս լինել, լոյսն՝ ընդ խաւարիս, և կեանքն՝ ընդ մահու. յաղագս փրկութե մերոյ՝ զանխառնելին խառնեաց՝ որպէս ասեն գիրք, և եղև՝ նոր խառնումն, և սքանչելի խառնուած։ Քանզի՝ խառնեալ միացոյց յորովայնի կուսին՝ զեղական բնութիւնս մեր՝ ընդ անեղի իւրում բնութեն, և զախտաւորս՝ ընդ անախտականին, և զապականացուս ընդ անապականին, և զմահկանացուս՝ ընդ անմահին, և եղև նովաւ՝ մի և անբաժանելի, ոչ փոփոխմամբ և այլայլութ, այլ խառնմամբ՝ և միաւորութբ անճառապէս, ոչ յաղթելով հզօրագոյնն՝ 'ի տկարագունէն, այլ՝ տկարն յաղթել 'ի հզօրէ անտի, ըստ Սրբազանին Գրիգորի, եթէ՝ խառնեցաւ մարդկուլն՝ ընդ ածութեն, և եղև մի, մեծագունին յաղթելով, զի եղէց այնքան ած՝ որ քանի նա մարդ։

Այսպէս՝ զբնութիւն մարդոյն՝ ոչ կորոյս, այլ զօրօրինակ՝ ոսկի կամ այլք 'ի հրահալեալս՝ 'ի հուր արկեալ, թէպէտ՝ և բոլորովին 'ի հրոյն փոփոխին կերպարան՝ և բնութ, այլ՝ զիւրականսն ոչ կորուսանեն զծանրութիւն, և զայլսն։ Նոյնպէս՝ և մերս բնութիւն՝ խառնելով 'ի հուր Ածութե

բա

բանին, որ ինչ արտաքուստ 'ի մեզ մտեալ էին՝ ախտք, մեղք, և ապականութիւն, բարձան 'ի նմանէ՝ որպէս 'ի հրահալելի նիւթոյ՝ ժանկ, 'ի ձեռն հրոյն։ Իսկ՝ բնաւորական էութիւն մարդոյ՝ անփոփոխելի մնաց յիւրութեանն՝ ընդ բանին, միաւորութբ։

Եւ խոստովանելի է մեզ՝ յետ միաւորութեան զնա, ոչ մարդ սոսկ՝ յաղագս մարդոյն, և ոչ Ած մերկ՝ յաղագս Ածութեն, այլ՝ Ած և մարդ, ոչ ոմն մարդ, և ոմն Ած՝ ըստ Նեստորի, և յարակցեալք առ միմեանս, այլ՝ մի և նոյն՝ մարդ ճշմարիտ, և Ած կատարեալ։ Զանզի՝ Ած մարդ եղև, և բանն մարմին։ Եւ ոչ եթէ էութիւն՝ յէութիւն բնակեցաւ, այլ՝ մի էութիւնն այն՝ բանին Այ՝ որ եղև մարմին, ունելով կրէր զմարդկայինսն՝ որպէս զմարդ, յորժամ թոյլ տայր հաղուոյն մարդկայնոյ, և կամ մարմնոյն՝ կրել զիւրաքանչիւրսն. այս է՝ զքաղցնուլն, զծարաւիլն, զննջելն, զվաստակելն, զարտասուելն, զտրտմիլն, զերկնչելն, զանգիտանալն, և զայլսն ամ։ Եւ երբեմն զածայինսն յայտնէր՝ 'ի ձեռն բազմապատիկ նշանացն, և ածավայելուչ զօրութեանց, յորժամ զայնոսիկ կամէր. ոչ ոմն զանկարողութեան կրէր, և ոմն զհզօրագոյնսն ցուցանէր, որպէս բաժանեն բաժանողքն, զարտասուելն և որ ըստ այնմ, մարդոյն տալով, և զյարուցանելն զղազար՝ և զայլսն՝ Այ բանին։ Այլ՝ միաւորեալն 'ի մի բնութիւն՝ կրէր զիւրաքանչիւրսն՝ յորժամ կամէր, զմարդկայինսն իբրև զմարդ, զի մարդ էր, և զածայինսն իբրև զԱծ, քանզի Ած էր։

Եւ վասն այսորիկ՝ զքանս Ս. Աւետարանչացն և Ս. Առաքելոցն՝ Վարդապետք Եկեղեցւոյ՝ 'ի յերկուս դէմս խօսելն, զոր դրեցին յաղագս Տն մերոյ Ածութեն՝ և մարմնաւորութեն։ Յորժամ զխոնարհագոյնսն ձայնեն՝ որպէս ասելն Հայր իմ մեծ է քան զիս. և Հոգիս յօժար է, բայց՝ մարմինս տկար. Եւ ոչ իմ կամք, այլ քոյդ եղիցի. և քրտանցն հոսիլ՝ իբրև զկայլակս արեան՝ յերկիր. և Ած իմ Ած իմ՝ ընդէ՞ր թողեր զիս. և ելանեմ առ Հայր իմ, և առ Հայր ձեր, և Ած իմ և Ած ձեր։ Եւ Պօղոսի ասելն, Ած Տն մերոյ Յի Քի Հայրն փառաց. և Յս հաւատարիմ է՝ արարչին իւրոյ. և փոքր մի խոնարհեցեալ քան զհրեշտակս, և յաւուրսն մարմնոյ իւրոյ՝ աղօթս և պաղատանս՝ ուժգին գոչմամբ՝ և հառաչա-

նօք

նոքա մատուցանէին առ այն, որ կարօղն էր ապրեցուցանել զնա 'ի մահուանէ, և հնազանդել այնմ՝՝ որ հնազանդեցոյց նմա զամենայն։

Զայս ամ՝ և զայնպիսիս՝ ըստ մարդկութեանն ասեն գրեալ՝ վասն նորա։

Ընդէ՞ր արդեօք, զի մի յորժամ յայտնեցաւ Ած-ութիւնն՝ աշխարհի, յետ յարութեանն՝ և համբառնալոյն յերկինս, կարծեսցեն զնմանէ մարդիկ, կամ ոչ առեալ զմարմին մարդոյ, և կամ առեալ՝ և փոփոխեալ յածայինսն։

Զի եթէ՝ զորմէ այսքան խօսեցան զտկարագոյնսն, և զեռ ևս ժպրհեցան հերձուածողք՝ ասել թէ՝ առաջօք էառ զմարմինն, եթէ միշտ՝ զբարձրագոյնսն էին ճառեալ, և ոչ երբէք զխոնարհագոյնսն, յո՞ր խորխորատ ոչ անկանէին։

Իսկ զասելն աւետարանչին՝ 'ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ ած. և զայն թէ՝ յառաջ քան զլինելն աբրահամու եմ ես. և եթէ՝՝ քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո. և առաքելոյ թէ՝ նովաւ հաստատեցան ամ՝ որ ինչ յերկինս, և որ ինչ յերկիր. և լոյս փառաց՝ և նկարագիր էութե նորա. և այլն ևս՝ որ ընդ այսմ, յաղագս յատուկ Ածութեան են ասացեալք։

Եւ այն՝ ես և հայր իմ մի եմք. և որ ետես զիս՝ ետես զհայր. և ոչ ոք ճանաչէ զհայր՝ եթէ ոչ որդի. Եւ թէ՝ դու ես քրս՝ որդի ած. այսք՝ և նմանք սոցա, ըստ միաւորութե բանին՝ և մարմնոյն են գրեալք։

Եւ զառանձնաւորականս Ածութեանն՝ վասն այնորիկ դրեցին, զի մի կարծեսցեն թէ՝ 'ի կուսէն էառ սկիզբն՝ ըստ պօղոսի սամոսատացւոյն, այլ թէ՝ յառաջ քան զյաւիտեանս՝ 'ի հօրէ է ծնունդ։ Բայց՝ յետ միաւորութեանն՝ անընտրողաբար՝ Ածութեանն՝ և մարդկութեանն՝ դնեն զերկս զանուանսն՝ և զիրսն, յաղագս անճառ միաւորութեանն։

Քանզի է՝ երբեմն՝ զի զյատուկ Ածութեան իրս՝ մարդկութեանն տան, և է՝ զի զմարդկայինսն առանձինն՝ Ածոյն. որպէս այն՝ զոր ասաց տէրն, ոչ ոք ել յերկինս՝ եթէ ոչ՝ որ էջն յերկնից՝ որդին մարդոյ. և մինչ էր յերկինս՝ ընդ հօր, ոչ էր՝ և ոչ կոչիւր՝ որդի մարդոյ, այլ՝ որդի ած միայն. և առաքեալն՝ զանուանսն՝ որ յետ մարդն լինելոյ ընկալաւ,
Ած

Ածութեն յատուկ դնէ, յս քս ասէ՝ երեկ և այսօր, նոյն և յաւիտեանս։ Քանզի՝ երեկն՝ զանժամանակաբար ծնունդն որ 'ի Հօրէ՝ նշանակէ, որ է միայնոյ Ածութեն, և այսօրն՝ զանօրէնութեն խորհուրդ։ Եւ այն թէ՝ նոյն և յաւիտեանս՝ զանփոփոխման թագաւորութիւնն, մարդկութե և Ածութեն միացելոյ։ Եւ այսպիսիքս ամ, զի զբարձրագոյնսն՝ որ Ած֊ ութեն վայելէ, մարդկութեն տան, և զխոնարհագոյնսն՝ որ մարդկութեն է 'ի դէպ, Ածութե նորա, զի՞նչ այլ՝ եթէ ո՛չ զանբաժանելի միաւորութեն եղանակ ցուցանեն։

'Ի սոյն միտս է առնուլ՝ և զչարչարանս նր՝ և զմահ, զորս ոչ մերկ Ածութեն տամք զայնոսիկ, և ոչ սոսկ մարդ֊ կութեն, այլ միաւորութեն անճառելւոյ. զի Ածութեն ա֊ սել չարչարանս՝ և մահ՝ ամբարշտութիւն է, որպ ցուցաք վերագոյն. և սոսկ մարդոյ մահ՝ ոչ փրկէր զաշխարհս։ Եւ զի՞նչ սոյն. այսպէս խոստովանելի է, որք կամիցին բարե֊ պաշտութե կեալ 'ի Քս, եթէ՝ վասնզի էր միացեալն այն՝ Ած և մարդ, անմահ և մահկանացու, մեռաւ մահկանացուն, և անմահ մնաց անմահականաւն։ Ո՛չ ամ մեռեալ՝ և ամ անմահ մնացեալ, այլ մի և նոյն միացեալն միութիւն՝ մե֊ ռաւ մարդկութբն՝ իբրև զմարդ, որպէս յինքն կամեցաւ, և անմահ մնաց Ածութբն՝ իբրև զանմահական բնութիւն Այ։ Եւ զի մեռաւ ճշմարտապէս, և անմահ մնաց 'ի մահուն՝ աստուածապէս, ցուցանեն եղեալ սքանչելիքն։

Քանզի՝ անշնչանալն 'ի վերայ խաչին, և պատիլն՝ և դնելն 'ի գերեզմանի, զմահ ճշմարիտ։ Իսկ՝ իշխանաբար տալն զհոգին՝ 'ի ձեռն Հօր, և կրկնակի աղբերացն հոսումն արեան և ջրոյ՝ իբրև 'ի կենդանւոյ՝ 'ի մեռեալ մարմնոյն, զանմահութիւնն՝ որ ոչ մեկնեցաւ 'ի նմանէ, նշանակէ։

Եւ վասն այնորիկ՝ մեռելութիւն մահկանացուին հա֊ մարեալ եղև անմահին Այ, և անմահութիւն անմահին՝ մահ֊ կանացու բնութեն, յաղագս միաւորութեն։

Եւ յայս դէմ առաջեալ է բանն՝ որով ձայնորիք, եթէ կեանք՝ բանին՝ և մարմնոյն, և եթէ մահ՝ մարմնոյն և բանին. այսինքն թէ՝ որպ մարմնոյն մահ՝ բանին համարելի է, նոյնպս և բանին կեանք՝ մարմնոյն համարելի է։

Բայց համարելին աստ՝ մի կեղակարծելի կարծեսցի,

որպ

ոչ առ մերքս, այլ յոյժ ճշմարտութե։ Քանզի՝ ստուգապէս մեռաւ, և ստուգապէս կենդանի էր 'ի մահուն. և եթէ ոչ կարես հասանել՝ եղական և տկար մտօք քո՝ անեղէն գործոյ, մի երկբայիր՝ և տկարանար 'ի հաւատոյ, այլ՝ հաւատա թէ՝ Ածն էր ճշմարիտ՝ որոյ ամ՛ ինչ կարելի է։ Նոյնպէս և մեռանելն, և 'ի մահուն՝ մնալն կենդանի. և որում ոչ հասեր՝ մտացդ քննութե, հասցես վաղվաղակի հաւատոցդ քաջութե։

Մի՛տ դիր գրելոյն իմաստութե, և ոչ մոլորիս 'ի հաւատոյն ճշմարտութե։

Ծանիր՝ մի զբանսն և եթ, այլև՝ զմիտս ասացելոյն՝ ուղղութե, և մի զուղիղ գրեալսն՝ թիւրեր յիմարութե։

Թողից զբազումն քեզ քննել, և զսակաւս 'ի բազմացըն՝ որ յաղագս չարչարանացն՝ ասացեալք 'ի գլխաւորագունից հարցն, եդից առաջի։

Նաև Ածաբանն Գրիգորիոս՝ 'ի ծննդեան ճառի, երբե զմարդ մեռեալ, և երբե զած յարուցեալ, ոչ ամ մեռեալ, և ամ յարուցեալ, այլ բանն ասէ՝ որ միացաւ 'ի մարմնի՝ ըստ մարդկայնոյն մեռեալ, և ըստ ածայնոյն յարուցեալ։ Եւ դարձեալ՝ յայլում վայրի՝ ասէ այսպէս, չարչարելի մարմնով՝ անչարչարելի ածութեն, նոյն ինքն երկնաւոր՝ և երկրաւոր, տեսանելի՝ և անիմանալի, տարեալ՝ և անտանելի։

Եւ սուրբն Աթանաս 'ի բանն՝ որ յաղագս հաւատոյ, ասէ՝ մահկանացու մարմինն՝ ոչ վնասեաց զանմահ ածութին, քանզի՝ անախտ էր, այլ՝ միայն մնաւանդ և ինքն՝ անախտ, անմահին զօրութեն։ Քանզի՝ որ ըմբռնեն՝ ըմբռնեցելոյն մերձ տէր հանդիպի։ Ասան զի՝ միաւորելոյ ընդ նա՝ անմահ բանին, և մահն տապականեւր հրաշափառապէս 'ի նմա, որ ապականի եղէգն 'ի հրոյ։ Իսկ բանն՝ անապական գոլով օգտեցուցանէր մարմնաւանդ՝ զմահկանացուն, գոլով ընդ Ածութիւնն, յորժամ զչարչարանսն բերէին նմա։ Եւ դարձեալ ասէ՝ ընդդէմ արիոսականացն, որք յԱծութիւնն զչարչարանսն բերէին, զի՞նչ զանստեղծական բանն՝ չարչարելի ասէք, կամ՛ որպէ՞ս զչարչարելի մարմինն՝ անստեղծանելի անուանէք, զի զանստեղծական էութիւն բանին՝ չարչարելի ասելով հայհոյէք, և զչարչարելի մարմինն՝ անստեղծական ասելով՝ յերկուց վերայ անկանիք սխալանաց. կամ՛ առաջօք

զերկուսմին՝ և զհամբերութիւն չարչարանացն կարծէք, իբր մանիքեցւոյն ամբարշտաւն, և կամ անստեղծականի բնութեն ոյ՝ զչարչարանսն ընէք։ Եւ զայս ասելով՝ զնոյն իսկ զմեծութիւն Հօր՝ և զՍրբոյ Հոգւոյն, տայք ընդունական գոլ մահու, և լինիք ամբարշտագոյն քան զամ հերձուածողս։

Քանզի մեզ՝ մարմնոյն համագոյակինն մահկանացուցեացես՝ եղև, և ոչ Հայր մարմին զգեցաւ, և ոչ սուրբ Հոգին, որպէս վաղէնտիանոս ամբարշտելով խօսի։ Այլ Բանն՝ մարմին եղև, վասն որոյ և մեք ասէ՝ խոստովանիմք ած՝ և մարդ՝ զքն։ Ոչ բաժանելոյ սղուղուծ զայս ասեմք՝ մի լիցի, և զն չարչարանք՝ և մահ՝ առ նմա, մարմնոյ Բանին՝ զչարչարանսն և զմահն խոստովանիմք, և զնոյն ինքն զԲանն՝ անփոփոխելի և անայլայլելի համատամք։ Զի նա ինքն է չարչարեալ՝ և ոչ չարչարեալ, ածային բնութեամբն՝ անփոփոխելի և անչարչարելի. իսկ՝ մարմնովն՝ չարչարեալ, որպէս ասաց Պետրոս, և զմահ ճաշակեալ։ Յաղագս որոյ՝ մի՛ որին, որք ասեն թէ՝ այլ ոմն է՝ որ չարչարեցաւն, և այլ ոմն՝ որ ոչ չարչարեցաւ. բայց՝ ոչ այլ ոք է քան զԲանն որ չարչարեցաւ, և զմահ ընկալաւ մարմնովն։ Զի նոյն ինքն անչարչարելի և անմարմին Բանն՝ լինել մարմին չարչարելի 'ի յանձն էառ, զի չարչարանօքն իւրովք փրկեսցէ զմարդիկ։

Եւ դարձեալ՝ յայլում վայրի ասէ՝ սոյն իսկ Երանելին Աթանաս, մարմնոյն ասէ ապտակելով 'ի սպասաւորէն՝ ոչ իւր իսկ Բանին ապտակեալ, ասէր՝ զի՞ հարկանես զիս, և անշօշափելի գոլով Բանն՝ ասէր Մարգարէիւն, զթիկունս իմ ետու 'ի հարուածս՝ և զծնօտս իմ՝ յապտակս, և զերեսս իմ՝ ոչ դարձուցից յամօթոյ թքանելեաց։

Քանզի՝ զոր ինչ մարդկեղէնն չարչարէր մարմին Բանին, զայս՝ ը նմին գոլով Բանն՝ յինքն վերաբերէր, զի մեք Բանի ածութեան հաղորդել կարասցուք։ Եւ լինէր յայժ հրաշափառագոյն իրս, զի ինքն էր՝ որ չարչարէր, և ինքն էր՝ որ ոչ չարչարէր. չարչարէր չարչարելեաւն. քանզի՝ իւր յինքեան չարչարէր մարմինն. և 'ի նմին 'ի չարչարելումն էր ինքն առանց չարչարանաց, անբաժանելի 'ի չարչարելոյ մարմնոյն։ Զի ած գոլով Բանն՝ անչարչարելի էր բնութեամբ. սակայն՝ ընդ չարչարելի մարմնոյն միացեալ անմարմինն, և

մարմինն ունէր յինքեան՝ զանչարչարելի բանն՝ ջնջիչ տկա րութեն նորին։ Օ՜ պատուելի ախտանաւէս։

Եւ արդ՝ սակաւքս 'ի բազմաց՝ ըստ ժամուս պիտանութեն՝ բաւական լիցի առ լուծումն ձերոյդ խնդրոյ, որ յաղագս չարչարանաց Տ՟ն մերոյ՝ առաջեալքս 'ի սրբոյն, և 'ի մէնջ ։ Եթէ՝ ոչ բնութի անմահին Ա.Ծ՝ չարչարեցաւ և մեռաւ, որպէս և հակառակութիւնդ է՝ երկաքանչիւր կողմանցդ, այլ՝ մի և նոյն ած և մարդ, մեռաւ ըստ մարդկութեն, և անմահ մնաց ըստ ածութեն, որպէս վերագոյն ցուցաւ ։ Եւ վասն այսորիկ՝ ած խաչեալ ասի, և չարչարանք այ, և արիւն, և մահ։

Այսուհետև՝ որք այսմ առաջադրոց՝ որ եդաք յայտնապէս առաջի ձեր, հակառակօղ գտցին 'ի Քահանայից, կամ յաշխարհականաց, և մոլորեցուցին զպարզամիտ ժողովուրդդ մեր՝ 'ի ճշմարտութե, բարձէք զչարն 'ի միջոյ, և որոշեցէք զայնպիսին՝ իբրև զայլազգիս 'ի միաբանութենէ ձերմէ, որք և 'ի մէնջ են՝ լիցին որոշեալ հոգւով՝ իբրև զարիոս, նաև՝ 'ի փառաց Որդւոյն Ա.Ծ, որչափ անզեղջ կան՝ 'ի մոլար իւրեանց աղանդութիւնս։

Է Լուաք դարձեալ՝ և յաղագս անբանից կենդանեացն զենմանց, զոր 'ի Տէրունական յարութեն, և 'ի յիշատակ ննջեցելոցն հոգւոց՝ առնելով՝ մատաղս անուանեն, եթէ՝ հակառակութիւն է 'ի ձեզ։ Ոմանց ասել եթէ՝ բարւոք է, և այլոց թէ չար և խոտելի։ Ո՞ր ի զհետն ասեն առնել՝ Է հրէիցն։ Յուցցուք ձեզ՝ և զայս ևս՝ յայտնի և պարզ բանիւ։

Հրէական զոհիցն և Պատարագացն արիւնք՝ առ տեղեաւէն՝ 'ի քաւութիւն, ականակից ամանց մեղաց։ Իսկ խորհրդեամբ՝ զարիւնն Քի գուշակէին, որով լինելոց էր թողութիւն՝ ամ ախեղելոց, և մինչև ցգալուստն այն՝ Պատարագելն 'ի վերայ խաչին, ընդունելի էին այնորիկ, վասնզի օրինակք Ա.Ծ գործէին։ Իսկ՝ 'ի գալ ճշմարտութեն՝ խափանեցան ստուերքն և օրինակքն, քանզի՝ չէին պիտանացուք, որպէս և ոչ ճրագ՝ 'ի ծագել արեգականն՝ յետ գե

շեր

չերբայքն մԹուԹեն ։

Եւ արդ՝ որ ոք ըստ հրեշտական օրինացն՝ առնիցէ զմատաղն զստակի, կամ զպէշտամակ հանդուցելոյն ՚ի Քեռ, ոչ միայն խստեսցէ, այլև՝ չար և վնասակար ։ Քանզի՝ այսպիսին յայտ առնէ թէ՝ զեռևս ոչ է ազատեալ ՚ի մեղաց՝ ազգական Քեռ, այլ՝ առաքելականին ծառայէ ատելոցն օրինաց ։

Բայց նախ քննեսցուք՝ եթէ օրէնքն Մովսէսի՝ ո՞րպիսի օրինակաւ հրամայէին հրէիցն՝ առնել զպտղիկն, և եթէ մեք՝ այնպիսի հանդիսի եղեալ՝ առայ ՚ի բաց ընկենուլ է և խստելի ։

Ո՞չ այսպէս նոցայն՝ ՚ի տասն նիսան ամսոյ, առնուլ ոչխար տարեկան՝ և արու՝ ՚ի տունս, և պահել մինչև չորեքտասանն նորին ամսոյ, և յերեկոյին յորում լուսանայր հրէզետասաանն, զենուլ՝ և խորովել, և արեանն զդրունս դրոշմել, և այսպէս զառեալսն ընկել, և ցուցեալ ՚ի ձեռս առնուլ և յընթացս ուտել՝ հացև ճնապարհորդ, հանդերձ բաղարջաւ՝ և դառնաձաւ ։ Իսկ այլ զոհքն՝ որ վասն մեղաց, պտղոյ և զանազան էին՝ առնելոյն օրինակք, ըստ խորհրդանշութեան յանցուցանոյն եղելոց ։

Ահա արդ՝ տասացուք և զմեր, եթէ՝ համեմատական է՞ն առ նոցայն, եթէ՝ հեռագոյն լիցին ։ Նոքա տարեկան ընտրէին՝ և յարուեաց, և մեր՝ կամ ամսօրեայ, կամ որպէս պատահէ; ամելի կամ նուազ, և եթէ արու՝ և կամ էգ՝ անփոյթ եղեալ ։ Նոքա հինգ աւուրբ յառաջ ՚ի տունս ածէին, և մեք՝ ՚ի նմին աւուր, կամ ըստ հանդիպման եղեալ ։ Նոքա ՚ի հին զատկին երեկոյին զենեալ, և մեք՝ ՚ի նոր Զատկի առաւօտին ։ Նոքա յատն ուտէին՝ և ՚ի գիշերի, և մեք՝ բաղմեալ ՚ի տուընջեան ։ Նոքա ընդ բաղարջ և ընդ դառնախոտ; և մեք՝ խմորեալ հացիւ, և առանց դառնաձաւոյ ։ Նոյնպէս՝ և այլ զոհքն ։ Նոցայն վասն կենդանեաց, և մեք՝ զոր առնեմք, յազագս մեռելոցն յիշատակի, զի զողորմութիւն կերակրելով՝ ողորմութիւն գտցեն նոքա յայն ։

Նոր՝ ո՞րով իմիք կարասցեն ցուցանել՝ հրեշտակական համեմատ՝ զմերս, ճշմարտութիւն՝ և ոչ երբեք ։ բայց թէ՝ տգիտութիւն միայն, և ընդդիմակութիւն ։ Զի որ ըստ նոցայն առնէ՝ առաջ հեռի է ՚ի ճշմարտութենէ ։ Նմ մեր՝ ոչ է ըստ

է այնմ խորհրդոյ՝ մի՛ լիցի, այլ յայժ հեռագոյն 'ի նոցանէ։ Եւ եթէ զի՞նչ պատճառ մերոյս, և ուստի՞ գտաւ, և յորմէ՞։ Հարկէ ասել մի է մինչ, զի մի այլ է այլոց կարծեացն 'ի տգիտաց, այլ Ճշմարիտն՝ յայտնի եղիցի ամենեցուն։

Գրեալ է 'ի կանոնական գիրս՝ սրբոյն Սահակայ Հայրապետի, եթէ՝ յետ դառնալոյ ազգիս Հայոց, 'ի կռոցն մոլորութէ՝ յանծանօթութիւն, 'ի ձեռն Սրբոյն Գրիգորի, եկեալ առաջի նորա քուրմքն հաճատացեալք՝ ասեն եթէ՝ 'ի հեթանոսութեանն՝ 'ի պիղծ զոհից անտի՝ ունէաք զկերակրոյն մեր, և որդւոց մերոց. Արդ յայսմհետէ հրամայեսցէ տէրութիւն ձեր՝ ցուցանել զպատճառս կենաց մերոց, եթէ՝ ո՞րով ապրեսցուք։ Եւ նա սահմանեաց տալ նց ասէ՝ տասանորդս յամէ, ոյք զետացելոց Քահանայսն 'ի հնումն, և հրամայեաց ժողովրդեանն, զի փոխանակ մեռելոտի կռոցն նուիրաց՝ զոր մատուցանէին յառաջագոյն, նուիրեսցեն միայն Այ, նուէրս՝ յանբանից կենդանեաց՝ զենմամբ, օրհնութեամբ աղի՛ խառնելով, 'ի զատկի յարութեան Տն, և յիւրաքանչիւր տօնս տէրունականս, և յերևելի սրբոյն, և 'ի յիշատակ ննջեցելոցն 'ի Քն, խնդրել զնորա ողորմութն՝ 'ի կերակուրս քաղցելոց՝ յանուն նոցա։ Եւ 'ի զենլեաց անտի օրինադրեաց տալ հաճատացելոց քրմացս՝ մասունս, ոչ միայն զոր այժմս տան երի՝ և մորթ, այլ և յոլովագոյնս՝ որ խափանեալ է յայժմուս՝ յաղքատութէ, և 'ի ժլատութէ անողորմաց։ Եւ զորդիս նոցա՝ ետ յուսումն քրիստոնէութն, լինել Քահանայս՝ և ժառանգս Եկեղեցւոյ, և կեալ ընծայիւք ժողովրդեանն։

Արդ՝ այս է պատճառ մերոյ ազգի՝ մատաղ առնելոյն, եթէ երբ և յումմէ՞ օրինադրեցաւ, այս է ստուգութի՝ զոր գրեցաք, ոչ ըստ հրէականացն՝ քաւ լիցի, զի որ առնէ ընդ նոսա՝ նզովք ընկալցի. Այլ՝ փոխանակ մոլորապաշտաց դիւցն՝ զոր զոհէին հեթանոսք՝ զարարածս Այ՝ դիւաց, յանուն Ճշմարտին Այ՝ փոխարկել զզենումն, և նմին արարչին նուիրել զիւր առեղծեալ կենդանիսն։ Որպէս և նախահարքն՝ որ յառաջ քան զօրէնսն, աբէլ, նոյ, և աբրահամ. զի ըստորում փոխանակեցաւ է դրօշելեաց փայտին հեթանոսաց՝ փայտ խաչին, և ընդ մարդադէմ պատկերացն՝ որոց երկրպագա-

նէին մարդկան, պատկերն հօր, որ 'ի մեր բնութեան նկարագրեալս եղեալ՝ բևեռեցաւ 'ի վերայ խաչին ։ Որպէս և Սրբն Գրի-գոր ասէ յաղօթական բանսն՝ զոր 'ի խաչալղանին ։ Նոյնպէս և նուիրական զոհից նշ. եղև փոփոխումն 'ի սպառէն, և 'ի միաստակարէն, 'ի ճշմարիտն և յօգտակարն դարձուցանելով։

Իսկ եթէ այլք յայտնի քրիստոնէից՝ ոչ ունէին սովո-րութիւն առնել զայս, միով այնու՝ զմերս սովորանիցէ։ Քանզի՝ նոքա ոչ ընկալան աւանդութիւն՝ 'ի նախնի բերեանց առաջ-նորդացն՝ որպէս և մերքս. և առաջնորդք նոցա՝ վասն այնո-րիկ ոչ ետուն զայս օրէնս, զի չէին հարկ, որպէս և մեր Լու-սաւորչին։ Նաև 'ի Սրբոյն Գրիգորէ օրինադրեցաւ, մի թէ՝ փոքր ի՞նչ արդեօք իցէ՝ քան զայս 'ի Սրբոց Առաքելոցն, որ չէր ինչ նուազ 'ի նոցանէ՝ ի սն անտանելի չարչարանացն, որոց համբերեր նա, վասն անուանն Քի, և ծածկեալ զօրու-թեանն՝ զոր ընկալաւ 'ի նմանէ, այսքան ազգս դարձուցանե-լով յերկրպագութիւն նորա։

Նաև՝ հաւատասցուք թէ հակառակորդս, զի թէ 'ի Սրբն Գրիգորէ՝ չէր այս հաստատեալ, այլ 'ի վերջնոց ումանց՝ և յաննշանեկաց, զի՞նչ պատճառ միասին գտեր 'ի մասունս, կամ 'ի լռութիւն, կամ 'ի հանդիսանուս առնելոյ ։ Արդ՝ կամ ցուցէք մեզ զ մասն հողոյն՝ որ 'ի նոցանէ, և պարզապէս ցուցէք զգլուխ ձեր՝ 'ի գլուխ վկայութէ, և մեք համանիցեմք բառ-նալ զայս, և կամ մեք ցուցանեմք զօգտակարութիւն նորա, որ ոչ միայն վնաս չէ, այլև՝ օգուտ հոգւոց, և դուք բարձէք 'ի միջոյ՝ զչար զայթակղութիւնս զայդ։

Յորժամ առեալ աղաւնին զայս զետեղ կենդանեաց, վկայեաց բանն՝ զամենեցունց, եթէ՝ հոտ անուշ, և անհամ բարի էն կերակուր. բայց նոյն աղաւնին յետոյ՝ որոշեալ զնոսա 'ի մի-մեանց, և զոմանս՝ սուրբս անուանեաց, զորս և ուտել հրա-մայեաց՝ երբ զպատիւ, և զոմանս՝ պիղծս, զորս և անուտե-լիս ասաց լինել. և 'ի սոցանէ անսալ խորհրդեաց՝ 'ի նոցանէ նուէրս մատուցանել մեզ, զոր և յայտ առնէ նոյ, որ յետ ջրհեղեղին՝ զմիմեանս 'ի սրբոց կենդանեացն՝ մատուցանէր ող-ջակէզ, յորոց և հոտոտեցաւ տէր՝ 'ի հոտ անուշից։ Իսկ այնք՝ զոր ծածկեալն բանն՝ սուրբս լինել հրամայեաց, սուրբք են, և ուտելիք անխղճալի, և զորս՝ պիղծս ասաց, պիղծք

են

են և գործելիք՝ հաւատացելոց, և որ ուտէ 'ի նոցանէ՝ հակառակ է հրամանին այ, բայց 'ի խոզէ, որ յառաջն անսուրբ էր, և յետոյ սրբեցաւ հրամանաւ հոգւոյն սրբոյ, 'ի ձեռն առաքելոցն, վասն որոշելոյ զհաւատացեալսն 'ի Քս̃, 'ի հրէից միաբանութենէ:

Եւ արդ՝ եթէ զմատաղն՝ յանսուրբ կենդանեաց անափ նուիրէաք, ասելով թէ՝ այն օրհնութեն՝ սրբէ զնոսա, որպէս պղծեալ կերակուրս՝ սրբէք 'ի ձեռն աղօթից, ունէիք թերևս իրաւունս հակառակելոյ: Բայց յորժամ առանց այնն օրհնութեն՝ սուրբ են կենդանիքն, զորս մատաղ առնեմք, և ուտելիք ամենեցուն: Զի՞նչ պատճառաւ՝ յետ այնորիկ անսուրբ թուիցին քեզ, և վնասակար, մի՞ թէ քահանայական աղօթքն՝ և Մարգարէիցն, և Աւետարանացն բանքն՝ զորս ընթեռնուն 'ի վերայ այնր, և խաչիւն դրոշմեն, պիղծս այդ համարել քեզ՝ զսուրբ կենդանիսն, և անուտելիս: Որ և Առաքեալն Պօղոս հրամայէ՝ ոչ միայն զնուէրեալսն այ, այլև՝ զհասարակաց կերակուրս և ըմպելիս, նախ սրբել բանիւն Այ, և աղօթիւք, և ապա ուտել: Ուրեմն՝ զմանկերեցւոյն խորհէս, զի նախ անիծանեն զկերակուրս՝ և ապա ճաշակեն:

Ընթերցիր ո՞վ դու՝ և 'ի միտ ա́ռ զմիտս բանիցն ասացելոց, զոր 'ի վերայ այնր ընթեռնուն Քահանայքն՝ յօրհնելն, և ցո՛յց զվնասն 'ի նոսա, և մեք ներեմք քում շաղակրատելոյդ, ապա թէ ոչ կարես ցուցանել՝ լռեսցէ́ զլեզու քո 'ի չարուէ, և մի՛ գայթակղեցուցանէր զժողովուրդ այ:

Ուրեմն 'ի ձեռաց ստայող և չարաթոյն բանից՝ յոր մոլորեալ են առաջնորդքդ տարւոյ, որք օրինադրեն՝ որպէս լուծաք, խուժանց ազգիդ, զպանիր՝ որ յայլազգեաց, ուտել անխղճաբար, և զմեռելոտիս, և զնոյն գործելի կենդանիս՝ անսուրբ են, և 'ի պանրէ հայոց՝ զգուշանալ, զի մի՛ գուցէ ասեն՝ 'ի մատաղէ զառինն զատկի՝ խախաց մերձեցնել է 'ի նմ Ա՛ռ որս 'ի դէպ է զտէրունականն ասել առ նոսա՝ բան, զոր առ հրէիցն՝ կուրացեալ առաջնորդսն, եթէ՝ մժղուկս քամէք, և զուղտս կլանէք: Եւ դարձեալ՝ զի՞ տեսանես զշիւղ՝ յական եղբօր քոյ, և 'ի քում ական՝ զգերանդ ոչ տեսանես: Թէպէտ և մեր դառն՝ ոչ մժղուկէ առ 'ի յանցանս, և

ոչ չէ ուղ, այլ բարի և Սուրբ՝ փրկեալ 'ի բանէն նոյ։ Իսկ նոցա՝ մինչդեռ կենդանութեանն՝ ազատել 'ի մեղաց՝ քան զաւաղ, և զգերութ։

Սոյն հնազանդութեամբ և կարգութեան նոյ, մանաւանդ թէ՝ ո՞վ չարին խաբէութեան, զմեծ երկաթի զեղանակ արծեալ կերակրութեան, և զընդելեացն, զոր նա՝ ախորժ տանց, նորա Քրիստոնէական օրհնութիւնք իւրեանց՝ համառօտ Սուրբ լինել, և զգայութիւն՝ որ յառաջ քան զՔրիստոնեայս աղօթեսցի 'ի վերայ սուրբ են փրկեալ յոյժ, և յետ այնորիկ օրհնութեան ուտել զոր բանիճ նոյ՝ և աղօթիւք օրհնեն Քրիստոնեայք, և տան նոյ, արիւծա համօրէն. Եթէ զանուն նոյ՝ զոր կարդան Քրիստոնեայք 'ի վերայ այնը՝ առէք ոմն սուրբ տանել զկենդանութիւն՝ և անուտելի, այսպէս դադարել հոգւով՝ զիմացէք պաշտօնեայք։ Իսկ եթէ զայն առէք՝ արծել զինուս, վասն է՞ր 'ի նշխարն ձեր՝ խառնէք աղ, և կամ յայլ կերակուրն։ Զի եթէ զգան՝ որ օրինակ միայն է՝ ճշմարիտ գառինն, անուրբ առնէ աղն, և ո՞ պատուէ զճշմարտութիւն Պատարագին՝ խառնելով ընդ նմա։ Իսկ թէ առէք թէ՝ ըստ հնոյն օրինացն առնէք, վասն այնորիկ՝ զարշելի 'ի նմանէ. Իսկ ո՞ւր է առ մեզ ընտրութիւն ոչխարին՝ ըստ օրինացն, և ուտելն 'ի գիշերի, և ոչ յայտ հանել 'ի նմանէ, և բաղարջ՝ և եղէգն, և յաւուր 'ի ձեռս, և կօշիկ յոտս, և գօտի ընդ մէջ, և զոսկր՝ ոչ բեկանելն, և այլ ամ զբեալյան յօրէնսն, յորոց՝ եթէ առնէցէք, յիրաւի զայթագեցիք։ Նոյն մեք՝ առաւել ոչ 'ի հին զատկին ուտեմք, և ոչ յերեկոյին, և ոչ առ մերն կերակուր՝ մինչ, այլ յետ յարութեան Տեառն, և 'ի առաւօտեան միաշաբաթին, և զնոյն ճշմարիտ գառինն մարմնոյ և արեանն՝ ճաշակելոյ։ Զի եթէ զայն կատարէաք՝ պարտ էր՝ յառաջ զօրինակն ուտել, և ապա զճշմարտութիւն. և զոսկրն ոչ միայն բեկանեմք, այլև արտաքս ձգեմք, և ոչ յայտ և եթէ հանեմք, այլև 'ի նոյն իսկ յայտն լինի զենեալ, և խորովեալ։

Իսկ եթէ ասիցէք, եթէ՝ ո՞վ ոք յազգաց՝ նախքան զմեզ եղեալ քրիստոնեայս, ունի զայդ սովորութիւն։

Ասասցուք եթէ՝ իւրաքանչիւրոց յառաջնորդաց՝ որք կամեցան՝ եղեն իւրեանց ժողովրդոցն՝ առանձնութեամբ պէսպէս և զանազանս, որպէս և առ ձեզ՝ բազում են զարմե-

լեք

լեք յայլոց, այլ ուրախութեամբ իւրեանց, և ոչ խառնակեսցին ընդ հեթա-
նոսն ներհակորդն անխտրութեան, և այլ ք յօրինեք.

Եւ թէպէտ մեր Լուսաւորչին աւանդեալքն ընդու-
նելի են, որպէս 'ի հօրն իմ Սրբոյ. բայց նա ոչ 'ի յանձնէ
եւ զգաստին ընդունեալ պատիլն, այլ 'ի հաւանեցելոց Եկե-
ղեցւոյն ընկալաւ, և աւանդեաց. որպէս և այժմ՝ առաւել
զգուշութեամբ քան զմեզ՝ ասեն պայս յամ Եկեղեցիս Փռ-
անկաց. քանզի խորամիտ զգաստն 'ի զատիկ աւուրն՝ ընդ
'ի խորանն ընդ պատարագաւն, և յետ Սուրբ խորհրդոյն
հաղորդելոյ՝ ուտեն կնա Հռչակեալքն, և սան իւրա-
քանչիւր մ.սն, և 'ի նմին լուկ յԵկեղեցւոյն ուտեն զնա,
յառաջ քան զայլ հասարակաց կերակուրս.

Սակայն ընդ փոփոխեալ բանիդ՝ յայժ զարմանամք,
զի յորժամ հարցանեմք ընդ ձեզ. եթէ՝ վասն էր 'ի նչխարն
ձեր այդ և ձէթ արկանէք, դուք 'ի հինն ընթանայք՝ ասելով
ձեզ միայնութիւն նոր խորհրդեանն Քի, եթէ՝ վասն զի մի
մէջ հրամայեաց թէ՝ յամ պատարագս ձեր՝ աղ խառնեսջիր,
և եղեալ՝ այլոց որքեայ զնշանն եկեղեցւոյ, և վասն ձէթին՝ ե-
թէ՝ աղաւնին տերև ձիթենւոյ եբեր 'ի տապանն, և զօրինա-
կան իւղոյն՝ որով քահանայքն և մարգարէքն օծանէին.

Իսկ յորժամ ասեմք թէ՝ Ըէ՞ր զպղծեալ կերակուրսն
միայն ուտէք անխտիր, և զանմաքուր կենդանիս, 'ի նորն
վնասէք, եթէ՝ վասն զի հրամայեաց Քն, թէ՝ ոչ որ մտանէ
'ի բերան՝ պղծէ զմարդն, այլ որ ելանէ 'ի բերանոյն։ Արդ ընչ
վասն պահոց իւր ուտելոյ սոսաց, այլ վասն անլուայ ձեռ-
աց. և կողոպուտ այնպիսեաց խորհրդոյ բերէք յառաջ և
զկնաւեցէք անօթն՝ զոր եսես Պետրոս; որ ոչ էր զունաւ
և զգայլս և զօձս, և զգարուններ ուտելոյ առնուլ, թէ՝ արդ
սպառէ՝ զեն և կեր, այլ վասն զայնոսիկ պաշտողացն հեթա-
նոսաց, որք սրբելոց էին 'ի պղծութէ, 'ի ձեռն քարոզութեն
Պետրոսի, որպէս առ լինէթեր բանն միայն.

Ջանզի որ պարգևք էին այն՝ Պետրոսի յետ Հոգւոյն
Սրբոյ առնլոյն, զիմուկն և պնդեղէն, և զմաքրին նոցա՝ հրա-
մայել՝ յընկենլոյ, ընդունել և ուտել. Նոքա և զԿռապաշտական
բանն՝ թէ ոչ լինչ է սպիղծ՝ նոցին, և թէ՝ նմ որպարձք սրբ
Սուրբ են, և զայլսն՝ զոր ասէ Պօղոս. որ ոչ թէ զայս ասէ

լով՝ հրամանաւ սորա՝ գումարեալ ժողովրդականն քննել, եւ յետ նորա գնալ
շնորհ՝ ընթանալոյ եղեալ պաշտօնականք՝ առաջնորդել քահանայք
հեթանոսաց.

Եւ զի քահանայք՝ եթէ ունիցին ՚ի նոսա պաշտօնէութիւն որ արժա-
նի լինիցին դրան, որ ՚ի հեթանոսաց, յորժամ գտանիցին՝
թէ եւ միայնոյ, ոչ յանդուգն կենդանութեան՝ այլ ՚ի պարզութեան եւ
խոնարհութեան, քաղցրութեամբ ողորմութեան զգեստ կա զգեստ. զօ-
րաց յայտ առնէ զընթացս առ Տիմոթէոս. եթէ որ արժա-
նաւորն յանձն առնիցին, եւ մեծութիւն ՚ի եկեղեցւոյ, զոր
պատշաճ առնել. ՚ի խնդիր հաւատոյ եւ ողջ հաւատոյ
նոց ՚ի ճշմարտութեան միայն.

Հաւատարիմ՝ որ զառաջինն եկեղեցւոյ զմարմին
առնէ, եթէ պատշաճ Տէր՝ ՚ի մարմին հաւատացելոց, որ-
պէս եթէ հրամայեալ ունել՝ խաղաղ հաւատացելոց, եւ ոչ
զանձինս անարգ առնել. Որ զհաւատսն կենդանիս. ոչ որ
զառնէ ՚ի մեղս, կամ ՚ի նոսա՝ հրամանաւ առնել, եւ առնել
նորա հաւատացելոց. Այլ որք կերպարանս, կամ առնել՝ ընդ
դէմ հրամանաց նորա զօրութեան եւ զառաջնորդութեան. Որ
րոց եւ դատել աշխարհական ՚ի պատարագն սորա, եթէ աղօթեցէ
՚ի քրիստոնեայս, որ եկեղեցւոյ պաշտօնեայք, եւ քահանայք. Տեղեակք
եւ նոյն մարգարէքն.

Եթէ առաջին ՚ի հոգին եղանակս ՚ի ձեռնադրութեան բարձրագոյն
ԹԷ կերպարանս. եւ այլ եղև ՚ի նոյն հրամանաւ ողջոյն
նոյն եւ մեծութեան, յաղագս յայտնութեան, եւ մեծ հրա-
մանք են. Այլ եթէ ոչ կարեն զօրացուցանել զնոսա. որպէս
եւ ոչ առնել զնոսա, այլ զօրացուցանել ոչ ՚ի մարմնոյ եւ
յանձնառութեան, այլ ՚ի քրիստոնէութեան Հաւատացելոյ եւ յեր-
կնաւորութեան, եւ յանձնեցուցանել՝ նորա կատարելութեան հաւատա-
ցելոց. ժողովրդեան ընդ նմին ՚ի կեանս ՚ի քահանայս. Այլ
զի ընդ կամաց առնել ԹԷ եւ ընդ նորա ԹԷ, եւ ընդ աստուածային
գիտութեան, որք ՚ի Տէր Աստուծոյ հաւատացելոց զՀայր
Աստուծոյ մեծութեան առնել, այլ եւ զօրութեան պատուէ ՚ի զօրութիւն
Աստուծոյ.

Եւ դարձեալ՝ որ էին եւ զեկեալ էր ձեռնադրեալ ընդ ձեռն եպիսկոպոսա-
ցն, եթէ զամ եկեղեցւոյ՝ որ զՀայրապետութեան ոչ զարհուրիս
՚ի նմանէ՝ կամ ամենայն. որ է այս ձեռնադրեալ ոչ ամենայն եւ քա-

նուէրք մարդկան, այլ՝ շանց և խոզից, զի յորժամ իբր՝ զօր ան-սանձեն աչօք, յարձակին ընթանալ:

Արդ եթէ այսպէս է, ապա Քն՝ մեզ պաշտօնեայ եղև, զորովայնամոլութիւն՝ առաւել քան զՀրէից՝ և հեթանոսաց, օրինադրելով մարդկան, զի առաջին մեզ՝ և մանաւ պատճառք ընութեա՝ որկորասութեանն եղև. և զի՞նչ լինի ասացեալն 'ի Տէ, եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր՝ քան զդպրացն և փարիսեցւոցն՝ ոչ մտանէք յարքայութիւն երկնից: Արդ մեծ՝ յարդարութեն վարդապետ՝ պատերազմեալ է պահօք՝ ընդդէմ որկորասութեան, որով և նա՝ սիքն արդարացան. և եթէ՝ 'ի հրամայեալ կերակրոյն կարծել՝ համձայ է նը, ապա՝ յոչ հրամայեալսն մերձենալ՝ ընդդէմ կամաց նորա իցէ: Յայտնի է այս և ուղիղ. և նոյն ինքն Պետրոս՝ որ զայն լուաւ, զի՞նչ ոչ կատարեաց զերկնայի հրամանն՝ ասելով զպիղծ կենդանիսն, եթէ յուտելոյ պէտ էր ասացեալն, այլ՝ սակաւ ուրուք շատացեալ լինէր. յաւուրն, որպէս վկայէ Պօղոս Եփեսացւոցն, 'ի բանն՝ որ յաղագս աղքատասիրութե:

Իսկ թողցուք զայսոսիկ, և որ այլ բազում թիւր ամենդութիւնք են 'ի նոսա, երկնաւոր դատաւորին քննել զնոսա, և զսակաւս զայս՝ վասն այնոցիկ ասացաք. զի մի որ 'ի մերոց անտի՝ լսելով զպատճառս բանիս 'ի նոցանէ՝ և կարծելով ուղիղս, մերձեսցի 'ի ճշմարտութենէն:

Իսկ արդ՝ այսու հետև առ մեզ դարձուցուք զբանս՝ հաւատացեալս 'ի Տէ ժողովուրդք, ցուցանելով ձեզ՝ ըստ հարցմանս ձերոյ, թէ զի՞նչ արժան է կատարել՝ առանց խղճի մտաց՝ և ըստ կամացն նը, զմինտառն զատկին՝ և զՏեառն կանոն, և զննջեցելոցն յիշատակս, և զպատուելոցս՝ և զյետոյ մնացեալն 'ի պատիւոյ 'ի բաց հանելով, զի առանց պղծութեան զօրութե կատարեսցին:

Արդ՝ նախ՝ զզատկինն ասելք: Դրոշմեսցէ Քահանայն զայն՝ խաչիւն Քի, առեալ 'ի մերոյ՝ զսաղմոսն և զաղօթսն՝ որ կարգեալն է, և տացեն զայն 'ի կերակուր գառինն, զի սրբեսցի բանիւն նը՝ և աղօթիւք, որպէս և գրեալն է. զի թէպէտ և սուրբ է բնութիւն, այլ՝ հանդերձեալ է նուէր լինել նը՝ առաւել պարտ է սրբել: Իսկ զենցեն զնա՝ յորում ան

տեղւոջ հանդիպի, ոչ և զայլ անասունս. և մինչ տգիտաբար՝ զարիւն զատկին ժողովեսցէ, կամ կերիցէ, ոչ լսեմք թէ՝ առնեն ախմար մարդիկք. զի որ զարիւն անասնոյ ուտէ՝ իբրև զմեռելոտիս համարեալ է, զի արիւնն առնէ պիղծ՝ զմեռելոտին՝ և անուտելի, որ 'ի նմին մնայ՝ և ոչ ելանէ:

Քանզի՝ պիղծ է արիւն՝ ըստ հրամանին Այ՝ որ առ Նոյ, թէ՝ զմիս արեամբ շնչոյ՝ մի՛ ուտիցէք:

Իսկ մինչ իշխեսցէ՝ զսեամն դրանցն օծանել արեամբ զատկին, որպէս ասեն զտղխտաց ումանց թէ՝ առնեն, զի այն՝ հրէական է, և որ այնպէս առնէ՝ ջ անիծեալ է: Քանզի՝ սեամք դրանց մերոց՝ զգայարանք մեր է, որ արեամբն քի՝ օծանին:

Իսկ խորովեսցեն զնա, և տացեն զմսոն Քահանային՝ իբրև զնուէր Այ, և զայլն կերիցեն, թէպէտ՝ յաւուր քան զայլ կերակուրս, և թէ յետոյ՝ անփոյթ են երկոքին. ըստ այսմ նմանութե կատարեսցեն՝ և այլոց տէրունական տօնից՝ մատաղն, և սրբոյն Այ:

Իսկ՝ խոստացեալն Այ՝ զոր տէրունական կոչեն, եղիցի այսպէս: Կարդասցեն զգրեալ օրհնութիւնն 'ի վերայ աղին՝ Քահանայքն, և տացեն անասնոյն՝ և զենցեն, և հանցեն զմասունս Քահանային, և զայլն աղքատաց բաշխեսցեն, առանց ակնառութե, զի հաճոյ լիցի Այ. և զայնս՝ որ 'ի տգէտ Քահանայից եդեալ է 'ի ցուցակին՝ կարմիր արկանելոց ծածկեն զանասունն՝ և յեղջիւրսն նորա՝ ըստ հնոյն օրինի, ամենևին մի՛ առնէք՝ զի անօրէն և անօգուտ է, և պատճառ գայթակղութեան:

Իսկ՝ առ 'ի յիշատակ՝ ննջեցելոցն 'ի Քս, յորժամ կամեսցի ոք առնել մատաղ՝ այսպէս եղիցի:

Ժողովեսցին Քահանայքն 'ի միասին՝ 'ի դուռն Եկեղեցւոյն, եթէ յոլովք իցեն, և եթէ սակաւք, և եթէ մինք, ընդ նոցին՝ և տէր պատարագին, և դիցեն զաղն՝ առաջի սբյ խաչին, և երգեսցեն զգրեալ սաղմոսն, և զպաշտամունսն, և ընթերցցին զկարդացմունսն, և զաղօթսն՝ երկիւղիւ մեծաւ, և ջերմեռանդն սրտիւ՝ յիշեսցեն զանուն ննջեցելոյն, և թողութի մեղաց խնդրեսցեն նմա՛ 'ի Տէ, և տացեն զաղն ուհնեալ, և զենցեն զանասունն, և ըՔահանայիցն տացեն

զաւհ

զաւհմանեալ մնացեալն։ Իսկ ապաւինն՝ նախ զպատճառսն՝ և զհասարակական կերպակերպեցին, և ապա՝ թէ յաւելուլ, պակասիս՝ և զզանազանեալսն։

Իսկ բաց յամենայնի որէն՝ այլ առաջնակայ առնուրց՝ յայտնանէ մի ամբարտաւանէ պիտանին՝ ամենայն, զի նոյն [illegible]։

Իսկ մեզ ընդհանրապէս ասասցէ, եթէ՝ առ ունեց մնացեալ օրհնելոյ Աստուածոյ ԲԻ՝ չմնաշ նախընթացելոյն. զի զայս ունել՝ կայ մնացորդութիւն է։

Քննեսցի ամենայնեցուն զհանելեալ՝ ոչ այլ ինչ յառաջելոյն [illegible], կամ մեռեալ [illegible], բայց միայն՝ [illegible] Հանդէպ պատուիրան [illegible] յանէ՝ [illegible] ԻԾ, նուէրս նմա ՚ի ձեռն [illegible], և որպէս ՚ի պայլոց՝ և ՚ի [illegible], այնպէս և յանուանն կենդանեացն։ Իսկ Աստուածոյն ԲԻ՝ [illegible] հաւասարելի [illegible] յառաջն նախընթացելոյ ՚ի մեր է մեծութիւն՝ քան զմիտս՝ և զբանս։

